

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ – 2022, №1

« ԳԱԱ ՏԻ

ԵՐԵՎԱՆ - 2022

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր **Յուրի Մուվարյան** (Հայաստան)
- ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր **Վլադիմիր Հարությունյան** (Հայաստան)
- ՌԴ ԳԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Ալեքսեյ Կուզնեցով** (Ռուսաստան)
- տ. գ. դ., պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան** (Հայաստան)
- տ. գ. դ. **Գրիգորի Վահանյան** (Հայաստան)
- տ. գ. դ., պրոֆեսոր **Սերգեյ Դոխտյան** (Ռուսաստան)
- բ.գ.թ. **Վլադիմիր Գերասիմով** (Ռուսաստան)
- ՄԱԱԶԿ միջազգային փորձագետ **Վիկտոր Զախարյան** (Ավստրիա)
- տ. գ. թ., դոցենտ **Քրիստինե Բաղդասարյան** (Հայաստան)
- տ. գ. թ., դոցենտ **Մերի Մանուչարյան** (Հայաստան)
- տ. գ. թ. **Լիլիթ Սարգսյան** (Հայաստան)
- տ. գ. թ. **Զաիրա Աբդուլևա** (Ռուսաստան)
- տ. գ. թ. **Գեղեցիկ Աֆունց** (Գերմանիա)
- տ. գ. թ. **Գեղամ Շահբազյան** (Իտալիա)
- տ. գ. թ. **Վլադիմիր Ասրիյան** (Իսպանիա)
- տ. գ. թ. **Սվետլանա Դավաթյան** (Հայաստան)
- տ. գ. թ. **Տաթևիկ Փարսադանյան** (Հայաստան)
- տ. գ. թ. **Եվգենյա Հակոբյան** (Հայաստան)

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՌՈՒԲԵՆ ՄԱՐԻՆՅԱՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու – 2022, №1) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն.Սարինյան. ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր., 2022, 468 էջ:

Ժողովածուն նվիրված է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն՝ Վլադիմիր Հարությունյանի ծննդյան 65-ամյա հոբելյանին: Ժողովածուն իր արժարժումների մեջ կարող է օգտակար լինել տնտեսության տարբեր ոլորտների հիմնախնդիրների լուծման համար, քանի որ այնտեղ տեղ գտած հոդվածները բազմազան են և ընդգրկում են գիտական չորս ուղղություններ, և, որ ամենակարևորն է, բոլոր հոդվածները իրենց մեջ պարունակում են գիտական նորություններ: Ժողովածուն ընդհանուր առմամբ և այդ գիտական նորությունները մասնավորապես կարող են օգնել իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններին հանրապետության տնտեսության մեջ առկա և հոդվածագիրների կողմից նախանշված հիմնախնդիրներին համակարգային լուծում տալու գործում:

Ժողովածուն գիտական ուղեցույց է գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցողների՝ գիտաշխատողների, հայցորդների, ասպիրանտների, ինչպես նաև բուհերի դասախոսական անձնակազմի համար:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

0015, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 58-19-71

E-mail: nas_ie@sci.am

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2022

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ – 2022, №1

НАН РА ИЭ

ЕРЕВАН - 2022

Рекомендовано к изданию решением
ученого совета Института экономики
НАН РА им. М. Котаняна

Редакционный совет:

Академик НАН РА, д.э.н., профессор **Юрий Суварян** (Армения)
Член корреспондент НАН РА, д.э.н., профессор **Владимир Арутюнян** (Армения)

Член корреспондент РАН, д.э.н., профессор **Алексей Кузнецов** (Россия)

д. э. н., профессор **Роберт Саринян** (Армения)

д. э. н. **Григорий Ваганян** (Армения)

д. э. н., профессор **Сергей Дохолян** (Россия)

к.ф.н. **Владимир Герасимов** (Россия)

международный эксперт ЮНИДО **Виктор Захарян** (Австрия)

к. э. н., доцент **Кристине Багдасарян** (Армения)

к. э. н., доцент **Мери Манучарян** (Армения)

к. э. н. **Лилит Саргсян** (Армения)

к. э. н. **Заира Абдулаева** (Россия)

к. э. н. **Гецецик Афунц** (Германия)

к. э. н. **Гегам Шахбазян** (Италия)

к. э. н. **Владимир Асриян** (Италия)

к. э. н. **Светлана Даллакян** (Армения)

к. э. н. **Татевик Парсаданян** (Армения)

к. э. н. **Евгения Акопян** (Армения)

Ответственный редактор сборника:

доктор экономических наук, профессор
РОБЕРТ САРИНЯН

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.
Сборник научных статей -2022, №1 / Отв. редактор Р.Н.Саринян. Институт экономики
НАН РА им. М. Котаняна. Ер., 2022, 468 с.

Сборник научных статей посвящен 65-летию члена корреспондента НАН РА, директора института экономики им. М.Котаняна Владимира Арутюняна. В своих обзорах сборник может быть полезен для решения проблем в различных областях экономики, так как публикуемые в сборнике статьи являются многоотраслевыми и включают в себя 4 научных направления, и самое главное, все статьи содержат в себе научные новизны. Сборник в целом и эти научные новизны в частности могут помочь законодательным и исполнительным органам власти системно решать проблемы, возникшие в экономике республики и выявленные авторами сборника.

Сборник- научный путеводитель для желающих заниматься наукой: научные сотрудники, соискатели, аспиранты, а также преподавательский состав ВУЗ-ов.

Институт экономики имени М. Котаняна НАН РА

Республика Армения,
0015, Ереван, ул. Св. Григора Лусаворича 15
Тел. (+3741) 58-19-71, E-mail: nas_ie@sci.am

© Институт экономики имени М. Котаняна НАН РА, 2022

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS
NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA

THE CONTEMPORARY ISSUES OF
SOCIOECONOMIC DEVELOPMENT IN THE
REPUBLIC OF ARMENIA

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2022, №1

Institute of Economics of the NAS RA

YEREVAN - 2022

Approved for publication by the decision of the
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of the Republic of Armenia

Editorial Board:

- Academician of NAS RA, D. Sc. (Economics), Professor **Yuri Suvaryan** (Armenia)
Corresponding Member of NAS RA, D. Sc. (Economics), Professor, **Vladimir Harutyunyan** (Armenia)
Corresponding Member of RAS, D. Sc. (Economics) Professor **Aleksey Kuznecov** (Russia)
D. Sc. (Economics), Professor **Robert Sarinyan** (Armenia)
D. Sc. (Economics) **Grigori Vahanyan** (Armenia)
International Expert (UNIDO) **Viktor Zakharyan** (Austria)
D. Sc. (Economics), Professor **Sergey Dokholyan** (Russia)
P.h.D **Vladimir Gerasimov** (Russia)
Ph.D. (Economics), Associate Professor **Christina Baghdasaryan** (Armenia)
Ph.D. (Economics), Associate Professor **Meri Manucharyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Lilit Sargsyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Zaira Abdulaeva** (Russia)
Ph.D. (Economics) **Geghecik Afunts** (Germany)
Ph.D. (Economics) **Gegham Shahbazyan** (Italy)
Ph.D. (Economics) **Vladimir Asriyan** (Spain)
Ph.D. (Economics) **Svetlana Dallakyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Tatevik Parsadanyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Yevgenya Hakobyan** (Armenia)
Science editor: D. Sc. (Economics), Professor
ROBERT SARINYAN

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2022, №1 / Responsible Editor: Robert N. Sarinyan, M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Yerevan, 2022, 468 p.

The journal is dedicated to the 65th anniversary of Vladimir Harutyunyan the Corresponding member of the NAS RA, director of the M. Kotanyan Institute of Economics. In its reviews, the journal can be useful for solving problems in various areas of the economy, since the articles published in the journal are multi-sectoral and include 4 scientific directions. And most importantly, all the articles contain scientific novelties. The scientific journal in common and these scientific novelties in particular can help to legislative and executive authorities to systematically solve the problems that have arisen in the economy and identified by the authors of articles.

The journal is a scientific guide for those who want to do science: researchers, applicants, postgraduates, as well as the teaching staff of universities.

M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia

15 Surb Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
Tel. (+374 10) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am

© M. Kotanyan Institute of Economics of the NAS RA, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔԸ.....	16
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Վ.Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ՝ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹՎ.....	20

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (Տիգրան Հարությունյան, Լիլիթ Մարգարյան, Արմինե Գևորգյան)	24
2. ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ (ԴԱՍԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ) (Գրիգորի Վահանյան)	40
3. ՀՀ-ՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԿԻՍԱՄՇԱԿՎԱԾ ՈՍԿՈՒ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԵՎ ԽՏԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴԵՐԸ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (Մերգեյ Դոխոյան, Աննա Մակարյան).....	64
4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑ (Արմինե Զախարյան)	79
5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ) (Քրիստինե Թաթոսյան).....	94
6. ՀՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (Արսեն Ըոքոյան)	111
7. ՀՀ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՈՏԻՄԸ (Լիլիթ Մարգարյան, Եվգենյա Հակոբյան).....	126
8. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (Լիլիթ Պետրոսյան, Արվիինե Կյուրեղյան).....	145

9. ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ԲՈՒՖԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԱՐԿԵՐ/ՀՆԱ ՃԵՂՔԸ (Արշակ Վարժապետյան)	161
10. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (Լիլիթ Մուրադյան)	175
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆ- ԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՐՁ (Լիանա Ազատյան).....	190

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. ՇՐՋԱՆԱԶԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ (Մերի Մանուչարյան).....	204
2. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ (Մերի Մուրադյան).....	217
3. ՀՀ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ԿԱՊԿԱԾՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ (Հովհաննես Ասատրյան)	235
4. ՀՀ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (Մասուն Բախշյան)	252

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Սվետլանա Դալլարյան, Մարգրիտ Մարգարյան).....	269
2. ՀՀ-ՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՁՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (Քրիստինե Բաղդասարյան, Սոնա Գրիգորյան)	287
3. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (Շողեր Պողոսյան).....	304

4. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Ռազմիկ Իսահակյան)	320
5. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Արմինե Զախարյան)	334
6. ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (Գայանե Թովմասյան).....	348
7. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊԻ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ) (Մարիամ Պողոսյան).....	365
8. ԲԼՈԿՉԵՑՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (Տաթևիկ Շահինյան)	380
9. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (Դավիթ Պետրոսյան)	390

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՑՑՆԵՐՈՒՄ (Ռոբերտ Մարինյան, Բելլա Գաբրիելյան).....	408
2. ԵՐԿՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (Տաթևիկ Փարսադանյան)	426

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	442
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԵՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ	452
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	459

СОДЕРЖАНИЕ

СЛОВО ОТВЕТСТВЕННОГО РЕДАКТОРА 17

К 65-ЛЕТИЮ УЧЕНОГО И ЧЕЛОВЕКА, ЧЛЕНА КОРРЕСПОНДЕНТА
НАН РА, ДОКТОРА ЭКОНОМИЧЕСКИХ НАУК, ПРОФЕССОРА,
ДИРЕКТОРА ИНСТИТУТА ЭКОНОМИКИ ИМ. М.КОТАНЯНА,
ВЛАДИМИРА АРУТЮНЯНА 20

1. МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

1. ВОЗМОЖНОСТИ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В РА
(Тигран Арутюнян, Лилит Саргсян, Армине Геворгян) 24
2. ВОЗРОЖДЕНИЕ ЭКОНОМИКИ США (УРОКИ ДЛЯ АРМЕНИИ)
(Григорий Ваганян) 40
3. РОЛЬ ЭКСПОРТА ПОЛУФАБРИКАТОВ ИЗ ЗОЛОТА, МЕТАЛЛИЧЕСКИХ
РУД И КОНЦЕНТРАТОВ В ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОГО
РОСТА В АРМЕНИИ В КРАТКОСРОЧНОЙ ПЕРСПЕКТИВЕ
(Сергей Дохолян, Анна Макарян) 64
4. СОЗДАНИЕ ЭФФЕКТИВНЫХ ИННОВАЦИОННЫХ ИНФРАСТРУКТУР КАК
СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (Армине Захарян) 79
5. ЭФФЕКТИВНОСТЬ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ В
КОНТЕКСТЕ АДМИНИСТРАТИВНЫХ РЕФОРМ (НА ПРИМЕРЕ
СЮНИКСКОГО МАРЗА) (Кристине Татосян) 94
6. СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ВАЖНЫХ ЭКОНОМИЧЕСКИХ ФАКТОРОВ
АРМЕНИИ И РЕГИОНАЛЬНЫХ СТРАН (Арсен Эркоян) 111
7. АНАЛИЗ ПРОБЛЕМ В ЗАКОНОДАТЕЛЬНОЙ СФЕРЕ СТРАТЕГИЧЕСКОГО
ПЛАНИРОВАНИЯ РА И ПУТИ ИХ УСТРАНЕНИЯ
(Лилит Саргсян, Евгения Акопян) 126
8. МЕХАНИЗМЫ ОЦЕНКИ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ И КОРРУПЦИОННЫХ
РИСКОВ НА ПРОДОВОЛЬСТВЕННЫХ РЫНКАХ РА
(Лилит Петросян, Арпине Кюрегян) 145

9. МАКРОПРУДЕНЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА. КОНТРЦИКЛИЧЕСКИЙ БУФЕР КАПИТАЛА В АРМЕНИИ, РАЗРЫВ КРЕДИТ/ВВП (Аршак Варджапетян)	161
10. АНАЛИЗ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ЭКОНОМИЧЕСКУЮ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ АРМЕНИИ И РЕГИОНА (Лилит Мурадян).....	175
11. ОБ ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (Лиана Азатян).....	190

2. ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

1. ЦИРКУЛЯРНАЯ ЭКОНОМИКА КАК НЕОБХОДИМОСТЬ ПОВЫШЕНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (Мери Манучарян)	204
2. ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ УРОВНЯ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ РА (Мери Мурадян).....	217
3. ХАРАКТЕР КОРРЕЛЯЦИИ ФАКТОРОВ ПРОИЗВОДСТВА И РАЗВИТИЯ ВИНОГРАДАРСТВА АРМЕНИИ (Оганнес Асатрян)	235
4. ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ МЕТАЛЛУРГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА (Сасун Бахшян).....	252

3. РАЗРАБОТКА УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

1. АНАЛИЗ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ЦИФРОВУЮ ЭКОНОМИКУ, ИНДЕКСОВ И ЦИФРОВАЯ ПОВЕСТКА В АРМЕНИИ (Светлана Даллакян, Саргис Саргсян)	269
2. ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ (Кристине Багдасарян, Сона Григорян)	287
3. ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТРУДА В ЦИФРОВОЙ ЭКОНОМИКЕ (Шогер Погосян)	304

4. ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСНОВЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (Размик Исаакян).....	320
5. ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЗАНЯТОСТИ НАСЕЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (Армине Захарян)	334
6. ТЕНДЕНЦИИ ВОССТАНОВЛЕНИЯ ТУРИЗМА В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ В РА (Гаяне Товмасян).....	348
7. РОЛЬ ФАКТОРОВ, ВЛИЯЮЩИХ НА ПРОЦЕСС ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ АБОНЕНТАМИ, В ПОВЫШЕНИИ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ТЕЛЕКОММУНИКАЦИОННЫХ КОМПАНИЙ: ПРИМЕР АРМЕНИИ (Мариам Погосян).....	365
8. ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ТЕХНОЛОГИЙ БЛОКЧЕЙН В СФЕРЕ БАНКОВСКИХ УСЛУГ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (Татевик Шагинян).....	380
9. РОЛЬ ФИНАНСОВЫХ ТЕХНОЛОГИЙ В ДЕЛЕ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ (Давид Петросян).....	390

4. ТЕОРЕТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ И ИСТОРИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

1. НА СТЫКЕ НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ (Роберт Саринян, Белла Габриелян).....	408
2. ЭКОНОМИЧЕСКИЕ ФАКТОРЫ СОВМЕСТНОЙ КОНЦЕПЦИИ ФОРМИРОВАНИЯ МЕЖДУНАРОДНОГО РЕЙТИНГА СТРАНЫ (Татевик Парсаданян).....	426

ПРИЛОЖЕНИЯ

ПРИЛОЖЕНИЕ 1. ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ПРИМЕНЕНИЯ НАУЧНЫХ НОВИЗН СБОРНИКА	446
ПРИЛОЖЕНИЕ 2. НАШ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ.....	455
ПРИЛОЖЕНИЕ 3. НАШИ АВТОРЫ.....	462

CONTENT

FROM THE RESPONSIBLE EDITOR..... 18

TO THE 65TH ANNIVERSARY OF VLADIMIR HARUTYUNYAN – SCIENTIST AND HUMAN, THE CORRESPONDING MEMBER OF THE NAS RA, DOCTOR OF ECONOMICS, PROFESSOR, DIRECTOR OF M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS..... 20

1. MACROECONOMIC PROBLEMS AND FINANCE

1. OPPORTUNITIES TO ATTRACT INVESTMENTS IN RA
(**Tigran Harutyunyan, Lilit Sargsyan, Armine Gevorgyan**) 24
2. ECONOMIC REVIVAL OF THE UNITED STATES
(Lessons for Armenia) (**Grigori Vahanyan**) 40
3. THE ROLE OF EXPORTS OF SEMI-MANUFACTURED GOLD, METALIC ORES AND CONCENTRATES IN ENSURING ECONOMIC GROWTH IN ARMENIA IN THE SHORT RUN (**Sergey Dokholyan, Anna Makaryan**)..... 64
4. CREATION OF EFFECTIVE INNOVATIVE INFRASTRUCTURES AS A MEANS OF INCREASING THE COMPETITIVENESS OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA (**Armine Zakharyan**)..... 79
5. THE EFFECTIVENESS OF ECONOMIC DECENTRALIZATION IN THE CONTEXT OF ADMINISTRATIVE-TERRITORIAL REFORMS (BY THE EXAMPLE OF SYUNIK REGION) (**Kristine Tatosyan**) 94
6. COMPARATIVE ANALYSIS OF IMPORTANT ECONOMIC FACTORS OF ARMENIA AND REGIONAL COUNTRIES (**Arsen Erkoyan**)..... 111
7. ANALYSIS OF PROBLEMS IN THE LEGISLATIVE SPHERE OF STRATEGIC PLANNING OF THE RA AND WAYS TO REMOVE THEM
(**Lilit Sargsyan, Yevgenya Hakobyan**) 126
8. MECHANISMS FOR ASSESSING THE SHADOW ECONOMY AND CORRUPTION RISKS IN THE FOOD MARKETS IN RA
(**Lilit Manvel Petrosyan, Arpine Kyuregyan**) 145
9. MACROPRUDENTIAL POLICY. COUNTERCYCLICAL CAPITAL BUFFER IN ARMENIA, THE GAP OF LOAN/GDP (**Arshak Varzhapetyan**) 161

10. ANALYSIS BASIC INDICATORS CHARACTERIZING THE ECONOMIC COMPETITIVENESS OF ARMENIA AND THE REGION (Lilit Muradyan).....	175
11. ON ENSURING ECONOMIC SECURITY IN THE REPUBLIC OF ARMENIA (Liana Azatyan).....	190

2. PROBLEMS OF THE REAL SECTOR OF THE ECONOMY

1. CIRCULAR ECOGNOMY AS A NEED TO INCREASE FOOD SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA (Meri Manucharyan)	204
2. FOOD SECURITY AS A FACTOR OF IMPROVING LIVING STANDARDS OF THE RA POPULATION (Mery Muradyan).....	217
3. THE NATURE OF CORRELATION BETWEEN PRODUCTION FACTORS AND VITICULTURE DEVELOPMENT OF ARMENIA (Hovhannes Asatryan)	235
4. PROBLEMS OF SUSTAINABLE DEVELOPMENT OF THE METALLURGICAL INDUSTRY OF RA (Sasun Bakhshyan).....	252

3. SERVICE DEVELOPMENT AND SOCIAL-DEMOGRAPHIC PROBLEMS

1. ANALYSIS OF THE INDEXES CHARACTERIZING THE DIGITAL ECONOMY AND DIGITAL AGENDA IN ARMENIA (Svetlana Dallaqyan, Sargis Sargsyan)	269
2. TOURISM DEVELOPMENT ISSUES IN ARMENIA (Kristine Baghdasaryan, Sona Grigoryan)	287
3. THE LABOR MARKET DEVELOPMENT TRENDS IN DIGITAL ECONOMY CONDITIONS (Shogher Poghosyan).....	304
4. INSTITUTIONAL BASES OF TOURISM DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA (Razmik Isahakyan).....	320
5. PROBLEMS OF POPULATION EMPLOYMENT PROVIDING IN THE REPUBLIC OF ARMENIA (Armine Zakharyan)	334

6. TOURISM RESTORATION TRENDS IN THE CONDITIONS OF PANDEMIC IN THE RA (Gayane Tovmasyan)	348
7. THE ROLE OF FACTORS AFFECTING SUBSCRIBERS' DECISION-MAKING PROCESS IN INCREASING THE COMPETITIVENESS OF TELECOM COMPANIES: THE CASE OF ARMENIA (Mariam Poghosyan).....	365
8. POSSIBILITIES OF APPLICATION OF BLOCKCHAIN TECHNOLOGIES IN BANKING SERVICES OF THE REPUBLIC OF ARMENIA (Tatevik Shahinyan).....	380
9. THE ROLE OF FINANCIAL TECHNOLOGIES IN IMPROVING THE EFFICIENCY OF TAX ADMINISTRATION (David Petrosyan)	390

4. THEORETICAL RESEARCH AND HISTORY OF ECONOMIC THOUGHT

1. AT THE JUNCTION OF THE NATIONAL ECONOMY (Robert Sarinyan, Bella Gabrielyan).....	408
2. ECONOMIC FACTORIES JOINT CONCEPT FOR FORMATION OF A COUNTRY'S INTERNATIONAL RATING (Tatevik Parsadanyan)	426

ANNEX

ANNEX 1. THE EXPEDIENCY OF USING SCIENTIFIC NOVELTIES OF THE JOURNAL.....	449
ANNEX 2. OUR EDITORIAL BOARD.....	457
ANNEX 3. OUR AUTHORS.....	465

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

Միրելի՝ ընթերցող, Ձեր դատին է ներկայացվում «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ժողովածուի 2022 թվականի առաջին համարը, որն ունի մի շարք առանձնահատկություններ.

- Ժողովածուի այս համարը հորեյանական է և նվիրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանի 65-ամյա հորեյանին:
- «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածուն այս տարի ներառվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից 2022 թվականին ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:
- Գիտական հոդվածների վերնագրերը, ամփոփագրերը (200-300 բառ), բանալի բառերը (8-10 բառ) և գիտական նորույթները ներկայացված են երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որը հնարավորություն է տալիս ժողովածուի մասին պատկերացում կազմել նաև ռուսալեզու և անգլիալեզու ընթերցողներին:
- Ժողովածուն ունի բացառիկ կիրառական նշանակություն և հարուստ է արդիական առաջարկություններով, որոնք գործարկելի կարող են լինել երկրի տնտեսության տարբեր ոլորտներում:
- Ժողովածուի Հավելված 1-ում ներկայացված են գիտական նորույթների կիրառման նպատակահարմարությունը՝ ըստ ոլորտների և շահառու պետական գերատեսչությունների:
- Ժողովածուի գիտական նորույթներն ու կիրառական առաջարկությունները գիտական ուղեցույց կարող են հանդիսանալ ինչպես գիտությամբ զբաղվել ցանկացողների, այնպես էլ իշխանությունների երկու թևերի՝ օրենսդիր և գործադիր մարմինների համար:

СЛОВО ОТВЕТСТВЕННОГО РЕДАКТОРА

Уважаемый читатель, на ваше обсуждение представляется первый номер сборника «Современные проблемы социально-экономического развития Республики Армения» за 2022 год, который имеет ряд особенностей:

- Данный выпуск сборника юбилейный и посвящается 65-летию светлой памяти директора Института экономики им М. Котаняна НАН РА, член-корреспондента НАН РА, доктора экономических наук, профессора, Владимира Липаритовича Арутюняна.
- В этом году сборник научных статей «Современные проблемы социально-экономического развития в Республике Армения» включен в список научных изданий ВАК 2022 г., для публикации основных результатов диссертаций.
- Названия, аннотации (200-300 слов), ключевые слова (8-10 слов) научных статей и научные новизны представлены на трех языках (армянский, русский, английский), что дает возможность получить представление о статьях англоязычным и русскоязычным читателям.
- Сборник имеет исключительно практическое значение и богат актуальными предложениями, которые могут быть реализованы в различных отраслях экономики страны.
- В Приложении 1 Сборника представлена целесообразность применения научной новизны по отраслям и государственным ведомствам.
- Научные новизны и предложения сборника могут стать научным ориентиром как для желающих заниматься наукой, так и для двух ветвей власти – законодательной и исполнительной.

FROM THE RESPONSIBLE EDITOR

Dear reader, the first volume of “The Contemporary Issues of Socio-Economic Development in the Republic of Armenia” scientific journal for 2022 is presented to your court. It has number of features:

- This volume of the journal is an anniversary one and is dedicated to the 65th anniversary of the blessed memory of the Director of M. Kotanyan Institute of Economics of the NAS RA, corresponding member of the NAS RA, D. SC. Economics, Professor Vladimir Liparit Harutyunyan.
- “The Contemporary Issues of Socio-Economic Development in the Republic of Armenia” scientific journal has been included in the 2022 list of scientific publications acceptable by the RA Supreme Certifying Committee for publication of the main results and provisions of dissertations.
- The titles, abstracts (200-300 words), keywords (8-10 words) and the scientific novelties of the scientific articles are presented in three languages (Armenian, Russian, English), which makes it possible for Russian-speaking and English-speaking readers to get an idea about the journal.
- The journal has an exceptional applied value and is rich in relevant proposals that can be used in various spheres of the country's economy.
- Annex 1 to the journal presents the expediency of applying scientific novelties by industries and beneficiary state agencies.
- The scientific novelties and applied proposals of the journal could become a scientific guide for those who want to do science as well as for two branches of the government- executive and legislative bodies.



ՎԱԿԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
1957-2022թթ.

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Վ.Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ՝ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Լրացավ հայ տնտեսագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի երկարամյա երջանկահիշատակ տնօրեն Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանի ծննդյան 65-ամյակը: Վ.Հարությունյանն իր ուրույն խոսքը թողեց գիտության ոլորտում՝ իր վերլուծություններին տալով առավել կիրառական նշանակություն, ինչը զուգակցվեց օրենսդրական նոր նախագծերի մշակմամբ:

Վ.Հարությունյանը ծնվել է 1957թ. մայիսի 21-ին Լոռու մարզի Քարինջ գյուղում: 1974թ. ավարտել է Վանաձորի թիվ 1 ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցը: 1979թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1979-1981թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1988թ. Վ.Հարությունյանը ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Վ.Հարությունյանն աշխատել է ինչպես պետական, ֆինանսական, այնպես էլ՝ արտադրական ոլորտներում՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ:

1979-1991թթ. աշխատել է Երևանի քաղաքովորմի ֆինանսական վարչությունում որպես ավագ տնտեսագետ, ապա հաստիքային բաժնի պետ, ֆինանսական վարչության պետի տեղակալ, 1991-1992թթ.՝ Հայագրորանկում որպես բաժնի պետ, 1992-1993թթ.՝ Հայարդշինբանկի մասնաճյուղի կառավարչի տեղակալ, 1993-1997թթ.՝ Երևանի քաղաքովորմի ֆինանսական վարչության պետ, ապա Երևանի քաղաքապետարանի ֆին. բաժնի պետ, 1997-1999թթ.՝ ՀՀ հարկային տեսչության համակարգում որպես վարչության պետի տեղակալ, ապա Շենգավիթի, Շահումյանի, Էրեբունու ՏՀ տեսչությունների պետ, 1999-2000թթ.՝ Հայխնայբանկում որպես բաժնի պետ, 2000-2001թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում որպես ֆինանսական վարչության պետ, «ՀՀ երկաթուղու փոխադրումներ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն, 2001-2002թթ.՝ ՀՀ պետական եկամուտների նախարարության համակարգում որպես Էջմիածնի ՏՀ տեսչության պետ, ապա կենտրոնի ստուգ. վարչության բաժնի պետի տեղակալ, 2002թ.՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ որպես ֆինանսական տնօրեն, 2002-2003թթ.՝ «Արդշին» և «Արդշինինվեստ» բանկերում՝ որպես ադմինիստրացիայի ղեկավարի գլխավոր խորհրդական, մասնաճյուղի կառավարիչ, վարչության պետ, 2003-2005թթ.՝ «Հայաստան համահայկական հիմնադրամում»՝ որպես ֆին. բաժնի պետ, 2005-2006թթ.՝ «Նաիրիտ» ՓԲԸ-ում որպես ֆինանսական տնօրեն:

Հարկաբյուջետային համակարգում երկար տարիների աշխատանքային փորձառության արդյունքում Վ.Հարությունյանը ծանոթացել է համակարգի հիմնախնդիրներին: 2004թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Հարկաբյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով, որի շրջանակներում ներկայացրել է ոլորտի հիմնախնդիրների լուծման գիտական հիմնավորումները: 2007թ. Վ. Հարությունյանը

ստացել է պրոֆեսորի կոչում, իսկ 2010թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2014թ., 2016թ., 2018թ. և 2020թ. դարձել է «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների շահառու:

2003թ. լույս է տեսել Վ.Հարությունյանի «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունը, որում հեղինակը ներկայացրել է ՀՀ-ում հարկային քաղաքականության իրականացման առանձին փուլերը, քննական վերլուծության է ենթարկել «Պարզեցված հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին», «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին», «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքները՝ առաջարկելով հրաժարվել հաստատագրված վճարներից և պարզեցված հարկից: Հեղինակի կողմից ներկայացված այս առաջարկությունները ՀՀ Կառավարության կողմից իրագործվել են 2009-ից:

Վ.Հարությունյանն իր աշխատություններում արծարծել է տվյալ ժամանակի համար արդիական խնդիրներ: Մասնավորապես, 2003-2008թթ. տեղի ունեցող իրադարձությունները, ինչպիսիք էին դրամի փոխարժեքի տատանումները, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով արտաքին առևտրի կտրուկ փոփոխությունները, ստիպեցին տնտեսագետներին նոր լույսի ներքո քննարկելու տվյալ երևույթները և դրանց հնարավոր ազդեցությունները ինչպես ազգային տնտեսության, այնպես էլ միջազգային տնտեսական հարաբերությունների վրա: Այս համատեքստում էլ Վ.Հարությունյանի ղեկավարությամբ իրականացվել է նոր վերլուծություն, որը հրապարակվել է 2009թ.՝ կոլեկտիվ մենագրության տեսքով՝ «Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով: Գրքում հեղինակները հանգամանորեն վերլուծել են արտաքին տնտեսական հարաբերությունների փոփոխման միտումները մարդկության զարգացմանը զուգընթաց, բնութագրել ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության միտումները, դրան խոչընդոտող գործոնները և առաջարկել լուծումներ ՀՀ արտաքին առևտուրն առավել արդյունավետ դարձնելու համար:

Վ.Հարությունյանն իր գիտական վերլուծություններում անդրադարձել է նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներին, առանձնահատկություններին և հնարավոր հետևանքներին: Այս հիմնախնդիրների վերլուծությունը տեղ է գտել Վ.Հարությունյանի «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր», «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում», «Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը» (համահեղինակությամբ), «Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները» (համահեղինակությամբ) աշխատություններում: Գրքերում հեղինակը վերլուծել է աշխարհի տարբեր երկրներում կիրառվող հակաճգնաժամային միջոցառումները՝ ներկայացնելով դրանց տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

2010թ. լույս տեսած «Հարկեր և հարկազանձում» աշխատության մեջ Վ.Հարությունյանն ու մյուս հեղինակները ներկայացրել են հարկերի և հարկազանձման սկզբունքներն ու դրանց հիմքերի փոփոխությունները՝ սկսած հին աշխարհից: Հեղինակները ներկայացրել են գիտական հիմնավորում առ այն, որ ներկայիս հարկատեսակներն այս կամ այն չափով դրսևորվել են մարդկության պատմության ողջ ընթացքում:

Վ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակից դուրս չի մնացել նաև կրթություն-գիտություն-տնտեսություն կապի մեկնաբանումը: Յու.Սուվարյանի, Վ.Հարությունյանի, Վ.Սարգսյանի, Վ.Խաչատրյանի կողմից հրատարակված «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» կոլեկտիվ մենագրությունը նվիրված է այդ կապի բացահայտմանը: Աշխատությունում հեղինակները գիտականորեն հիմնավորում են, որ գործող տնտեսակարգի մրցունակությունը անմիջական առնչություն ունի գիտակրթական մակարդակի հետ:

2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Վ.Հարությունյանն իր առջև խնդիր էր դրել նորընտիր կառավարությանը ներկայացնելու Հայաստանում սովերային գործարքների կրճատմանն ուղղված միջոցառումների համախումբը: Այս համատեքստում 2019թ. Վ.Հարությունյանի կողմից հրատարակվել է «ՀՀ սովերային տնտեսության պատճառների վերլուծությունը» մենագրությունը, որում ամփոփված են ՀՀ-ում սովերային տնտեսության առաջացման առանձնահատկությունները, ինչպես նաև մշակված են սովերային շրջանառության կրճատմանն ուղղված միջոցառումները:

2006-2022թթ. Վ.Հարությունյանը լինելով ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն՝ նոր շունչ է հաղորդել ինստիտուտի գործունեությանը և ապահովել դրա զգալի զարգացումը: Վ.Հարությունյանի նախաձեռնությամբ ամեն տարի ինստիտուտի կողմից կատարվող թեմատիկ վերլուծությունների արդյունքում կիրառական առաջարկությունների փաթեթ էր ներկայացվում ՀՀ կառավարությանը՝ այսպիսով փորձելով ապահովել տնտեսություն-գիտություն կապը: Նրա տնօրինության տարիներին ինստիտուտն անդրադարձել է այնպիսի կարևորագույն թեմաների, ինչպիսիք են Ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդի նյութական կորուստների գնահատումը և դրանց հատուցման հիմնախնդիրները, ԵԱՏՄ անդամակցության հետևանքների գնահատումը, Հայ-թուրքական սահմանի վերաբացման տնտեսական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, հազվագյուտ տարրերի արդյունահանման արդյունավետության գնահատումը, ՀՀ պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները, կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները, միգրացիոն գործընթացների կարգավորման հիմնախնդիրները և այլն:

Վ.Հարությունյանն այն ղեկավարներից էր, ով փորձում էր քայլել ժամանակին համընթաց: Այս համատեքստում նրա նախաձեռնությամբ 2019թ. կազմակերպվեց «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողով, որի ընթացքում ՀՀ նորընտիր

իշխանությանը ներկայացվեցին տնտեսության կարևորագույն խնդիրների լուծման գիտահենք մոտեցումներ: Փորձելով օգնել ՀՀ կառավարությանը՝ երկրի տնտեսության զարգացման ճանապարհին՝ Վ.Հարությունյանի նախաձեռնությամբ ինստիտուտի կողմից հրապարակվեցին «Տնտեսական հրաշքներ. գործարկման ուղիները ՀՀ-ում» և «Տնտեսական նորոգություններ. գործարկման ուղիները ՀՀ-ում» գիտական հոդվածների ժողովածուները, որոնցում ներկայացված են աշխարհի մոտ 40 երկրի փորձն ու գործիքակազմը՝ արագ տնտեսական զարգացում ապահովելու համար:

Վ.Հարությունյանը գիտության բնագավառներում ունեցած ստեղծագործական նվաճումների համար պարգևատրվել է Մովսես Խորենացի մեդալով: Նա կրթել է երիտասարդ գիտնականների՝ ղեկավար և գիտական խորհրդատու հանդիսանալով շուրջ 50 երիտասարդ տնտեսագետների համար: Վ.Հարությունյանը հեղինակ է 20-ից ավելի գրքերի և շուրջ 150 գիտական հոդվածների:

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհուրդ**

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տիգրան Վլադիմիրի Հարությունյան Լիլիթ Նորայրի Սարգսյան Արմինե Վարդանի Գևորգյան

Հոդվածը ստացվել է՝ 24.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 28.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Ներդրումների ներգրավումը հանդիսանում է զարգացող և զարգացած երկրների արտաքին տնտեսական քաղաքականության անբաժան մասը: Վերջին տարիներին Հայաստանում հայտնի իրողությունների արդյունքում առաջացած հիմնախնդիրները տնտեսագետների մի մասի մոտ լուրջ մտահոգություններ են առաջացնում առ այն, որ առաջիկայում Հայաստանում դժվար կլինի իրականացնել ներդրումների ներգրավման արդյունավետ քաղաքականություն: Այդուհանդերձ, պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանը միակը չէ, որ տուժել է պատերազմից: Պատմությանը հայտնի են Ճապոնիայի, Մինգապուրի և այլ երկրների օրինակները, որոնք տուժելով պատերազմից և ունենալով զրեթե ամբողջությամբ քայքայված տնտեսություն, կարողացել են արդյունավետ տնտեսական քաղաքականության շնորհիվ կառուցել աճող տնտեսություն և նվազ, քան հիսնամյա ժամանակահատվածում մի շարք ցուցանիշներով դառնալ աշխարհի առաջատար երկրներից մեկը: Նմանատիպ երկրների փորձը հուսադրող և միևնույն ժամանակ նաև՝ պարտավորեցնող է:

Միջազգային փորձը վկայում է, որ ճգնաժամային իրավիճակում հայտնված և հատկապես՝ փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար ներքին ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով ավելի արագ աճի կարողանում են հասնել օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ ներկայում ՀՀ տնտեսության զարգացման համար հատկապես՝ իրական հատվածում, ներդրումների ներգրավումը զրեթե չունի այլընտրանք:

Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ-ում ներդրումների ներգրավման համար հնարավոր գրավիչ ոլորտները՝ բազմաքայլ վերլուծության հիման վրա: Այդ նպատակին հասնելու համար լուծվել են հետևյալ խնդիրները. վերլուծել առկա գրականությունը, բացահայտել տվյալ ոլորտում առկա փաստաթղթավորված խնդիրները, ամփոփ ներկայացնել ՀՀ պետական քաղաքականության ապագա ռազմավարությունը, վեր հանել ՀՀ արտահանման ներուժ ունեցող ոլորտները:

Գրականության վերլուծություն: Տնտեսագիտական գրականության, ինչպես նաև տարբեր տնտեսագետների կողմից կատարած վերլուծությունների մեջ

առանձնացվում են ներդրումների ներգրավման տեսությունների ամենատարբեր ուղղություններ, ուստի հիմնվելով մասնագիտական գրականության վրա՝ ամփոփ կներկայացնենք ներդրումների ներգրավման տեսությունների մինչ օրս հայտնի ուղղությունները՝ հնարավորինս լայն ընդգրկվածությամբ:

Այսպիսով, համաձայն մասնագիտական գրականության¹՝ ներդրումների ներգրավման տեսությունները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորումներով՝ 1. Ներքինացման (internalization) և շուկայի անկատարության (որոշ աղբյուրներում՝ շահույթի վերադարձելիության և մոնոպոլ առավելության, կամ Բազմազգ կորպորացիաների և շուկայի անկատարության) տեսություն, 2. Ապրանքի արտադրության կենսացիկլի տեսություն, 3. Միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսություն, 4. Օլիգոպոլիայի և ներդրումների ներգրավման տեսություն, 5. Թռչող սագերի տեսություն և այլն:

Ներքինացման (internalization) և շուկայի անկատարության տեսության նախահիմքերը դրվել են դեռևս 1960թ. ՄակԴուգալի կողմից, ով Ավստրիալիայի օրինակով փորձում է ցույց տալ երկրի իրական եկամտի տարբերությունը ՕՈՒՆ ներգրավումից առաջ և հետո²: Նույն գաղափարը վերլուծել է Հայմերը 1960թ.՝ առաջին անգամ մեկնաբանելով այն բազմազգ կազմակերպությունների տեսանկյունից իր թեկնածուական ատենախոսությունում, որը հրատարակվել է հետմահու՝ 1976թ.: Նա հանգել է այն եզրակացության, որ բազմազգ կազմակերպությունները ներդրումներ են կատարում այն երկրներում, որոնցում գործող կազմակերպությունների համեմատ կարող են ունենալ մոնոպոլ առավելություններ՝ շնորհիվ այն հումքի, աշխատուժի և այլ գործոնների, որոնք կկարողանան օգտագործել տվյալ երկրում ներդրում կատարելով³:

Այս տեսության մաս է կազմում նաև 1969թ. Կինդլերգի կողմից առաջ քաշված պնդումն առ այն, որ ՕՈՒՆ ներհոսքը մեծապես կախված է ընդունող երկրի շուկայի անկատարությունից, որոնք կարող են արտահայտվել ընդունող երկրում գործող ձեռնարկությունների առևտրային քաղաքականությունների, արտադրության գործոնների օգտագործման, մասշտաբի էֆեկտի տնօրինման և կառավարության կողմից վարվող արտաքին տնտեսական քաղաքականության մեջ առկա թերացումների տեսքով⁴:

¹ Осеи Д. Д., ОБЗОР ТЕОРИИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ (ПИИ), Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ), 2016 № 2 (54), стр.196-202, <https://cyberleninka.ru/article/n/obzor-teorii-pryamyh-inostrannyh-investitsiy-pii/viewer>

Marandu Edward E. , Ditshweu Tebo, An Overview of the Key Theories of Foreign Direct Investment: The Way Forward, Advances in Social Sciences Research Journal – Vol.5, No.12, 2018, p. 30-39, DoI:10.14738/assrj.512.5741.

² MacDougall, G. D. A. The benefits and costs of private investment from abroad: A theoretical approach. Economic Record, 26, 1960. p. 13–35

³ Hymer S. H., The International Operations of National Firms: A Study of Direct Foreign Investment, PhD Dissertation, Published posthumously, The MIT Press, Cambridge, Mass, 1976, p.43-44, <https://dspace.mit.edu/handle/1721.1/27375>

⁴ Հեյդարի Մոհսեն, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, թեկնածուական աստիճանի հայցման ատենախոսություն, 2018, էջ 32-33

Ապրանքի արտադրության կենսացիկլի տեսության առաջամարտիկներից Վեռնոնը ցույց է տալիս, թե ինչպես է կատարվում արտերկրում ներդրում կատարելու և տեղում արտահանելու ու արտերկիր արտահանելու քաղաքականությունների միջև ընտրությունը՝ կախված ապրանքի կենսացիկլից: Վեռնոնը պնդում է, որ ընկերությունը տվյալ որոշումը կայացնում է կախված նրանից, թե տվյալ պահին ապրանքը իր կենսացիկլի որ փուլում է (տրարարություն, աճ, հասունություն, անկում) գտնվում¹:

Միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսության հիմնադիրներից Ջ.Գելբրեյթը միջազգային կորպորացիաների զարգացումը պայմանավորում է տեխնոլոգիական գործոններով, որոնք նրանց հնարավորություն են տալիս շահել արտերկրյա շուկաների անկատարությունից²:

Օլիգոպոլիայի և ներդրումների ներգրավման տեսությունը կրկին անդրադառնում է շուկայի անկատարությանը, տվյալ դեպքում՝ օլիգոպոլիաների առկայությանը: Տեսության կողմնակիցներից Կնիկերբոկերը պնդում, որ կազմակերպությունները օլիգոպոլ շուկաներում հետևում են միմյանց կայացրած որոշումներին և հաճախ կրկնօրինակում են այն քայլերը, որ կիրառում է մրցակից կազմակերպությունը: Հեղինակը տվյալ գաղափարը բացատրում է նրանով, որ ֆիրմաները արտերկրում ներդրումներ կատարելիս բախվում են տվյալ երկրում գործունեություն ծավալելու համար ծախսերի հաշվարկման դժվարությունների հետ: Այդ պատճառով հետևում են օլիգոպոլ շուկայի մյուս մասնակիցներին՝ հասկանալու համար արդյոք նրանց կողմից այս կամ այն երկրում կատարած ներդրումն արդարացված է և դրանից հետո միայն որոշում կայացնում ներդրում կատարելու մասին³:

Թռչող սազերի տեսության նախահայր կարելի է համարել ճապոնացի գիտնական Ակամացուին: Նա դուրս է բերել մի հետաքրքիր օրինաչափություն համաձայն որի երկիրը ներմուծում է որոշակի ապրանք այնքան ժամանակ, մինչև որ սկսում է այդ ապրանքի տեղական արտադրությունը, որն էլ հետագայում զարգանալով՝ դառնում է արտահանվող ապրանք⁴:

¹ Vernon R.. International investments and international trade in the product life cycle, Quarterly Journal of Economics, May, 1966, pp. 190–207, <https://doi.org/10.2307/1880689>
<http://bev.berkeley.edu/ipe/readings/International%20Investment%20and%20International%20Trade%20in%20the%20Product%20Cycle.pdf>

² Dunn S.P., Pressman S., The economic contributions of John Kenneth Galbraith, Review of Political Economy, Vol. 17, No. 2, 2005, p. 171 /pp. 161–209/, DOI:[10.1080/09538250500067254](https://doi.org/10.1080/09538250500067254)
https://www.researchgate.net/publication/24088369_The_Economic_Contributions_of_John_Kenneth_Galbraith

³ Nayak, Dinkar; Choudhury, Rahul N. (2014) : A selective review of foreign direct investment theories, ARTNeT Working Paper Series, No. 143, Asia-Pacific Research and Training Network on Trade (ARTNeT), Bangkok, p.8

⁴ Akamatsu Kaname, The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries, Essays in Honor of Dr. Ueda Teijir, Vol. 4, Research on Population and the East Asian Economy, 1943, pp. 565–577

Հետագայում կրկին ճապոնացի գիտնականներ Կոջիման¹ և Օզավան² «Թռչող սագերի» տեսությունը բացատրեցին երկրի առաջանցիկ աճի տեսանկյունից:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմք են հանդիսացել հայ և օտարերկրյա գիտնականների կողմից մշակված գրքերն ու վերլուծությունները, տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու միջազգային գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները, ինչպես նաև այս թեմայով պաշտպանած ատենախոսությունները:

Կատարվող հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքման, վերլուծության և մշակման, սոցիոլոգիական հարցման, և այլ մեթոդներ:

Վերլուծություն: Ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտման համար մեր կողմից իրականացվել է հետևյալ 4 քայլից բաղկացած մոտեցումը՝

1. Փաստաթղթային վերլուծության միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,
2. Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում,
3. Բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում՝ հիմնվելով այդ ոլորտների արտահանման բացահայտ համեմատական առավելության ինդեքսի վրա,
4. Բացահայտել ՀՀ ներդրումների համար նպաստավոր ոլորտները՝ ըստ ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի (FDI Regulatory Restrictiveness Index)³:

Իրականում վերոնշյալ քայլերից 2-րդի անհրաժեշտությունն առաջացավ հընթացս, քանի որ փաստաթղթային վերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ ներկայում ՀՀ տնտեսության համար գերակա համարվող ոլորտների զարգացման ընթացքը լիարժեք փաստաթղթավորված չէ, և այդ բացը պետք է լրացնել հարցումների միջոցով:

1. Փաստաթղթային վերլուծության միջոցով միջոցով ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում

Փաստաթղթային վերլուծության նպատակն է պարզել, թե ներկայում Հայաստանի որ ոլորտների զարգացման ռազմավարությունն է փաստաթղթավորված, որ ոլորտներում են եղել մշակված և ներդրված զարգացման ռազմավարություններ և արդյոք դրանց արդյունքում տվյալ ոլորտը հասել է զարգացման թիրախային մակարդակի և կարող է գրավիչ լինել ներդրողների համար:

¹ Kojima Kiyoshi, The “flying geese” model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications, *Journal of Asian Economics* 11 (2000) p.375–401

² Ozawa Terutomo, The (Japan-Born) “Flying-Geese” Theory of Economic Development Revisited—and Reformulated from a Structuralist Perspective, center on Japanese economy and business, Working Paper Series October 2010, No. 291, <https://core.ac.uk/download/pdf/161436271.pdf>

³ <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>

Փաստաթղթային վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ներկայում մշակված և գործունեության մեջ դրված ոլորտային զարգացման ռազմավարություն առկա է միայն **գյուղատնտեսության** համար¹:

Այդուհանդերձ առկա են նաև այլ ոլորտների զարգացման ռազմավարություններ, որոնք մշակվել են նախկինում, սակայն կամ առհասարակ կյանքի չեն կոչվել, կամ չեն հասել դրանցում նախանշած թիրախային զարգացման ցուցանիշներին: Մասնավորապես՝ Ճզգրիտ ճարտարագիտության 2011-2020թթ. ոլորտային ռազմավարության թիրախները², ինչպիսիք են ռեզիդնալ նշանակության միջազգային համալսարանի և մասնագիտացված ճարտարագիտական քլաստերների ձևավորումը, երկրի բերնդինգը ճարտարագիտության ասպարեզում, գիտելիքի առևտրայնացման համակարգի հիմնումը և այլն, մնացել են հիմնականում անկատար, ինչի արդյունքում ոլորտը մինչ օրս գրավիչ չի դարձել ներդրումների համար:

Նմանատիպ իրավիճակ է Դեղագործության և բիոտեխնոլոգիաների 2011-2020թթ. ոլորտային ռազմավարության³ կատարողականի տեսանկյունից: Մասնավորապես՝ անկատար են մնացել տեղական հումքային բազայի ստեղծումը, առաջատար անդրազգային կազմակերպությունների ներգրավումը, արտոնագրային ժամկետը լրացած դեղերի հիման վրա հայկական բրենդավորված նոր ջեներիկ դեղերի արտադրության նախագիծը և այլն:

Մյուս ոլորտային ռազմավարությունը, որն ի տարբերություն նախորդների բավականաչափ կետերի կատարողականություն է ապահովել, Կոնյակագործության ոլորտի 2011-2020թթ. ռազմավարությունն է⁴: Այս ռազմավարության կատարման մեջ թերևս ամենամեծ թերացումը կարող ենք համարել արտահանման շուկաների և բրենդինգի մասով նախանշված թիրախներին չհասնելու հանգամանքը:

Փաստաթղթավորված զարգացում նախատեսված է եղել նաև ժամագործության և ոսկերչության ոլորտների համար⁵, որը ևս հիմնականում չի իրականացվել: Մասնավորապես՝ անկատար են մնացել առաջնդման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկումը, միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով ոլորտների առաջնդումը, ոլորտում ՕՈՒՆ ներգրավումը և այլն:

Ադամանդագործության ոլորտի զարգացման ռազմավարությունը⁶ ևս կարող ենք համարել չիրագործված: Մասնավորապես՝ անկատար են մնացել այնպիսի կարևոր դրույթներ, ինչպիսիք են ադամանդի մշակման արտապատվիրման ծավալների աճը՝ ի հաշիվ նոր գլոբալ ընկերությունների ներգրավման, տեղա-

¹ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն՝ <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

² <https://www.mineconomy.am/media/2239/1480.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

³ <https://www.mineconomy.am/media/2238/1479.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁴ <https://www.mineconomy.am/media/2237/1478.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁵ <https://www.mineconomy.am/media/2235/1476.pdf>, <https://www.mineconomy.am/media/2234/1475.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

⁶ <https://www.mineconomy.am/media/2233/1474.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

կան ընկերությունների հզորացումը և տարածաշրջանային առևտրի կենտրոնի ձևավորումը և այլն:

Տեքստիլի և տրիկոտաժի ոլորտների զարգացման ռազմավարությունը¹ ևս կարելի է գնահատել թերի իրականացված, քանի որ մինչև 2020թ. արդեն իսկ պետք է ապահովված լիներ հետևյալ դրույթները, որոնք մինչ օրս իրականացված չեն՝ գործվածքի տեղական արտադրության հիմնում, 3-5 ռեզիոնալ բրենդերի առկայություն և այլն:

Նախկինում մշակված և մինչ օրս ամբողջապես կյանքի չկոչված հաջորդ ռազմավարությունը կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությունն է²: Փաստացի տապալված է հետևյալ դրույթների իրականացումը՝ կոշիկի առկա արտադրական հզորությունների վերագործարկում, հայկական արտադրանքի բրենդի ստեղծում և մասշտաբային արտահանում և այլն:

Ըստ որում, չենք կարող ռազմավարությունների թերակատարման փաստը արդարացնել 2018թ. իշխանափոխությամբ, քանի որ մինչ այդ դրանց կատարման համար առկա էր յոթնամյա ժամանակահատված: Ստացվում է, որ փաստաթղթային վերլուծության արդյունքում այս պահի դրությամբ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ չենք կարող արձանագրել, միայն գյուղատնտեսության ոլորտը կարող է հավակնել առաջիկա տարիներին դառնալ գրավիչ ոլորտ, քանզի դրա զարգացման ռազմավարության մեջ ներառված դրույթները առկա են նաև Կառավարության գործողությունների ծրագրում:

2. Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման միջոցով ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում

Հարցումներն անցկացվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համագործակցության շրջանակում՝ համադրելով այն համագործակցության շրջանակում կատարվող մեկ այլ՝ ՀՀ-ում մասնագիտական պահանջարկի կանխատեսման, աշխատանքների հետ: Մեր կողմից պետական գերատեսչություններում անցկացված հարցումների հիման վրա փորձել ենք պարզել, թե որոնք են տվյալ պետական գերատեսչության համար հեռանկարային զարգացման ուղղությունները առաջիկա 3, 5 և 10 տարիների կտրվածքով: Հարցումներն իրականացրել ենք բոլոր պետական գերատեսչություններում՝ բացառությամբ Պաշտպանության և Շրջակա միջավայրի նախարարությունների, որոնք հրաժարվեցին պատասխանել հարցմանը: Տվյալ պարագայում մեզ համար առանցքային էր ՀՀ Էկոնոմիկայի նախարարության փոխնախարարների հետ հարցումը, սակայն մյուս պետական գերատեսչություններում անցկացված հարցումները կարող էին հնարավորություն տալ բացահայտելու այնպիսի ոլորտների պոտենցիալ զարգացման հնարավորություն, որոնք ներկայում չի նախատեսում Էկոնոմիկայի նախարարությունը, սակայն հետագայում կնախատեսի՝ ըստ պետության զարգացման առաջնահերթությունների:

¹ <https://www.mineconomy.am/media/2232/1473.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.


² <https://www.mineconomy.am/media/2231/1472.pdf> վերջին մուտքը՝ 10.10.2021թ.

Այսպիսով՝ հարցման ընդհանուր դիտարկումների թիվը 17 է, հարցումն անցկացվել է դեմ առ դեմ հանդիպումների միջոցով՝ 2021թ. հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում: Հարցաթերթիկը պարունակել է 3 հիմնական հարց՝

- Ո՞ր ոլորտներն են համարվում զարգացման համար գերակա առաջիկա 3, 5, 10 տարիների համար,
- Արդյո՞ք առկա է նշված ոլորտների զարգացման ռազմավարություն կամ ներառվա՞ծ են դրանք ՀՀ Կառավարության ծրագրում
- Ի՞նչ գործոնների ազդեցության հիման վրա է տվյալ ոլորտը համարվել գերակա (պետության ռազմավարական գերակայություն, գլոբալ միտումներ, ԵԱՏՄ միասնական շուկայի զարգացումներ, արտահանման պոտենցիալ և այլն):

Ամփոփ ներկայացնենք ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք պետական գերատեսչությունները դիտարկում են որպես զարգացման գերակայություն առաջիկա 10 տարվա համար՝ նշելով, որ ներկայում դրանց զարգացմանն ուղղված ռազմավարությունները մշակման փուլում են և նախատեսվելու են բազմաթիվ արտոնություններ տվյալ ոլորտում ներդրում կատարող տնտեսվարող սուբյեկտների համար:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի համար առաջիկա 10 տարիների կտրվածքով զարգացման գերակայություն և ըստ այդմ նաև՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ կդառնան հետևյալները՝ Գյուղատնտեսություն, Մետալուրգիա, Քիմիական արդյունաբերություն, Դեղագործություն, Ոսկերչություն, Ադամանդագործություն, Էներգետիկա (հատկապես՝ արևային էներգիայի արտադրություն և արևային պանելների արտադրություն), ՏՏ (հատկապես շեշտադրված՝ արհեստական բանականություն, ռոբոտաշինություն, քվանտային ինժեներիա):



Գծապատկեր 1. Հարցման արդյունքում բացահայտված ՀՀ առաջիկա 10 տարիների համար գերակա ոլորտների փաստաթղթավորվածությունը և արտահանման պոտենցիալը¹

¹ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ ըստ հարցման արդյունքների

Վերոնշյալ ոլորտները առաջիկայում կդառնան ներդրումների համար ամենագրավիչ և հիմնական ներդրումներ կլանող ոլորտները: Նշենք, որ այս ոլորտները թերևս հնարավոր չէր լինի բացահայտել որևէ այլ վերլուծության միջոցով, քանի որ դրանց գերակայությունը դեռևս փաստաթղթավորված չէ՝ բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, ընդ որում՝ բոլոր ոլորտներն ունեն արտահանման պոտենցիալ՝ գծապատկեր 1:

3. ՀՀ-ում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտում՝ բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հիման վրա

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների մեթոդները:

Վերլուծություն

Ինովացիոն ենթակառուցվածքը, հանդիսանալով ինովացիոն գործունեության կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքերից մեկը², իրենից ներկայացնում է փոխկապակցված կառույցների համալիր, որը նպաստում է ինովացիոն գործունեության իրականացմանը: Այն բաղկացած է ինովացիոն և տեխնոլոգիական կենտրոններից, տեխնոլոգիական ինկուբատորներից, տեխնոլոգիական պարկերից, կրթական և բիզնես կենտրոններից և այլն: Արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքը ենթադրում է նաև համապատասխան լոգիստիկական համակարգի առկայություն: ՀՀ-ում ինովացիոն ենթակառուցվածքի ձևավորումը կարևորագույն խնդիր է ոչ միայն գիտատեխնիկական ոլորտի զարգացման, այլև ազգային տնտեսության մրցունակության բարձրացման առումով:

Ինչպես գիտեք, ինովացիոն ենթակառուցվածքը ինովացիոն տնտեսության գործունեության հիմնական տարրն ու մեխանիզմն է, որը կարող է ապահովել տնտեսական զարգացման բարձր մակարդակ, ինչպես նաև որոշակիորեն դանդաղեցնել տնտեսական աճը: Ինովացիոն տնտեսություն ձևավորելու համար

¹ Technology and innovation report 2021, United nations conference on trade and development.

² Վ.Բոստանջյան, Ա.Ջախարյան, Ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր ՀՊՏՀ», 2020 N1, էջ 132-151:

տնտեսական համակարգում անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կազմակերպություններ և ինստիտուտներ, փոխգործակցության և տնտեսական գործընթացների կազմակերպման կանոններ, որոնք կխթանեն ինովացիոն գործունեությունը¹:

Ինովացիոն արդյունավետ ենթակառուցվածքը, հանդիսանալով ինովացիոն և ներդրումային գործունեության կարևորագույն ինստիտուցիոնալ հիմքերից մեկը, առաջին հերթին, ենթադրում է արդյունավետ ինովացիոն լոգիստիկ համակարգի առկայություն: Քանի որ ինովացիոն արտադրանքների մշակման և շուկա վաճառահանման ժամկետներն ունեն մշտական կրճատման անհրաժեշտություն, ուստի արդյունավետ լոգիստիկ համակարգի դերն էլ ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով շուկայում ինովացիոն արտադրանքների նկատմամբ պահանջարկի մշտական փոփոխության արագությունը: ՀՀ-ում ազգային ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծումը կարևորագույն խնդիր է հանդիսանում ոչ միայն գիտատեխնիկական ոլորտի զարգացման, այլև ազգային տնտեսության մրցունակության բարձրացման առումով: Ներկայում նոր տեխնոլոգիաների առևտրայնացումը հանդիսանում է ազգային ինովացիոն ենթակառուցվածքի շրջանակներում նորամուծությունների մշակման և իրացման մեխանիզմի կարևորագույն տարրը:

Արդի պայմաններում ինովացիոն ենթակառուցվածքի զարգացման խնդիրները ներառում են.

- նորարարությունների մշակման և դրանց առևտրայնացման նպատակով շուկայական առաջարկի և պահանջարկի արդյունավետ հարաբերակցության և շուկայական մրցակցության խթանում,

- տնտեսության գիտելիքատար ճյուղերի զարգացում,
- տեխնոլոգիաների դիֆուզիոն գործընթացների խթանում,
- տնտեսության և ենթակառուցվածքների արդիականացում.
- մարդկային կապիտալի արդիականացում և արդյունավետության բարձրացում՝ նրա ստեղծագործական և նորարարական մտածողության զարգացման միջոցով,

- հետազոտական նախագծերի անկախ և օբյեկտիվ փորձաքննություն,
- տնտեսության ինովացիոն զարգացման օրենսդրաիրավական հիմքերի ամրապնդում և այլն:

Սովորաբար առանձնանում են ինովացիոն ենթակառուցվածքի հետևյալ հիմնական տեսակները (ենթահամակարգերը)².

- **Ֆինանսական** տարբեր տեսակի հիմնադրամներ (բյուջետային, վենչուրային, ապահովագրական, ներդրումային), ինչպես նաև այլ ֆինանսական հաստատություններ, ինչպիսիք են արժեթղթերի շուկան, հատկապես բարձր տեխնոլոգիական ընկերությունների ներգրավմամբ:

¹ Баев С.А. — Теоретические основы развития инновационной инфраструктуры // Финансы и управление. – 2021. – № 4. – С. 83 - 98.

² Соколов Д.С., Томилина Н.С. Инновационная инфраструктура в современной России: понятие, содержание, особенности, Международный научный журнал «Инновационная наука», №1/2016, с. 172-177.

• **Արտադրական և տեխնոլոգիական՝** տեխնոլոգիական պարկեր, ինովացիոն և տեխնոլոգիական կենտրոններ, բիզնես ինկուբատորներ և այլն:

• **Տեղեկատվական՝** տվյալների բազաներ, գիտելիքի ստեղծման կենտրոններ, ինչպես նաև վերլուծական, վիճակագրական, տեղեկատվական և այլն կենտրոններ (այսինքն՝ ծառայություններ մատուցող կազմակերպություններ);

• **Կադրային՝** գիտական և նորարարական կառավարման, տեխնոլոգիական աուդիտի, մարքեթինգի և այլն ոլորտներում կադրերի պատրաստման և վերապատրաստման ուսումնական հաստատություններ:

• **Փորձագիտական և խորհրդատվական՝** մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման, սերտիֆիկացման ծառայությունների մատուցմամբ զբաղվող կազմակերպություններ և խորհրդատվական կենտրոններ, ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի ոլորտներում մասնագիտացված (ֆինանսներ, ներդրումներ, մարքեթինգ, կառավարում և այլն):

Ժամանակակից գիտության մեջ կան ինովացիոն ենթակառուցվածքների զգալի թվով դասակարգումներ: Աղյուսակ 1-ում ներկայացված է այս ենթակառուցվածքի տարրերի ընդհանուր սխեման:

Աղյուսակ 1

Ինովացիոն ենթակառուցվածքների ընդհանուր սխեման¹

Արտադրական և տեխնոլոգիական բաղադրիչ	Խորհրդատվական բաղադրիչ	Ֆինանսական բաղադրիչ	Կադրային բաղադրիչ	Տեղեկատվական բաղադրիչ	Վաճառքի բաղադրիչ
Ինովացիոն-տեխնոլոգիական կենտրոններ և տեխնոպարկեր	Տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ	Բյուջետային միջոցներ	Անձնակազմի որակավորման բարձրացում նորարարության ոլորտում	Գիտատեխնիկական տեղեկատվության պետական համակարգ	Արտաքին առևտրային միավորումներ
Ինովացիոն-արդյունաբերական համալիրներ	Խորհրդատվություն տնտեսագիտության և ֆինանսների ոլորտում	Տեխնոլոգիական զարգացման բյուջետային և արտաբյուջետային ֆոնդեր	Տեխնոլոգիական և գիտական կառավարման ոլորտում մասնագետների պատրաստում	Փոքր բիզնեսի աջակցության կառույցների ռեսուրսներ	Մասնագիտացված միջնորդ ընկերություններ
Տեխնոլոգիական կլաստերներ	Տեխնոլոգիական խորհրդատվություն	Վենչուրային հիմնադրամներ		Տարածաշրջանային տեղեկատվական ցանցեր	Ինտերնետ
Տեխնիկական ներդրման գոտիներ	Մարքեթինգային խորհրդատվություն	Ֆինանսական ներարկումների և մեկնարկային հիմնադրամներ		Ինտերնետ	Ցուցահանդեսներ
Բարձր տեխնոլոգիական սարքավորումների կոլեկտիվ օգտագործման կենտրոններ	Խորհրդատվություն արտաքին տնտեսական գործունեության ոլորտում	Երաշխիքային կառույցներ և հիմնադրամներ			

¹ Солдатова А.О. Инновационная инфраструктура как основа развития инновационной деятельности, научный журнал «Актуальные вопросы экономических наук», N47, 2015, с. 94-98.

Անշուշտ, բոլոր զարգացած և զարգացող երկրների տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը՝ ինովացիոն արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծումն է, քանի որ վերջինս հանդիսանում է տնտեսական վիճակի բարելավման կարևորագույն միջոց: Սովորաբար, ինովացիոն ենթակառուցվածքները ստեղծվում են տնտեսական անկման ժամանակահատվածում, որն ուղեկցվում է աշխատատեղերի կրճատմամբ, ինչպես նաև գիտական զարգացմանն ուղղվող բյուջետային հատկացումների ծավալների նվազմամբ: Ներկայում լայն տարածում ունեն գիտատեխնիկական պարկերը, տեխնոպոլիսները, բարձր տեխնոլոգիաների կենտրոնները և բիզնես ինկուբատորները:

Տեխնոպարկերը ապահովում են նոր աշխատատեղեր և նպաստում են արտադրության անցմանը նոր տեխնոլոգիաների: Տեխնոպարկերն ընդունված է դասակարգել հետևյալ կերպ.

1. **Հետազոտական՝** բավարարում են գիտական մշակումների արդյունավետ իրականացման պահանջը:

2. **Արդյունաբերական՝** զբաղվում են աշխատատեղերի և արտադրական տարածքների ստեղծմամբ:

3. **Տեխնոլոգիական՝** օգնում են փոքր արտադրությունների կազմակերպմանը և գիտատեխնիկական մշակումների արդյունքների առևտրայնացմանը:

Բիզնես ինկուբատորները ստեղծվում են փոքր գիտատար ձեռնարկությունների զարգացման համար: Ստորև ներկայացնենք համաաշխարհային պրակտիկայում հայտնի բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի և տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման պատճառները:

Աղյուսակ 2

Համաաշխարհային պրակտիկայում բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի և տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման պատճառները¹

Պարկի անվանումը	Ստեղծման պատճառները
ԱՄՆ-ի Իլլի-նոյս նահանգի Էվանստոն հետազոտական պարկը	Արտադրվող արտադրանքի մրցունակության նվազումը: Հասարակության մտահոգությունը «ուղեղների արտահոսքի» կապակցությամբ: Ինովացիոն գործունեության և արտադրության ծավալների կրճատումը, ինչը հանգեցրել է աշխատատեղերի կրճատմանը: Նահանգին հատկացվող հարկային վճարումների կրճատումը, ինչը հնգեցրել է գիտության և կրթության զարգացման սահմանափակմանը:
ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Օստին քաղաքի համալսարանի հետազոտական ինկուբատորը	Վերակառուցման իրականացմամբ պայմանավորված դժվարությունների հաղթահարման անհրաժեշտությունը: Հետազոտությունների իրականացման և ԲՈՒՀ-երին աջակցելու համար հատկացվող դաշնային միջոցների կրճատումը 1/3-ով:


¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

<p>Ղորտմունդ քաղաքի տեխնոլոգիական պարկը Սաարբրյուկկեն քաղաքի ինովացիոն տեխնոլոգիական կենտրոնը Շվերտե, Աախեն, Հաննովեր, Մյունխեն (Գերմանիա) քաղաքների տեխնոլոգիական կենտրոնները</p>	<p>Պողպատի ձուլման արտադրության գերակայությունից տնտեսական բազմազանությանն անցման ձգտումը, ծանր արդյունաբերության մեկ կամ երկու ճյուղերից կախվածության նվազեցման ձգտումը: Տնտեսական դեպրեսիայի հաղթահարումը:</p>
<p>Ճապոնիայի տեխնոպոլիսները</p>	<p>Ղեպի գիտատար ճյուղերը, տնտեսության սոֆտիզացիան, փոքր և միջին գիտատար ֆիրմաների զարգացումը, տեխնոլոգիական տրանսֆերտի համակարգը կողմնորոշված կառուցվածքային վերափոխման իրականացման անհրաժեշտությանն արձագանքումը: Ելք դեպի գիտատեխնիկական արտադրանքի համաշխարհային շուկա և այտեղ առաջնորդության համար պայքար, տնտեսական աճի տեմպերի կայունացման պայմաններում աճի կենտրոնների ստեղծումը:</p>

Ինչպես հայտնի է, ինովացիոն գործընթացի կառավարումը պահանջում է նաև սոցիալական մեխանիզմներ: Հիմնականում դա կապված է ինովացիոն գործունեությանը բնորոշ անորոշության հետ: Մշտապես գոյություն ունի ռիսկ, որ մշակված ինովացիոն լուծումների գինը կլինի բարձր կամ նոր արտադրանքն անհաջողություն կունենա շուկայում: Ինովացիոն ենթակառուցվածքը բաշխում է ռիսկը հետևյալ ուղղություններով. ինովացիոն գործընթացի փուլերով, վենչուրի մասնակիցների միջև, պետության և ինստիտուցիոնալ ներդրողների միջև, ինչպես նաև նվազեցնում է ներդրումային ռիսկը որոշակի տարածաշրջաններում: Անշուշտ, ինովացիոն և ներդրումային գործունեության արդյունավետությունը սերտորեն կապված է առևտրային հաջողության հասնելու հնարավորության հետ:

Վերափոխվող հասարակության մեջ ինովացիոն ենթակառուցվածքը կարող է օգնել գիտության ներթափանցմանը շուկայական միջավայր և գիտատեխնիկական ոլորտում ձեռնարկատիրության զարգացմանը: Հենց այդ պատճառով էլ նրա ձևավորումը որոշվում է շուկայի ենթակառուցվածքի վիճակով:

Նկատենք նաև, որ ինովացիոն զարգացման առումով տարածաշրջանում Հայաստանն ունի որոշակի մրցակցային առավելություններ, հատկապես SS ոլորտի կայուն և շարունակական աճի առումով: Ստորև ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում SS ոլորտի տարեկան աճի ցուցանիշը (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում SS ոլորտի տարեկան աճը, % (2010–2021 թթ.)¹

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2021թ.-ին 2010 թ.-ի համեմատությամբ SS ոլորտի տարեկան աճը կազմել է 14 տոկոսային կետ, ինչը վկայում է այս ոլորտում իրականացված պետական քաղաքականության հետևողականության մասին:

Նշենք նաև, որ վերջին տարիների աշխարհաքաղաքական աննախադեպ զարգացումները որոշակի նոր հնարավորություններ են առաջացրել հայկական ընկերությունների համար, մանավորապես՝ Ռուսաստանի Դաշնության շուկաներում: Հեռանկարները վերաբերում են ոչ միայն պահածոյացված և թարմ մրգերին և բանջարեղենին, պանիրներին և ալկոհոլին (մանավանդ որ ՌԴ-ում մտավախություն կա, որ արտասահմանյան պրեմիում ալկոհոլը կարող է անհետանալ (կամ գրեթե անհետանալ) դարակներից՝ վճարումների հետ կապված սահմանափակումների պատճառով), այլև SS ոլորտին: Սակայն, նկատենք, որ դիտարկված հնարավորությունների հետ մեկտեղ կարող են առաջանալ նաև որոշակի վտանգներ և ռիսկեր (մասնավորապես՝ արտահանման հետ կապված), որոնց արդյունավետ կառավարումը հատկապես հրատապ խնդիր է ազգային տնտեսության մրցունակության ապահովման տեսանկյունից:

Պաշտոնական տվյալների համաձայն, մեկ ամսվա կտրվածքով ՀՀ-ում որպես ԱԶ է հաշվառվել ՌԴ 938 քաղաքացի: Նույն ժամանակահատվածում Հայաստանում գրանցվել է 268 ՄՊԸ, որոնցում առկա է իրավաբանական կամ ֆիզիկական անձ ՌԴ քաղաքացի: Նրանց մեծ մասը ներկայացնում են տեղե-

¹ SՏS ոլորտը Հայաստանում 2010-2018թթ., Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, <http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-industry/>, SS ոլորտը Հայաստանում միջին խավ է ձևավորում, <https://evnreport.com/arm/economy-arm/the-it-sector-in-armenia-is-forming-a-middle-class-2/>, 2021թ.-ին SS ոլորտում թողարկման աճը 3 անգամ գերազանցել է ՏԱՅ-ը, <https://www.armenpress.am/arm/news/1077751/>

կատվական տեխնոլոգիաների ոլորտը: Գրանցման պահին որպես տնտեսական գործունեության դասակարգիչ ԱՁ-ների և ՄՊԸ-ների ճնշող մեծամասնությունն ընտրել է ՏՏ և ծրագրային մշակումների դասակարգիչը¹: Անշուշտ, այս հանգամանքը կարող է էապես նպաստել ինչպես ՀՀ ՏՏ ոլորտի զարգացմանը, այնպես էլ նոր աշխատատեղերի ստեղծմանն ու ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը: Նկատենք նաև, որ այս պարագայում զգալիորեն կավելանա նաև Ինտերնետ ծառայությունների նկատմամբ պահանջարկը՝ միաժամանակ ուժեղացնելով այս ոլորտի ընկերությունների միջև մրցակցությունը: Բացի այդ, ռուսական բիզնեսի մուտքը ՀՀ տարածք լուրջ տեղաշարժեր կարող է իրականացնել կորպորատիվ կառավարման համակարգում, քանի որ ՌԴ-ում տարիներ շարունակ ձևավորվող կորպորատիվ կառավարման «ձեռնարկատիրական մոդելը» կարող է հաջողությամբ տեղայնացվել նաև ՀՀ-ում: Հասկանալի է, որ կորպորատիվ կառավարման որակի բարելավումը մեծապես կարող է նպաստել ընկերությունների ինովացիոն և ներդրումային գործունեության բարելավմանը:

Ակնհայտ է, որ այս պարագայում մեծապես կարևորվում է նաև պետության դերը ինչպես ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման, այնպես էլ ռուսական բիզնեսի համար գործունեության բարենպաստ պայմանների ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Կառավարության կողմից նախատեսվում է ՏՏ ոլորտի կազմակերպություններին նոր աշխատատեղերի համար վերադարձնել վճարված եկամտահարկի 50 տոկոսը: Համաձայն այս որոշման՝ գործունեություն պետք է իրականացնեն առևտրային կազմակերպությունները և ԱՁ-ները այնպիսի դասակարգիչներով, որոնք վերաբերում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, մարտի 1-ի դրությամբ աշխատատեղերի քանակը պետք է ավելանա առնվազն 50-ով (նկատի է առնվում թե աշխատանքային, թե քաղաքացիաիրավական պայմանագրերը) և այդ 50 հոգու աշխատատեղի դեպքում մարտի 1-ին նախորդող վերջին վեց ամսվա ընթացքում իրենք չպետք է եկամտային հարկ վճարած լինեն: Այսինքն՝ խոսքը վերաբերում է բոլորովին նոր ստեղծված աշխատատեղերին: Նրանք չպետք է ունենան նաև 100 հազար դրամը գերազանցող հարկային պարտավորություններ: Այս պայմաններին բավարարելու դեպքում թե գործող, թե նոր ստեղծված ընկերությունները 50 նոր աշխատատեղ ապահովելու դեպքում կստանան պետության կողմից վճարված եկամտային հարկի նոր աշխատատեղերի 50 տոկոսը որպես պետական աջակցություն, ինչը հնարավորություն կտա գործատու-աշխատող մակարդակում կանոնակարգել իրենց հարաբերությունները և լավ պայմաններ ապահովել ՏՏ ոլորտի մասնագետների համար: Լիազոր մարմինը, որը վերադարձնելու է եկամտահարկը, լինելու է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը²: Անշուշտ, դիտարկված մոտեցումը որոշակիորեն կնպաստի

¹ Տերտերյան Կ. Հայաստանում ԱՁ է հաշվառել 938, ՄՊԸ գրանցել՝ 268 ՌԴ քաղաքացի, <https://b24.am/economy/312435.html>

² Բաղայան Ռ. ՏՏ ոլորտի կազմակերպություններին նոր աշխատատեղերի համար վերադարձվելու է վճարված եկամտահարկի 50 տոկոսը, <https://lurer.com/?p=456977&l=am>

նան արտաքին շուկաներում ՀՀ ընկերությունների մրցունակության բարձրացմանը:

Գիտական նորույթ

Հաշվի առնելով թեման հողվածում բացահայտվել են ինովացիոն տնտեսության զարգացման մեխանիզմները: Դրանց հիման վրա առաջարկվել է արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման հայեցակարգ: Հայեցակարգի կիրառման համար մշակվել և հիմնավորվել է համապատասխան գործողությունների համալիր, որը էականորեն կլիթանի արդյունավետ ինովացիոն համակարգի ստեղծումը:

Եզրակացություններ

Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծմանը մեծապես կարող է նպաստել նաև ազատ տնտեսական գոտիներում գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության շարունակական խորացումը: Այս պարագայում նշանակալի դերակատարում կարող են ունենալ նաև ռուսական ընկերությունները, որոնց գործունեության խթանումը ՀՀ-ում կարող է հանգեցնել ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը, ինչն էլ բխում է տնտեսության մրձունակության բարձրացման ներկայիս պահանջներից:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման միջոցով տնտեսության մրցունակության բարձրացման հետևյալ ուղիները.

- Տնտեսության ինովացիոն զարգացման օրենսդրափրավական հիմքերի կատարելագործում:

- Գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության հնարավորինս ակտիվացում:

- Տնտեսության գիտելիքատար ճյուղերի զարգացման խթանում,

- Մարդկային կապիտալի ստեղծագործական և նորարարական մտածողության զարգացման խթանում,

- Ինովացիոն լոգիստիկ համակարգերի զարգացման խթանում՝ հարկային, մաքսային և վարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

- Հայրենական և օտարերկրյա ներդրողների ինովացիոն և ներդրումային գործունեության խթանում՝ նրանց բիզնեսների համար բարենպաստ պայմանների ապահովման միջոցով:

- Կորպորատիվ կառավարման ռուսական «ձեռնարկատիրական մոդելի» տարրերի ներդրում ՀՀ ընկերությունների կորպորատիվ կառավարման համակարգում:

- Ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման արտասահմանյան առաջավոր փորձի կիրառում:

Ամփոփելով, անհրաժեշտ է նշել, որ ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման արտասահմանյան առաջավոր փորձի և հողվածում ներկայացված

գործնական առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանը, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը, արտահանման ուղղությունների ընդլայնմանը և ՀՀ տնտեսության համաչափ և կայուն զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բադասյան Ռ. SS ոլորտի կազմակերպություններին նոր աշխատատեղերի համար վերադարձվելու է վճարված եկամտահարկի 50 տոկոսը, <https://lurer.com/?p=456977&l=am>
2. Բոստանջյան Վ., Ջախարյան Ա., Ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, «Բանբեր ՀՊՏՀ», 2020 Ն1, էջ 132-151:
3. Հարությունյան Վ.Լ., Ջախարյան Ա.Գ., Տնտեսության ինովացիոն զարգացման խթանման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, (Գիտական հոդվածների ժողովածու - 2021), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, 2021թ., էջ 138-155:
4. Տերտերյան Կ. Հայաստանում ԱԶ է հաշվառել 938, ՍՊԸ գրանցել՝ 268 ՌԴ քաղաքացի, <https://b24.am/economy/312435.html>
5. ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2010-2018թթ., Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, <http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-industry/>, SS ոլորտը Հայաստանում միջին խավ է ձևավորում, <https://evnreport.com/arm/economy-arm/the-it-sector-in-armenia-is-forming-a-middle-class-2/>, 2021թ.-ին SS ոլորտում թողարկման աճը 3 անգամ գերազանցել է ՏԱՅ-ը, <https://www.armenpress.am/arm/news/1077751/>
6. Баев С.А. — Теоретические основы развития инновационной инфраструктуры // Финансы и управление. – 2021. – № 4. – С. 83 - 98. DOI: 10.25136/2409-7802.2021.4.36730 URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=36730
7. Богатова Е.В. Инновационная экономика: монография / Е.В. Богатова. Москва: Издательство «Русайнс», 2014. -88 с. ISBN 978-5-4365-0168-0.
8. Соколов Д.С., Томилина Н.С. Инновационная инфраструктура в современной России: понятие, содержание, особенности, Международный научный журнал «Инновационная наука», №1/2016, с. 172-177.
9. Солдатов А.О. Инновационная инфраструктура как основа развития инновационной деятельности, научный журнал «Актуальные вопросы экономических наук», N47, 2015, с. 94-98, <https://cyberleninka.ru/article/n/innovatsionnaya-infrastruktura-kak-osnova-razvitiya-innovatsionnoy-deyatelnosti>
10. Technology and innovation report 2021, United nations conference on trade and development, https://unctad.org/system/files/official-document/tir2020_en.pdf

References

1. Badasyan R'. TT olorti kazmakerpowt'yowunnerin nor ashxatategheri hamar veradard'velow e' vtwarvac' ekamtaharki 50 tokosy', <https://lowrer.com/?p=456977&l=am>
2. Bostanjyan V., Zaxaryan A., Inovacion gorc'owneowt'yan institowcional himqery' Hayastani Hanrapetowt'yownowm, «Banber HPTH», 2020 N1, e'j 132-151:
3. Harowt'yownyan V.L., Zaxaryan A.G., Tntesowt'yan inovacion zargacman xt'anman owghinery' Hayastani Hanrapetowt'yownowm, Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm, (Gitakan hodvac'neri jhoghovac'ow - 2021), HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt, Er&an, 2021t'., e'j 138-155:
4. Terteryan K. Hayastanowm AD' e' hashvar'el 938, SPY' grancel` 268 R'D qaghaqaci, <https://b24.am/economy/312435.html>
5. THT olorty' Hayastanowm 2010-2018t't'., Hayastanowm teghekatvakan & her'ahaghordakcowt'yan texnologianeri olorti hetazotowt'yown, D'er'narkowt'yowunneri inkowbator himnadram, <http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-indowstry/>, TT olorty' Hayastanowm mijin xav e' d'&avorowm, <https://evnreport.com/arm/economy-arm/the-it-sector-in-armenia-is-forming-a-middle-class-2/>, 2021t'.-in TT olortowm t'ogharkman atwy' 3 angam gerazancel e' TAC-y', <https://www.armenpress.am/arm/news/1077751/>
6. Baev S.A. — Teoreticheskie osnovy razvitija innovacionnoj infrastruktury // Finansy i upravlenie. – 2021. – # 4. – S. 83 - 98. DOI: 10.25136/2409-7802.2021.4.36730 URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=36730
7. Bogatova E.V. Innovacionnaja jekonomika: monografija / E.V. Bogatova. Moskva: Izdatel'stvo «Rusajns», 2014. -88 s. ISBN 978-5-4365-0168-0.
8. Sokolov D.S., Tomilina N.S. Innovacionnaja infrastruktura v sovremennoj Rossii: ponjatje, sodержanie, osobennosti, Mezhdunarodnyj nauchnyj zhurnal «Innovacionnaja nauka», #1/2016, s. 172-177.
9. Soldatova A.O. Innovacionnaja infrastruktura kak osnova razvitija innovacionnoj dejatel'nosti, nauchnyj zhurnal «Aktual'nye voprosy jekonomicheskikh nauk», N47, 2015, s. 94-98, <https://cyberleninka.ru/article/n/innovatsionnaya-infrastruktura-kak-osnova-razvitiya-innovatsionnoj-deyatelnosti>
10. Technology and innovation report 2021, United nations conference on trade and development, https://unctad.org/system/files/official-document/tir2020_en.pdf

**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արմինե Գրիգորի Զախարյան

Համառոտագիր: Ժամանակակից տնտեսական պայմաններում Հայաստանի Հանրապետության համար հատկապես կարևորվում է ինովացիոն և ներդրումային գործունեության խթանումը: Վերջինս պահանջում է ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում, ինչպես նաև գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում: Հատուկ ուշադրության է արժանի նաև ՏՏ ոլորտի ընկերությունների գործունեության թխանման հիմնախնդիրը: Այս համատեքստում հատկապես կարևորվում է ՀՀ-ում արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման հնարավորությունների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետագոտության թեմայի արդիականությունը:**

Հետագոտության նպատակն է արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով ՀՀ տնտեսության զարգացման ներուժի արդյունավետ կիրառման և մրցունակության բարձրացման եղանակների բացահայտումը: **Հետագոտության խնդիրներն են** ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հետագոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների **մեթոդները:**

Գիտական նորույթը: Հաշվի առնելով թեման հոդվածում բացահայտվել են ինովացիոն տնտեսության զարգացման մեխանիզմները: Դրանց հիման վրա առաջարկվել է արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման հայեցակարգ: Հայեցակարգի կիրառման համար մշակվել և հիմնավորվել է համապատասխան գործողությունների համալիր, որը էականորեն կխթանի արդյունավետ ինովացիոն համակարգի ստեղծումը:

Բանալի բառեր` տնտեսություն, ինովացիոն ենթակառուցվածք, պետական-մասնավոր գործընկերություն, ներդրումներ, ինովացիոն գործունեություն, խթանում, զարգացում, արդյունավետություն, մրցունակություն

СОЗДАНИЕ ЭФФЕКТИВНЫХ ИННОВАЦИОННЫХ ИНФРАСТРУКТУР КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Армине Григорьевна Захарян

Аннотация. В современных экономических условиях для Республики Армения особенно важно стимулирование инновационной и инвестиционной деятельности. Последнее требует создания институциональных основ инновационной деятельности, а также активизации сотрудничества между наукой, бизнесом и государством. Особого внимания заслуживает также проблема стимулирования деятельности компаний сферы ИТ. В данном контексте особенно важно изучение возможностей создания эффективных инновационных инфраструктур в Республике Армения и международного опыта, что и определяет **актуальность темы нашего исследования.**

Целью исследования является выявление способов эффективного использования потенциала экономического развития и повышения конкурентоспособности Республики Армения посредством изучения возможностей создания эффективных инновационных инфраструктур. **Задачей исследования** является разработка возможных путей развития экономики Республики Армения на основе результатов анализа механизмов стимулирования инновационной и инвестиционной деятельности.

В ходе исследования использовались **методы** системно-ситуационного анализа, экономико-статистических группировок, индукции и дедукции, сравнительного и факторного анализа.

Научная новизна. С учетом темы в статье выявлены механизмы развития инновационной экономики. На их основе предложена концепция создания эффективных инновационных инфраструктур. Для применения концепции разработан и обоснован комплекс соответствующих действий, которые будут существенно стимулировать создание эффективной инновационной системы.

Ключевые слова: экономика, инновационная инфраструктура, государственно-частное партнерство, инвестиции, инновационная деятельность, стимулирование, развитие, эффективность, конкурентоспособность

CREATION OF EFFECTIVE INNOVATIVE INFRASTRUCTURES AS A MEANS OF INCREASING THE COMPETITIVENESS OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

Armine Grigor Zakharyan

Abstract. In the current economic conditions, it is especially important for the Republic of Armenia to stimulate of innovation and investment activities. The latter requires the creation of institutional foundations for innovation, as well as the intensification of cooperation between science, business and the state. The problem of stimulating the activities of IT companies also deserves of special attention. In this context, it is especially important to study the possibilities of creating effective innovation infrastructures in the Republic of Armenia and international experience, which determines the **relevance of the topic of our study**.

The aim of the study is to identify ways to effectively use the potential of economic development and increase the competitiveness of the Republic of Armenia by studying the possibilities of creating effective innovation infrastructures. **The task of the study** is to develop possible ways for the development of the economy of the Republic of Armenia, based on the results of the analysis of the mechanisms for stimulating innovation and investment activities.

The study used the **methods** of system-situational analysis, economic and statistical groupings, induction and deduction, comparative and factor analysis.

Scientific novelty. Taking into account the topic, the article identifies the mechanisms for the development of an innovative economy. Based on them, the concept of creating effective innovation infrastructures is proposed. To apply the concept, a set of appropriate actions has been developed and justified, which will significantly stimulate the creation of an effective innovation system.

Keywords: economy, innovation infrastructure, public-private partnership, investment, innovation, stimulation, development, efficiency, competitiveness

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Քրիստինե Մուրադի Թաթոսյան

Հոդվածը ստացվել է՝ 18.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 24.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն

Սկսած 2017 թվականից՝ Սյունիքի մարզի համայնքներում խոշորացումը զգալի դրական փոփոխություններ է առաջ բերել համայնքների ծախսերի քանակական և որակական բնութագրիչներում: Բացի այն, որ խոշորացումից հետո ֆոնդային ծախսերի բացարձակ ցուցանիշները եռապատկվել են, ծախսային առաջնահերթությունները ևս փոխվել են: Հարկ է ընդգծել, որ դրանց զգալի մասը ուղղվել է տնտեսական հարաբերությունների գծով ծախսերին (2019 թվականին՝ 29 %, 2020 թվականին՝ 53 %, իսկ 2021 թվականին՝ 53 %):¹

Տեղական ինքնակառավարման ոլորտում համակարգային փոփոխությունների հասնելու համար կարիք կա լիազորությունների ապակենտրոնացման գործընթացները դիտարկել համայնքներում տնտեսական գործունեություն իրականացնող ձեռնարկություն-համայնք կապի ամրապնդմամբ՝ թե՛ կապիտալ և թե՛ ֆինանսական ռեսուրսափոխանակության համատեքստում, ինչով էլ պայմանավորվում է **թեմայի ընտրությունն ու արդիականությունը**:

Սույն հետազոտության **նպատակն է** խոշորացման համատեքստում գնահատել Սյունիքի մարզի համայնքներում տնտեսական ապակենտրոնացման արդյունավետության մակարդակը:

Հետազոտության **խնդիրներ են՝** գնահատել Սյունիքի մարզի համայնքների ընդհանուր և սեփական եկամուտների փոփոխության դինամիկան խոշորացումից առաջ և հետո, պարզել խոշորացման ունեցած ազդեցությունը համայնքների ծախսային և եկամտային առաջնահերթությունների վրա, գնահատել Սյունիքի մարզում գործող ձեռնարկություններից գոյացած հարկատեսակների ընդհանուր դինամիկան խոշորացումից առաջ և հետո, պարզել համայնքների եկամուտների ընդլայնման ազդեցությունը տեղական սոցիալ-տնտեսական զարգացման որոշ ցուցանիշների վրա, վերլուծել տնտեսական ապակենտրոնացման գործիքների կիրառելիության արդյունավետությունը:

Գրականության վերլուծություն

Հետազոտության համար հիմք է հանդիսացել արտասահմանյան մի շարք երկրների փորձը ապակենտրոնացման մակարդակը բնութագրող գործակիցների ընտրության և դրանց ազդեցության օբյեկտի ընտրության հետ կապված:

¹ Սյունիքի մարզի համայնքային բյուջետային ծախսերի 2019-2021 թթ.-ների տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>

Հետազոտության մեթոդաբանության և ցուցանիշների ընտրության վրա ազդեցություն են ունեցել տեղական մի շարք հետազոտություններ, ինչպես օրինակ՝ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց»-ը՝ հաշվի առնելով բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքները, համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքները և կառուցվածքը:¹ Նշյալները հաշվի են առնվել Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսային և եկամտային բաղադրիչները ուսումնասիրելիս: Հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի նախագծերը, մասնավորապես՝ 2015, 2016, 2017 թթ.-ների համապատասխան փոփոխությունները, որոնցում արտացոլվում են Սյունիքի մարզ համայնքների խոշորացման փուլերը:²

Հետազոտության մեջ իրականացված ռեգրեսիոն վերլուծության բազան կազմվել է ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջի՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի 2011-2021 թթ.՝ եռամսյակային հաշվետվությունների տվյալների հիման վրա (արտադրության հատված, աշխատանքային շուկայի ցուցանիշներ):³

Հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան մի շարք երկրների փորձը ապակենտրոնացման մակարդակը բնութագրող գործակիցների ընտրության և դրանց ազդեցության օբյեկտների ընտրության հետ կապված:

Աշխարհի մի շարք պետություններ, ապակենտրոնացման հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով, որպես ապակենտրոնացման ցուցանիշ են ընդունել խոշորացված համայնքի (շրջանի) եկամուտների/ծախսերի աճի կամ նվազման ցուցանիշները և տեղական տնտեսական վիճակը բնութագրող մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ՝ աղքատության, գործազրկության, զբաղվածության մակարդակներ:

Ինդոնեզիայի Պասուրա նահանգում իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ տեղական եկամուտների և կապիտալ (ֆոնդային) ծախսերի ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա ունենում է աննշան բացասական ազդեցություն, իսկ կապիտալ ծախսերի ընդլայնման ազդեցությունը՝ դրական, բայց ոչ էական ազդեցություն:⁴ ԱՄՆ քաղաքային և ոչ քաղաքային շրջանների տնտեսական զարգացման վրա ապակենտրոնացման ազդեցությունը գնահատելու համար վերլուծվել և գնահատվել է բնակչության թվի, զբաղվածու-

¹ Համայնքի բյուջետավարման ուղեցույց, Վ. Շահբազյանի, Երևան, 2010

² «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 30 հունիսի 1996 թվականին

³ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011-2021թթ.՝ եռամսյակային կտրվածքով, Արտադրության հատված, https://armstat.am/file/article/sv_03_11a_121.pdf - https://armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf ՀՀ ԱՎԿ կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011-2021 թթ.՝ եռամսյակային կտրվածքով, Աշխատանքային շուկայի ցուցանիշներ, https://armstat.am/file/article/sv_03_11a_141.pdf - https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf

⁴ Wa Ariadi, M. Anas, Muhammad Yasser Fedayyen, Tiolina Evi, Irma, Heny Sidanti, “Proceedings of the International Conference on Social, Economics, Business, and Education (ICSEBE 2021)”, ISSN 2352-5428, ISBN 978-94-6239-521-3, “Financial Performance and Economic Growth of Government in the Province of Papua in the Pandemic”, page 93, <https://www.atlantis-press.com/proceedings/icsebe-21/125969296>

թյան մակարդակի, մեկ շնչի բաժին ընկնող իրական եկամուտների աճի ցուցանիշները: Վերլուծության մեջ օգտագործված կախյալ փոփոխականները ներառել են գործազրկության և զբաղվածության մակարդակները, կրթության ոլորտին առնչվող մի շարք ցուցանիշներ: Պարզվել է, որ ոչ քաղաքային շրջաններում որևէ էական կապ չի նկատվում եկամուտների աճի և վերլուծության մեջ ընդգրկված կախյալ փոփոխականների միջև: ¹

Տեղական մակարդակով տնտեսական աճի վրա հարկաբյուջետային ապակենտրոնացման ունեցած ազդեցության գնահատման ժամանակ արտասահմանյան հետազոտողներից շատերը տալիս են տարբեր եզրահանգումներ: Որոշ փորձագետներ, ինչպիսիք են Դավուդին և Ջոուն (1998), ապացուցել են, որ հարկաբյուջետային ապակենտրոնացումը էական ազդեցություն չի թողնում զարգացող երկրների տնտեսական աճի վրա:²

Ընդհանուր առմամբ, հարկաբյուջետային ապակենտրոնացման և տեղական տնտեսական զարգացման միջև կապը շատ հակասական է և կախված է հետևյալ հիմնական գործոններից՝

- Ժամանակագրական կառուցվածք՝ ներառյալ ճգնաժամային ժամանակահատվածը,
- Տվյալների վերլուծության մեթոդաբանություն,
- Հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցիչների ընտրություն (եկամուտների և ծախսերի ապակենտրոնացում, հարկաբյուջետային ինքնավարության փոփոխականներ և այլն),
- Տնտեսական աճը բնութագրող ցուցանիշներ (ՀՆԱ-ի մակարդակ, բնակչության կամ աշխատուժի աճի տեմպ, ֆիզիկական կապիտալի աճի տեմպ կամ դրանում կատարված ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում, հարկերի ազդեցությունը տնտեսության վրա և այլն):³

Մեթոդաբանություն

Հետազոտությունում օգտագործվել է տվյալների համեմատության մեթոդը Սյունիքի մարզի համայնքների 2011-2021 թթ.-ների բյուջեները խոշորացումից առաջ և հետո կտրվածքով վերլուծելու նպատակով: Օգտագործվել է նաև քննական վերլուծության սկզբունքը՝ տնտեսական գործընթացների պատճառահետևանքային կապերը գնահատելու համար: Նպատակ ունենալով գնահատել Սյունիքի մարզի համայնքների՝ խոշորացման համատեքստում եկամուտների մեծացման ազդեցությունը համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա (թողարկած արդյունաբերական արտադրանքի ծավալ, աշխատուժի առա-

¹ George W. Hammond, Mehmet S. Tosun, “Discussion Paper No. 4574”, IZA DP No. 4574, 2009, “The Impact of Local Decentralization on Economic Growth: Evidence from U.S. Counties”, page 5, <https://docs.iza.org/dp4574.pdf>

² Sonni Yulindra, “International Institute of Social Studies”, 2012, “The Effect of Fiscal Decentralization on Local Economic Growth in Sumatera Barat Province”, page 1, <https://thesis.eur.nl/pub/13139>


³ Andrey Yushkov, “Russian Journal of Economics 1”, Issue 4, 2015, “Fiscal decentralization and regional economic growth: Theory, empirics, and the Russian experience”, page 409, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S2405473916000052>

ջարկ)՝ օգտագործվել է ռեզրեսիոն վերլուծության մեթոդը (տվյալների բազան կառուցվել է ՀՀ ԱՎԿ կայքի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ մի շարք եռամսյակային ցուցանիշների հիման վրա), որի կիրառման արդյունքները հնարավորություն են տվել գնահատել համայնքների եկամուտների հնարավոր ընդլայնման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը:

Վերլուծություն

Գոյություն ունեն համայնքների ֆինանսական անկախության և ապակենտրոնացման աստիճանը բնութագրող մի շարք ցուցանիշներ: «Համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում ցուցանիշը» արտացոլում է համայնքի ունեցած ֆինանսական կարողունակությունը նպաստելու տեղական տնտեսությունների զարգացմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սյունիքի մարզում համայնքների խոշորացման գործընթացը ավարտուն տեսք է ստացել (խոշորացման 3-րդ փուլ, 2017 թվական)՝ հետազոտության համար օգտագործվել են Սյունիքի մարզի համայնքների ամփոփ տվյալները տնտեսական ապակենտրոնացման արդյունավետության գնահատման համատեքստում:




Գծապատկեր 1. Սյունիքի մարզի ընդհանուր և սեփական տարեկան եկամուտների դինամիկան 2011-2021 թթ.-ների համար, հազար ՀՀԴ¹

Ստացվում է, որ Սյունիքի մարզի ընդհանուր եկամուտների մակարդակը 2017 թվականից հետո (խոշորացումից հետո) 4 տարիների ընթացքում 108 %-ով աճ է արձանագրել: Շատ չնչին դինամիկայով աճել են նաև սեփական եկամուտները: Ընդհանուր եկամուտների աճի նման մակարդակը հիմնականում պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների թվի ավելացմամբ: 2019 թվականի դրությամբ պաշտոնական դրամաշնորհները կազմել են ընդհանուր եկամուտների 69 %-ը, կամ բացարձակ արժեքով՝ 5013829.7 հազար ՀՀԴ: Նույն ցուցանիշը 2020 թվականին կազմել է 6524087.5 հազար ՀՀԴ, կամ ընդհանուր եկամուտների

¹ Սյունիքի մարզի համայնքային բյուջետային եկամուտների 2011-2021թթ.-երի տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

74 %-ը: Իսկ 2021 թվականին այդ ցուցանիշը կազմել է 7323869.5 հազար ՀՀԴ, կամ ընդհանուրի 73 %-ը: Զուգահեռաբար դիտարկելով նաև խոշորացումից առաջ պետական բյուջեից ունեցած կախվածությունը, կտեսնենք, որ, օրինակ՝ 2016 թվականին պաշտոնական դրամաշնորհները բացարձակ արժեքով կազմել են 3004604.7 հազար դրամ, կամ ընդհանուր եկամուտների 68 %-ը: Իսկ 2015 թվականին՝ 3049273.7 հազար ՀՀԴ, կամ ընդհանուրի 68 %-ը¹:

Ստացվում է, որ խոշորացումից հետո անգամ Սյունիքի մարզի համայնքները շարունակում են պահպանել էական կախվածություն պետական բյուջեից: Խոշորացումից հետո դրանց բացարձակ արժեքները կրկնապատկվել են միաժամանակ պահպանելով մեծ տեսակարար կշիռներ ընդհանուր եկամուտներում:



Գծապատկեր 2. Սյունիքի մարզի վարչական և ֆոնդային ծախսերի համամասնությունները խոշորացումից առաջ (2011-2013 թթ.) և հետո (2016-2021 թթ.)²

Գծապատկեր տվյալներից երևում է, որ Սյունիքի մարզի համայնքների բյուջեներում խոշորացումից հետո էականորեն ավելացել են ֆոնդային ծախսերը: Այսպես, 2019 թվականից դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում կազմել է 27 %, 2020 թվականին՝ 40 %, 2021 թվականին՝ 36%:³ Ստացվում է, որ պաշտոնական դրամաշնորհների բացարձակ արժեքներով ավելացումը նպաստել է նաև ֆոնդային ծախսերի ավելացմանը:

Փորձը ցույց է տալիս, որ ֆոնդային ծախսերը հիմնականում ուղղվում են առավել երկարաժամկետ արդյունքների և տնտեսական զարգացմանը նպաստող որոշ ոլորտներ սպասարկող ենթակառուցվածքների կառուցմանը, գյուղատնտեսության ոլորտում սարքավորումների գնմանը և այլ ներդրումներին: Մեր


¹ Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Սյունիքի մարզի համայնքների բյուջետային եկամուտների տարեկան հաշվետվությունները, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

² Սյունիքի մարզի համայնքային բյուջետային ծախսերը 2011-2021 թթ.-ների, 2011-2021 թթ.-ների տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>

³ Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Սյունիքի մարզի համայնքների 2019-2021 թթ.-ների բյուջետային ծախսերի տարեկան հաշվետվությունները, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>

օրինակում խոշորացումից հետո ֆոնդային ծախսերը մեծ մասնաբաժնով ուղղվել են տնտեսական հարաբերությունների գծով ծախսերին՝ բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության, կրթության, հանգիստ, մշակույթ ու կրոն ուղղություններին: Իսկ օրինակ՝ մինչ խոշորացման փուլի ավարտը ֆոնդային բյուջեում ծախսերի ամենամեծ մասնաբաժինը ունեցել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հատկացումները: Ստացվում է այնպես, որ խոշորացումից հետո՝ 2019, 2020, 2021 թվականներին տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 71301.3 հազար ՀՀԴ, 102175.5 հազար ՀՀԴ և 77772.5 հազար ՀՀԴ, որոնք էլ ընդհանուր ֆոնդային ծախսերում կազմել են 29 %, 53 % և 40 %: Իսկ օրինակ՝ խոշորացումից առաջ՝ 2016 թվականին, տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերը ընդհանուրում կազմել են 3 %, իսկ նույն տարում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 70 %:

Ստացվում է, որ խոշորացումից հետո Սյունիքի մարզի համայնքների բյուջեներում մեծացել է ոչ միայն ֆոնդային ծախսերի մասնաբաժինը, այլ նաև դրանցում տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի տեսակարար կշիռը, որոնց ծախսման ուղղությունները միտված են երկարաժամկետ արդյունքների արձանագրմանը:




Գծապատկեր 3. *Սյունիքի մարզի տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը ընդհանուր ծախսերի կառուցվածքում՝ խոշորացումից առաջ (2011-2013 թթ.) և հետո (2016-2021 թթ.)¹*

Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը զգալիորեն ավելացել են 2019 թվականից, ընդ որում դրանք ուղղվել են հիմնականում գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն (246052 ՀՀԴ, կամ՝ ընդհանուր տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի 38 %) և տրանսպորտի գծով ծախսերին (556709 ՀՀԴ, կամ՝ ընդհանուր տնտեսական հարաբերությունների գծով ծախս-

¹ Սյունիքի մարզի համայնքային բյուջետային ծախսերի 2011-2021 թթ.-երի տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>

սերի 86 %): Ուսումնասիրելով նաև Սյունիքի մարզի համայնքների ծրագրային բյուջեները, նկատելի է, որ տնտեսական բլոկի ֆոնդային ծախսերը ամբողջ ծավալով ուղղվել են գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտներին: Վերջիններիս գծով ֆոնդային ծախսերը կատարվել են հիմնականում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը և գյուղատնտեսական աշխատանքներին աջակցմանը և ներհամայնքային, միջբնակավայրային ճանապարհների սպասարկումներին և վերանորոգման աշխատանքներին:

Ակնհայտ է, որ խոշորացումը դրականորեն է ազդել ինչպես ընդհանուր եկամուտների թվի ավելացման, այնպես էլ որպես վերջինիս դրական արդյունք՝ ֆոնդային ծախսերի ավելացման և դրանցում տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի թվի մեծացման վրա: Վերջինիս ուղղությամբ գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտներում կատարված ներդրումները կարող են մեծ խթան հանդիսանալ համայնք-տեղական ձեռնարկություն արդյունավետ համագործակցության տեսանկյունից:



Գծապատկեր 4. Սյունիքի մարզի հարկային եկամուտները ըստ տեսակների (2013-2021 թթ., ՀՀԴ)¹

Ինչպես տեսնում ենք՝ համայնքի բյուջե վճարվող ամենամեծ չափով հարկատեսակը գույքահարկն է, որի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում մինչև մարզի խոշորացման վերջնական փուլում գտնվելը միջինում կազմել է 24 %, խոշորացումից հետո՝ 27 %:² Ստացվում է, որ խոշորացումից հետո, ավելացել են միայն գույքահարկի գծով եկամուտների հարաբերական ցուցանիշները, ինչը խոշորացման դրական հետևանք է համայնքների բյուջեների միավորման արդյունքում: Իսկ բացարձակ ցուցանիշները որևէ էական ազդեցություն չեն կրել, ինչը նշանակում է, որ խոշորացումից հետո մարզի ձեռնարկություն-

¹ Սյունիքի մարզի համայնքային բյուջետային եկամուտների 2011-2021 թթ.-երի տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Սյունիքի մարզի՝ 2013-2021 թթ.-երի բյուջետային եկամուտների տարեկան հաշվետվությունները, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

ների թվի կամ գործունեության ընդլայնում չի եղել: Ինչն էլ փաստում է, որ ապակենտրոնացումը դեռ լիարժեք չի գործում, և, մասնավորապես՝ տեղական տնտեսական զարգացման մեջ համայնքը չունի որևէ էական դերակատարում:

Սյունիքի մարզում գույքահարկի գծով մեծ մասնաբաժինը ապահովում են Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան և Քաջարան համայնքները: 2021 թվականի տվյալներով՝ Կապան համայնքի գույքահարկի գծով եկամուտները կազմել են 276890.1 հազար ՀՀԴ, կամ ընդհանուր գույքահարկի գծով եկամուտների 31 %-ը: Նույն տարում Գորիս համայնքի գույքահարկի գծով եկամուտները կազմել են 163275.9 հազար ՀՀԴ (կամ ընդհանուրի 18 %-ը), Սիսիան համայնքում 163386.3 հազար ՀՀԴ (կամ ընդհանուրի 18 %-ը) և Քաջարան համայնքը՝ կազմելով 119583.9 հազար ՀՀԴ, կամ ընդհանուրի 13 %-ը¹:

Համայնքում մասնավոր հատվածի կազմակերպությունների թիվը կազմում է մոտ 1150, որտեղ աշխատում են աշխատունակ բնակչության մոտ 20%-ը: Մասնավոր հատվածի կազմակերպությունների մեջ միկրո կազմակերպությունների /մինչև 14 աշխատող ունեցող/ թիվը կազմում է մոտ 1100: Կապանում գործում են հիմնականում միկրո ու փոքր մասնավոր հատված ընկերություններ արդյունաբերական արտադրության, գյուղատնտեսական արտադրության, մանրածախ և մեծածախ առևտրի, բիզնես, բժշկական, իրավաբանական, սպասարկման, կապի ծառայությունների, ինչպես նաև գործում են ռեստորաններ, հյուրանոցներ, զբոսաշրջային ընկերություններ և այլն²:

Կապան համայնքի բարձր տնտեսական ակտիվությունը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի զարգացվածությամբ, որին բաժին է հասնում թողարկված արդյունաբերական արտադրանքի 86.8%-ը: Ի հեճուկս նշվածի՝ Կապան համայնքում կա գործազրկության և թերզբաղվածության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է հիմնականում մեկ ճյուղի զարգացման վրա կենտրոնացվածության բարձր աստիճանով, ինչն էլ անհամաչափ զարգացվածության էական գործոն է հանդիսացել:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև, որ մասնավոր հատվածի ընկերությունները, որոնք որոշակի տնտեսական գործունեություն են իրականացնում Կապան համայնքում, և մարզի հիմնական հարկատուներն են, հաճախ իրենց տնտեսական գործունեության ընթացքում բախվում են հողի և ենթակառուցվածքների կարիքների խնդրին: Նման պայմաններում սովորաբար որպես միկրոձեռնարկության աշխատատարածք է օգտագործվում բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում տեղակայված ոչ բնակելի տարածքները, կամ համայնքի տարբեր վայրերում քաղաքաշինական նորմերով տրամադրված և կառուցված տաղավարները, նախկին գործարանների տարածքները՝ համապատասխան ֆինանսավորման դիմաց: Նույն տրամաբանությամբ՝ տեղում առկա

¹ Տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով 2021 թվականի Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան և Քաջարան համայնքների բյուջետային եկամուտների տարեկան հաշվետվությունները, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>

² Կապան համայնքի տնտեսական զարգացման պլան, 2018-2020 թթ., էջ 9, <https://www.kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=ceb18457-6073-4933-8da0-0e8458761441>

համայնքային սեփականություն հանդիսացող 3 տարածքներ, որոնք հարմար են արտադրություն կազմակերպելու համար, սակայն, ֆինանսական միջոցների սղության պատճառով գտնվում են անմխիթար վիճակում: Այս խնդրի լուծմանը գնալու համար համայնքը և բիզնեսը կարիք ունեն ակտիվացնել իրենց հարաբերությունները, և պլանավորել տարածքների արդյունավետ օգտագործման համակարգ: Համայնքի ոչ բավարար ֆինանսական միջոցների պատճառով դրանք բիզնեսին տրամադրելու համար արտադրական տեսքի չեն բերվում մի շարք պատճառներով: Նախ այն, որ համայնքը չունի որևէ շահագրգռվածություն դրա հետագա զարգացմամբ: Հաշվի առնելով, որ համայնքի ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներից մեկը հանդիսանում է տվյալ բիզնեսի հարկային եկամուտները, որոնց մեծ մասը, օրինակ՝ եկամտային հարկից, շահութահարկից մասհանումներ չեն արվում համրանքի բյուջե, ապա համայնքը շահագրգռված չէ դառնալ բիզնես միավորին աջակից օղակ, և փոխադարձ համագործակցության կապերը նման պայմաններում հետզհետե թուլանում են: Բացի դա, համայնքը չունի նաև համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ովքեր կկարողանան այս ուղղությամբ գործուն համակարգ ներդնել և դրա ուղղությամբ որոշակի արդյունքներ արձանագրել: Նման պայմաններում խնդրահարույց է դառնում տնտեսական ապակենտրոնացման հարցը, որի խորքային ուսումնասիրության համար կարիք կա գնահատել համայնքների սեփական եկամուտների ընդլայնմամբ ապակենտրոնացման ազդեցությունը մարզի սոցիալ-տնտեսական մի քանի ցուցանիշների վրա:

Վերը նշված գնահատականի համար օգտագործվել է ռեգրեսիոն վերլուծության մեթոդը, որում հիմնական բազան կազմվել է 2011-2021 թվականների Սյունիքի մարզի համայնքների եռամսյակային ցուցանիշների հիման վրա: Բազայում ներկայացված անկախ փոփոխականը Սյունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների ցուցանիշն է, որը ցույց է տալիս համայնքի սեփական ֆինանսական կարողունակությունը ռեսուրսապահովման տեսանկյունից, ինչպես նաև հանդես է գալիս որպես ապակենտրոնացման չափիչ ցուցանիշ: Որպես կախյալ փոփոխականներ են ընտրվել թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալների և աշխատանք փնտրողների թվաքանակի վերաբերյալ 2011-2021 թթ.-ների եռամսյակային ցուցանիշները: Արդյունաբերական արտադրանքի ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է Սյունիքի մարզում դրա զարգացվածության առանձնահատկությամբ (հանքարդյունաբերություն), իսկ աշխատանք փնտրողների թիվը առավելապես սոցիալական վիճակի վրա ապակենտրոնացման ազդեցության գնահատման է ուղղված:

Կիրառված առաջին գծային ռեգրեսիոն մոդելը օգտագործվել է գնահատելու համար Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների սեփական եկամուտների ազդեցությունը (ապակենտրոնացման աստիճան) մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի վրա: Արդյունքում, մոդելը թույլ տվեց բացահայտել կախյալ և անկախ փոփոխականների ուղիղ գծային կախվածությունը: Ըստ որի՝ համայնքի սեփական եկամուտների ընդլայնման հաշվին կապահովվի ար-

դյունաբերական արտադրանքի թողարկման աճ: Այս փաստը արտացոլվում է մոդելում ստացված բետա ցուցանիշով, որում $\beta = 0.733$ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Սեփական եկամուտների ազդեցությունը Սյունիքի մարզի 8 համայնքների թողարկված ընդհանուր արդյունաբերական արտադրանքի ծավալներ վրա
(կախյալ փոփոխական՝ թողարկված արդյունաբերական արտադրանք)

Գործակիցներ

Մոդել	Չստանդարտացված գործակիցներ		Ստանդարտացված գործակիցներ	t	Sig.	
	B	Ստանդարտ շեղում	Beta			
1	Հաստատուն	16912.974	8004.089	2.113	.041	
	Սեփական եկամուտներ	.126	.018	.733	6.974	.000

Վերը ստացված գծային ռեգրեսիոն մոդելը բացահայտեց կախյալ և անկախ փոփոխականների միջև հակադարձ կապը: Ստացվում է, որ ավելի մեծ սեփական եկամուտների հաշվին համայնքները կունենան ավելի քիչ թվով աշխատանք փնտրողների թվաքանակ: Այս փաստը արտացոլվում է մոդելում ստացված β գործակցի բացասական արժեքով, որը հավասար է -0.710:

Աղյուսակ 2

Սեփական եկամուտների ազդեցությունը Սյունիքի մարզի 8 համայնքների աշխատուժի առաջարկի ցուցանիշի վրա
(կախյալ փոփոխական՝ աշխատուժի առաջարկ)

Գործակիցներ

Մոդել	Չստանդարտացված գործակիցներ		Ստանդարտացված գործակիցներ	t	Sig.	
	B	Ստանդարտ շեղում	Beta			
	Հաստատուն	6029.405	279.361	21.583	.000	
	Սեփական եկամուտներ	-.004	.001	-.710	-6.527	.000

Գիտական նորույթ

Սույն հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ Սյունիքի մարզի համայնքների խոշորացումը զգալի դրական արդյունքներ է ապահովել տեղական տնտեսական զարգացման, մասնավորապես՝ տնտեսական հարաբերությունների զծով ֆոնդային ծախսերի ուղղությամբ (գյուղատնտեսություն և տրանսպորտ): Մինևսույն ժամանակ, մասշտաբի էֆեկտի հաշվին նվազեցնելով հանրային ծառայությունների մատուցման ուղղությամբ ծախսերը:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց տվեցին նաև, որ Սյունիքի մարզի համայնքներում գործող բիզնես ձեռնարկությունների՝ համայնքի բյուջե վճարած հարկատեսակների ոչ ամբողջական ծավալով մասհանումների պայմաններում անգամ համայնքը ունենում է ազդեցություն տեղական տնտեսական զարգացման վրա (մեր օրինակում՝ թողարկված արդյունաբերական արտադրանքի վրա):

Նույն տրամաբանությամբ ևս համայնքը ունենում է ազդեցություն աշխատանք փնտրողների թվի նվազման վրա: Մտացվում է, որ համայնքում գործող բիզնեսի և համայնքի կապը շղթայական կերպով դրական արդյունքներ կարող է ապահովել ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի լավացման վրա: Ուստի, եթե խոշորացման արդյունքում ավելացել են համայնքի ընդհանուր եկամուտները, ակնկալելով դրանց՝ մասշտաբի էֆեկտի հաշվին առավել նպատակային օգտագործելու պայմանը, ակներև է, որ համայնքների ֆինանսական անկախության մեծացումը և ապակենտրոնացման նոր գործիքակազմերի ներդրումը կարող է երկուստեք փոխշահավետ համագործակցության հիմք հանդիսանալ: Ավելի կոնկրետ՝ հետազոտության նորույթը խոշորացված համայնքների տնտեսական ապակենտրոնացման գործիքակազմերի ներդրման անհրաժեշտության ապացույցն է համայնքի՝ տեղական սոցիալ-տնտեսական վիճակի վրա ունեցած ազդեցության և համայնքի բյուջե վճարված հարկատեսակների՝ խոշորացումից հետո էական ընդլայնումների համատեքստում: Համայնքների՝ ոչ ամբողջական անկախ գործելու և տնտեսական զարգացման հատվածում պետական բյուջեից ունեցած կախվածության խնդիրը նորովի է ապացուցվում տնտեսական ապակենտրոնացման համակարգի ներդրման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Եզրակացություն

Համայնքների խոշորացումը ապահովել է որոշ դրական արդյունքներ համայնքների ֆինանսական ռեսուրսների պլանավորման և արդյունավետ օգտագործման գործում, սակայն տնտեսական ապակենտրոնացման համատեքստում համայնք-բիզնես կապը տեսանելի չէ:

Մյուս կողմից էլ՝ ոչ բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսները խոչընդոտ են ստեղծում համայնքին ունենալ որևէ տեսակի միջամտություն տեղական տնտեսական օբյեկտների գործունեության վրա և արդյունքում՝ բիզնեսին անհրաժեշտ տնտեսական ենթակառուցվածքը շահագործման չի հանձնվում, իսկ համայնքը զերծ է մնում բիզնեսի հետ որևէ համագործակցություն ունենալուց:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ևս փաստեցին, որ Մյունիքի մարզի համայնքների և թողարկած արդյունաբերական արտադրանքի միջև կապը պայմանավորված է արդյունաբերական ձեռնարկությունների կողմից համայնքի բյուջե վճարած հարկերով, ինչպես օրինակ՝ գույքահարկի, հողի հարկի և այլնի գծով: Մակայն համայնքում գործող բիզնես միավորի տնտեսական գործունեությունից գոյանում են նաև այլ հարկատեսակներ, որոնք առավել մեծ հարաբերական կշիռներ կարող են ունենալ տեղական բյուջեներում: Մակայն փաստն այն է, որ դրանք հատկացվում են պետական բյուջե, և համայնքը անմասն է մնում մյուս հարկատեսակների գծով մուտքերից: Բիզնես-համայնք արդյունավետ համագործակցության համար հիմք կարող է դառնալ համայնքի բյուջեի եկամուտների մեծացումը, ինչ էլ իր հերթին կարող է նպաստել համայնքի բյուջեի՝ պետական բյուջեից ունեցած կախվածության նվազմանը: Վերջինս էլ

հիմնական խոչընդոտներից է հանդիսանում ապակենտրոնացման արդյունավետ իրականացման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կապան համայնքի տնտեսական զարգացման պլան, 2018-2020 թթ., 1-41 էջ, <https://www.kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=ceb18457-6073-4933-8da0-0e8458761441>
2. ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011-2021 թթ. եռամսյակային կտրվածքով, Արտադրության հատված, https://armstat.am/file/article/sv_03_11a_121.pdf
https://armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf
3. ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հրապարակումներ ըստ տարիների, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011-2021 թթ. եռամսյակային կտրվածքով, Աշխատանքային շուկայի ցուցանիշներ, https://armstat.am/file/article/sv_03_11a_141.pdf
https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf
4. Համայնքի բյուջետավորման ուղեցույց, Վ. Շահբազյանի, Երևան, 2010
5. Սյունիքի մարզի համայնքային բյուջետային եկամուտների 2011-2021 թթ.-երի տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>
6. Սյունիքի մարզի համայնքային բյուջետային ծախսերը 2011-2021 թթ.-ների տարեկան հաշվետվություններ, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>
7. «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 30 հունիսի 1996 թվականին (օրենքի նախագծեր՝ ընդունված 2015 թվականի նոյեմբերի 24-ին, ընդունված 2016 թվականի հունիսի 17-ին, ընդունված 2017 թվականի հունիսի 9-ին)
8. Andrey Yushkov, “Russian Journal of Economics 1”, Issue 4, 2015, “Fiscal decentralization and regional economic growth: Theory, empirics, and the Russian experience”, page 404-418, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S2405473916000052>
9. George W. Hammond, Mehmet S. Tosun, “The Impact of Local Decentralization on Economic Growth: Evidence from U.S. Countries”, Discussion Paper No. 4574, 2009, 1-32 pages, <https://docs.iza.org/dp4574.pdf>
10. Sonni Yulindra, “International Institute of Social Studies”, 2012, “The Effect of Fiscal Decentralization on Local Economic Growth in Sumatera Barat Province”, 1-37, <https://thesis.eur.nl/pub/13139>
11. Wa Ariadi, M. Anas, Muhammad Yasser Fedayyen, Tiolina Evi, Irma, Heny Sidanti, “Financial Performance and Economic Growth of Government in the Province of Papua in the Pandemic”, Advances in Economics, Business and Management

Research, 2021, volume 205, pages 93-96, <https://www.atlantispress.com/proceedings/icsebe-21/125969296>

References

1. Kapan hamaynk'i tntesakan zargac'man plan, 2018-2020 t't'. 1-41 ej, <https://www.kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=ceb18457-6073-4933-8da0-0e8458761441>
2. HH Azgayin vicakagrakan komitei kayk'ej, Hraparakumner st tarineri, HH soc'ial-tntesakan vicak 2011-2021 t't'. eramsyakayin ktrvack'ov, Artadrut'yan hatvac, https://armstat.am/file/article/sv_03_11a_121.pdf
https://armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf
3. HH Azgayin vicakagrakan komitei kayk'ej, Hraparakumner st tarineri, HH soc'ial-tntesakan vicak 2011-2021 t't'. eramsyakayin ktrvack'ov, Asxatank'ayin sukayi c'uc'anisner, https://armstat.am/file/article/sv_03_11a_141.pdf
https://armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf
4. Hamaynk'i byujetavorman ugec'uyc', V. Sahbazyani, Erevan, 2010
5. Syunik'i marzi hamaynk'ayin byujetayin ekamutneri 2011-2021 t't'.-eri tarekan hasvetvut'yunner, <http://syunik.mtad.am/community-budgetary-revenues/>
6. Syunik'i marzi hamaynk'ayin byujetayin caxser 2011-2021 t't'.-neri tarekan hasvetvut'yunner, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>
7. «Varc'atarack'ayin bazanman masin» HH orenk' ndunvac 30 hunisi 1996 t'vakani (orenk'i naxagcer ndunvac 2015 t'vakani noyemberi 24-in, ndunvac 2016 t'vakani hunisi 17-in, ndunvac 2017 t'vakani hunisi 9-in)
8. Andrey Yushkov, "Russian Journal of Economics 1", Issue 4, 2015, "Fiscal decentralization and regional economic growth: Theory, empirics, and the Russian experience", page 404-418, <https://www.sciencedirect.com/science/article/pii/S2405473916000052>
9. George W. Hammond, Mehmet S. Tosun, "The Impact of Local Decentralization on Economic Growth: Evidence from U.S. Countries", Discussion Paper No. 4574, , 2009, 1-32 pages, <https://docs.iza.org/dp4574.pdf>
10. Sonni Yulindra, "International Institute of Social Studies", 2012, "The Effect of Fiscal Decentralization on Local Economic Growth in Sumatera Barat Province", 1-37, <https://thesis.eur.nl/pub/13139>
11. Evi, Irma, Heny Sidanti, "Financial Performance and Economic Growth of Government in the Province of Papua in the Pandemic", Advances in Economics, Business and Management Research, 2021, volume 205, pages 93-96, <https://www.atlantispress.com/proceedings/icsebe-21/125969296>

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Քրիստինե Մուրադի Թաթոսյան

Համառոտագիր: Սյունիքի մարզի համայնքների խոշորացման գործընթացը գրեթե ավարտուն տեսք է ստացել, ինչը թույլ է տալիս ուսումնասիրել ապակենտրոնացման կիրառման արդյունավետությունը տեղական տնտեսական զարգացման տեսանկյունից: *Թեմայի արդիականությունը* պայմանավորված է համայնքների խոշորացման արդյունքում ապակենտրոնացման համակարգի արդյունավետության գնահատման անհրաժեշտությամբ, ինչը մեր հետազոտությունում դիտարկվում է տեղական տնտեսական զարգացման համատեքստում:

Կամայական համայնքում գործող ձեռնարկությունը, որն իր տնտեսական գործունեության ընթացքում օգտագործում է համայնքի ռեսուրսները, ենթադրվում է, որ գոյացող միջոցների մի մասը պետք է ուղղի համայնքի բյուջե, որպեսզի համայնքային իշխանությունները ուղղակիորեն շահագրգռվածություն ունենան նպաստել բիզնեսի հետագա զարգացմանը և ստեղծել բիզնես միավորին աջակցող միջավայր: *Հետազոտության նպատակն է* գնահատել Սյունիքի մարզի տնտեսական ապակենտրոնացման արդյունավետության մակարդակը մարզի համայնքների խոշորացման համատեքստում: *Հետազոտության խնդիրներ են՝* գնահատել խոշորացման ազդեցությունը Սյունիքի մարզի համայնքների ծախսային և եկամտային առաջնահերթությունների վրա, պարզել Սյունիքի մարզում գործող ձեռնարկություններից գոյացած հարկատեսակների ընդհանուր դինամիկան և համայնքների եկամուտների ընդլայնման ազդեցությունը տեղական սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Հոդվածում օգտագործվել է տվյալների *համեմատության մեթոդը*, *վերլուծության մեթոդը* տնտեսական գործընթացների պատճառահետևանքային կապերը գնահատելու համար: Օգտագործվել է նաև *ռեգրեսիոն վերլուծության մեթոդը՝* գնահատելու համար Սյունիքի մարզի համայնքների եկամուտների ընդլայնման ազդեցություն թողարկած արդյունաբերական արտադրանքի և աշխատուժի առաջարկի վրա:

Ըստ հետազոտության գիտական նորույթի՝ համայնքների խոշորացումը դրականորեն է ազդել համայնքների ընդհանուր եկամուտների ավելացման ու ֆոնդային ծախսերի որակական և քանակական ցուցանիշների վրա: Սակայն համայնքը ունի շատ քիչ դերակատարություն տեղական բիզնեսի հետ համագործակցելու գործում: Վերջինս, իր գործունեությունից գոյացող հարկատեսակներից շատ քիչ մասն է մասհանում համայնքի բյուջե, ինչը զսպում է համայնքի տնտեսական շարժառիթը բիզնեսի հետ համագործակցելու համատեքստում: Սակայն նման պայմաններում անգամ համայնքները (*կոռեյացիոն վերլուծության արդյունքում*) ունեն էական ազդեցություն իր տարածքում թողարկված արդյունաբերական արտադրանքի և աշխատուժի առաջարկի վրա: Ուստի

կարիք է առաջանում *արդյունավետ կերպով կիրառել հետազոտության հիմնական արդյունքները*՝ մեծացնելով համայնքների դերակատարումը բիզնես միավորներին աջակցելու, արդյունավետ ներդրումային դաշտ ստեղծելու և փոխշահավետ գործարար հարաբերություններ հաստատելու համար ֆինանսական անկախության մեծացման և վերջինս կարգավորող որոշակի մեխանիզմների ներդրման միջոցով:

Բանալի բառեր՝ համայնքների խոշորացում, Սյունիքի մարզ, տնտեսական ապակենտրոնացում, բիզնես, համայնք, սեփական եկամուտ, կոռեկցիա

ЭФФЕКТИВНОСТЬ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ В КОНТЕКСТЕ АДМИНИСТРАТИВНЫХ РЕФОРМ (НА ПРИМЕРЕ СЮНИКСКОГО МАРЗА)

Кристине Мурадовна Татосян

Аннотация: Процесс укрупнения общин Сюникского марза практически завершен, что позволяет изучить эффективность применения децентрализации с точки зрения местного экономического развития. **Актуальность темы** обусловлена необходимостью оценки эффективности системы децентрализации в результате укрупнения общины, которая в нашем исследовании рассматривается в контексте местного экономического развития.

Цель исследования - оценить уровень эффективности экономической децентрализации в Сюникском марзе в контексте укрупнения общин региона. **Задачи исследования** - оценить влияние укрупнения на приоритеты расходов и доходов общин Сюникской области, выяснить общую динамику налогов, генерируемых предприятиями, действующими в Сюникской области и влияние расширения доходов общин на местное социально-экономическое развитие.

При анализе применялся **метод сравнения данных**, а **метод анализа** применялся для оценки причинно - следственных связей экономических процессов. **Был использован метод регрессионного анализа** для оценки влияния увеличения доходов общин Сюникского марза на произведенную промышленную продукцию и предложение рабочей силы.

В результате последних научных исследований выяснилось, что укрупнение общин положительно сказалось на увеличении общих доходов общин и качественно-количественных показателей расходования средств фонда. Однако, община играет очень маленькую роль в партнерстве с местным бизнесом.

Последний отчисляет очень мало налогов, полученных от своей деятельности, в бюджет общины, что сдерживает экономическую мотивацию общины в контексте сотрудничества с бизнесом. Однако, даже в таких условиях, общины (**в результате корреляционного анализа**) оказывают существенное влияние на, произведенную общинами, промышленную продукцию и предложение рабочей силы.

Поэтому возникает необходимость **эффективного применения основных выводов исследования** за счет повышения роли сообществ в поддержке бизнес-единиц, создания эффективной инвестиционной среды, налаживания взаимовыгодных деловых отношений, внедрения определенных механизмов регулирования.

Ключевые слова: укрупнения общин, Сюникская область, экономическая децентрализация, бизнес, община, собственный доход, корреляция

THE EFFECTIVENESS OF ECONOMIC DECENTRALIZATION IN THE CONTEXT
OF ADMINISTRATIVE-TERRITORIAL REFORMS
(BY THE EXAMPLE OF SYUNIK REGION)

Kristine Murad Tatosyan

Abstract: The enlargement process of communities of Syunik region is almost complete, which allows studying the effectiveness of decentralization in terms of local economic development. *The aim of the research* is to assess the level of effectiveness of economic decentralization in Syunik region in the context of amalgamating the communities. *The urgency of the topic* is due to the need to assess the effectiveness of the decentralization system as a result of community enlargement, which is viewed in the context of local economic development. The enterprise operating in an arbitrary community, which uses the resources of the community during its economic activity, is expected to transmit a part of its generated funds to the community budget, so that the community authorities have a direct interest in promoting further business development. *The objectives of the research* are to assess the impact of enlargement on the expenditure-income priorities of the communities of Syunik region, to find out the general dynamics of taxes generated by enterprises operating in Syunik region, to assess the impact of expanding community incomes on local socio-economic development.

The method of data comparison was used while writing the article and *the method of analysis* was used to assess the cause-and-effect relationships of economic processes. *The method of regression analysis* was used to assess the impact of the expanding the incomes of Syunik communities on the supply of industrial products and labor supply.

According to the scientific novelty of the research the enlargement of communities positively affected the increase of the total incomes of the communities and the qualitative-quantitative indicators of the fund expenditures. And community plays very little role in collaborating with local businesses. The latter pays very little amount of the taxes generated from its activities to the community budget, which restrains the economic motivation of the community in the context of cooperating with business. However, even in such conditions, the communities (*as a result of the correlation analysis*) have a significant impact on the supply of industrial products or labor in its territory.

Therefore, there is a need to effectively use the main findings of the study increasing the role of communities by supporting business units, creating an effective investment field, establishing mutually beneficial business relationships, and introducing certain regulatory mechanisms.

Keywords: Enlargement of communities, Syunik region, economic decentralization, business, community, personal income, correlation

ՀՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արսեն Սլավիկի Ըոքոյան

Հոդվածը ստացվել է՝ 18.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 23.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն. Աշխարհի բոլոր երկրներում 2020թ. սկսած տնտեսական աճի տեմպերը ենթարկվել են չկանխատեսված փոփոխությունների: Այս համատեքստում անհրաժեշտ է բացահայտել այն տնտեսական գործոնները, որոնք առավել մեծ ազդեցությունն ունեն առանձին երկրների և համաշխարհային տնտեսության վրա: Նման հետազոտությունները հնարավորություն կտան հնարավորինս արագ վերադարձնել նախաճգնաժամային տնտեսական աճի տեմպերը: Այս դեպքում պետք է նշել նաև, որ ճգնաժամի ցանկացած հաջորդ ալիք կարող է կործանարար լինել ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների տնտեսական համակարգերի համար: Այսպիսի պայմաններում վճռորոշ դեր է ստանում տնտեսական աճի խթանման արդյունավետ կառուցակարգերի բացահայտումը և ներդրումը տնտեսական քաղաքականությունում: ՀՀ տնտեսության զարգացումը մեծապես կախված է երկրի վարկանիշից, որն էլ իր հերթին կախված է տնտեսական այն հիմնական գործոններից, որոնցով պայմանավորվում է այդ վարկանիշը: Այդ գործոնների ուսումնասիրությունը և դրանց վերլուծությունը մեծ կարևորություն ունի ՀՀ տնտեսական զարգացումն ապահովելու գործում, հետևապես խիստ **արդիական** է:

Հետազոտական աշխատանքի **նպատակն է** բացահայտել այն գործոնները, որոնք ՀՀ տնտեսական զարգացման համար առավել կարևորն են, և թե որտեղ ՀՀ-ն ունի կամ կարող է ունենալ առավելություններ: Ուստի այդ նպատակի իրականացման համար **խնդիր է դրվել** ուսումնասիրել ՀՀ և հարևան մի շարք երկրների նույն ցուցանիշները, վերլուծել դրանք, ստանալ քանակական և որակական գնահատականներ:

Տնտեսական գործոնները պատմական բոլոր ժամանակահատվածներում էլ հանդիսացել են սլյալ ժամանակի տնտեսագետների հետազոտության կարևոր օբյեկտներ, սակայն ժամանակի ընթացքում ինչպես առանձին երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունները առաջ են բերում նոր գործոններ, կամ փոփոխության են ենթարկում արդեն առկա գործոնների ազդեցության չափը և որակը, ուստի անհրաժեշտ է դրանք անընդհատ ուսումնասիրել:

Գրականության վերլուծություն. Տնտեսական աճի գործոնները տարբեր տնտեսագետների կողմից ստացել են տարբեր բնութագրեր և մեկնաբանություններ: Օրինակ, Կոբի և Դուգլասի աշխատություններում որպես տնտեսական աճի

գործոններ են ներկայացվում արտադրական ֆունկցիայի տարրերը, մասնավորապես՝ հեղինակային արտադրական ֆունկցիայի տարրերը¹:

Ամերիկացի տնտեսագետ Մորիս Քոփելանդը տնտեսական գործոնների վերլուծության գործընթացում առաջարկել է կիրառել արտադրական գործոնների ռեսուրսատարության հաշվեկշիռը և ներառել ազգային հաշիվների մեթոդը²:

Տնտեսական գործոնների ուսումնասիրության նախնական փուլերում տնտեսագետները որպես տնտեսական աճի հիմնական խթան են համարել արտադրողականության աճը³:

Տնտեսական գործոնների՝ մասնավորապես տնտեսական աճի վրա ազդող գործոնների ավելի խորը ուսումնասիրությանը զուգահեռ առաջ է եկել դրանց դասակարգման և խմբավորման անհրաժեշտություն: Տնտեսագետ Ռ. Լուկասը տնտեսական աճի գործոնները դասակարգել է երկու խմբի՝ քանակական և որակական: Քանակական գործոնները տնտեսական աճի վրա ազդում են ինսայդության նորմի փոփոխության միջոցով, իսկ որակական գործոնները ազդում են ներդրումների արդյունավետության վրա⁴: Այս դասակարգումը մոնետարիստական է, սակայն բոլոր տնտեսագիտական ուղղություններին հատուկ դասակարգումների մշակման միջոցով հնարավոր է դառնում ստանալ ընդհանրական մոտեցում տնտեսական գործոնների համար:

Հայկական տնտեսագիտական գրականությունն ուսումնասիրելով կարող ենք հանդիպել տնտեսական աճի գործոնների հետևյալ բաժանման՝ զուտ տնտեսականի և ոչ տնտեսականի: Տնտեսագետ Գ. Կիրակոսյանի և ուրիշների կարծիքով այս բաժանումը պայմանական է և քանակապես դժվար է սահմանազատել դրանց, քանի որ գործնականում աճի ցանկացած տնտեսական գործոնի մեծության մեջ միշտ գոյություն ունի ոչ տնտեսական բաղադրիչ և հակառակը⁵: Վերջին ժամանակներում տնտեսական հետազոտություններում լայն տեղ է տրվում տնտեսական աճի բազմագործոն մոդելներին, որոնք ներառում են 20-ից ավել գործոններ:

Մեթոդաբանություն. Ներկայացված հետազոտական աշխատանքում կիրառվել են վիճակագրական, վերլուծական, համեմատության և արստրակցիայի մեթոդները: Վիճակագրական մեթոդի հիման վրա հավաքագրվել են հետազոտության համար անհրաժեշտ տվյալները, որոնք մշակվել են վերլուծական մեթոդի միջոցով, տվյալները համեմատվել են տարածաշրջանային մի շարք երկրների տվյալների հետ, իսկ արստրակցիայի մեթոդը հնարավորություն է տվել վերացարկվել ոչ էական գործոններից՝ առաջ մղելով առավել էական գործոնները:

¹ Cobb C. W. Douglas P. H., A theory of production. American Economic Review: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association: 18(1), 1928, p. 139

² Copeland M. A., Concepts of National Income, in Studies on Income and Wealth, National Bureau of Economic Research, New York: Vol. 2, 1937, p. 10-48

³ Griliches Z., Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, p. 1324-1330

⁴ Lucas R., On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, p. 21-23

⁵ Գ. Կիրակոսյան և ուրիշներ, Տնտեսագիտության տեսություն /ուսումնական ձեռնարկ/ Երևան 2009, էջ 566

Վերլուծություն. Ընդհանուր առմամբ տնտեսական աճի աղբյուրները բաժանվում են ըստ գործոնների՝ երեք խմբերով: Պայմանականորեն առաջին խմբում ներառվում են առաջարկի գործոնները: Այս գործոններով է պայմանավորվում հասարակական արդյունքի և արտադրության աճը: Այս գործոնները ներկայացնում են տնտեսական աճի պոտենցիալը, որը պայմանավորված է արտադրական ռեսուրսների որակական և քանակական բնութագրերի հետ: Երկրորդ խմբում պահանջարկի գործոններն են, որոնք հնարավորություն են տալիս իրացնել երկրի տնտեսական ներուժը: Այս գործոնների միջոցով է ապահովվում ռեսուրսների լրիվ ներգրավումը տնտեսական շրջանառության մեջ: Վերջին խմբում ներառված են բաշխման կամ արդյունավետության գործոնները, որոնց միջոցով ներկայացվում են արտադրական ռեսուրսների բաշխումը այնպես, որ թույլ կտա ապահովել դրանց առավելագույն արդյունավետ օգտագործումն, ինչպես նաև վերջնական արդյունքի ստացումը:

Տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում ունի արտադրության երեք գործոնային տեսությունը: Այս տեսության զարգացմանը զուգահեռ արտադրության գործոններն սկսեցին ավելի խորը քննարկման առարկա դառնալ: Այս տեսանկյունից տնտեսական աճի և դրա վրա ազդող գործոնները փոխկապակցված են: Սակայն պետք է նշել, որ տնտեսական աճի վրա ազդող կամ աճն ապահովող այս կամ այն գործոնի ազդեցության չափը հստակ որոշելը շատ բարդ է: Ուսումնասիրության ենթակա բոլոր գործոններն ունեն հավաքական բնույթ և բաղկացած են փոքր տարրերից: Հետևաբար, այս հանգամանքը ավելի է բարդացնում ուսումնասիրությունը: Այս խնդրից խուսափելու համար որոշ գործոնների ազդեցությունը պետք է համարենք ոչ էական և ուսումնասիրության առարկա կհանդիսանան այն գործոնները, որոնք ՀՀ տնտեսական զարգացման և ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման տեսանկյունից ամենակարևորն են, կամ ունեն ամենամեծ պոտենցիալը:

Համաշխարհային տնտեսական զարգացման և դրան զուգահեռ տնտեսագիտական մտքի զարգացման տարբեր փուլերում առաջնային դերում հանդես է եկել տնտեսական գործոններից որևէ մեկը: Օրինակ՝ մինչ արդյունաբերական տնտեսության շրջանում այդպիսի գործոն էր համարվում հողը, իսկ արդյունաբերական դարաշրջանում տնտեսական զարգացում ապահովող գործոն դարձավ կապիտալի կուտակումը: Ներկայացված աշխատանքում մեծ կարևորություն է տրվում գիտատեխնիկական արաջընթացին և նորամուծություններին: Տնտեսական զարգացում ապահովող գործոնների ցանկում նորամուծությունների դերը նույնպես կախված է տնտեսական աճի որոշակի փուլից: Նորամուծությունները միշտ եղել են տնտեսական զարգացման և մասնավորապես արտադրական գործընթացների կատարելագործման հիմքում և դրա միջոցով ապահովել են տնտեսության և արտադրական գործընթացների էվոլյուցիոն զարգացումը:

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակի բարձրացմանը զուգահեռ ավելի մեծ նշանակություն են սկսել ստանալ նորարարությունները, իսկ հետարդյունաբերական ժամանակաշրջանում դրանք դարձել են ինչպես առան-

ձին երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսական մակարդակի բարձրացման և զարգացման հիմնական գործոնը:


Տնտեսական աճի ժամանակակից մոդելները կարևորում են գիտատեխնիկական առաջընթացը և մարդկային կապիտալի գործոնը: Այս մոդելների հիմնական խնդիրն է մոդելավորել նորարարական գործընթացները և մարդկային կապիտալի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Սակայն միաժամանակ չպետք է մոռանալ այլ գործոնների մասին, որոնք ազդում են կոնկրետ երկրի տնտեսական աճի և միջազգային վարկանիշի վրա:

Աշխարհի բոլոր երկրները ունեն տնտեսական զարգացման իրենց հատուկ ուղղությունները և մշակած քաղաքականությունները: Տարբեր երկրներում կարևորություն են ստանում տարբեր գործոններ: Գործնականում առավել հաջողված են այն երկրները, որոնք առավելագույն արդյունավետությամբ են օգտագործում ամենաէական ազդեցություն ունեցող գործոնները: ՀՀ տնտեսական կարևոր գործոնների բացահայտման, դրանց առավել մեծ կարևորություն տալու և ըստ այդմ ՀՀ տնտեսական զարգացման բարձր տեմպի ապահովման ու ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել վերլուծություն: Վերլուծության իրականացման համար նախ անհրաժեշտ է առանձնացնել հիմնական տնտեսական գործոնները, այնուհետև բացահայտել ՀՀ տնտեսության վրա դրանց ազդեցության չափը և պոտենցիալը, այնուհետև համեմատել դրանք մի շարք երկրների հետ:

Այժմ ներկայացնենք հիմնական տնտեսական գործոնները, որոնք ազդում են երկրի տնտեսական աճի և վարկանիշի վրա: Պետք է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածը սահմանափակված է 2020թ.-ով, որպեսզի վերլուծությունում նվազեցվի մի շարք այնպիսի գործոնների անկանխատեսելի ազդեցության ներառումը, ինչպիսիք են կորոնավիրուսային համաճարակը և 2020թ. արցախյան երկրորդ պատերազմը:

Տոկոսադրույք. Պետությունում առևտրային բանկերի կողմից առաջարկվող վարկերի միջին տոկոսադրույքը այն հիմնական գործոններից է, որոնք ազդում են տնտեսության շրջանառվող կանխիկ դրամի իրացվելիության վրա: Վարկային միջոցների հաշվին կատարվող բիզնես ներդրումների բարձր եկամտաբերությունը ներդրողների մեծ զանգվածի կարող է գրավել: Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել նաև ներդրումների արդյունավետ կառավարման ունակությունը: Չնայած այն տնտեսական գործոն չենք կարող համարել, սակայն դա ազդում է տնտեսական գործոնների վրա, հետևաբար այն ածանցյալ կերպով ազդում է նաև տնտեսության վրա: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ կառավարման արդյունավետությունը կարևոր դեր է խաղում առանձին վերցված ընկերությունների աճի գործում:

Անդրադառնալով վարկերի տոկոսադրույքներին, ներկայացնենք ՀՀ, ԵԱՏՄ խոշոր դերակատարներ ՌԴ-ի, Բելառուսի և տարածաշրջանում տնտեսական զարգացման գրեթե նույն մակարդակում գտնվող Վրաստանի առևտրային բանկերի կողմից առաջարկվող վարկերի միջին կշռված տոկոսադրույքները (ԱՄՆ դոլարով):



Գծանկար 1. Վարկերի միջին տոկոսադրույքները¹
(ԱՄՆ դոլար)


Եթե դիտարկենք ՀՀ տվյալները, ապա ակնհայտ է, որ վերջին 16 տարիների ընթացքում տոկոսադրույքների էական նվազում նկատվել է 2015-2016թթ. հետո, որը կարող է պայմանավորել ԵԱՏՄ անդամակցության գործոնով: Սակայն այս հանգամանքը առանձնակի դրական ազդեցություն չի ունեցել ՕՈՒՆ-երի վրա: 2016թ. սկսած ՀՆԱ-ում ՕՈՒՆ-երի բաժինը նվազել է 3.2%-ից դառնալով 0.4%²:

Վարկերի տոկոսադրույքներից բացի, ֆինանսական միջոցների հոսքի և շրջանառության վրա մեծ ազդեցություն ունեն նաև ավանդների տոկոսադրույքները: Այս տեսանկյունից ավելի լայն տեղեկատվություն է տալիս վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջև առկա սփրեղը:

Գծանկար 2-ի ուսումնասիրությունը հանգեցնում է մի շարք եզրակացությունների: Նախ ՀՀ-ն ուսումնասիրվող երկրների շարքում ունի ամենամեծ սփրեղը: Դա կարող է տարբեր գործոնների հետևանք լինել. կա՛մ ՀՀ առևտրային բանկերը ունեն ռիսկերի կառավարման թույլ համակարգ, կա՛մ շահույթի ստացման մեծ ախորժակ:

¹ The World Bank data, Lending interest rate (%) (reached on 01.03.2022, 13:20)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>

² The World Bank data, Foreign direct investment, net inflows (% of GDP) – Armenia (reached on 06.03.2022, 10:30)
<https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=AM>



ՊՃՏԱՆԿԱՐ 2. Վարկային և ավանդային տոկոսադրույքների սփրեղը¹
(ԱՄՆ դոլար)


Ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև առկա բարձր սփրեղը նշանակում է, որ առկա են ներդրումներ գրավելու հնարավորություններ: Դա կարող է իրականացվել և վարկերի տոկոսադրույքների իջեցմամբ և ավանդների տոկոսադրույքների բարձրացմամբ: Մակայն այս դեպքում ավելի ցանկալի է վարկերի տոկոսադրույքների իջեցումը, քանի որ ավանդների տոկոսադրույքների բարձրացումը կբերի բանկերի կողմից միջոցների ներգրավման, որի կարիքը օբյեկտիվորեն չկա: Հակառակ դեպքում՝ բանկերը, նման անհրաժեշտությունից ելնելով, կբարձրացնեն ավանդային տոկոսադրույքը:

Բնական է, որ ձեռքբերվող միջոցների գնի համեմատ ներդրումների ավելի բարձր եկամտաբերությունը ներդրողներին կգրավի: Եվ եթե վարկերի տոկոսադրույքը մեծանում է, երկրում ներդրումների հոսքը նվազում է և հանգեցնում է երկրի իրացվելիության նվազմանը:

Հարկային դրույքաչափ. Երկրի վարած հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես մեծ ազդեցություն ունի տվյալ երկրի հեղինակության և տնտեսական զարգացման վրա: Անհատների եկամուտների և բիզնես եկամուտների համար սահմանած հարկային դրույքաչափը տնտեսության կարևոր մասն է: Հարկային դրույքաչափն ազդում է ամբողջական առաջարկի վրա, ապրանքների և ծառայությունների գների և դրանց վաճառքի վրա: Իհարկե այս գործոնը տնտեսության վրա ամենամեծ ազդեցությունն ունեցողներից մեկն է: Եթե հարկային օրենսդրությունը մեղմ է, այսինքն պետությունը կիրառում է հարկաբյուջետային խթանող քաղաքականություն, ապա այս դեպքում տնտեսական ակտի-

¹ The World Bank data, Interest rate spread (%) (reached on 08.03.2022, 16:10)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>


վությունը կաճի, ներդրումների ներգրավման համար էլ ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեն: Բայց այս գործիքն ունի երկակի ազդեցություն, հետևաբար հնարավոր չէ մշտապես կիրառել խթանող քաղաքականություն: Այս դեպքում ավելի նպաստավոր է այս գործիքի և այլ գործոնների համապատասխանեցված օգտագործումը, որը կունենա արդյունք կարճաժամկետում: Վերը նկարագրված բացատրությունը տես գծապատկեր 3-ում:



Գծանկար 3. Հարկային եկամուտներ՝ տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ¹

Գծանկար 4-ի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետազոտվող չորս երկրների շարքում Հայաստանի և Վրաստանի ցուցանիշները ավելի մոտ են իրար և տարբերվում են Բելառուսի և ՌԴ-ի նույն ցուցանիշներից: Գծանկարում ներկայացված է վերոնշյալ երկրներում հարկային և այլ վճարումների ուղղված մասհանումների մասնաբաժինը ընդհանուր շահույթում: Այստեղ երևում է, որ ՀՀ-ն ունի մրցակցային առավելություններ ՌԴ և Բելառուսի հանդեպ, սակայն զիջում է Վրաստանին: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Վրաստանը ԵԱՏՄ անդամ պետություն չէ, և այս պարագայում ենթադրելի է, որ ԵԱՏՄ երկրների շուկաներում ներդրումներ կատարողները առավելություն տրամադրեն ՀՀ-ին, եթե բացառենք այլ ազդող գործոնների դերը:

¹ The World Bank data, Interest rate spread (%) (reached on 08.03.2022, 16:10)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>



Գծանկար 4. Հարկերի և այլ վճարումների ընդհանուր դրույքաչափը¹
(արտահայտված որպես շահույթի տոկոս)

Գնաձ. Երկրի կարևորագույն տնտեսական ցուցանիշներից է համարվում գնաձը: Գնաձի կայուն և թիրախավորված մակարդակը խոսում է երկրի հեռանկարային զարգացման հնարավորությունների մասին, և ընդհակառակը: 2005-2020թթ. վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում ՀՀ սպառողական գների ինդեքսը համեմատաբար ավելի կայուն է եղել քան համեմատվող մյուս երեք երկրների ցուցանիշները²³: Հետագույն ժամանակահատվածում, ուսումնասիրվող երկրներից ՌԴ-ում և Բելառուսում 2011-2015թթ. տեղի են ունեցել սպառողական գների մեծ տատանումներ: Բելառուսում դրանք 2012թ. պայմանավորված են եղել Ազգային բանկի վարած քաղաքականությամբ: Աճի հիմնական պատճառներն են եղել 2012թ. տարեսկզբից Ազգային բանկի նկատմամբ պահանջների ավելացումը և բանկերի նկատմամբ Ազգային բանկի պահանջների նվազումը⁴: ՌԴ-ում սպառողական գների աճ է նկատվում 2015թ., որը պայմանավորված է Ղրիմի հակամարտության և ՌԴ նկատմամբ տնտեսական պատժամիջոցների սահմանմամբ⁵: Եթե հրապարակված ցուցանիշների շարքում չդիտարկենք վերը նշված երկու դեպ-

¹ The World Bank data, Total tax and contribution rate (% of profit) (reached on 25.02.2022, 10:00) <https://data.worldbank.org/indicator/IC.TAX.TOTL.CP.ZS?locations=AM-RU-BY-GE>

² The World Bank data Inflation, consumer prices (annual %) <https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005>

³ ՀՀ ՎԲ, իրական հասվածի վիճակագրություն <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>

⁴ A.Luzgina, Monetary Policy in Belarus since the Currency Crisis 2011, October 8, 2012. freepolicybriefs.org

⁵ A. Ostroukh, Number of Russians Living in Poverty Rises, WSJ, March 21, 2016 <https://www.wsj.com/articles/number-of-russians-living-in-poverty-rises-1458581478>

քերը, ապա այս ցուցանիշով ընտրված չորս երկրները ունեն գրեթե նույն վարկանիշը: Այս դեպքում էական գործոն է դառնում արտաքին աշխարհաքաղաքական դերակատարություն ունենալու հանգամանքը: Իհարկե հետազոտվող երկրների շարքում ավելի ազդեցիկ տեղ ունի ՌԴ-ն, սակայն միաժամանակ պետք է նշել, որ այս երկրի տնտեսությունը ցնցումների է ենթարկվում հիմնականում ոչ տնտեսական պատճառներով: Հետևաբար ՀՀ-ն այս տնտեսական գործոնով կարող է գրավիչ համարվել, և դրա շարունակական կայունությունը էլ ավելի դրական կազդի մեր երկրի միջազգային վարկանիշի բարձրացման վրա:

Տնտեսական կարևոր գործոնների շարքում կարող ենք ներառել նաև հետևյալները՝

- աշխատանք, աշխատուժ և աշխատավարձ,
- օրենքներ և կառավարության վարած քաղաքականություն,
- կրթություն և ուսուցում,
- բնական պաշարներ,
- տրանսպորտ և կապ,
- երկրի շուկայի չափեր:

Հետազոտական աշխատանքի ծավալի պահանջներից ելնելով, նշված գործոններին անդրադարձ կկատարվի հետագա ուսումնասիրություններում:

Գիտական նորույթ. Իրականացված ուսումնասիրության նորույթը կայանում է նրանում, որ հետազոտվող երկրների շարքում ներառվել են և՛ ԵԱՏՄ անդամ երկրներ, և՛ միաժամանակ կառույցին չանդամակցող, սակայն տնտեսական զարգացման հարաբերականորեն նույն մակարդակում գտնվող այլ երկիր: Բացի այդ, ուսումնասիրվող ժամանակահատվածը ներառում է նաև ավելի վաղ տվյալներ, երբ դեռ կառուցը չէր գործում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ակնառու ներկայացնել կառույցի ստեղծման և անդամակցության արդյունավետությունը:

Եզրակացություն. Ուսումնասիրվող ցուցանիշների դիտարկումը ցույց է տալիս, որ ՀՀ և Վրաստանի տնտեսական ցուցանիշների միջև հարաբերական լազր մեծ փոփոխությունների չի ենթարկվել ՀՀ-ի ԵԱՏՄ մասնակցությունից հետո: Այս հանգամանքը առիթ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ տնտեսական ցուցանիշների բարելավման և երկրի վարկանիշի բարձրացման համար ջանքերը պետք է մեծ կախում չունենան վերը նշված կառույցին անդամակցելու հանգամանքից: Տնտեսական ցուցանիշների բարելավմանն ու ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացմանն ուղղված գործողությունները պետք է լինեն բազմակողմ միտված մակրոտնտեսական մակարդակում կայունության ապահովմանը: Ուսումնասիրվող երկրների տնտեսական 3 կարևոր գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ակնհայտ առավելություններ չունի, սակայն այդ ցուցանիշների հետազոտումը և տնտեսական ընդհանուր բնութագրերը հնարավորություն են տալիս ապագայում ձեռք բերել տեսանելի առավելություններ: Այսպիսի հնարավորությունների օգտագործումը թույլ կտա բարելավել ՀՀ վարկանիշը միջազգային ասպարեզում, ապահովել ներդրումների մեծ հոսք, աշխատաշուկայի մեծացում, ամբողջական առաջարկի և պահանջարկի համապատասխան աճ:

Առանձին անդրադառնալով ուսումնասիրված գործոններից յուրաքանչյուրին՝ կարող ենք առանձնացնել հետևյալ նկատառումները և դրանց վերաբերյալ առաջարկները:

- ՀՀ-ն ուսումնասիրվող երկրների շարքում ունի վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջև առկա ամենամեծ սփրեղը: Կա՛մ ՀՀ առևտրային բանկերը ունեն ռիսկերի կառավարման թույլ համակարգ, կա՛մ շահույթի ստացման մեծ ախորժակ: Առաջին դեպքում անհրաժեշտ է բարձրացնել ռիսկերի կառավարման արդյունավետությունը, իսկ երկրորդ դեպքում ապահովել ավելի բարձր մրցակցային միջավայր:
- ՀՀ և ուսումնասիրվող երկրների հարկային քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ունի մրցակցային առավելություններ ՌԴ և Բելառուսի հանդեպ, սակայն զիջում է Վրաստանին: Այս դեպքում պետք է կամ հարկային քաղաքականության մեղմանն ուղղված քայլեր ձեռնարկել, կամ առաջարկել այլ առավելություններ (օրինակ ապահովել անվտանգության ավելի բարձր մակարդակ, որը պայմանավորում է երկրի վարկանիշը):
- Սպառողական գների աճի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետազոտվող ժամանակահատվածում ՀՀ սպառողական գների ինդեքսը համեմատաբար ավելի կայուն է եղել քան համեմատվող մյուս երեք երկրների ցուցանիշները: Այս դեպքում անհրաժեշտ է պահպանել արդյունավետ գործունեության տեմպը՝ միտվելով ավելի բարձր ճշգրտության ապահովմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կիրակոսյան Գ. և ուրիշներ, Տնտեսագիտության տեսություն /ուսումնական ձեռնարկ/ Եր., 2009, էջ 566
2. ՀՀ ԿԲ, իրական հատվածի վիճակագրություն
<https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>
3. Luzgina A. Monetary Policy in Belarus since the Currency Crisis 2011, October 8, 2012. freepolicybriefs.org
4. Cobb C. W. Douglas P. H., A theory of production. American Economic Review: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association: 18(1), 1928, p. 139
5. Copeland M. A., Concepts of National Income, in Studies on Income and Wealth, National Bureau of Economic Research, New York: Vol. 2, 1937, p. 10-48
6. Griliches Z. Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, p. 1324-1330
7. Lucas R. On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, p. 21-23
8. Ostroukh, Number of Russians Living in Poverty Rises, WSJ, March 21, 2016
<https://www.wsj.com/articles/number-of-russians-living-in-poverty-rises-1458581478>
9. The World Bank data Inflation, consumer prices (annual %)
<https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005>

10. The World Bank data, Foreign direct investment, net inflows (% of GDP) – Armenia (reached on 06.03.2022, 10:30)
<https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=AM>
11. The World Bank data, Interest rate spread (%) (reached on 08.03.2022, 16:10)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>
12. The World Bank data, Lending interest rate (%) (reached on 01.03.2022, 13:20)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>
13. The World Bank data, Tax revenue (% of GDP) (reached on 24.02.2022, 11:05)
<https://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005>
14. The World Bank data, Total tax and contribution rate (% of profit) (reached on 25.02.2022, 10:00)
<https://data.worldbank.org/indicator/IC.TAX.TOTL.CP.ZS?locations=AM-RU-BY-GE>

References

1. Kirakosyan G. & ovrishner, Tntesagitowt'yan tesowt'yown /owsowmnakand'er'nark/ Er&an 2009, e'j 566
2. HH KB, irakan hatvac'i vitwakagrowt'yown
<https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>
3. A.Luzgina, Monetary Policy in Belarus since the Currency Crisis 2011, October 8, 2012. freepolicybriefs.org
4. Cobb C. W. Douglas P. H., A theory of production. American Economic Review: Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association: 18(1), 1928, p. 139
5. Copeland M. A., Concepts of National Income, in Studies on Income and Wealth, National Bureau of Economic Research, New York: Vol. 2, 1937, p. 10-48
6. Griliches Z. Journal of Economic Literature. Vol. 34, № 3, 1996, p. 1324-1330
7. Lucas R. On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, p. 21-23
8. Ostroukh, Number of Russians Living in Poverty Rises, WSJ, March 21, 2016
<https://www.wsj.com/articles/number-of-russians-living-in-poverty-rises-1458581478>
9. The World Bank data Inflation, consumer prices (annual %)
<https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005>
10. The World Bank data, Foreign direct investment, net inflows (% of GDP) – Armenia (reached on 06.03.2022, 10:30)
<https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=AM>

11. The World Bank data, Interest rate spread (%) (reached on 08.03.2022, 16:10)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>
12. The World Bank data, Lending interest rate (%) (reached on 01.03.2022, 13:20)
<https://data.worldbank.org/indicator/FR.INR.LEND?contextual=default&end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005&view=chart>
13. The World Bank data, Tax revenue (% of GDP) (reached on 24.02.2022, 11:05)
<https://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS?end=2020&locations=AM-RU-BY-GE&start=2005>
14. The World Bank data, Total tax and contribution rate (% of profit) (reached on 25.02.2022, 10:00)
<https://data.worldbank.org/indicator/IC.TAX.TOTL.CP.ZS?locations=AM-RU-BY-GE>

ՀՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արսեն Սլավիկի Ընդոյան

Համառոտագիր. Տնտեսական աճը հասարակական առաջընթացի բաղկացուցիչ մաս է: Ժամանակակից համաշխարհային տնտեսության կառուցվածքը պահանջում է պետություններից լինել մրցակցային և ճկուն: Որքան բարձր է պետության գնահատականը այս բնութագրերի առումով, այնքան ավելի բարձր է այդ երկրի միջազգային վարկանիշը: ՀՀ տնտեսության զարգացումը նույնպես մեծապես կախված է երկրի վարկանիշից, որն էլ իր հերթին կախված է տնտեսական այն հիմնական գործոններից, որոնցով պայմանավորվում է այդ վարկանիշը: Հետևապես այդ գործոնների ուսումնասիրությունը և դրանց վերլուծությունը մեծ կարևորություն ունի ՀՀ տնտեսական զարգացումն ապահովելու գործում, հետևապես խիստ **արդիական է: Աշխատանքի նպատակն է** բացահայտել այն գործոնները, որոնք ՀՀ տնտեսական զարգացման համար առավել կարևորն են, և թե որտեղ ՀՀ-ն ունի կամ կարող է ունենալ առավելություններ: Ուստի այդ նպատակի իրականացման համար **խնդիր է դրվել** ուսումնասիրել ՀՀ և հարևան մի շարք երկրների նույն ցուցանիշները, վերլուծել դրանք, ստանալ քանակական և որակական գնահատականներ: Ներկայացված հետազոտական աշխատանքում կիրառվել են վիճակագրական, վերլուծական, համեմատության և արտրակցիայի **մեթոդները:**

Հետազոտելով տնտեսական երեք կարևոր գործոններ, կատարվել են **եզրահանգումներ** դրանցից յուրաքանչյուրի մասով՝ ներկայացնելով համապատասխան **առաջարկներ**, որոնք ՀՀ-ին կտան մրցակցային առավելություններ: Ներկայացված արդյունքները և առաջարկները կարող են կիրառվել ինչպես կարճաժամկետ նպատակների իրականացման համար, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճի ապահովմանն ու կայուն զարգացմանն ուղղված գործընթացներում:

Իրականացված ուսումնասիրության **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ մշակվել է գործիքակազմ, որը թույլ է տալիս վերլուծելով հետազոտվող երկրների շարքում ներառած և՛ ԵԱՏՄ անդամ երկրներ, և՛ միաժամանակ կառույցին չանդամակցող, սակայն տնտեսական զարգացման հարաբերականորեն նույն մակարդակում գտնվող այլ երկրի տնտեսական ցուցանիշները: Միաժամանակ, մշակված չափորոշիչները հնարավորություն են տալիս ուսումնասիրվող ժամանակահատվածում ներառել նաև ավելի վաղ տվյալներ, երբ դեռ կառույցը չէր գործում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ակնառու ներկայացնել կառույցի ստեղծման և անդամակցության արդյունավետությունը:

Հետազոտության ընթացքում դիտարկված երկրների և ՀՀ տնտեսական միջաբերական գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ակնհայտ հարաբերական աճ չի գրանցել վերջին տասնամյակում: Միաժամանակ պետք է նշել, որ այդ ցուցանիշների հետազոտումը և տնտեսական ընդհանուր բնութագրերը թույլ են տալիս եզրակացնել, որ դրանք հնարավորություն են տալիս ապագայում ձեռք բերել տեսանելի առավելություններ: Այս հնարավորությունների առավելագույն արդյունավետությամբ օգտագործումը թույլ կտա բարելավել ՀՀ **միջազգային վարկանիշը**, որը իր հերթին շղթայական կերպով կապահովի օտարերկրյա **ներդրումների մեծ հոսք, աշխատաշուկայի մեծացում, ամբողջական առաջարկի և պահանջարկի համապատասխան աճ:**

Բանալի բառեր. տնտեսական գործոններ, տնտեսական աճ, երկրի վարկանիշ, տոկոսադրույք, հարկային դրույթաչափ, գնաճ, մրցակցություն, տնտեսական առավելություն:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ВАЖНЫХ ЭКОНОМИЧЕСКИХ ФАКТОРОВ АРМЕНИИ И РЕГИОНАЛЬНЫХ СТРАН

Арсен Славикович Эркоян

Аннотация. Экономический рост является неотъемлемой частью социального прогресса. Структура современной мировой экономики требует от стран конкурентоспособности и гибкости. Чем выше рейтинг страны по этим характеристикам, тем выше международный рейтинг этой страны. Развитие экономики Армении также во многом зависит от рейтинга страны, который, в свою очередь, зависит от основных экономических факторов, определяющих этот рейтинг. Поэтому изучение этих факторов и их анализ имеет большое значение в обеспечении экономического развития РА, по этому является крайне **актуальным. Целью работы** является выявление факторов, наиболее важных для экономического развития РА, в которых РА имеет или может иметь преимущества. Поэтому для достижения этой цели была поставлена **задача** изучить аналогичные показатели ряда соседних стран РА, проанализировать их, получить количественно-качественные оценки. В

представленной исследовательской работе использовались статистические, аналитические и сравнительные **методы** абстрагирования.

Изучив три важных экономических фактора, по каждому из них были сделаны **выводы**, представлены соответствующие предложения, которые дадут Армении конкурентное преимущество. Представленные результаты и рекомендации могут быть использованы как для краткосрочных целей, так и для долгосрочных процессов экономического роста и устойчивого развития.

Новизна исследования заключается в том, что разработан инструментарий, позволяющий анализировать экономические показатели как государств-членов ЕАЭС, так и других стран, не входящих в структуру, но находящихся на относительно близком уровне экономического развития. В то же время разработанные критерии позволяют включить более ранние данные в рассматриваемый период, когда эта структура еще не функционировала. Такой подход позволяет представить эффективность создания и членства в структуре.

Анализ ряда важных экономических факторов наблюдаемых в ходе исследования стран и Республики Армения показывает, что в Республике Армения за последнее десятилетие не было зарегистрировано явного относительного роста. В то же время следует отметить, что траектория этих показателей и общие экономические характеристики позволяют сделать вывод о том, что они дают возможность получить видимые выгоды в будущем. Максимальное использование этих возможностей улучшит международную репутацию Армении, что, в свою очередь, обеспечит большой приток иностранных инвестиций, рост рынка труда и соответствующий рост совокупного предложения и совокупного спроса.

Ключевые слова. экономические факторы, экономический рост, рейтинг страны, процентная ставка, налоговая ставка, инфляция, конкуренция, экономическое преимущество.

COMPARATIVE ANALYSIS OF IMPORTANT ECONOMIC FACTORS OF ARMENIA AND REGIONAL COUNTRIES

Arsen Slavik Erkoyan

Abstract. Economic growth is an integral part of social progress. The structure of the modern world economy requires countries to be competitive and flexible. The higher the rating of a country in terms of these characteristics, the higher the international rating of that country. The development of the Armenian economy also largely depends on the country's rating, which in turn depends on the main economic factors that determine that rating. Therefore, the study of these factors and their analysis is of great importance in ensuring the economic development of the RA, so it is very **relevant**. The **aim** of the work is to identify the factors that are most important for the economic development of the RA, where the RA has or can have advantages. Therefore, in order to achieve that goal, the **task** was set to study the same indicators of

a number of neighboring countries of the RA, to analyze them, to receive quantitative-qualitative assessments.

Examining three important economic factors, conclusions were made on each of them, presenting relevant proposals that will give Armenia a competitive advantage. Presented results and recommendations can be used for short-term goals as well as for long-term economic growth and sustainable development processes. Statistical, analytical and comparative abstraction *methods* were used in the presented research work.

The *novelty* of the study is that tools have been developed to analyze the economic performance of both the EAEU member states and other countries that are not part of the structure, but are at a relatively close level of economic development. At the same time, the developed criteria make it possible to include earlier data in the period under consideration, when this structure was not yet functioning. Such an approach makes it possible to present the effectiveness of the establishment and membership of the structure.

An analysis of a number of important economic factors observed in the course of the study of countries and the Republic of Armenia *shows that in the Republic of Armenia over the past decade no clear relative growth has been registered. At the same time, it should be noted that the trajectory of these indicators and the general economic characteristics allows to conclude that they provide an opportunity to obtain visible benefits in the future.* Making the most of these opportunities *will improve Armenia's international reputation, which in turn will ensure a large influx of foreign investment, a growth in the labor market and a corresponding increase in aggregate supply and aggregate demand.*

Keywords. Economic factors, economic growth, country rating, interest rate, tax rate, inflation, competition, economic advantage.

АНАЛИЗ ПРОБЛЕМ В ЗАКОНОДАТЕЛЬНОЙ СФЕРЕ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ РА И ПУТИ ИХ УСТРАНЕНИЯ

Лилит Норайровна Саргсян
Евгения Арташесовна Акопян

Հոդվածը ստացվել է՝ 21.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 23.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Введение. Текущие темпы экономических изменений происходят настолько быстро, что стратегическое планирование является единственным способом формально предсказать будущие проблемы и возможности. Разработка стратегии означает уточнение перспектив развития страны, целей, стоящих перед ней проблем и, следовательно, принятие эффективных мер по их решению. Этим самым и обоснована **актуальность темы.** **Целью** данной статьи является на основе анализа проблем в законодательной сфере стратегического планирования РА выявить проблемы законодательного процесса стратегического планирования в Республике Армения за последние два десятилетия, выявить существующие проблемы в сфере и разработать эффективные пути их решения. Для достижения поставленной цели в статье поставлен и решен ряд **задач.** в частности՝ проанализировать и представить существуют ли утвержденные на государственном уровне цели национального развития, состав этих целей, их количественные показатели, временной горизонт, какими решениями они утверждаются, как проводится обсуждение этих целей и показателей в государственных исполнительных и законодательных органах власти, с бизнесом, с участием граждан, мониторинг и официальная оценка достижения национальных целей и их показателей, существует ли независимая и общественная экспертиза, существует ли законодательство о стратегическом планировании, какие стратегические документы разрабатываются в соответствии с этим законодательством, как учитываются и/или должны учитываться характеристики национальных целей в стратегических документах – доктринах, стратегиях, программах, как эти характеристики разворачиваются и детализируются в более подробные показатели следующего уровня – по отдельным отраслям, сферам деятельности, аспектам достижения целей, как обеспечиваются полнота и непротиворечивость системы таких показателей, как утверждаются стратегические документы, как организован их мониторинг, контроль реализации и оценка исполнения, как участвуют в этих процессах организации бизнеса, общественные организации, граждане.

Համաձայն Աղյուսակ 2-ի տվյալների վերջին 3 տարիների եռամսյակների հաշվարկով մեր հաշվարկված ցուցանիշները զգալի է, քանի որ Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 2-ի միջև «Վարկեր» ցուցանիշները տարեկան և եռամսյակային միջիններով գրեթե նույնն են, ինչը չենք կարող ասել ՀՆԱ-ի դեպքում: Բոլոր դեպքերում, մեր կողմից հաշվարկված և ՀՀ ԿԲ կողմից հաշվարկված GAP-երում, բացի 2020թ, 3-րդ և 2021թ, 1-ին եռամսյակներից, GAP-երը տանում են նրան, որ շեմերը պետք է հաշվարկվել $L > 2$ սանդղակով, ինչի արդյունքում շեմը պետք է սահմանել ռիսկով կշռված ակտիվների հաշվարկով ոչ գրո: Բացի այդ, առկա են եռամսյակային հրապարակումներ, որտեղ բացակայում է GAP-ը, սա նույնպես վերլուծական առումով խոչընդոտ է հանդիսանում:

Հաշվի առնելով, որ հետազոտության նպատակն է ոչ թե գտնել ՀՀ ԿԲ հրապարակումների և մեր սեփական դատողությունների շեղումներն, այլ թե ֆինանսական կայունության ինչպիսի վիճակում է գտնվում ՀՀ-ն, այդ իսկ պատճառով մեր կողմից հաշվարկված տարեկան կտրվածքներով վարկ/ՀՆԱ հարաբերակցությունները համեմատության մեջ ենք դրել ՀՀ ԿԲ կողմից հաշվարկված տարեկան վարկ/ՀՆԱ ցուցանիշների հետ՝ մակրոպրոդեկտիվ քաղաքականության կիրառելիության աստիճանը նկարագրելու և ցուցադրելու համար¹(տես Աղյուսակ 3):

¹ ՀՀ ԿԲ, Վիճակագրություն, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, «Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ/ վարկեր/ՀՆԱ» հրապարակում, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

**Աղյուսակ 1-ի հաշվարկները ԿԲ վարկ/ՀՆԱ հաշվարկների
ցուցանիշների հետ համեմատված**

մլն. ՀՀ դրամ

Տարի	ՀՆԱ	Վարկեր /միջինտարեկան/ /ՀՆԱ %	Հաշվարկված վարկ/ՀՆԱ			ՀՀ ԿԲ վարկ/ՀՆԱ		
			Վարկ /ՀՆԱ %	HP ¹ տրենդ %	GAP %	Վարկ /ՀՆԱ %	HP տրենդ %	GAP %
2020	6,181,664.1	4,316,110.5	69.8	62.5	7.3	63.2	58.6	4.7
2019	6,543,321.8	3,736,212.5	57.1	59.0	-1.9	52.1	55.4	-3.3
2018	6,017,035.2	3,217,099.7	53.5	55.4	-2.0	48.9	52.3	-3.4
2017	5,564,493.3	2,737,060.9	49.2	51.9	-2.7	45.1	49.1	-4.0
2016	5,067,293.5	2,403,746.5	47.4	48.4	-1.0	45.8	46.0	-0.2
2015	5,043,633.2	2,260,859.3	44.8	44.9	0.0	39.8	42.8	-3.0
2014	4,828,626.3	2,063,994.2	42.7	41.3	1.4	42.7	39.7	3.0
2013	4,555,638.2	1,824,712.0	40.1	37.8	2.2	42.1	36.5	5.6
2012	4,266,460.5	1,558,401.9	36.5	34.3	2.2	40.2	33.4	6.8
2011	3,777,945.6	1,189,896.0	31.5	30.8	0.7	33.6	30.2	3.4
2010	3,460,202.7	879,682.9	25.4	27.2	-1.8	27.4	27.1	0.4
2009	3,141,651.0	723,985.9	23.0	23.7	-0.7	23.4	23.9	-0.5
2008	3,568,227.6	601,023.2	16.8	20.2	-3.3	17.8	20.8	-3.0
2007	3,149,283.4	356,109.0	11.3	16.6	-5.3	13.5	17.6	-4.1
2006	2,656,189.8	230,001.4	8.7	13.1	-4.5	9.2	14.5	-5.3
2005	2,242,880.9	170,635.1	7.6	9.6	-2.0	8.7	11.3	-2.6
2004	1,907,945.4	130,013.1	6.8	6.1	0.7	7.5	8.2	-0.7
2003	1,624,642.7	95,502.5	5.9	2.5	3.3	6.6	5.1	1.6
2002	1,362,471.7	83,071.4	6.1	-1.0	7.1	6.7	1.9	4.8

Բոլոր դեպքերում, հաշվարկներով գալիս ենք այն եզրահանգմանը, որ 2020թ.-ին չպետք է կապիտալի հակացիկլիկ բուֆերի տոկոսադրույքը լիներ զրո՝ հաշվի առնելով Բազել 3-ի մեթոդաբանությունը: Բուֆերի ստեղծումը առանց խորը հաշվարկներ անելու լեմ է այնքանով, որ 2020թ.-ին առկա էր 44-օրյա պատերազմը և Covid 19-ը:

Մեր կողմից նաև հաշվարկվել է դինամիկա, թե տեղաբաշխված վարկերով սովյալ տարում, որքան ՀՆԱ է ստեղծվել ՀՀ-ում(տես՝ Աղյուսակ 4): Արդյունքում դինամիկան ցույց է տալիս, որ տնտեսությունում ՀՆԱ-ի աճին զուգահեռ առավել արագ տեմպով է աճում տնտեսությունում վարկային միջոցների տեղաբաշխումն, որը փաստում է, որ տնտեսությունում զարգացման դինամիկան կատարվում է տարեց տարի առավել շատ պարտքային միջոցների հաշվին և ոչ թե կլասիկ տնտեսական զարգացման:

¹ Hodrick-Prescott ֆիլտրով տրենդը

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տեղաբաշխված միջոցների մասնաբաժինը ՀՆԱ-ում

մլն. ՀՀ դրամ

Տարի	ՀՆԱ	Վարկ	ՀՆԱ/վարկ	Տարի	ՀՆԱ	Վարկ	ՀՆԱ/վարկ
2021	6,982,848.6	4,323,009.3	1.6	2011	3,777,945.6	1,189,895.9	3.2
2020	6,181,664.1	4,316,110.5	1.4	2010	3,460,202.7	879,682.9	3.9
2019	6,543,321.8	3,736,212.5	1.8	2009	3,141,651.0	723,985.9	4.3
2018	6,017,035.2	3,217,099.7	1.9	2008	3,568,227.6	601,023.2	5.9
2017	5,564,493.3	2,737,060.9	2.0	2007	3,149,283.4	356,109.0	8.8
2016	5,067,293.5	2,403,746.5	2.1	2006	2,656,189.8	230,001.3	11.5
2015	5,043,633.2	2,260,859.3	2.2	2005	2,242,880.9	170,635.1	13.1
2014	4,828,626.3	2,063,994.2	2.3	2004	1,907,945.4	130,013.1	14.7
2013	4,555,638.2	1,824,712.0	2.5	2003	1,624,642.7	95,502.5	17
2012	4,266,460.5	1,558,401.9	2.7	2002	1,362,471.7	83,071.4	16.4

Գիտական նորույթ: Վերլուծելով առկա վիճակն ու հիմնական գործոնները Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության պահպանման գալիս ենք այն եզրահանգմանն, որ ֆինանսական շուկերին դիմակայելու համար խստագույնս պետք է պահպանել Բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ հաշվարկների մեխանիզմները, կիրառելով համապատասխան բուֆերներ՝ շուկերը կանխելու համար: Բացի այդ բուֆերների սահմանումից զատ երկրում տեղաբաշխված վարկային միջոցների համար սահմանել լիմիտներ ՀՆԱ-ի նկատմամբ՝ հետագայում ավելի մեծ GAP-եր չգեներացնելու համար, որը ներկայում առկա չէ: Իսկ մեր կողմից առաջարկվող նորույթը ՀՆԱ/Վարկ նոր ցուցանիշի սահմանումն է հարաբերական ցուցանիշի տեսքով, կախված երկրի սահմանվող տնտեսական ախորժակից և հետաքրքրությունից, ինչը կամրագրվի վերին արգելափակող սահման՝ ֆինանսական շուկերի հավանական առաջացումը զսպելու համար. կապիտալի հակացիկլիկ զսպողական բուֆերին զուգընթաց:

Եզրակացություն: Հաշվարկների արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ չնայած 2019թ.-ից արդեն ֆինանսական կայունության ապահովման համար ներդրվել է տարանջատված մակրոպրոդեցիալ քաղաքականություն, այնուամենայնիվ չի կիրառվել 2020թ.-ին կապիտալի բուֆեր՝ բոլոր հավասար պայմաններում, որը մեր հաշվարկների արդյունքում ապացուցված անհրաժեշտ միջամտություն պետք է լիներ, իսկ դրան հակառակ 2021թ.-ին բուֆերը պետք է չեզոքացվեր, եթե հաշվարկները դիտարկում ենք տարեկան կտրվածքով: Բայց, քանի որ ՀՀ ԿԲ կողմից որդեգրած քաղաքականության հաշվարկներն ու որոշումների կայացումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ, ապա առավել զգայուն հաշվարկներ ունենալու համար եզրահանգում անելիս դիտարկվել են Աղյուսակ 2-ով իրականացված եռամսյակային ցուցանիշներով ճեղքերը: ՀՀ ԿԲ որոշումները ուսումնասիրելով, տեսնում ենք, որ ընդհանուր

առմամբ վարկավորման ծավալների չկրճատման համար վերջինս բուֆերի համար զրո տոկոս դրույքաչափի սահմանումը նպատակահարմար է գտնում, սակայն մեր կարծիքով ըստ եռամսյակային վարկ/ՀՆԱ հարաբերակցության ճեղքով արտահայտված պետք էր կիրառել բուֆեր: Իսկ ներկայիս մոտեցումն առավել կրում է հետազոտական, քան թե շուկերի կանխման բնույթ: Բացի այդ, ուսումնասիրելով ՀՆԱ/Վարկ հարաբերակցությունն Ադյուսակ 4-ից պարզ է դառնում, որ տնտեսության առավել մեծ հատվածը հիմնված է վարկային միջոցների վրա, ինչը ենթադրում է տնտեսության անկում՝ բարձր զգայունություն տնտեսական շուկերի ժամանակ: Մեր եզրահանգմամբ ֆինանսական կայունության համար պատասխանատուները պետք է իրականացնեն ՀՆԱ/վարկ զսպողական ցուցանիշի ներդրում, այսինքն ՀՆԱ-ի որոշակի չափով վարկավորման թույլատրելի շեմ, որպեսզի համախառն ներքին արդյունքը որևէ պահի չդառնա ամբողջությամբ կախյալ վարկերի տեղաբաշխման հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԿԲ Խորհուրդ, «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգ» էջ 4, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=128508>:
2. ՀՀ ԿԲ, Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը, էջ 4, <https://www.cba.am/Storage/AM/downloads/finstability/Capital.pdf>:
3. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունություն Մակրոպրոդեկցիալ քաղաքականություն ենթաբաժին, https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int_report_2021.aspx:
4. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>:
5. ՀՀ ԿԲ, Մակրոպրոդեկցիալ քաղաքականություն, https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx:
6. ՀՀ ԿԲ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:
7. ՀՀ ԿԲ, Փողի ազդեցատրների էությունը և կիրառման շրջանակը, 6 էջ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/agreg.pdf:
8. ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների շտեմարան, Վիճակագրական ցուցանիշներ, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>:
9. ՀՀ ԿԲ Բացատրական բառարան, 11 էջ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf:
10. BIS, Basel Committee on Banking Supervision, “Guidance for national authorities operating the countercyclical capital buffer”, Switzerland 2010, page 32, <https://www.bis.org/publ/bcbs187.pdf>:

References

1. HH KB Xorhowrd, «Bankeri kapitali hamarjheqowt'yan normativi sahmanachap'ic bard'r shemeri sahmanman ev hashvarkman karg» e'j 4, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=128508> .
2. HH KB, Kapitali hakaciklik shemi sahmanman himqowm y'nkac' y'ndhanowr met'odabanowt'yowny', e'j 4, <https://www.cba.am/Storage/AM/downloads/finstability/Capital.pdf> .
3. HH KB, Finansakan kayownowt'yown Makroprowdencial qaghaqakanowt'yown ent'abajhin, https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int_report_2021.aspx
4. HH KB, Finansakan kazmakerpowt'yownneri vitwakagrowt'yown, <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx> .
5. HH KB, Makroprowdencial qaghaqakanowt'yown, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> .
6. HH KB, Dramavarkayin & finansakan vitwakagrowt'yown, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> .
7. HH KB, P'oghi agregatorneri e'owt'yowny' & kirar'man shrjanaky', 6 e'j, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/agreg.pdf .
8. HH Vitwakagrakan komitei tvyalneri shtemaran, Vitwakagrakan cowcanishner, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>.
9. HH KB Bacatrankan bar'aran, 11 E'j, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf
10. BIS, Basel Committee on Banking Supervision, “Guidance for national authorities operating the countercyclical capital buffer”, Switzerland 2010, page 32, <https://www.bis.org/publ/bcbs187.pdf>.

ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ԲՈՒՖԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԱՐԿԵՐ/ՀՆԱ ՃԵՂՔԸ

Արշակ Հարությունի Վարժապետյան

Համառոտագիր: 2009թ.-ի վերջին, երբ համաշխարհային տնտեսությունը սկսեց վերականգնվել գլոբալ ֆինանսական ճգնաժամից, ինչպես նաև վերականգնվեց կապիտալի ներհոսքը դեպի զարգացող շուկայի տնտեսություններ, աճեցին մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ռիսկերը: Մի շարք զարգացող շուկայական տնտեսություններ արձագանքեցին այս մտահոգություններին՝ որդեգրելով կապիտալի վերահսկողություն կամ մակրոպրոլենցիական միջոցներ: Մեր երկրում մակրոպրոլենցիալ քաղաքականության կիրառումը, որպես ֆինանսական կայունության ապահովման միջոց, ընդունվեց 2019թ.-ի առաջին եռամսյակից: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից

յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ իրականացվում է Կապիտալի հակացիկլիկ բուֆերի տոկոսադրույքի սահմանում, հիմնվելով վարկ/ՀՆԱ ճեղքի վրա, սակայն մինչև հիմա անկախ ճեղքի մեծությունից այն զրո է, որին մենք մանրակրկիտ անդրադարձել ենք հոդվածում՝ աղյուսակային վերլուծությունների տեսքով, և որտեղ չենք կիսել զրոյական տոկոսադրույքը, այդ իսկ պատճառով այն դիտարկել ենք ներկայում **արդիական** ուսումնասիրության համար:

Հոդվածի **նպատակն** է դիտարկել ՀՀ-ում մակրոպրոդեկցիալ քաղաքականության գործիքները՝ կապիտալի հակացիկլիկ շեմի կամ կապիտալի հակացիկլիկ բուֆերի ներդրված լինելը և կիրառելիության ուսումնասիրությունը: Ինչպես գիտենք, բուֆերի հիմնական նպատակը ֆինանսատեսական շոկերին ֆինանսական համակարգով դիմակայելու ունակության բարձրացումն ու տնտեսությանը վարկավորման տեսքով տրամադրվող ֆինանսական միջոցների հարթ ընթացքի ապահովումն է: Մեր **խնդիրն** է հետազոտությունն իրականացրել ենք Միջազգային բանկի՝ Բազելային կոմիտեի հաշվարկների կողմից հրապարակված՝ հակացիկլային կապիտալի բուֆերի (Countercyclical Capital Buffer) մեթոդաբանությամբ: Բոլոր հաշվարկներն իրականացված են Բազելային կոմիտեի կողմից հրապարակված բանաձևերի հիման վրա և համեմատված ՀՀ ԿԲ կողմից հրապարակված հաշվարկների և մեթոդաբանությունների հետ:

Հետազոտության հաշվարկային **մեթոդաբանական հիմքը** վարկ/ՀՆԱ հարաբերակցությամբ ճեղքի(GAP) չափի որոշումն է, որն իրականացվել է Hodrick-Prescott ֆիլտրի օգնությամբ: Մեր հաշվարկների և ՀՀ ԿԲ հաշվարկների միջև որոշ դեպքերում առկա են եղել զգալի շեղումներ, ինչը հաշվի առնելով եկել ենք այն եզրահանգմանը, որ պետք է 2020թ.-ին կապիտալի բուֆեր կիրառվելին բոլոր հավասար պայմաններում, իսկ 2021թ.-ին՝ բուֆերը չեզոքացվելին տարեկան հաշվարկների կտրվածքով: Իսկ եռամսյակային կտրվածքով հաշվարկների արդյունքում, ինչպես նաև ՀՀ ԿԲ որոշումներն ուսումնասիրելով, պարզել ենք, որ ընդհանուր առմամբ վարկավորման ծավալների չկրճատման համար վերջինս բուֆերի համար զրո տոկոս դրույքաչափի մոտեցում է դրսևորել, որը մեր կարծիքով, ըստ եռամսյակային վարկ/ՀՆԱ հարաբերակցության ճեղքով պայմանավորված, պետք է հակառակը լիներ: Բացի այդ, ՀՆԱ/Վարկ հարաբերակցությունը ուսումնասիրելով մենք եկել ենք այն եզրահանգմանը (**ուսումնասիրության հիմնական արդյունքին**), որ տնտեսության առավել մեծ հատվածը հիմնված է վարկային միջոցների վրա, ինչն ենթադրում է ֆինանսական և տնտեսական շոկերի դեպքում պարալիզացման մեծ վտանգ, ինչի համար ֆինանսական կայունության համար պատասխանատուները պետք է իրականացնեն ՀՆԱ/վարկ, այսինքն ՀՆԱ-ի որոշակի չափով վարկավորման թույլատրելի շեմ, որը 20 տարիների կտրվածքով 16,4 գործակից հարաբերակցությունից հանգեցվել է 1,6 գործակցի: Նման զսպողական գործիքի չներդրման դեպքում դինամիկան կարող է մոտեցվել մինչև 1:1 հարաբերակցությամբ ՀՆԱ/վարկ մասնաբաժնի: Որպեսզի համախառն ներքին արդյունքն որևէ պահի չդառնա ամբողջությամբ կախյալ վարկերի տեղաբաշխումից (օրինակ տնտեսության որևէ ճյուղի վարկավորման զսպումն ուժգնորեն ազդի ՀՆԱ-ի վրա), ապա պետք է

դրա վերաբերյալ զսպողական մեխանիզմներ կիրառվեն: Նշված հանգամանքով պայմանավորված առաջ ենք քաշել *նոր մոտեցում(ներույթ)*՝ ՀՆԱ/Վարկ նոր ցուցանիշի սահմանումը հարաբերական արժեքով՝ կախված երկրի տնտեսական ախորժակից և հետաքրքրությունից, որով էլ կամրագրվի վերին արգելափակող սահման ֆինանսական շուկերի հավանական առաջացումը զսպելու համար, որը ամբողջությամբ *կիրառական* է:

Բանալի բառեր. ՀՆԱ, վարկ, մակրոպրոդեկցիալ քաղաքականություն, ճեղք, բուֆեր, կապիտալի հակացիկլիկ շեմ, Hodrick-Prescott, Բազելային կոմիտե, ֆինանսական շուկ:

МАКРОПРУДЕНЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА. КОНТРИКЛИЧЕСКИЙ БУФЕР КАПИТАЛА В АРМЕНИИ, РАЗРЫВ КРЕДИТ/ВВП

Аршак Арутюнович Варжапетян

Аннотация: В конце 2009 года, когда мировая экономика начала восстанавливаться после мирового финансового кризиса, приток капитала в страны с формирующимся рынком увеличил риски макроэкономической и финансовой стабильности. Ряд стран с формирующимся рынком отреагировали на эти опасения, приняв меры контроля за движением капитала, в том числе и макропруденциальные меры. Применение макропруденциальной политики в нашей стране как средства финансовой стабильности было принято в первом четверте 2019 года. Несмотря на то, что раз в четверть внедряется Консультативный кодекс ЦБ РА, на основе разрыва кредит/ВВП, но пока, вне зависимости от размера разрыва, она равна нулю, которые мы подробно обсуждали в статье в виде табличных анализов, где мы не разделяли нулевую процентную ставку. Вот почему мы рассмотрели его для *настоящего* исследования.

Целью данной статьи является рассмотрение инструментов макропруденциальной политики в Республике Армения: введение антициклического порога капитала или антициклического буфера капитала и изучение применимости. Как известно, основной целью буфера является повышение способности финансовой системы чтобы противостоять финансово-экономическим потрясениям и обеспечить беспрепятственное поступление финансовых ресурсов предоставляемых экономике в виде кредитов. Наша *задача* – провели исследование с использованием метода контриклического буфера капитала(counter-cyclical capital buffer), опубликованного Базельским комитетом Банка международных расчетов. Все расчеты основаны на формулах опубликованных Базельским комитетом и сопоставлены с расчетами и методиками опубликованными Центральным банком Армении.

Расчетной основой *методические* является измерение разрыва отношения кредит/ВВП (GAR), которое проводилось с использованием фильтра Hodrick-Prescott. Между нашими расчетами и расчетами ЦБ РА были значительные откло-

нения, в ряде случаев с учетом того, что мы пришли к выводу, что в 2020 г. надбавка капитала должна была использоваться при всех равных условиях, а в 2021 г. должны были быть нейтрализованы с точки зрения годовых расчетов. И в результате ежеквартальных расчетов и изучения решений ЦБ РА мы увидели, что для того, чтобы не сокращать кредитование в целом, последний показал нулевой процентный подход к буферу, который, на наш взгляд, должен был быть наоборот из-за квартального разрыва соотношения кредит/ВВП. Кроме того, изучая соотношение ВВП/Кредит, делаем вывод, что большая часть экономики основана на кредите (**основной результат получен**), что подразумевает высокий риск паралича в случае финансово-экономических потрясений, в чем лице, ответственные за финансовую стабильность должны реализовать ВВП/кредит, чей допустимый порог кредитования на определенный объем ВВП вырос с коэффициента 16,4 до 1,6 за 20 лет. Если не ввести такой сдерживающий инструмент, динамику можно приблизить к соотношению ВВП-кредит менее 1:1, и чтобы валовой внутренний продукт не попал в зависимость от распределения кредитов; например если сдерживание кредитования в любом секторе экономики окажет сильное влияние на ВВП, то к нему должны быть применены сдерживающие механизмы. В связи с указанным обстоятельством мы выдвинули новый подход (**научная новизна**) к ВВП/Кредиту, новый показатель в относительной величине зависящий от экономических appetites и процентов страны, который зафиксирует верхний предел блокировки для предотвращения возможного возникновения финансовых шоков, это полностью **практично**.

Ключевые слова: ВВП, кредит, макропруденциальная политика, трещина, буфер, порог контрциклического капитала, Ходрик-Прескотт, Базельский комитет, финансовый шок.

MACROPRUDENTIAL POLICY. COUNTERCYCLICAL CAPITAL BUFFER IN ARMENIA, THE GAP OF LOAN/GDP

Arshak Harutyun Varzhapetyan

Abstract: At the end of 2009, when the global economy began to recover from the global financial crisis, as the capital inflows into emerging market economies resumed, the risks of macroeconomic and financial stability increased. A number of developing market economies have responded to these concerns by adopting capital controls or macroprudential measures. The application of macroprudential policy in our country, as a means of financial stability, was adopted in the first quarter of 2019. Despite the fact that the Board of the CBA sets the interest rate of the Capital Cyclical Buffer once every quarter, the countercyclical capital buffer rate is based on the GAP of loan/GDP, but so far, regardless of the size of the GAP, it is zero: this we have discussed in detail in the table analysis. That's why we're looking at it for **nowaday** research

The *purpose* of this article is to consider the tools of macroprudential policy in the Republic of Armenia: the introduction of an anti-cyclical threshold of capital or the anti-cyclical buffer of capital and the study of applicability. As we know, the main goal of the buffer is to increase the ability of the financial system to withstand financial and economic shocks and to ensure the smooth flow of financial resources provided for the economy in the form of loans. *Our problem* is to conduct the research using the method of countercyclical capital buffer published by the Basel Committee of the Bank of International Settlements. All calculations were performed on the basis of the formulas published by the Basel Committee and compared with the calculations and methodologies published by the Central Bank of Armenia.

The calculation *method* of the study is the measurement of the gap in the Loan/GDP ratio (GAP), which was carried out using the Hodrick-Prescott filter. There were significant deviations between our calculations and the calculations of the Central Bank of Armenia, in some cases, taking into account the fact that we came to the conclusion in 2020, the capital buffer should have been used in all equal conditions and in 2021 the buffer should have been neutralized in terms of annual calculations. As a result of quarterly calculations, studying the decisions of the Central Bank of Armenia, we saw that in order not to reduce lending in general, the latter showed a zero interest rate approach for the buffer, which in our opinion should have been the opposite due to the quarterly loan/GDP ratio break. In addition, studying the GDP/Loan ratio, we have come to the conclusion (*the main result* of the research) that most of the economy is based on credit resources, which implies a high risk of paralysis in the event of financial and economic shocks, for which those, responsible for financial stability, must implement a GDP/loan, so a permissible lending threshold of a certain amount of GDP has increased from a ratio of 16.4 upto 1.6 over 20 years. If such a restraining tool is not introduced, the dynamics can be approximated to a GDP/Loan ratio of less than 1:1, so that the gross domestic product will not become dependent on the allocation of loans, for instance, the restraint of lending to any sector of the economy will have a strong impact on GDP, then restraining mechanisms should be applied to it. Due to the mentioned circumstance, we have put forward a *new approach (Novelty)* to GDP/Loan, a new indicator in relative value depending on the country's economic appetite and interest: this will fix the upper blocking limit to prevent the possible occurrence of financial shocks, which is fully applicable.

Keywords: GDP, loan, macroprudential policy, GAP, Buffer, countercyclical capital threshold, Basel Committee, financial shock.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լիլիթ Մուրադի Մուրադյան

Հոդվածը ստացվել է՝ 01.04.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 12.04.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Մրցունակությունը գնահատող և չափող բազմաթիվ զեկույցներ ու հրապարակումներ են պարբերաբար թողարկվում, որոնք տարբեր ցուցանիշներ վերլուծելու և դրանք գնահատելու արդյունքում հաճախ համադրելի կամ համեմատելի չեն լինում: Առավել համապարփակ և համադրելի տարեկան վերլուծություն իրականացվում է Գլոբալ մրցունակության ամենամյա զեկույցում¹, որը հրապարակվում է Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից: Հայաստանի ցուցանիշները Գլոբալ մրցունակության ամենամյա զեկույցում ներառվել են սկսած 2005 թվականից: Հայաստանը եղել է 79-րդը՝ այդ թվականին վերլուծվող 117 երկրների մեջ: Վերջին՝ 2020 թվականին հրապարակված Համաշխարհային մրցունակության զեկույցը (GCR), համարվում է հատուկ թողարկում, որում հավաքագրված տվյալները շատ երկրների և այդ թվում նաև Հայաստանի մասին սակավ են: COVID-19 համաճարակի բռնկումը հանգեցրել է ոչ միայն համաշխարհային առողջապահական ճգնաժամի, այլև խորը տնտեսական անկման՝ անգամ ավելի խորը, քան 2008-2009 թվականների ֆինանսական ճգնաժամի ժամանակահատվածի անկումն էր, ինչը ստեղծել է ապագա հեռանկարի վերաբերյալ խորը անորոշության մթնոլորտ²:

Արդիականություն: Հաշվի առնելով՝ COVID-19 համաճարակի ազդեցությունը, այնուհետ հաջորդած 44-օրյա պատերազմի հետևանքները և հետպատերազմյա վերականգնման շրջանը, առավել քան արդիական է անդրադառնալ Հայաստանի մրցունակության և տնտեսության վրա ազդող հիմնական ցուցանիշների վերլուծությանը և համեմատությանը տարածաբանի հետ:

Նպատակը: Սույն հոդվածի նպատակն է՝ ուսումնասիրելով Հայաստանի և հարևան երկրների՝ Իրան, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան, մրցունակության վարկանիշը, բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կնպաստեն տարածաշրջանում Հայաստանի մրցունակության վարկանիշի բարելավմանն ու ամրապնդմանը:

Խնդիրները: Նշված նպատակին հասնելու համար առաջարկվել են հետևյալ խնդիրները.

¹<https://www.weforum.org/>

²Global Competitiveness Report Special Edition 2020: How Countries are Performing on the Road to Recovery <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020/in-full/introduction#introduction>

- Ուսումնասիրել Հայաստանի և հարևան 4 երկրների՝ Վրաստան, Իրան, Թուրքիա, Ադրբեջան մրցունակության վարկանշի և ինդեքսի շարժը Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված Գլոբալ մրցունակության զեկույցներում:
- Վերլուծել այն ենթահինդեքսները, որոնք հանգեցրել են համապատասխան աճի կամ նվազման:
- Բացահայտել հիմնական ազդեցիկ ենթահինդեքսները և դրանց ներգործության չափը:

Գրականության վերլուծություն: Մրցունակությունը երկրների՝ իրենց քաղաքացիների բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու ունակության գնահատականն է: Ինչն առաջին հերթին կախված է նրանից, թե որքան արդյունավետ է երկիրը՝ ի դեմս նրա կառավարման մարմինների, օգտագործում տվյալ երկրի ռեսուրսները: Ընդ որում, ազատ շուկայական հարաբերության պայմաններում կենսամակարդակի պահպանման համար անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականության և ապրանքների ու ծառայությունների որակի անընդհատ բարձրացում: Մրցունակության աճն ու արդիականացումը բնութագրում են «նոր տնտեսությունը»: «Նոր տնտեսությունը» (նեոէկոնոմիկա) - տնտեսական ենթակառուցվածք է, որը բնութագրվում է հիմնականում ոչ նյութական ակտիվների (ծառայությունների և տեխնոլոգիաների) գերակշռությամբ և դրանց նյութական դերի նվազեցմամբ: Նոր տնտեսությունը հասկացություն է նոր տեխնոլոգիաների, նոր գիտելիքի և նոր բիզնես գործընթացների մասին, որոնք ապահովում են մրցունակությունը, առաջնորդությունը, արդիականացումը: «Նոր տնտեսության» գլխավոր առանձնահատկությունը մտավոր կապիտալի զարգացումն է և նրա գերիշխանությունը արտադրության հիմնական գործոնների նկատմամբ, ինչը տարբերում է այդ տնտեսությունը նախորդներից¹: Սուբյեկտի (օբյեկտի) մրցունակությունը կանխորոշվում է մրցակցային առավելությունների առկայությամբ՝ ներքին բնութագրերով (ներառյալ դինամիկ ունակությունները) կամ շրջակա միջավայրի ազդող գործոնները, որոնք ապահովում են մրցակիցների նկատմամբ գերակայությունն տվյալ շուկայում դիտարկվող որոշակի ժամանակահատվածում²:

«Մրցունակություն» հասկացությունը բոլոր հայտնի մեթոդների կիրառմամբ ներառում է մակրո և միկրոտնտեսական կատեգորիաները, ինչը եզրույթը դարձնում է չափազանց մշուշոտ: Երկրի ազգային տնտեսության մրցունակությունը սահմանվում է որպես նրա տնտեսական ինստիտուտների կարողությունը՝ ստեղծելու բարենպաստ պայմաններ երկրի կայուն մրցակցային առա-

¹Ваганян Г., Ваганян О. Концепция интерактивного менеджмента интеллектуального капитала Евразийского экономического союза как ключевой фактор роста конкурентоспособности и модернизации. XV Международная научная конференция “Модернизация России: ключевые проблемы и решения”. ИНИОН РАН, Москва, 18-19 декабря 2014г. Ежегодник "Россия: тенденции и перспективы развития", Т.2, Российская Академия Наук ИНИОН РАН, 2015г.,С.1

² Савельев Н. Управление конкурентоспособностью фирмы: Ростов н/Д.: Феникс, 2009. С. 28. (Высш. образование).

վելությունների ստեղծման և պահպանման համար (այն իր մեջ ներառում է ձեռնարկությունների, ֆինանսական-արդյունաբերական խմբերի, արդյունաբերությունների և դրա ենթաոլորտների մրցակցային առավելությունների համախումբը), ինչը հանգեցնում է երկրում կենսամակարդակի բարձրացման՝ եկամտի աճի օպտիմալ բաշխման, ըստ Պարետոյի օրենքի, որը կախված է ձեռնարկությունների կողմից մրցունակության աճից¹:

Արդի տնտեսագիտական գրականության մեջ բոլոր մրցակցային առավելությունները բաժանվում են երկու խմբի՝ ցածր և բարձր կարգի առավելություններ.

Ցածր մակարդակի առավելությունները կապված են առավել մատչելի աղբյուրների օգտագործման հնարավորության հետ՝ աշխատուժի, նյութեր (հումք), էներգետիկ... Այս մրցակցային առավելությունների ցածր կարգը բնորոշվում է նրանով, որ դրանք շատ անկայուն են և հեշտությամբ կարող են անհետանալ օրինակ գների, աշխատավարձի աճի հետևանքով կամ այն պատճառով, որ այդ հասանելի արտադրական ռեսուրսները կարող են նույն կերպ օգտագործել մրցակիցները:

Բարձր մակարդակի առավելություններն են եզակի արտադրանքը, եզակի տեխնոլոգիան, օպտիմալ մարքեթինգային կառուցվածքը, արտադրության կազմակերպումը, ընկերության բարի համբավը: Ինչպես նաև եթե մրցակցային առավելությունը ձեռք է բերվել շուկա յուրահատուկ արտադրանքի թողարկման հաշվին, որը հիմնված է սեփական կոնստրուկտորական մշակումների հիման վրա²:

Աղյուսակ 1

Մրցունակության մակարդակների բնութագրերը³

	Մրցունակության մակարդակի անվանումը	Հետազոտվող օբյեկտ/սուբյեկտ	Գործոն/ցուցանիշները բնութագրող մակարդակը
1	Ապրանքային	Արտադրանք/ապրանք	<ul style="list-style-type: none"> • Որակ • Սպառողների պահանջմունքներին համապատասխան համալիր
2	Միկրոմակարդակ	Ձեռնարկություններ, ֆիրմաներ	<p>Ձեռնարկության</p> <ul style="list-style-type: none"> • արտադրական գործունեության արդյունավետություն • ֆինանսական վիճակ • շուկայում ապրանքների վաճառքի կազմակերպման և առաջնորդման արդյունավետություն • ներկայացված ապրանքների մրցունակություն

¹ Сафиуллин Н., Сафиуллин Л. Управление Конкурентоспособностью Предприятий Издательство Казанского университета 2008, стр 93.

² Савельев Н. Указ. соч. С. 29

³ Сафиуллин Н., Сафиуллин Л. Управление Конкурентоспособностью Предприятий Издательство Казанского университета 2008, стр 60

3	Մեզո/միջին մակարդակ	Արդյունաբերություն, ասոցիացիաներ, հոլդինգներ	<ul style="list-style-type: none"> • արդյունաբերության ներքին կառուցվածք • արտաքին միջավայրի ազդեցություն • իր առանձին տարրերի մրցունակություն
4	Մակրո մակարդակ	Երկիր, տարածաշրջան, ազգային տնտեսություն	<ul style="list-style-type: none"> • ներդրումային միջավայր • գիտատեխնիկական բազա • արդյունաբերության և դրա ոլորտների մրցունակություն

Մեթոդաբանություն: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել արտասահմանյան տնտեսագետների համապատասխան ուսումնասիրությունները: Ուղենիշային մեթոդաբանությունը հիմնված է Համաշխարհային մրցունակության ինդեքս 4.0 մեթոդաբանություն և տեխնիկական նշումների վրա¹: Հետազոտության ընթացքում կիրառվել են տրամաբանական, վիճակագրական, համեմատական վերլուծական մեթոդները:

Վերլուծություն: Վերլուծություն իրականացնելու համար հիմք է վերցվել Հայաստանի և հարևան երկրների՝ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեյջանի մրցունակության ինդեքսները և վարկանիշները 2007-2019թթ. տվյալներով:

Վերլուծությունը իրականացվում է գլոբալ մրցունակության ինդեքսի 4.0 (4IR) 12 հիմնական ցուցանիշ/գործոնների վերլուծությամբ(միջին թվաբանական արժեք), որոնք իրենց հերթին խմբավորվում են 4 համակենտրոնացված խմբերի: 12 հիմնական ցուցանիշ-գործոնների ենթակետերն են՝

- բարենպաստ տնտեսական միջավայր, որը իր մեջ համախմբել է 1-4-րդ ենթակետերը՝ ինստիտուտներ, ենթակառուցվածքներ, (S&S) տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում, մակրոտնտեսական կայունություն,
- մարդկային կապիտալ, որը իր մեջ համախմբել է 5 և 6-րդ ենթակետերը՝ առողջապահություն և կրթություն/հմտություններ,
- շուկաներ, որը իր մեջ համախմբել է 7-10-րդ ենթակետերը՝ ապրանքների շուկա, աշխատանքի շուկա, ֆինանսական համակարգ, շուկայի մեծություն,
- նորարարական էկոհամակարգ, որը իր մեջ համախմբել է վերջին 11 և 12-րդ ենթակետերը՝ բիզնեսի դինամիկա և նորարարական ներուժ²:


Համաշխարհային մրցունակության նոր 4.0 մեթոդաբանությունը գնահատում է այն գործոնները, որոնք միասին որոշում են երկրի արտադրողականու-

¹ APPENDIX C The Global Competitiveness Index 4.0 Methodology and Technical Notes <https://www3.weforum.org/docs/GCR2018/04Backmatter/3.%20Appendix%20C.pdf>

² Klaus Schwab World Economic Forum, The Global Competitiveness Report 2018, Chapter 3: Benchmarking Competitiveness in the 4th Industrial Revolution, p 39.

թյան մակարդակը որպես կենսամակարդակի երկարաժամկետ բարելավման ամենակարևոր շարժիչ ուժ¹:


Ըստ հրապարկված տվյալների ստացվում է, որ վերջին հրապարակված համապարփակ վերլուծության մեջ 2018-2019թթ տվյալներով Հայաստանը 1 հորիզոնականով աճ է գրանցել և սկսած 2007թ-ից հայտնվել լավագույն՝ 69-րդ հորիզոնականում: Իր մեկնարկային դիրքից ի վեր գրանցել է առավելագույն անկումը 2011թ.-ին՝ 98-րդ հորիզոնական, այնուհետև պարբերաբար աճ է գրանցել՝ 2013թ.-ին հասնելով մեկնարկային 79-րդ և 2020թ.-ին լավագույն 69-րդ հորիզոնականին: Գլոբալ մրցունակության ինդեքսը արտացոլում է 103 ցուցանիշների միջինացված հաշվարկ, ինչը ներառում է երկրներիի արտադրողականության ու մրցունակության աստիճանները: Ցուցանիշները հատուկ մեթոդաբանության կիրառմամբ բերվում են համադրելի 0-ից 100 միավորի սանդղակի, համապատասխանաբար 100 միավորը դիտարկվում է որպես լավագույն ցուցանիշ: Մրցունակության ինդեքսի թարմացման անհրաժեշտությունը ի հայտ եկավ 2008թ.-ի Մեծ ճգնաժամի շարունակվող հետևանքների համակցության և չորրորդ արդյունաբերական հեղափոխության (4IR) արագացող տեմպերի շնորհիվ: Հարկ է նշել, որ 2017 թվականից ի վեր ներդրվել է նոր 4.0 մեթոդաբանությունը, որը վերաբերում է 4-րդ արդյունաբերական հեղափոխությանը: Ուստի մինչև 2016թ.տվյալները համադրելի չեն 2017թ.-ից ի վեր արտացոլված ինդեքսների հետ: Ստորև գծապատկերի միջոցով ներկայացված է Հայաստանի և հարևան 4 երկրների մրցունակության վարկանիշի և ինդեքսի դինամիկան:




Գծապատկեր 1. Հայաստանի մրցունակության վարկանիշը 2007-2019թթ²

¹ Economic literature recognizes productivity (total factor productivity) as the main factor explaining income differences across countries and growth perspectives.


² <https://tradingeconomics.com/armenia/competitiveness-rank>



Գծապատկեր 2. Վրաստանի մրցունակության վարկանիշը 2007-2019թթ¹



Գծապատկեր 3. Ադրբեջանի մրցունակության վարկանիշը 2007-2019թթ²




Գծապատկեր 4. Թուրքիայի մրցունակության վարկանիշը 2007-2019թթ³

¹ <https://tradingeconomics.com/georgia/competitiveness-rank>

² <https://tradingeconomics.com/azerbaijan/competitiveness-rank>

³ <https://tradingeconomics.com/turkey/competitiveness-rank>



Գծապատկեր 5. Իրանի մրցունակության վարկանիշը 2007-2019թթ¹

Գծապատկեր 1-5 կետագծերով տրված է հնարավոր կանխատեսումը առաջիկա 3 տարիների համար և ինչպես երևում է տեղեկացի գիծը դեռ կպահպանվի տարածաշրջանի միջին մրցունակության վարկանիշի շրջակայքում: Համապատասխան ցուցանիշների արդյունավետ վերլուծության համար հեղինակի կողմից մշակվել և **առաջարկվել է** հետևյալ 2 չափորոշիչները, ստացված արդյունքի գնահատման մեխանիզմները և դրանց հաշվարկման բանաձևերը

1. հաշվել միջին արժեքը՝ տարբերակելով 2007-2016թթ և 2017թ.-ից ի վեր կիրառվող 4.0 մեթոդաբանությունը և համադրել միմյանց հետ: Հաշվարկի համար առաջարկվում է հետևյալ բանաձևը.

$$\text{Բանաձև 1. } R = (\text{Rank}_1 + \text{R}_2 + \dots + \text{R}_{10}) \text{ որտեղ.}$$

R – մրցունակության վարկանիշի համագումարն է համապատասխանաբար 2007-2016թթ. և 2017-2019թթ

Rank₁, R₁₀ – 2007-2016թթ և 2017-2019թթ հաշվարկվող մրցունակության վարկանիշն է, ըստ տարեթվերի: Բանաձևի կիրառմամբ հաշվենք Հայաստանի մրցունակության հանրագումարային վարկանիշը՝ R, 2007-2016թթ (R₁) և 2017-2019թթ՝ R₂ համար.

$$R_1 = 80 + 93 + 97 + 97 + 98 + 92 + 82 + 79 + 85 + 82 = 885$$

$$R_2 = 72 + 70 + 69 = 211$$

2. դինամիկան գնահատելու համար ստացված հանրագումարային արժեքը դիտարկենք վերոնշյալ ժամանակահատվածներում հետևյալ բանաձևով.

$$\text{Բանաձև 2. } R_{\text{average}} = R / R_t, \text{ որտեղ.}$$

R_{average} - մրցունակության վարկանիշի միջինացված արժեքն է, ըստ տարեթվերի, R_t - դիտարկվող տարեթվերի քանակն է, օր.՝ 2007-16թթ = 10 տ., 2017-19թթ = 3 տ.

¹ <https://tradingeconomics.com/iran/competitiveness-rank>

Բանաձևի կիրառմամբ՝ որպես օրինակ, հաշվենք Հայաստանի մրցունակության միջինացված վարկանիշը 2007-2016թթ և 2017-2019թթ ժամանակահատվածներում.

$$R_{t1} = 885/10=88.5 \quad R_{t2} =211/3=70.3$$

Աղյուսակ 2

Տարածաշրջանի մրցունակության միջին 2007-19թթ¹

	Ադրբեջան	Թուրքիա	Վրաստան	Իրան	Հայաստան	Տարածաշրջան
R _{average1}	52.3	53.8	82.2	72.66	<u>88.5</u>	69.89
R _{average2}	64	60	69	92	<u>70.3</u>	71.06
R _{min1/ R_{min2}}	69/69	63/61	93/74	83/99	98/72	<u>81.2 / 75</u>
R _{max1/ R_{max2}}	38/58	43/58	66/66	62/88	79/69	57.6/67.8

R min - մրցունակության վատագույն վարկանիշ դիտարկվող ժամանակահատվածում

R max- մրցունակության լավագույն վարկանիշ դիտարկվող ժամանակահատվածում

average, min, max (1),(2) - (1) -2007-17թթ. ; (2) - 2017-19թթ

Կիրառելով առաջարկված մեթոդաբանությունը և վերլուծելով աղյուսակ 2-ի տվյալները պարզ է դառնում, որ տարածաշրջանի միջին մրցունակության վարկանիշը 2007-16թթ. եղել է 69.89: Հայաստանը տարածաշրջանում ապահովել է վատագույն միջին վարկանիշը՝ 88.5, որը մոտ 23%-ով ավելի ցածր է քան տարածաշրջանի միջին վարկանիշն է (Աղ.2-ում ընդգծված ցուցանիշներ), իսկ Ադրբեջանը և Թուրքիան առաջատարն են տարածաշրջանում՝ միջին մրցունակության վարկանիշով և ի հակադրություն Հայաստանի 25%-ով առաջ են տարածաշրջանի միջինից: Իրանը և Վրաստանը միջին հորիզոնականներում են եղել այդ թվականներին: Պատկերը փոքր-ինչ փոխվում է 2017-19թթ-ին՝ նոր մեթոդաբանության կիրառումից հետո, Իրանը տարածաշրջանի վատագույն ցուցանիշով առաջ է անցնում Հայաստանից: Հայաստանը գտնվում է տարածաշրջանի միջին մրցունակության նվազագույն շեմին: Տարածաշրջանի բացարձակ առաջատարը դիտարկվող 2 ժամանակաշրջանի դեպքում էլ մնում են Ադրբեջանն ու Թուրքիան:


¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ գծապատկեր 1-5 տվյալների և բանաձև 1-2 կիրառմամբ

Հայաստանի և հարևան երկրների հիմնական տնտեսական ցուցանիշների համեմատականը 2020թթ¹

	Երկիր	ՀՀ	Վրաստան	Ադրբեջան	Իրան	Թուրքիա
1	ՀՆԱ մլրդ	12.64	15.85	42.6	203.5	720
2	ՀՆԱ տարեկան աճի տեմպ %	-7.4	-6.76	-4.3	3.4	1.8
3	Վերաֆինանս.-ն Տոկոսադրույք %	9.25%	10.5%	7,75%	18%	14%
4	Գնաճի մակարդակ % ²	7.4%	11.8%	12.2%	34.7%	61.14%
5	Գործազրկության մակարդակ %	15%	18.5%	6.27%	8.9%	11.4%
6	Պետական պարտք/ՀՆԱ (ՀՆԱ-ի %) ³	62.79%	57.1%	20.1%	45.4%	39.5%
7	Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-4	-12.3	-0.5	-0.5	-5.1
8	Բնակչություն մլն.	2.96	3.71	10.09	83.99	84.34

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից Հայաստանը հարևան երկրների համեմատությամբ լավագույն ցուցանիշը ապահովել է միայն գնաճի նվազագույն մակարդակով, համեմատական կարգով ընդգծեմ, որ հաջորդը Վրաստանն է, սակայն այնտեղ գնաճի մակարդակը 60%-ով ավել է առաջատար Հայաստանից: Գաղտնիք չէ, որ հարևան պետությունների մեջ Հայաստանի ՀՆԱ-ն և բնակչության թվականակը նվազագույնն են, բացարձակ առաջատարը Թուրքիան է, որի ՀՆԱ-ն 2.62 անգամ գերազանցում է Հայաստանի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի ՀՆԱ-ների հանրագումարին: Հաջորդ մտահոգիչ ցուցանիշը պետական պարտքն է ՀՆԱ-ի նկատմամբ, որը 2020թ.-ի դեկտեմբերի դրությամբ ռեկորդային է եղել 1997թ.-ից ի վեր(ամբողջական պատկերը տես աղյուսակ 4-ում՝ 1997-2020թթ), այս ցուցանիշով առաջատարը Ադրբեջանն է՝ 20.1%-ով: ՀՆԱ տարեկան աճի տեմպով բացարձակ առաջատարը Իրանն է: Առավել ցածր վերաֆինանսավորման տոկոսադրույքով առաջատարը Ադրբեջանն է, որը նաև տարածաշրջանում նվազագույն գործազրկության մակարդակն ունի: Ուստի տարածաշրջանում տնտեսական ամենաբարվոք ցուցանիշները ունի հենց Ադրբեջանը: Թուրքիան առաջատար է միայն 2 ցուցանիշով՝ ՀՆԱ և բնակչության քանակ, իսկ գնաճի մակարդակով տարածաշրջանում ռեկորդակիր է 61.14%-ով: Հատկանշական է նաև Իրանի և Թուրքիայի ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպի դրական ցուցանիշները, ի հակադրություն ողջ տարածաշրջանի բացասական/նվազման տեմպի:

¹ Վերոնշյալ 5 երկրների ցուցանիշները վերցված են The World Bank կայքից <https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG/1ff4a498/Popular-Indicators#>
² <https://tradingeconomics.com/country-list/inflation-rate?continent=world>
³ <https://tradingeconomics.com/country-list/government-debt-to-gdp>



Գծապատկեր 6. ՀՀ Պետական պարտք ՀՆԱ-ի նկատմամբ (ՀՆԱ-ի%) 1997-2020թ¹

Առաջարկություն: Տվյալների համապարփակ վերլուծության համար առաջարկում են աղյուսակ 3-ում հաշվել և ավելացնել ևս 2 վերլուծական տող՝

- 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը
- Հայաստանի համար մտահոգիչ ցուցանիշ՝ Պետական պարտք/ՀՆԱ (ՀՆԱ-ի %) հարաբերակցությունը 1 շնչի հաշվարկով
- Ստանալ տարածաշրջանի միջինացված ցուցանիշը 1 շնչի հաշվարկով

Աղյուսակ 4

Հայաստանի և հարևան երկրների 2020թվ. հիմնական տնտեսական ցուցանիշների հաշվարկը 1 շնչի համար²

	Երկիր	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան	Տարածաշրջան
1	ՀՆԱ-ի ցուցանիշ \$	4391	4290	4270	8611	2417	3941.8
2	Պետական պարտք/ՀՆԱ	21.21%	15.31%	1.99%	0.47%	0.54%	7.902%
3	Բնակչություն/մլն.	2.96	3.73	10.07	83.61	84	36.874

Սույն հոդվածի **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ վերոնշյալ խնդիրները և նպատակները արդյունավետ վերլուծելու համար հեղինակի կողմից մշակվել են մեթոդաբանություններ, որոնք ներառում են՝

- չափորոշիչների համակարգ,
- դրանց հաշվարկման բանաձևեր,
- ստացված արդյուքնի գնահատման մեխանիզմներ:

¹ <https://tradingeconomics.com/armenia/government-debt-to-gdp>

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Աղյուսակ 3-ի տվյալների վերլուծությամբ, ըստ հեղինակի կողմից առաջարկված հաշվարկի մեթոդաբանության

Եզրակացություն: Համադրելով բոլոր հավաքագրված ցուցանիշները և կիրառելով առաջարկված նոր մեթոդաբանությունը աղյուսակ 4-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը տարածաշրջանում լավագույններից է և զիջում է դիրքը միմիայն բացարձակ առաջատար Թուրքիային, որտեղ սույն ցուցանիշը կրկնակի բարձր է Հայաստանից և քառակի բարձր հարևան Իրանից: Սակայն երբ վերլուծում ենք տարածաշրջանի 1 շնչի հաշվարկով պետական պարտք /ՀՆԱ ցուցանիշը գալիս ենք հետևյալ եզրակացությանը՝ ՀՀ ցուցանիշը տարածաշրջանի միջին արժեքից գրեթե եռակի անգամ բարձր է և կազմում է **21.21%** (աղյուսակ 4-ում ընդգծված արժեք): Սակայն նույն Իրանը, որտեղ նախորդ՝ 1 շնչին բաժին ընկնող միջին ՀՆԱ-ի արժեք ցուցանիշով տարածաշրջանում նվազագույնն էր, 1 շնչին բաժին ընկնող միջին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի հաշվարկը մոտ է 0-ի՝ 0.54%: Ստացվում է որ Իրանը, Թուրքիան նաև Ադրբեջանը ապագա վճարումներ կատարելու երկրի կարողությամբ կամ որ նույնն է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությամբ նվազագույն բեռն են թողնում ապագա սերունդների համար: ՀՀ մրցունակության մակարդակը արդյունավետ կառավարելու, ինչպես նաև տարածաշրջանում հարևան երկրների համեմատ մրցունակության ցուցանիշը բարելավելու համար, առաջարկում են չչեղվել համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված գլոբալ մրցունակության զեկույցում ձևավորված ենթախմբերի առաջնայնությունից: Ուստի անհրաժեշտ է հնարավոր միջոցառումները ուղղել հենց բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորմանն ու առաջխաղացմանը, որի համար առաջնային են ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխությունները, որոնք կնպաստեն տեղեկատվական/ հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը, կիրառմանը և արդիականացմանը, նորարարական էկոհամակարգի ձևավորմանը և կիրառմանը, որոնք և կապահովեն բիզնեսի դինամիկա, մակրոտնտեսական կայունություն և ՀՆԱ-ի աճ:

Օգտագործված գրականության ցանկ

1. <https://www.weforum.org/>
2. Global Competitiveness Report Special Edition 2020: How Countries are Performing on the Road to Recovery <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020/in-full/introduction#introduction>
3. Ваганян Г., Ваганян О. Концепция интерактивного менеджмента интеллектуального капитала Евразийского экономического союза как ключевой фактор роста конкурентоспособности и модернизации. XV Международная научная конференция “Модернизация России: ключевые проблемы и решения”. ИНИОН РАН, Москва, 18-19 декабря 2014г. Ежегодник "Россия: тенденции и перспективы развития", Т.2, Российская Академия Наук ИНИОН РАН, 2015г., С.1
4. Савельев Н. Управление конкурентоспособностью фирмы: Ростов н/Д.: Феникс, 2009. С. 28. (Высш. образование).

5. Сафиуллин Н., Сафиуллин Л. Управление Конкурентоспособностью Предприятий Издательство Казанского университета 2008, 165.
6. Савельев Н. Указ. соч. С. 29
7. APPENDIX C The Global Competitiveness Index 4.0 Methodology and Technical Notes
8. Klaus Schwab World Economic Forum, The Global Competitiveness Report 2018, Chapter 3: Benchmarking Competitiveness in the 4th Industrial Revolution, p 39.
9. Economic literature recognizes productivity (total factor productivity) as the main factor explaining income differences across countries and growth perspectives.
10. <https://tradingeconomics.com/armenia/competitiveness-rank>
11. <https://tradingeconomics.com/georgia/competitiveness-rank>
12. <https://tradingeconomics.com/azerbaijan/competitiveness-rank>
13. <https://tradingeconomics.com/turkey/competitiveness-rank>
14. <https://tradingeconomics.com/iran/competitiveness-rank>
15. <https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG/1ff4a498/Popular-Indicators#>
16. <https://tradingeconomics.com/country-list/inflation-rate?continent=world>
17. <https://tradingeconomics.com/country-list/government-debt-to-gdp>
18. <https://tradingeconomics.com/armenia/government-debt-to-gdp>

References

1. <https://www.weforum.org/>
2. Global Competitiveness Report Special Edition 2020: How Countries are Performing on the Road to Recovery <https://www.weforum.org/reports/the-global-competitiveness-report-2020/in-full/introduction#introduction>
3. Vaganjan G., Vaganjan O. Konceptija interaktivnogo menedzhmenta intellektual'nogo kapitala Evrazijskogo jekonomicheskogo sojuza kak kljuchevoj faktor rosta konkurentosposobnosti i modernizacii. XV Mezhdunarodnaja nauchnaja konferencija "Modernizacija Rossii: kljuchevye problemy i reshenija". INION RAN, Moskva, 18-19 dekabrja 2014g. Ezhegodnik "Rossija: tendencii i perspektivy razvitija", T.2, Rossijskaja Akademiya Nauk INION RAN, 2015g., p.1
4. Savel'ev N. Upravlenie konkurentosposobnost'ju firmy: Rostov n/D.: Feniks, 2009. S. 28. (Vyssh. obrazovanie).
5. Safiullin N., Safiullin L. UPRAVLENIE KONKURENTOSSPOSOBNOST'JU PREDPRIJATIJ Izdatel'stvo Kazanskogo universiteta 2008, 165.
6. Savel'ev N. Uказ. soч. S. 29
7. APPENDIX C The Global Competitiveness Index 4.0 Methodology and Technical Notes
8. Klaus Schwab World Economic Forum, The Global Competitiveness Report 2018, Chapter 3: Benchmarking Competitiveness in the 4th Industrial Revolution, p 39.

9. Economic literature recognizes productivity (total factor productivity) as the main factor explaining income differences across countries and growth perspectives.
10. <https://tradingeconomics.com/armenia/competitiveness-rank>
11. <https://tradingeconomics.com/georgia/competitiveness-rank>
12. <https://tradingeconomics.com/azerbaijan/competitiveness-rank>
13. <https://tradingeconomics.com/turkey/competitiveness-rank>
14. <https://tradingeconomics.com/iran/competitiveness-rank>
15. <https://databank.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG/1ff4a498/Popular-Indicators#>
16. <https://tradingeconomics.com/country-list/inflation-rate?continent=world>
17. <https://tradingeconomics.com/country-list/government-debt-to-gdp>
18. <https://tradingeconomics.com/armenia/government-debt-to-gdp>

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Լիլիթ Մուրադի Մուրադյան

Համառոտագիր: Մրցունակությունը երկրների՝ իրենց քաղաքացիների բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու ունակության գնահատականն է: Ինչն առաջին հերթին կախված է նրանից, թե որքան արդյունավետ է երկիրը՝ ի դեմս նրա կառավարման մարմինների, օգտագործում տվյալ երկրի ռեսուրսները: Վերլուծություն իրականացնելու համար հիմք է վերցվել Հայաստանի և հարևան 4 երկրների՝ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի մրցունակության ինդեքսները և վարկանիշները 2007-2019թթ տվյալներով: Հաշվի առնելով COVID-19 համաճարակի ազդեցությունը, այնուհետ հաջորդած 44-օրյա պատերազմի հետևանքները և հետպատերազմյա վերականգնման շրջանը, առավել քան արդիական է անրադառնալ Հայաստանի մրցունակության և տնտեսության վրա ազդող հիմնական ցուցանիշների վերլուծությանը և համեմատությանը տարածաբանի հետ:

Սույն հոդվածի **նպատակն է՝** ուսումնասիրելով Հայաստանի և հարևան երկրների՝ Իրան, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան, մրցունակության վարկանիշը, բացահայտել այն հիմնական ազդեցիկ գործոնները, որոնք կապահովեն տարածաշրջանում Հայաստանի մրցունակության վարկանիշի բարելավմանն ու ամրապնդմանը: Նշված նպատակին հասնելու համար առաջարկվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել Հայաստանի և հարևան 4 երկրների մրցունակության վարկանիշի և ինդեքսի շարժը Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված Գլոբալ մրցունակության զեկույցներում:
- Վերլուծել այն ենթաինդեքսները, որոնք հանգեցրել են համապատասխան աճի կամ նվազման:

- Բացահայտել հիմնական ազդեցիկ ենթահինդեքսները և դրանց ներգործության չափը:

Սույն հոդվածի *գիտական նորույթը* կայանում է նրանում, որ վերոնշյալ ինդիքները և նպատակները արդյունավետ վերլուծելու համար հեղինակի կողմից մշակվել են մեթոդաբանություններ, որոնք ներառում են.

- չափորոշիչների համակարգ,
- դրանց հաշվարկման բանաձևեր,
- ստցված արդյուքնի գնահատման մեխանիզմներ:

Բանալի բառեր՝ Մրցունակություն, Հայաստան, Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, մրցունակության վարկանիշ, մրցունակության ինդեքս, տնտեսական հիմնական ցուցանիշներ, խորը տնտեսական անկում, պետական պարտք, ՀՆԱ, գնաձ, գործազրկություն

АНАЛИЗ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ЭКОНОМИЧЕСКУЮ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ АРМЕНИИ И РЕГИОНА

Лилит Мурадовна Мурадян

Аннотация. Конкурентоспособность – это оценка способности стран обеспечить высокий уровень благосостояния своих граждан. Что в первую очередь зависит от того, насколько эффективно страна в лице своих органов управления использует ресурсы данной страны. Для проведения анализа были взяты за основу индексы и рейтинги конкурентоспособности Армении и соседней Грузии, Ирана, Турции и Азербайджана на 2007-2019 годы. Учитывая воздействие эпидемии COVID-19, последствия последовавшей за ней 44-дневной войны и период послевоенного восстановления более чем актуально вернуться к анализу и сравнению основных показателей, влияющих на конкурентоспособность и по сравнению с регионом.

Целью данной статьи является изучение рейтинга конкурентоспособности Армении и соседних стран - Ирана, Грузии, Турции, Азербайджана, выявление тех основных факторов, которые обеспечат улучшение и укрепление рейтинга конкурентоспособности Армении в регионе.

Для достижения этой цели были предложены следующие задачи.

- Изучить динамику индекса и рейтинга конкурентоспособности Армении и четырех соседних стран в докладах глобальной конкурентоспособности, опубликованных Всемирным экономическим форумом.
- Анализировать субиндексы, которые привели к соответствующему росту или снижению.
- Выявить основные влиятельные субиндексы и степень их воздействия.

Научная новизна данной статьи состоит в том, что для эффективного анализа вышеуказанных задач и целей автором разработаны методологии, включающие.

- Система стандартов
- Формулы для их расчета

- Механизмы оценки полученных результатов.

Ключевые слова: конкурентоспособность, Армения, Грузия, Иран, Азербайджан, Турция, рейтинг конкурентоспособности, индекс конкурентоспособности, основные экономические показатели, глубокий экономический спад, государственный долг, ВВП, инфляция, безработица

ANALYSIS BASIC INDICATORS CHARACTERIZING THE ECONOMIC COMPETITIVENESS OF ARMENIA AND THE REGION

Lilit Murad Muradyan

Abstract: Competitiveness is an assessment of the ability of countries to ensure a high level of well-being of their citizens. What primarily depends on how effectively the country, represented by its governing bodies, uses the resources of this country. For the analysis, were taken as a basis the indexes and competitiveness ratings of Armenia and neighboring Georgia, Iran, Turkey and Azerbaijan for 2007-2019 years. Given the impact of the COVID-19 epidemic, the consequences of the 44-day war that followed it, and the period of post-war reconstruction, it is more than relevant to return to the analysis and comparison of the main indicators that affect competitiveness and in comparison with the region.

The purpose of this article is to study the competitiveness rating of Armenia and neighboring countries - Iran, Georgia, Turkey, Azerbaijan, to identify the main factors that will ensure the improvement and strengthening of the competitiveness rating of Armenia in the region.

To achieve these goals, the following tasks were proposed.

- To study the dynamics of the competitiveness index and rating of Armenia and four neighboring countries in the global competitiveness reports published by the World Economic Forum.
- Analyze the sub-indexes that led to the corresponding increase or decrease.
- Identify the main influential sub-indexes and the extent of their impact.

The scientific *novelty* of this article is that for the effective analysis of the above tasks and goals, the author has developed methodologies that include.

- System of standards
- Formulas for their calculation
- Mechanisms for evaluating the results obtained.

Keywords: Competitiveness, Armenia, Georgia, Iran, Azerbaijan, Turkey, competitiveness rating, competitiveness index, key economic indicators, deep economic downturn, public debt, GDP, inflation, unemployment

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՐՋ

Լիանա Սամվելի Ազատյան

Հոդվածը ստացվել է՝ 25.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 28.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Գլոբալացման գործընթացների արդյունքում երկրների առջև բացվում են նոր հնարավորություններ և հեռանկարներ, բայց և այնպես էլ վտանգներ և ռիսկեր: Արտաքին ազդեցություններից և ներքին ցնցումներից պաշտպանվելը և անհատի և հասարակության և պետության համար դառնում է անխուսափելի պահանջ:

Տնտեսական անվտանգությունը դա ազգային անվտանգության նյութական հիմք է: Այն ծառայում է որպես երկրի կայուն զարգացման, նրա անկախության երաշխիք:

Պետության տնտեսական անվտանգության ապահովման գործում կարևոր նշանակություն ունեն առկա ռիսկերի բացահայտումը և լուծման ուղիների վերլուծությունն ու իրականացումը:

Այս խնդրի կարևորությամբ է պայմանավորված **հոդվածի արդիակա- նությունը և նպատակը:**

Գրականության վերլուծություն:

Միջնադարում անվտանգություն ասելով հասկացվում էր ցանկացած վտանգից իրեն պաշտպանված համարող մարդու ոգու հանգստությունը: Արևմտաեվրոպական պետությունների գիտական և քաղաքական շրջանակ- ներում «անվտանգություն» հասկացությունը լայն տարածում գտավ Ջ.Լոկի, Ժ.Մ.Ռուսոյի, Թ.Հոբսի փիլիսոփայական հայեցակարգերի շնորհիվ՝ նշանակելով հանգստության վիճակ, դրություն, որն առաջանում է իրական վտանգի (ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական) բացակայության դեպքում: Թոմաս Հոբսն իր աշխատություններում պետության և պետական քաղաքականության հիմ- նական խնդիր համարում էր պետության, հասարակության և անձի անվտան- գությունը միաժամանակ:¹

Խորհրդային շրջանում «պետական անվտանգություն» հասկացությունը մտցվեց 1934թ., սակայն հիմնախնդրի խոր վերլուծության փորձեր սկսեցին կատարել միայն 1950-ական թթ. մինչև 1980-ականները: Մի խումբ հեղինակներ պետական անվտանգությունը դիտում են որպես պետականության և երկրում հասարակական կարգի ամրության, տարածքային ամբողջականության ան-

¹ Trager, Frank N & Simonie, Frank L, An Introduction to the Study of National Security, Published by From: Trager, Frank N & Kronenberg, Philip S (Eds), National Security and American Society, 1973, pp. 35-48

խախտելիության և արտաքին ու ներքին քաղաքականության որոշման հարցում անկախության վիճակ:¹

Ինչպես նշում են Ս. Միխնիչև և Ի. Սպիրիդոնովը՝ տնտեսական անվտանգությունն իրավաբանական տեսանկյունից ներառում է երկու բաղադրիչ, որոնցից առաջինը՝ կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների այնպիսի վիճակ է, որի ընթացքում նյութական բարիքների արտադրության, փոխանակության, բաշխման և սպառման ոլորտներում իրավունքի սուբյեկտների վարքը համապատասխանում է սահմանված իրավական կարգին և երկրորդը՝ այն համապատասխանում է տնտեսական անվտանգության պահանջներին:²

Ազգային անվտանգության մեջ ներառված բազմաթիվ հատվածների ուսումնասիրությունը պետք է կրի համակարգված բնույթ, քանի որ նրանք ունեն ներքին կապեր, սահմաններ, տեսանկյուններ և անտեսանելի են:³

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգությունը սահմանվում է որպես «տնտեսության և իշխանության ինստիտուտների իրավիճակ, որի դեպքում ապահովվում են ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, բավականաչափ պաշտպանական ներուժ՝ նույնիսկ ներքին և արտաքին գործընթացների ոչ նպաստավոր զարգացման պայմաններում»:⁴

Հայաստանի համար, որպես կարևոր բաղադրիչ է հանդիսանում տնտեսական անվտանգության գործոնը, որի անպաշտպան լինելը կարող է հանգեցնել վտանգավոր իրավիճակների, քանի որ այն որոշիչ է պետության հեռանկարի հարցում:⁵

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության գերակայությունները արտաքին անվտանգության ապահովման բնագավառում միտված են «...կառուցել բազմերաշխիք ու հավասարակշռված հարաբերություններ բոլոր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ», իսկ ներքին անվտանգության ապահովման բնագավառում կոչված են «...ապահովել Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը,

¹ Архипов А., Городецкий А., Михайлов Б., Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения, Вопросы экономики, N 12, 1994, с. 36-38.

² Михневич С., Либерализация миповой торговли сельхозпродукцией и проблемы продовольственной безопасности, -М.: “Мировая экономика и международная отношения” (МЭиМО) -# 1, 2003, - с 61-67с., Спиродонов И.А. – Мировая экономика. – М.: “Инфра - М”, 2004, - 271с., с. 99

³ Գրիգորյան Չ.Ս. – Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, ՀՊԱՀ, Երևան 2011թ., Մենագրություն, 248 էջ, էջ 14-15, <https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/Parenajin%20anvtang..pdf>

⁴ Сенчагова В.К., «Экономическая безопасность (производство, финансы, банки)». под. ред. академика, М., 1988, стр. 46

⁵ Ղուլչյան Հ. – ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարվերը: «Բանբեր, Երևանի համալսարանի», թիվ 3, 2000 http://ysu.am/files/02H_Ghushchyan.pdf

հաղթահարել աղքատությունը, իրականացնել կայուն և սոցիալական ուղղվածությամբ տնտեսական քաղաքականություն...»:¹

Համաձայն «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:²

Մեթոդաբանություն: Ուսումնասիրությունները իրականացվել են ոլորտի ուսումնասիրության, նկարագրական, վերլուծական, վիճակագրական տվյալների ուսումնասիրության մեթոդներով: Արդյունքում ներկայացվել են կիրառական առաջարկություններ:

Վերլուծություն:

Տնտեսական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության համար ենթադրում է այնպիսի պայմաններ, որը կնպաստի մեր երկրի սոցիալական և տնտեսական բավարար մակարդակի ապահովմանը և նորամուծությունների զարգացմանը: Ինչպես նշում է ռուս տնտեսագետ Վ.Ե. Ռիբակլինան «Ազգային տնտեսական անվտանգությունը ազգային մակարդակով երկրի տնտեսության կայուն և առաջընթաց զարգացման նպատակով անհրաժեշտ և բավարար պայմանների ստեղծումն ու ապահովումն է՝ սոցիալական էկոլոգիական, քաղաքական, մշակութային և հոգեբանական բաղադրիչների համար»:³

Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական անվտանգության վրա ազդում են մի շարք գործոններ: Այդ գործոններից մեկը միգրացիան է:

ժամանակակից շուկայական տնտեսությամբ զարգացած երկրներում առաջին պլան են մղվում բնակչության սոցիալական անվտանգության կարիքների բավարարումը, հասարակության առաջընթացը և տնտեսական զարգացումը, որոնք պայմանավորված են ոչ միայն նյութական բարիքներով, այլև մարդկային կապիտալի բազմակողմանի զարգացման մակարդակով:⁴

¹ Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության ճեպագիր, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ. գիտափորձագիտական մատենաշար, հատոր 1, Երևան 2014թ, էջ 119-120

² Թադևոսյան Ջ., «Ազգային տնտեսական անվտանգություն» եզրույթի որոշ մեկնաբանումների շուրջ, «Այլընտրանք» Գիտական հանդես, #2, ապրիլ, 2016, էջ 145
<http://alternative.am/wpcontent/uploads/2016/06/%D5%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%BD-2016..pdf>

³ Рыбалкина В.Е. - Международные экономические отношения. М., 2008, ст.102

⁴ Ahmad, S. & Schroeder, R.G. The impact of human resource management practices on operational performance: recognizing country and industry differences. Journal of Operations Management, 2003, Vol. 21, № 1, էջ 19, Asad Rehman, Shamas Ul deen & Sadaf Farooq, Social Capital and Human Resources Development: A Knowledge, Attitudes and Practices (KAP) Analysis, International Journal of Innovation and Scientific Research, 2014, Vol 12, № 1, p.202-204:

Տարբեր երկրներում միգրացիայի ոլորտում ծագած խնդիրների լուծման համար կիրառում են տարբեր ուղիներ՝ խրախուսում են ծնելիությունը, պայքարում են արտաքին միգրացիոն հոսքերի ու արտագաղթի բոլոր տեսակների դեմ և այլն: Հայաստանի համար արդյունավետ ժողովրդագրական քաղաքականությունն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ մեր իրականությունն ունի իր առանձնահատկությունները, պայմանավորված մեզ շրջապատող՝ մեր նկատմամբ ագրեսիվ տրամադրված մուսուլմանական երկրներով:

Ստորև բերված ՀՀ ԱՎԿ տվյալներից երևում է, որ 2012-2019 թթ. ՀՀ-ից ուղևորահոսքերի տվյալներով գրանցվել է բացասական սալդո: Իսկ 2020թ. դրական տվյալները պայմանավորված են COVID-19 համավարակի հետևանքով առաջացած սահմանափակումների հետ:

Աղյուսակ 1

ՀՀ սահմանահատումների հարաբերակցությունը 2012 - 2020 թթ.¹

Տարեթիվը	Ժամանում	Մեկնում	Սալդո
	հազար մարդ		
2012	29.300	38.700	- 9.4
2014	17.400	39.200	- 21.8
2016	15.900	40.800	- 24.9
2017	13.300	37.300	- 24.0
2018	15.300	33.586	- 18.286
2019	15.800	31.200	- 15.4
2020	36.600	33.200	3.4

Վերը նշված թվերը, իհարկե, անհանգստացնող են, քանի որ մարդկային ռեսուրսի պահպանումը ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ռազմավարական առաջնային նշանակություն: Հայաստանի ժողովրդագրության տեսանկյունից իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև 2020թ. 44 օրյա պատերազմը: Այս ամենը հիմք է պնդելու, որ Հայաստանում գերխնդիր է հիմնովին վերանայել միգրացիոն քաղաքականությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ վիճակագրական ծառայության տվյալների բացասական սալդոն գրանցվել է հատկապես ՀՀ Արագածոտնի՝ -502 մարդ, Գեղարքունիքի՝ -881 և Շիրակի՝ -795 մարդ, մարզերում:²

Միգրացիայի գործոնը բացասական հետք է թողնում հատկապես մարզերում, ազդելով երկրի գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության թվի նվազման վրա, որն էլ տնտեսական անվտանգության հաջորդ գործոնն է:


Գյուղատնտեսությունը հանդիսանում է մեր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, որը կարևոր է ինչպես երկրի պարենային անվտանգության ապահովման համատեքստում, այնպես էլ՝ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման մեջ մասնակցության, գյուղատնտեսության մեջ

¹Միգրացիա, էջ 128, https://armstat.am/file/article/demog_2021_7.pdf

² Միգրացիա, մաս 7, էջ 130 https://armstat.am/file/article/demog_2020_7.pdf

ընդգրկված բնակչության զբաղվածության ապահովման և նրանց համար պատշաճ եկամտի ապահովման տեսանկյունից: Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Հայաստանի համար գյուղատնտեսության կարևորությունը պայմանավորված է վերոնշյալ բոլոր հատկանիշներով:¹

Ըստ ՏԿԵՆ աղբյուրի Հայաստանում առկա շուրջ 450 հազար հա վարելահողերից 2018 թ.-ին նպատակային օգտագործվել է ընդամենը 240 հազար հա-ը (54,5%-ը):²




Գծապատկեր 1. 2019թ. ՀՀ –ում օգտագործվող և չօգտագործվող գյուղ. հողերը³

Վերը բերված գծապատկերի տվյալներից երևում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի, Արմավիրի մարզում 16,7%-ը, Գեղարքունիքում՝ 8,5%-ը, Շիրակում՝ 1,7%-ը Արագածոտնում՝ 15,1%-ը, Կոտայքում՝ 22,3%-ը և Լոռու մարզում՝ 19,8%-ը, չի օգտագործվում:

¹Գյուղատնտեսական արտադրողների միջև կոոպերացիան Հայաստանում, Երևան 2016թ., էջ 11, <https://shen.am/file/1050/download?token=4VDDyvv->

² Ըստ ՏԿԵՆ տվյալների

³ Նույն տեղում



Գծապատկեր 2. Հացահատիկային և հատիկընդդեմային մշակաբույսերի ցանքատարածությունները, հա, 2021թ¹

Քանի որ հացահատիկը համարվում է ռազմավարական նշանակության գյուղմթերք, ապա հատկապես Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում չօգտագործվող տարածությունները անհրաժեշտ է օգտագործել տվյալ կուլտուրայի մշակման նպատակով, հատկապես, որ այս մարզերի աշխարհագրական դիրքը դա թույլ է տալիս:

Հայտնի է, որ հողը նյութական բարիքների ստացման հիմնական աղբյուրն է. իսկ մեր երկրում գյուղատնտեսական նշանակության հողերի 45,5%-ը երկար տարիներ չի մշակվել: Սա ունի իր տարբեր պատճառները՝ ֆինանսների բացակայություն, գյուղտեխնիկայի մաշվածություն, սերմնացուի, թունաքիմիկատների բարձր գներ, ինչպես նաև մարզերից միգրացիայի բարձր աստիճանը և այլն: Սակայն մեր սակավահող երկրում հողերը թողնել անմշակ անթույլատրելի է: Դրա համար օրինակ կարելի է **հողի հարկը սահմանել ըստ օգտագործելիության աստիճանի: Դիցուկ երեք և ավելի տարի չօգտագործվող հողերի հարկը սահմանել ավելի բարձր, քան օգտագործվող հողերինը: Իսկ օգտագործվող հողերի ֆերմերների համար կիրառել արտոնյալ հարկեր:**

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հարցում մյուս կարևոր գործոնը երկրի պարենային անվտանգությունն է: Դեռ 2011թ.-ին հանրապետության նախագահի N ՆԿ-91-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»², որի նպատակն էր հասարակության բոլոր խավերին ապահովել

¹ https://armstat.am/file/article/sv_09_21a_122.pdf, էջ 25

² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71868>

աննդամթերքի գնողունակությամբ և մատչելիությամբ: Պարենային անվտանգությունը բնորոշվում է սննդամթերքի ինքնաբավության մակարդակով:

Աղյուսակ 3

Ստորև ներկայացված է ՀՀ-ում պարենի ինքնաբավության մակարդակը՝ 2018-2020թթ.¹

Առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքներ	Կենսական սննդամթերքների ինքնաբավության մակարդակը, %		
	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Ցորեն	31,5	25,5	24,4
Կարտոֆիլ	102,6	101,1	101,1
Բանջարեղեն	104,7	102,4	103,9
Պտուղ և հատապտուղ	108,9	104,0	98,2
Խաղող	104,8	103,6	108,0
Հատիկարնդեղեններ	38,6	38,2	37,3
Բուսական յուղ	2,2	1,5	0,9
Շաքար	68,6	73,0	38,0
Ձու	99,5	100,0	100,3
Կաթ	86,8	84,5	82,0
Տավարի միս	89,2	90,4	87,3
Խոզի միս	53,3	55,5	45,1
Ոչխարի և այծի միս	128,6	113,8	100,4
Թռչնի միս	26,6	21,7	23,9
Ձուկ	109,0	113,1	148,4

Պարենային անվտանգությունը ապահովվում է գյուղատնտեսական տեղական արտադրությամբ և ապրանքների ներմուծմամբ: Հետևաբար՝ առաջնահերթ խնդիրներից է պարենային հումքի ու սննդամթերքի արտադրությունը և դրանց որակական հատկանիշների ապահովումը:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

- սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը,
- բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության ապահովումը,
- պետական պարենային պահուստի ստեղծումը, պահպանումը և համալրումը:²

Հայաստանում ներքին պահանջարկի ապահովման առումով կարևորվում է հատկապես այնպիսի խնդիրների լուծում, ինչպիսիք են հացահատիկի, բուսական յուղերի, մսի, շաքարի արտադրության խթանումը:

¹ Պարենային ապահովություն և աղբատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, էջ 68-76
https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf

² Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ., Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, 2013թ., էջ 130

Մանկավարժերի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և այլ պահանջներին: Պարենային ճգնաժամի կամ դրա վտանգի դեպքում կառավարությունը սահմանում է պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմներ, ընդհուպ՝ սննդամթերքի նորմավորված բաշխում:¹

Քանի որ գյուղատնտեսության ոլորտը համարվում է ռիսկային և բնակլիմայական անբարենպաստ պայմանների դեպքում ունենում ենք կորուստներ և բուսաբուծության և անասնապահության ճյուղերում՝ կենդանիների թերսնման հետևանքով իջնում է մթերատվությունը, ապա **անհրաժեշտ ռիսկայնության նվազեցման նպատակով նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ոլորտում**՝ հակակարկտային ցանցեր, կաթիլային ոռոգում, խելացի գոմեր և այլն: Այս ոլորտում վնասները ոչ միայն բնամթերքի տեսքով են, այլ նաև ֆինանսական, քանի որ ֆերմերները հաճախ են բանկերից վարկեր վերցնում սերմացու, թունաքիմիկատներ, գյուղտեխնիկա և այլնի ձեռք բերման համար, իսկ մարումը իրականացնում են բերքի վաճառքից ստացված միջոցներով:

Անհրաժեշտ է նորագույն տեխնոլոգիաները ներդնել նաև գյուղմթերքների վերամշակող կազմակերպություններում, արտաքին աշխարհում ստանդարտներին համապատասխան և մրցունակ արտադրանք ստանալու համար:

Հայաստանի համար ներկայումս առավել կարևորվում են երկրի արտահանման ներուժ հանդիսացող գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների արտահանման հարցերով երկարաժամկետ առևտրային համաձայնագրերի կնքումը: Ռուս Ուկրաինական պատերազմի հետևանքով պայմանավորված պատժամիջոցները Ռուսաստանի պարենամթերքների սպառողական շուկաներում կառաջացնեն կառուցվածքային փոփոխություններ: Այսինքն, Եվրոպական և այլ երկրներից ներմուծվող ապրանքների դուրս մղվելու հետևանքով, Ռուսական շուկայում ապրանքների առաջարկը կնվազի, որը հայ արտադրողի համար ստեղծում է հնարավորություններ առկա բացը որոշ չափով լրացնելու և արտահանման ծավալները մեծացնելու մասով:

Հայաստանի կառավարության կողմից պետք է մշակվեն հայեցակարգեր և ծրագրեր տնտեսության անվտանգության մակարդակն ապահովելու համար:

ՀՀ ՏՄ ապահովումը բարդ գործընթաց է և չի կարող իրականացվել տարերայնորեն: Այն կարիք ունի պետության կողմից մշակված և փուլ առ փուլ իրականացվող տնտեսական քաղաքականության: Համաշխարհային տնտեսության ներկա զարգացումների պարագայում հաջողակ են այն երկրները և մրցունակ այն տնտեսությունները, որոնք կառավարելի են և ոչ ամբողջովին մատնված շուկայական տարերքներին: Ներկայումս երկրի տնտեսության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից են երկրի պետական բյուջեի, վճարային և առևտրային հաշվեկշիռների խրոնիկ պակասուրդներ:²

¹ ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, ՀՕ-339, ընդունված 07.05.2002թ.:

² Թադևոսյան Ջ., «Ազգային տնտեսական անվտանգություն» եզրույթի որոշ մեկնաբանումների շուրջ, «Այլընտրանք» Գիտական հանդես, #2, ապրիլ, 2016, էջ 153

Գիտական նորույթը:

Հոդվածում մշակվել և հիմնավորվել են մոտեցումներ, որոնց կիրառումը կապահովի երկրի տնտեսական անվտանգությունը: Դրանք հետևյալներն են.

- հողի հարկը սահմանել ըստ օգտագործելիության աստիճանի, օգտագործվող հողերի ֆերմերների համար կիրառել արտոնյալ, իսկ չօգտագործվող հողերի համար բարձր հարկեր,
- իրականացնել նորագույն տեխնոլոգիաների ներդրումը և գյուղմթերքների արտադրության և վերամշակող կազմակերպություններում, արտաքին աշխարհում ստանդարտներին համապատասխան և մրցունակ արտադրանք ստանալու համար,
- օգտագործել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների հետևանքով նրանց շուկայում ստեղծված բացը հայկական ապրանքներով լրացնելու հնարավորությունը,
- Հայաստանի կառավարության կողմից պետք է մշակվեն հատուկ ծրագրեր, որոնք կբխեն մեր երկրի տնտեսական շահերից և կապահովեն նրա տնտեսական անվտանգությունը:

Եզրակացություն:

Քանի որ Հայաստանը տարիներ շարունակ գտնվում է շրջափակման մեջ, որը իր բացասական հետք է թողել մեր երկրի տնտեսության վրա, որին վերջին տարիներին գումարվեց նաև համավարակի հետևանքով առաջացած խոչընդոտները, ապա տնտեսական անվտանգության ապահովումը մեր տնտեսության համար ունի առաջնային նշանակություն:

Նշենք, որ գյուղատնտեսությունը կարևորագույն ոլորտն է, որն էլ կարող է լուծել երկրի պարենային անվտանգության հարցերը: Այս ոլորտի զարգացումը կարող է բավարարել ոչ միայն ներքին շուկայի պահանջարկը, այլ նաև իրականացնել ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված գյուղմթերքների արտահանումը:

Հոդվածում անդրադարձել ենք տնտեսական անվտանգության վրա ազդող մի շարք գործոններին՝ միգրացիա, գյուղատնտեսության ոլորտի խնդիրներ, պարենային անվտանգություն: Ներկայացված է հանրապետությունում առկա իրավիճակը և հիմնախնդիրները: Վերլուծության արդյունքում արվել են առաջարկություններ, որոնք կարող են մեղմել երկրի տնտեսական անվտանգության վերը նշված գործոնների բացասական ազդեցությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուղատնտեսական արտադրողների միջև կոոպերացիան Հայաստանում, Երևան 2016, 89 էջ
<https://shen.am/file/1050/download?token=4VDDyyv->
2. Գրիգորյան Կ.Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, ՀՊԱՀ, Երևան 2011, Մենագրություն, 248 էջ
<https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/Parenajin%20anvtang..pdf>

3. Թադևոսյան Ջ., «Ազգային տնտեսական անվտանգություն» եզրույթի որոշ մեկնաբանումների շուրջ, «Այլընտրանք» Գիտական հանդես, #2, ապրիլ, 2016, 144-155 էջ
<http://alternative.am/wp-content/uploads/2016/06/%D5%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%BD-2016..pdf>
4. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2020, Միգրացիա, մաս 7
https://armstat.am/file/article/demog_2020_7.pdf
5. ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին, ՀՕ-339, ընդունված 07.05.2002
6. Ղուշչյան Հ, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը: «Բանբեր, Երևանի համալսարանի», թիվ 3, 2000, 16-26 էջ
http://ysu.am/files/02H_Ghushchyan.pdf
7. Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ., Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, «21-րդ ԴԱԸ», թիվ 6 (52), 2013, 126-146 էջ
8. Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, 68-76 էջ https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf
9. Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության ճեպագիր, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ. գիտափորձագիտական մատենաշար, հատոր 1, Երևան 2014
10. Архипов А., Городецкий А., Михайлов Б., Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения, Вопросы экономики, N 12, 1994, с. 36-44.
11. Михневич С., Либерализация миповой торговли сельхозпродукцией и проблемы продовольственной безопасности, -М.: “Мировая экономика и международная отношения” ,# 1, 2003, - с 61-67с.
12. Ahmad, S. & Schroeder, R.G. The impact of human resource management practices on operational performance: recognizing country and industry differences. Journal of Operations Management, 2003, Vol. 21, (1), p. 19,
13. Asad Rehman, Shamas Ul deen & Sadaf Farooq, Social Capital and Human Resources Development: A Knowledge, Attitudes and Practices (KAP) Analysis, International Journal of Innovation and Scientific Research, 2014, Vol 12, (1), p. 202-204
14. Trager, Frank N & Simonie, Frank L, An Introduction to the Study of National Security, Published by From: Trager, Frank N & Kronenberg, Philip S (Eds), National Security and American Society, 1973, pp. 35-48
15. <https://ampop.am/agricultural-productivity-in-armenia/>
16. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71868>
17. https://armstat.am/file/article/sv_09_21a_122.pdf

References

1. Gyowghatntesakan artadroghneri mij& kooperacian Hayastanowm, Er&an 2016, 89 e'j, <https://shen.am/file/1050/download?token=4VDDyyv->

2. Grigoryan K.A., Parenayin anvtangowt'yan apahovman & aghqatowt'yan nvazecman himnaxndirneri lowc'man owghinery' HH-owm, HPAH, Er&an 2011, Atenaxosowt'yown, 248 e'j,
<https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/Parenajin%20anvtang.pdf>
3. T'ad&osyan J., «Azgayin tntesakan anvtangowt'yown» ezrowyt'i orosh meknabanowmneri showrj, «Ayly'ntranq» Gitakan handes, #2, april, 2016, 144-155 e'j
<http://alternative.am/wp-content/uploads/2016/06/%D5%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D5%BD-2016..pdf>
4. Hayastani jhoghovrdagrakan jhoghovac'ow 2020, Migracia, mas 7
https://armstat.am/file/article/demog_2020_7.pdf
5. HH o'renqy' parenayin anvtangowt'yan apahovman masin, HO'-339, y'ndownvac' 07.05.2002
6. Ghowshchyan H, HH tntesakan anvtangowt'yan himnaharvery': «Banber, Er&ani hamalsarani», t'iv 3, 2000, 16-26 e'j http://ysu.am/files/02H_Ghushchyan.pdf
7. Markosyan A., Xachatryan L., Parenayin anvtangowt'yan apahovman himnaxndirneri' & dranc lowc'man owghinery' HH-owm, 2013, 126-146 e'j
8. Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown, 2021t'. hownvar-dektember, e'j 68-76 https://armstat.am/file/article/f_sec_4_2021_3.pdf
9. Qot'an'jyan H.S., Hayastani azzgayin anvtangowt'yan r'azmava-rowt'yan twepagir, R'azmavarakan anvtangayin hetazotowt'-yownner. /gitap'ord'agitakan matenashar/, hator 1, Er&an 2014
10. Arhipov A., Gorodeckij A., Mihajlov B., Jekonomicheskaja bezopasnost": ocnki, problemy, sposoby obespechenija, Voprosy jekonomiki, N 12, 1994, s. 36-44.
11. Mihnevich S., Liberalizacija mipovoj trgovli sel'hozprodukciej i problemy prodovol'stvennoj bezopasnosti, -M.: "Mirovaja jekonomika i mezhdunarodnaja otnoshenija", # 1,2003, - s 61-67s.,
12. Ahmad, S. & Schroeder, R.G. The impact of human resource management practices on operational performance: recognizing country and industry differences. Journal of Operations Management, 2003, Vol. 21, (1), p.19
13. Asad Rehman, Shamas Ul deen & Sadaf Farooq, Social Capital and Human Resources Development: A Knowledge, Attitudes and Practices (KAP) Analysis, International Journal of Innovation and Scientific Research, 2014, Vol 12, (1), p. 202-204
14. Trager, Frank N & Simonie, Frank L, An Introduction to the Study of National Security, Published by From. Trager, Frank N & Kronenberg, Philip S (Eds), National Security and American Society, 1973, pp. 35-48
15. <https://ampop.am/agricultural-productivity-in-armenia/>
16. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=71868>
17. https://armstat.am/file/article/sv_09_21a_122.pdf

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՐՋ

Լիանա Սամվելի Ազատյան

Համառոտագիր: Տնտեսական անվտանգությունը դա ազգային անվտանգության նյութական հիմք է: Այն ծառայում է որպես երկրի կայուն զարգացման, նրա անկախության երաշխիք: ՀՀ-ում կան տնտեսական անվտանգության վրա ազդող մի շարք գործոններին, դրանք են միգրացիա, գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ լիարժեք օգտագործումը, ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման պակասը, ինչն էլ առաջ է բերում պարենային անվտանգության հիմնախնդիրները: Վերլուծության արդյունքում արվել են առաջարկություններ, որոնք կարող են մեղմել երկրի տնտեսական անվտանգության վերը նշված գործոնների բացասական ազդեցությունը:

Այս խնդիրների կարևորությամբ է պայմանավորված հողվածի արդիակա-նությունը:

Հողվածի հիմնական նպատակն է բացահայտել երկրի տնտեսական անվտանգության հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները ՀՀ-ում: Հետազոտության խնդիրն է ներկայացնել տնտեսական անվտանգության մի շարք գործոններ, բացահայտել նրանց միջև եղած տրամաբանական կապը և տալ սովյալ հարցերի լուծման մի շարք ուղիներ:

Գիտական նորույթը: Հողվածում մշակվել և հիմնավորվել են մոտեցումներ, որոնց կիրառումը կապահովի երկրի տնտեսական անվտանգությունը: Դրանք հետևյալներն են.

- հողի հարկը սահմանել ըստ օգտագործելիության աստիճանի և չօգտագործվող հողերի հարկը սահմանել ավելի բարձր, քան օգտագործվող հողերինը: Իսկ օգտագործվող հողերի ֆերմերների համար կիրառել արտոնյալ հարկեր,
- իրականացնել նորագույն տեխնոլոգիաների ներդրումը և գյուղմթերքների արտադրության և վերամշակող կազմակերպություններում, արտաքին աշխարհում ստանդարտներին համապատասխան և մրցունակ արտադրանք ստանալու համար,
- օգտագործել Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների հետևանքով նրանց շուկայում ստործված բացը հայկական ապրանքներով լրացնելու հնարավորությունը,
- Հայաստանի կառավարության կողմից պետք է մշակվեն հատուկ ծրագրեր, որոնք կբխեն մեր երկրի տնտեսական շահերից և կապահովեն նրա տնտեսական անվտանգությունը:

Բանալի բառեր: Տնտեսական անվտանգություն, պարենային ապահովու-թյուն, գյուղատնտեսություն, միգրացիա, ռիսկեր, հողի հարկ, նորամուծություն-ներ, արտահանում:

ОБ ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Лиана Самвеловна Азатян

Аннотация: Экономическая безопасность является материальной основой национальной безопасности. Он служит гарантией устойчивого развития страны, ее независимости. Существует ряд факторов, влияющих на экономическую безопасность Армении, таких как миграция, неполное использование сельскохозяйственных угодий, отсутствие внедрения новейших технологий в отрасли, что вызывает вопросы продовольственной безопасности. В результате анализа были даны рекомендации, способные смягчить негативное влияние вышеперечисленных факторов на экономическую безопасность страны.

Актуальность статьи зависит от важности этих вопросов.

Основная цель данной статьи - выявить проблемы экономической безопасности страны и предложить пути их решения в Армении. Задача исследования – представлять ряд факторов экономической безопасности, выявить логическую связь между ними, предлагать пути решения этих вопросов.

Научная новизна. В статье разрабатываются и обосновываются подходы, применение которых позволит обеспечить экономическую безопасность страны. Это следующие:

- установить земельный налог по степени используемости, установить налог на неиспользуемые земли выше, чем на используемые земли. Применять льготные налоги для фермеров на используемые земли,
- внедрять новейшие технологии в сельскохозяйственное производство и перерабатывающие предприятия для получения конкурентоспособной продукции, соответствующей мировым стандартам,
- использовать возможность заполнить пустоту Российского рынка армянскими товарами, образовавшуюся в результате санкций,
- правительству Армении следует разработать специальные программы, которые будут исходить из экономических интересов нашей страны и обеспечивать ее экономическую безопасность.

Ключевые слова: Экономическая безопасность, продовольственная безопасность, сельское хозяйство, миграция, риски, земельный налог, инновации, экспорт.

ON ENSURING ECONOMIC SECURITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Liana Samvel Azatyan

Abstract: Economic security is the material basis of national security. It serves as a guarantee of sustainable development of the country, its independence. There are a number of factors influencing economic security in Armenia, such as migration, incomplete use of agricultural lands, lack of introduction of the latest technologies in the sector, which raises food security issues. As a result of the analysis, recommendations were made that could mitigate the negative impact of the above-mentioned factors on the country's economic security.

The relevance of the article depends on the importance of these issues.

The main purpose of this article is to identify the problems of the country's economic security, to suggest ways to solve them in Armenia. The aim of the research is to present a number of factors of economic security, to discover the logical connection between them, to give a number of ways to solve these issues.

Scientific novelty. The article develops and substantiates concepts, the approaches of which will ensure the economic security of the country. These are the following:

- **Set the land tax according to the degree of usability; set the tax on unused lands higher than the used lands. Apply preferential taxes to farmers for used land,**
- **Implement the latest technologies in agricultural production and processing companies to obtain competitive products in accordance with international standards;**
- **Use the opportunity to fill the gap created in their market by imposing sanctions on Russia with Armenian goods;**
- **The Government of Armenia should develop special programs that will proceed from the economic interests of our country and ensure its economic security**

Keywords: Economic security, food security, agriculture, migration, risks, land tax, innovations, exports.

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՇՐՋԱՆԱԶԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Մերի Գագիկի Մանուչարյան

Հոդվածը ստացվել է՝ 05.04.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 05.04.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն

Յուրաքանչյուր երկրի ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն հիմնահարցերից մեկը բնակչության պարենային անվտանգությունն է: Հիմնահարցը կենսական է հատկապես այն երկրների համար, որոնց տարածքային, բնակլիմայական և տնտեսական պայմանները հնարավորություն չեն ընձեռում բնակչության պահանջարկի բավարարումն իրականացնել տեղական արտադրության պարենամթերքներով: Ամբողջ աշխարհում ահագնացած համավարակները, տարերային աղետները և կլիմայի փոփոխությունը պարենային անվտանգության համար նոր մարտահրավերն են ստեղծում: Այս իրողությունը բնութագրական է նաև Հայաստանի Հանրապետության համար:

Համաձայն 1996թ. Պարենի համաշխարհային գագաթաժողովի ընդունած Պարենի համաշխարհային ապահովության և գործողությունների պլանի հոմալայան հռչակագրի՝ պարենային անվտանգությունը առկա է, երբ մարդիկ ունեն ֆիզիկական, սոցիալական և տնտեսական մատչելիություն՝ իրենց կարիքներին և նախասիրություններին համապատասխան ակտիվ և առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերք: Եվ հակառակը, պարենային անապահովությունն առկա է, երբ մարդկանց համար ազատ մատչելի չեն աճի, զարգացման, ինչպես նաև ակտիվ ու առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերքը¹:

Պարենային անվտանգությունը, կարելի է ասել, դարձել է դարի ամենակարևոր և լրջագույն մարտահրավերներից մեկը: Վիճակագիրները վկայում են, որ մեր թվարկության սկզբին երկրագնդի բնակչությունը կազմել է ընդամենը 300 մլն մարդ: Առաջին հազարամյակի ընթացքում այդ թիվն ավելացել է ընդամենը 30 միլիոնով, բայց երկրորդ հազարամյակի վերջին, ավելի ճշգրիտ՝ 1999թ. հոկտեմբերի 12-ին հասավ 6 միլիարդի, իսկ 2011 թ. հոկտեմբերի 31-ին անցավ 7 միլիարդի սահմանը²: Բավական է նայել համացանցում տեղադրված «Աշխարհի

¹ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, էջ 7

² Ավետիսյան Ս. Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/ Ս. Ավետիսյան. –Եր.: Տնտեսագետ, («Ամբերդ» մատենաշար) 2014, էջ 5

բնակչության հաշվիչին» և անմիջապես հասկանալի կդառնա, թե ինչ արագությամբ է ավելանում երկրի բնակչությունը: 2022 թվականին Երկրի բնակչությունը կշարունակի աճել և տարեվերջին կկազմի 8,046,949,318 մարդ: Բնակչության բնական աճը կլինի դրական և կկազմի 98 415 064 մարդ¹: Այսպիսի սրընթաց աճին զուգընթաց՝ գնալով սրվում է բնակչությանը պարենով ապահովման հիմնախնդիրը: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) տվյալներով ներկայումս աշխարհում ավելի քան 820 մլն մարդ սովի է մատնված²: Ամեն տարի սովամահ է լինում 18–20 մլն մարդ: Սա նշանակում է, որ պարենային անբավարարությունը որոշ երկրների համար դարձել է ոչ միայն զարգացումն արգելակող, այլև սոցիալական և քաղաքական անկայունություն ծնող լուրջ սպառնալիք³:

ՄԱԿ-ի ՊԳԿ-ի տվյալներով՝ պարենային համաշխարհային տնտեսության անարդյունավետությունը 2011 թվականին կանգ էր առել տարեկան 1-ից 2 տրիլիոն դոլարի մակարդակում⁴: Այսպիսով, ամբողջ ագրոպարենային շղթան վերլուծելիս պակասում էր մարդու սպառման համար արտադրվող սննդամթերքի մինչև մեկ երրորդը: Այս հանգամանքը պայմանավորում է գյուղատնտեսության ոլորտում շրջանաձև տնտեսության մոդելի ներդրման անհրաժեշտությունը, ինչն էլ կանխորոշեց ուսումնասիրության **արդիականությունը**:

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել շրջանաձև տնտեսության համակարգի զարգացման ուղղությունը և հիմնավորել դրա կիրառման անհրաժեշտությունը ՀՀ պարենային անվտանգության բարձրացման գործում:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**,

- ուսումնասիրել պարենային անվտանգության հիմնահարցերը և պարենային անվտանգության ապահովման կարևորությունը,
- ուսումնասիրել պարենային անվտանգության հիմնախնդրի էվոլյուցիան, շրջանաձև տնտեսության և գծային տնտեսության խնդիրները և ներկայացնել շրջանաձև տնտեսության համակարգի ներդրման առավելությունները պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Գրականության վերլուծություն

«Պարենային անվտանգություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ դրվեց 1970-ական թվականների կեսերին, երբ ի տարբերություն զարգացած երկրներում պարենի ակնհայտ գերարտադրության, այսպես կոչված՝

¹ <https://countrymeters.info/ru/World>

² Transforming the World Through Food and Agriculture, FAO and the 2030 Agenda for Sustainable Development, 36p.,p. 6, <http://www.fao.org/3/ca5299en/ca5299en.pdf>

³ Manucharyan M.G., Food security issues in the economic security system of the Republic of Armenia, BIO Web of Conferences, Volume 36 (2021), International Scientific and Practical Conference “Fundamental Scientific Research and Their Applied Aspects in Biotechnology and Agriculture” (FSRAABA 2021) Tyumen, Russian Federation, July 19-21, 2021, ISSN 2117-4458, DOI: <https://doi.org/10.1051/bioconf/20213608004>

⁴ FAO. 2011. Global food losses and food waste – Extent, causes and prevention. Rome

«Երրորդ աշխարհի» երկրներում զանգվածային բնույթ էին ստացել սովը և թերսնումը¹:

Պարենային անվտանգությունը իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ, լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածներին, և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ:

Երկրի պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության և սննդի ներմուծման համակարգերի զարգացման միջոցով²:

Պարենային անվտանգությունը համաշխարհային մակարդակում անցել է մի շարք փուլեր, որը ներկայացված է ստորև (աղ. 1):

Աղյուսակ 1

Պարենային անվտանգության հիմնախնդրի էվոլյուցիան³

1940-1950թթ.	Պարենի ավելցուկի վերաբաշխում՝ պարենային օգնություն հակաֆաշիստական կռաւիցիայի երկրներին
1960-ական թվականներ	Պարեն զարգացման համար՝ հումանիտար օգնություն «Երրորդ աշխարհի» երկրներին
1970-ական թվականներ	Պարենի մատչելիության երաշխիքներ՝ պարենային շուկայի կարգավորում
1980-ական թվականներ	«Պարենային անվտանգության» հասկացության ընդլայնում՝ ինքնաբավություն և կայունություն, «կանաչ հեղափոխություն»
1990-ական թվականներ	Պայքար սովի և թերսնման վերացման համար՝ միջազգային համագործակցություն, տեխնոլոգիական աջակցություն
2000 թվականներից մինչ օրս	Մննդամթերքի անվտանգության և որակի բարձրացում, կայուն զարգացում՝ էկոլոգիական գյուղատնտեսություն, անվտանգության և որակի մշտադիտարկում

ՀՀ Պարենային անվտանգության բարձրացման գործում կարևոր դերակատարում ունի շրջանաձև տնտեսության ներդրումը:

Աշխարհում տարեկան ստեղծվում է 2,01 միլիարդ տոննա քաղաքային կոշտ թափոն, որի առնվազն 33%-ը չի կառավարվում էկոլոգիապես անվտանգ

¹ Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014, էջ 16, («Ամբերդ» մատենաշար):

² Manucharyan M.G., Food security issues in the economic security system of the Republic of Armenia, BIO Web of Conferences, Volume 36 (2021), International Scientific and Practical Conference “Fundamental Scientific Research and Their Applied Aspects in Biotechnology and Agriculture” (FSRAABA 2021) Tyumen, Russian Federation, July 19-21, 2021, ISSN 2117-4458, DOI: <https://doi.org/10.1051/bioconf/20213608004>

³ Ավետիսյան Ս. , Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014, էջ 17 («Ամբերդ» մատենաշար):

եղանակով: Գծային սպառումը հասնում է իր գագաթնակետին: Ի հակադրություն գծային տնտեսության, շրջանաձև տնտեսությունն ունի մի շարք առավելություններ, որոնք գործառնական նշանակություն ունեն ինչպես ռազմավարական, այնպես էլ միկրո և մակրոտնտեսական մակարդակներում: Սա տրիվիոս դոկտրին արժողությամբ հնարավորություն է՝ նորարարության, աշխատատեղերի ստեղծման և տնտեսական աճի հսկայական ներուժով¹:

Ըստ Կ.Գ. Կաստրոյի և այլոց, շրջանաձև տնտեսությունը ձգտում է տարանջատել տնտեսական աճը բնական ռեսուրսների շահագործումից՝ նվազագույնի հասցնելով մարդու գործունեության հետևանքով առաջացած բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ի վերջո, ընդհանուր նպատակն է «առավելագույնի հասցնել օգտագործվող ռեսուրսների արժեքը»՝ նվազեցնելով արտանետումները, էներգիայի սպառումը և թափոնների հեռացումը²:

Ըստ Պ.Ռոսայի և ուրիշների, երբ ընկերությունները հետևում են շրջանաձև տնտեսության սկզբունքներին, նրանք կարող են բարելավել տնտեսական, բնապահպանական և սոցիալական ասպեկտները: Օրինակ որոշ պոտենցիալ օգուտներ նվազեցնում են ծախսերն ու ռիսկերը, ավելացում են մրցակցային առավելությունները, նվազագույնի են հասցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, բարելավում են ռեսուրսների և աշխատատեղի արդյունավետությունը, զարգացնում են աշխատողների հմտություններն ու գիտելիքները և այլն³:

Մեթոդաբանություն

Հետազոտության մեջ դրված խնդիրների լուծումն իրականացվել է նկարագրական, համեմատության, ընդհանրացման, գրաֆիկական մեթոդների կիրառման եղանակներով:

Վերլուծություն

Աշխարհում գոյություն ունեցող իրավիճակը, Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ պատժամիջոցները պատնեշներ են ստեղծում Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար ոչ միայն Եվրասիական տնտեսական միությունում, այլև ամբողջ աշխարհում: Ստեղծված նոր ռիսկերը մեծ չափով կապված են գլոբալ պարենային անվտանգության ապահովման հետ, որը շղթայական ռեակցիայով ազդելու է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա: Հայաստանի համար էլ ավելի կարող է բարդանալ իրավիճակը՝ հաշվի առնելով աշխարհագրական դիրքը՝ դեպի ծով ելք չունենալը, աշխարհա-քաղաքական իրավի-

¹ Five Crucial Reasons for Implementing a Circular Economy for Sustainable Development, <https://earth5r.org/crucial-reasons-implementing-circular-economy/>

² Camila Gonçalves Castro, Adriana Hofmann Trevisan, Daniela C.A. Pigosso, Janaina Mascarenhas The rebound effect of circular economy: Definitions, mechanisms and a research agenda, *Journal of Cleaner Production* 345(2022) 131136

³ Rosa, P., Sassanelli, C., Terzi, S., 2019a. Circular business models versus circular benefits: an assessment in the waste from electrical and electronic equipments sector. *J. Clean. Prod.* 231, 940–952. <https://doi.org/10.1016/j.jclepro.2019.05.310>

ճակը և այլն: Այս ամենով հանդերձ շարունակել տնտեսության զարգացումը գծային մոդելով անընդունելի է:

Առկա գրականության մեջ չկա շրջանաձև տնտեսության միասնական և համընդհանուր սահմանում, սակայն ընդհանուր կոնսենսուս կա շրջանաձև տնտեսության հիմնական հասկացությունների և նպատակների վերաբերյալ: Սահմանումները կառուցված են երկու հիմնական սկզբունքների վրա, մի դեպքում շեշտը դրվում է նյութական ռեսուրսների փակ շրջանառության ապահովման և դրանում նոր, անձեռնմխելի ռեսուրսների ներմուծման նվազեցման վրա, երկրորդ դեպքում սահմանումներ են, որոնք վերաբերում են ոչ միայն նյութական ռեսուրսների կառավարմանը, այլ նաև այլ ասպեկտներին, օրինակ՝ սպառման ձևերի փոփոխմանը¹:

Շրջանաձև տնտեսության խնդիրների ըմբռնումն ու արդիականության աստիճանը զգալիորեն տարբերվում են տարբեր երկրներում և կախված են յուրաքանչյուր երկրի բնական, մարդկային, ֆիզիկական (արհեստական) և ինստիտուցիոնալ կապիտալի առանձնահատկություններից, զարգացման մակարդակից և սոցիալ-տնտեսական առաջնահերթություններից ու հասարակության էկոլոգիական մշակույթից: Մի կողմից, շրջանաձև տնտեսությունը ուժեղ տնտեսություն ունեցող և բարձր զարգացած տեխնոլոգիաներ և արտադրական մշակույթ ունեցող պետությունների համար է, սակայն որոշակի ռիսկ կա, որ զարգացած երկրներն ու ընկերությունները կօգտագործեն շրջանաձև տնտեսության մոդելը՝ ներկայացնելով իրենց տեխնոլոգիական առավելությունները՝ որպես շուկա մուտք գործելու պատրվակ և իրենց մասնաբաժինը պահպանելու երաշխիքներ: Մյուս կողմից, ավելի ցածր եկամուտ ունեցող զարգացող երկրները կարելի է համարել ավելի շրջանաձև, քան զարգացածները, այն իմաստով, որ դեն նետված իրերի մեծ մասից շատ դետալներ են վերականգնվում վերամշակման և վերանորոգման համար: Հարցն այն է, թե ինչպես կարելի է այդ գործընթացները վերածել կայուն զարգացման հնարավորությունների: Զարգացող երկրներում շրջանաձև գործընթացների առկայությունը, որոնց մեծ մասը կապված է թափոնների տեսակավորման և վերաօգտագործման հետ, ապահովում է այսպես կոչված «աճի կետեր», որոնք թույլ կտան կառավարություններին, մասնավոր հատվածին և այլ շահագրգիռ կողմերին առաջ մղել նորարարական մոդելներ²:

Ներկայումս արտադրվող պարենի մեկ երրորդը անհետանում կամ թափոնների է վերածվում, ինչը ոչ միայն չի նպաստում պարենային անվտանգությանն ու սնուցմանը, այլև մեծացնում է ճնշումը բնական ռեսուրսների վրա: Վատնվող կամ թափոնների վերածվող պարենի արտադրության համար օգտագործվող էներգիան կազմում է աշխարհի էներգիայի ընդհանուր սպառման մոտավորապես 10 տոկոսը, իսկ ջերմոցային գազերի տարեկան արտանետում-

¹ ЭКОНОМИКА ЗАМКНУТОГО ЦИКЛА И ЗДОРОВЬЕ: ВОЗМОЖНОСТИ И РИСКИ, Всемирная организация здравоохранения, Европейское региональное бюро, стр. 2, 128 стр.

² Батова Надежда, Сачек Петр, Точицкая Ирина, Циркулярная экономика в действии: формы организации и лучшие практики, BEROC Green Economy Policy Paper Series, PP no.5, 2018, <https://beroc.org/upload/medialibrary/321/32121ce6e23d0900df821bdcb5923fdc.pdf>

ները՝ կապված պարենի կորստի և թափոնների հետ կազմում են 3,5 գիգատոն CO₂-ին համարժեք: Շրջանաձև տնտեսության հիման վրա պարենային համակարգերի վերակառուցումը կարող է օգնել լուծել սննդամթերքի թափոնների գլոբալ խնդիրը՝ կրճատելով սննդի մատակարարման շղթաները և դարձնելով դրանք ավելի արդյունավետ ռեսուրսների օգտագործման առումով¹:

Չնայած, որ Հայաստանը ջերմոցային գազերի մարդածին արտանետումների մեջ չնչին մասնաբաժին ունի, այն է՝ 0,02%, մեր երկիրն ակտիվ միացել է կլիմայի փոփոխության դեմ պայքարի համաշխարհային գործընթացներին:

Շրջանաձև տնտեսության մոդելներին անցումը գլոբալ բնույթ է կրում, և այս հայեցակարգի ներդրման առավելություններն ավելի ու ավելի ակնհայտ են դառնում: Էլեն ՄաքԱրթուր հիմնադրամի փորձագետների կարծիքով՝ մինչև 2025 թվականը շրջանաձև տնտեսությունը կարող է տարեկան ավելացնել համաշխարհային տնտեսության եկամուտը 1 տրիլիոն դոլարից ավելի: Բացի այդ, շրջանաձև տնտեսությանն անցումը հսկայական հնարավորություններ կստեղծի արտադրության արդիականացման և արդյունաբերական նորարարությունների ներդրման համար՝ ապահովելով արտադրողականության տարեկան 3% աճ և արդյունքում ՀՆԱ-ի 7% աճ²: Այս տպավորիչ թվերը կարող են լավագույն պատճառ հանդիսանալ շրջանաձև տնտեսության անցնելու համար, ինչպես քաղաքական գործիչների, այնպես էլ ձեռնարկատերերի համար:

Շրջանաձև տնտեսության անցումը բնութագրվում է առաջնային ռեսուրսների օգտագործման կրճատմամբ, նյութերի և արտադրանքի առավելագույն հնարավոր արժեքի պահպանմամբ և սպառման ձևերի փոփոխությամբ: Գործնականում նման անցման համար պահանջվում են՝ վերամշակում, ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառում, արտադրանքի և դրանց բաղադրիչների վերամշակում, վերանորոգում և կրկնակի օգտագործում, արտադրանքի պիտանելիության ժամկետի երկարացում, ապրանքների ընկալումը որպես ծառայության տեսակ, ապրանքների միասնական օգտագործում, թափոնների կանխարգելում, մասնավորապես՝ արտադրանքի նախագծման փուլում թափոնների անխուսափելիության վերացումը, սպառման ձևերի փոփոխություն գործողությունները: Այս կարևոր պահանջի հետ մեկտեղ կա նաև այրման և թափոնների հեռացման աստիճանական դադարեցում: Այս միջոցառումների իրականացումը և անհրաժեշտ ներդրումների ներգրավումը կպահանջի փոփոխություններ վարքագծի բոլոր մակարդակներում՝ սպառողներից մինչև արտադրողներ և քաղաքականություն մշակողներ:

Եվրոպական և համաշխարհային մակարդակներում գործում են բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք ինչ-որ կերպ կապված են շրջանաձև տնտեսության հայեցակարգի հետ: Այսպիսով, շրջանաձև տնտեսության սկզբունքները

¹ https://www.fao.org/agroecology/knowledge/10-elements/circular-economy/ru/?ipp=5&page=55&tx_dynalist_pi1%5Bpar%5D=YToxOntzOjE6IkwiO3M6MToiMCI7fO%3D%3D

² Ellen MacArthur et al. (2014) Towards the Circular Economy: Accelerating the scale-up across global supply chains. – Published by World Economic Forum, Geneva, Switzerland, 2014.


ներառվել են մի շարք Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) հասնելու մեխանիզմների մեջ, մասնավորապես ԿԶՆ-12՝ «նվազեցնել առաջացած թափոնների քանակը կանխարգելման, կրճատման, վերամշակման և վերաօգտագործման միջոցով» և «հասնել բնական ռեսուրսների կայուն զարգացման և արդյունավետ օգտագործման»: Շրջանաձև տնտեսության հայեցակարգը նույնպես սերտորեն կապված է կանաչ տնտեսության հետ և իսկապես դրա մաս է կազմում, հատկապես՝ կապված ցածր ածխածնային, ռեսուրսները ռացիոնալ օգտագործող տնտեսության վրա շեշտադրման հետ¹:

Շրջանաձև տնտեսությունը հաճախ ներկայացնում է ընդհանուր առմամբ, որպես անցում գծային մոդելից («վերցնել, պատրաստել, օգտագործել, նետել») դեպի ցիկլային (վերականգնում և վերարտադրություն) (գծ. 1):

Գծային տնտեսություն



Շրջանաձև տնտեսություն



Գծապատկեր 1. Գծային և շրջանաձև տնտեսությունների մոդելները²

Այս երկու ձևերի միջև ամենազլխավոր տարբերությունն այն է, որ շրջանաձև տնտեսությունն ունի փակ շրջան՝ ի տարբերություն գծայինի, որը չի ենթադրում առաջնային ապրանքների և թափոնների կրկնակի օգտագործում՝ հետագա վերամշակման համար: Գծային տնտեսության հիմնական նպատակը առավելագույն շահույթն է, բայց ոչ բնության և շրջակա միջավայրի պահպանումը: Շրջանաձև տնտեսության նպատակը էկոլոգիական հավասարակշռությունն է,

¹ ЭКОНОМИКА ЗАМКНУТОГО ЦИКЛА И ЗДОРОВЬЕ: ВОЗМОЖНОСТИ И РИСКИ, Всемирная организация здравоохранения, Европейское региональное бюро, стр. 2

² ЭКОНОМИКА ЗАМКНУТОГО ЦИКЛА И ЗДОРОВЬЕ: ВОЗМОЖНОСТИ И РИСКИ, Всемирная организация здравоохранения, Европейское региональное бюро, стр. 3

այսինքն՝ կիրառվում է շրջակա միջավայրի կայուն կառավարում՝ միաժամանակ հասնելով ապրանքների և ծառայությունների օգտագործման երկարաժամկետ և արդյունավետ ցիկլին:

Գիտական նորույթ

Բացահայտվել է շրջանաձև տնտեսության համակարգի ներդրման առավելությունները, և առաջարկվել է գոյություն ունեցող շրջանաձև տնտեսության մոդելի ներդրումը ՀՀ-ում, որի կիրառումը կարող է նպաստել պարենային անվտանգության բարձրացմանը:

Եզրակացություն

Շրջանաձև տնտեսությունը պարենային անվտանգության համատեքստում կայունության և զարգացման հեռանկար է, որը մարտահրավեր է նետում ներկայումս գոյություն ունեցող տնտեսության գծային մոդելին:

Շրջանաձև տնտեսությունն անկասկած ունի մի շարք առավելություններ և թերություններ: Վերջիններս ներառում են տնտեսվարողների ցածր եկամուտները կարճաժամկետ հեռանկարում: Եթե որպես օրինակ վերցնենք գյուղատնտեսությունը, ապա առավելությունները ներառում են գյուղատնտեսական ենթամթերքների առևտրի զարգացումը և ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը (ներառյալ կենսատեխնոլոգիան և բիովերամշակումը): Ե՛վ ֆերմերները, և՛ շրջակա միջավայրը շահում են շրջանաձև գյուղատնտեսության համակարգի ներդրումից, քանի որ գյուղատնտեսական արտադրության կայունությունը մեծանում է:

Հետազոտության շրջանակներում բացահայտվել է, որ աշխարհում ռեսուրսների սակավության ներկա պայմաններում, կլիմայի գլոբալ փոփոխությունը, շրջակա միջավայրի դեգրադացումը և բնակչության աճը և, համապատասխանաբար, սննդի պահանջարկը, շրջանաձև տնտեսությունը ռեսուրսների օգտագործման կայուն զարգացման և վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման մոդելների ստեղծման համար հույս ներշնչող ռազմավարություն է: Շրջանաձև տնտեսությունը կարող է վերականգնել բնական համակարգերը և բարձրացնել մարդու կայունությունը, առողջությունը և բարեկեցությունը: Շրջանաձև տնտեսության ներդրումը կնպաստի նաև գլոբալ խնդիրների լուծմանը: Ուսումնասիրված է, որ շրջանաձև տնտեսության հայեցակարգը հիմնականում քաղաքականության հայեցակարգ է և սահմանվում է որպես տնտեսություն, որտեղ արտադրանքի, նյութերի և ռեսուրսների արժեքը պահպանվում է հնարավորինս երկար, իսկ թափոնների առաջացումը նվազագույնի է հասցվում և դիտվում է որպես նշանակալի ներդրում կայուն, ցածր ածխածնային, ռեսուրսարդյունավետ և մրցունակ տնտեսության մեջ: Շրջանաձև տնտեսությունն առաջարկում է անցում գծային համակարգերից շրջանաձև համակարգերի վրա, որոնք հիմնված են նոր բիզնես մոդելների վրա՝ օգտագործելով փակ արտադրական ցիկլեր և ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում:

Սահմանված է, որ գյուղատնտեսության շրջանաձև տնտեսության մեջ պարենամթերքի համակարգի բոլոր փուլերը՝ մշակությունից, բերքահավաքից,

փաթեթավորումից, վերամշակումից, տեղափոխումից, շուկայավարումից մինչև սննդամթերքի օգտագործում, նախատեսված են կայուն զարգացմանը նպաստելու համար: Ապացուցված է, որ գյուղատնտեսական կազմակերպությունները, որոնք իրենց արտադրության մեջ իրականացնում են շրջանաձև տնտեսություն, կկարողանան նվազեցնել ծախսերը և ավելացնել արտադրական ցիկլերի քանակը: Այնուամենայնիվ, նման արտադրության մոդելի ներդրման հաջողությունը կախված է բազմաթիվ գործոններից՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքից, բերքատվությունից և հնարավոր ծախսերից: Արդյունքում անհնար է մշակել շրջանաձև գյուղատնտեսության միասնական մոդել բոլոր գյուղատնտեսական սուբյեկտների համար: Շրջանաձև տնտեսության համար անհրաժեշտ է մշակել համապատասխան բիզնես մոդելներ՝ հաշվի առնելով բոլոր անհրաժեշտ պայմանները տարածաշրջանային մակարդակի հետ կապված, սակայն դա պահանջում է համապատասխան օրենքի մշակում և ձեռնարկությունների խթանում, որը պետք է հանձն առնի կառավարությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ս. Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/ Ս. Ավետիսյան. –Եր.: Տնտեսագետ, («Ամբերդ» մատենաշար) 2014 – 96 էջ.
Գրականության վերլուծություն: ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացման հիմնախնդիրների, հնարավոր ուղիների և հեռանկարների հարցերին հայրենական գիտնականներից իրենց հետազոտություններում անդրադարձել են Հ.Ս.Ավագյանը, Յու.Ա.Աղաբալյանը, Պ.Գ.Ալոյանը, Լ.Ե.Սարգսյանը, Ա.Մ.Հովհաննիսյանը, Ս.Ա.Մկրտչյանը և այլոք: Մեծ է Հ.Ս.Ավագյանի գիտական ներդրումը այս բնագավառում: Նրա մի շարք աշխատանքներ նվիրված են լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման հիմնախնդիրներին, որոնցում հիմնավորվում է ոլորտի զարգացման հանքահումքային ներուժը, ուղիներն ու հեռանկարները^{1, 2, 3}: Հեղինակի աշխատանքներում մանրամասն ներկայացված է մետաղական պաշարների մասին պաշտոնական տեղեկատվությունը, կատարված են մետաղական հանքավայրերում առկա արդյունաբերական, հաշվեկշռային և կանխատեսումային պաշարների արժեքի հաշվարկներ, արվել են առաջարկություններ մետալուրգիական գործարաններ կառուցելու ուղղությամբ և այլ հարցեր: Հ.Ս.Ավագյանի աշխատանքներում հիմնականում ընդգծվում է Հայաստանի հանքավայրերի բնական հարստություն-

¹ Ավագյան Հ.Ս., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղղություններն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2011.-326 էջ:

² Ավագյան Հ.Ս., ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2013.-272 էջ: Էլեկտրոնային տարբերակ՝ http://haygirk.nla.am/upload/1941-/lernahanqayin_avagyan_2013.pdf

³ Ավագյան Հ.Ս., Հայաստանի հանքահումքային ռեսուրսները: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2004.-432 էջ:

ների գնահատականը և դրանց իրացման հնարավորություններն ու ուղիները, սակայն հարկ է նշել այն հանգամանքը, որ հանքավայրերի պաշարների և պոչամբար գնացող օգտակար բաղադրիչների հաշվարկներում առկա են արժեքային գնահատականների մեթոդական վրիպումներ, օրինակ, որոշ դեպքերում հաշվի չեն առնվում շահագործման ու այլ բնույթի ծախսերը և ստացվում են բարձր գնահատված արժեքներ: Մետալուրգիական գործարանների կառուցման հիմնավորումներում երբեմն հաշվի չեն առնվում էկոլոգիական գործոնի դերը և նախատեսվող տեխնոլոգիական հնարավորությունները: Հ.Ս.Ավագյանի աշխատանքներում համակարգված ձևով ներկայացված են երկրի ողջ հանքահումքային ներուժը և մեր կողմից կատարված ուսումնասիրություններում դրանք արժանի կիրառություն են ստացել:

Յու.Ա.Աղաբալյանի հետազոտություններում կատարվել են լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների տնտեսական և մեթոդական հետազոտություններ, որոնք ընդունելի են նաև արտերկրում¹:

Ս.Ա.Մկրտչյանը ոլորտի մասին ուսումնասիրություններն իրականացրել է կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով և տնտեսամաթեմատիկական մոդելավորման միջոցով հիմնավորել է ոլորտի ժամանակակից զարգացման անկայուն միտումները մոլիբդենի օրինակով, մշակել ոլորտի կայունացման որոշակի տնտեսական մեխանիզմներ²:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության վերաբերյալ արժեքավոր հայրենական հետազոտություններում ընդգծված չեն կայուն զարգացման սկզբունքներով ոլորտի զարգացման տնտեսական և մեթոդական հարցերը: Սակայն հարկ է նշել, որ կայուն զարգացման էկոլոգիական գործոնի առաջնահերթ ապահովման հարցերը պետք է ներառվեն մշակվող մոտեցումների հիմքում: Հավելենք նաև, որ կայուն զարգացման մեկ այլ կարևոր սկզբունք, այն է՝ սերունդների իրավահավասարության սկզբունքը մետաղական ռեսուրսների նկատմամբ իրենց պահանջումների բավարարման հարցում հաճախ անտեսված է: Չվերականգնվող ռեսուրսների պարագայում, ինչպիսիք են մետաղական ռեսուրսները, տվյալ սկզբունքը ունի հիմնարար բնույթ: Այս սկզբունքները դրված են մեր ուսումնասիրությունների հիմքում:

Մեթոդաբանություն: Հռոլվածում վերլուծությունն իրականացվել է վիճակագրական համեմատական վերլուծության, անալիզի և սինթեզի, կանխատեսումների, մոդելավորման, տրամաբանական մտահանգման և այլ մեթոդներով: Վերլուծության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակումները, մի շարք պաշտոնական վերկայքերի տեղեկատվությունը:

Վերլուծություն: Համաշխարհային մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման գործընթացում Հայաստանն ունի պոտենցիալ աճող մաս-

¹ Աղաբալյան Յու. Մ., Հայաստանում երկաթահանքային և սև մետալուրգիայի արդյունաբերության ստեղծման տնտեսական և մեթոդական հետազոտումը: ՀՊՃՀ-Եր., Ճարտարագետ, 1991թ.:

² Մկրտչյան Ս.Ա., Տնտեսական աճ, կայուն զարգացում/Հիմնախնդիրներ և լուծման ուղիներ (ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերության օրինակով)/ ՀՊՃՀ-Եր.: 2013-134էջ:

նաբաժին՝ պայմանավորված հարուստ մետաղական հանքահումքային հենքով, մետալուրգիական գործող ընկերությունների ներուժով, առկա բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալով և ավանդական գործունեքով:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ներուժը ազգային տնտեսությունում: Հայաստանի Հանրապետության տնտեսության համար մետալուրգիական արդյունաբերությունը ներկայումս շարունակում է մակրոտնտեսական մեծ դեր ու նշանակություն ունենալ որպես տնտեսության առաջատար ճյուղերից մեկը: ՀՀ-ում արդյունահանվում և ոչ ամբողջական շրջափուլով վերամշակվում են համաշխարհային շուկաներում բարձր պահանջարկ ունեցող պղինձ և մոլիբդեն, ոսկի, արծաթ, ցինկ, կապար և այլ մետաղներ: Որպես մետալուրգիական արտադրանք դրանք արտադրվում են *Ֆերոմոլիբդենի, ոսկու և արծաթի Դորե համաձուլվածքի, այլումինի նրբաթիթեղի* և այլ պատրաստի մետաղական արտադրանքի տեսքով:


Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի դասակարգման ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը համարվում է **մշակող արդյունաբերության ճյուղ** և ընդգրկում է «**Հիմնային մետաղների արտադրություն**» և «**Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից**» արդյունաբերական արտադրանքի բաժինները:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 2021թ-ին ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով կազմել է 195,083.8 մլն. դրամ, որից «Հիմնային մետաղների արտադրությանը» բաժին է ընկել 182,425.1 մլն. դրամ, կամ 93.5%-ը, իսկ «Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությանը, բացի մեքենաներից և սարքավորանքից»՝ 12,658.7 մլն. դրամ, կամ 6.5%-ը¹: 2020թ-ի համանման ցուցանիշների պատկերը հետևյալն է. ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով կազմել է 210,487.7 մլն. դրամ, որից «Հիմնային մետաղների արտադրությանը» բաժին է ընկել 191,292.0 մլն. դրամ, կամ 90.9%-ը, իսկ «Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությանը, բացի մեքենաներից և սարքավորանքից»՝ 19,195.7 մլն. դրամ, կամ 9.1%-ը:²

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի արտադրության դինամիկան և աճի ցուցանիշները 2010-2021թթ. բերված են գծ. 1-ում:

¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf

² ՀՀ վիճակագրական կոմիտե, Տվյալների բազա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_3%20Industry,%20Construction,%20Trade%20and%20services_32%20Industry/IC-in-a.px/?rxid=10fe690f-50e8-4832-97d3-88cff599400a




Գծապատկեր 1. ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի ղինամիկան և աճի տեմպերը 2010-2021թթ.¹

Դիտարկող ժամանակահատվածում ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի ծավալները հիմնականում ունեցել են աճի միտում և առանձին տարիներին ընթացիկ գներով արտադրանքի արտադրության ծավալների անկումը պայմանավորված է եղել միջազգային շուկայում մետաղների գների անկմամբ: 2020-2021թթ կտրվածքով 7.3%-ով անկումը պայմանավորված է համաշխարհային շուկայում կորոնավիրուսի համաճարակի հետ պայմանավորված գործընթացներով:

Վերլուծելով մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի կառուցվածքը բերված դասակարգմամբ, ըստ որի արտադրանքի առյուծի բաժինը ընկնում է «Հիմնային մետաղների արտադրությանը»՝ միջինում 92.0%, իսկ վերջինիս հումքի վրա արտադրվող «Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությանը, բացի մեքենաներից և սարքավորանքից» ընկնում է միջինում 8.0%: Թվերը փաստում են այն մասին, որ երկրում ստացված մետաղները և նրանց համաձուլվածքները արտադրական շղթայի առավել բարձր արտադրողական փուլերում գրեթե չեն օգտագործվում և արտահանվում են որպես հումք՝ չստեղծելով մեծ ավելացված արժեքներ և հետևաբար փոքր մասնաբաժին տնտեսական աճի մեջ և ՀՆԱ-ում:


Ներկայացնենք ՀՀ մետալուրգիական արտադրատեսակների կառուցվածքը 2010թ. և 2020 թ-ին (տե՛ս գծ. 2 և 3) և կատարենք կառուցվածքի համեմատական վերլուծություն:

¹ Գապատկերը կառուցվել է նախորդ աղբյուրի և [sv_09_21a_121 \(armstat.am\)](http://armstat.am) տվյալներով:



Գծապատկեր 2. Հիմնային մետաղների արտադրության կառուցվածքը 2010թ.

ՀՀ մետալուրգիական արտադրանքի հիմնական մասնաբաժինը կազմող «Հիմնային մետաղների արտադրության» կառուցվածքում վերջին տասնամյակում բարձրացել է թանկարժեք և հիմնական գունավոր մետաղների մասնաբաժինը՝ 53%-ից մինչև 77%, իսկ թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրությունը կրճատվել է՝ 36.3%-ից մինչև 13.8%:



Գծապատկեր 3. Հիմնային մետաղների արտադրության կառուցվածքը 2020թ.

Փոփոխությունը պայմանավորված է դիտարկվող ժամանակահատվածում թանկարժեք և գունավոր մետաղների արտադրանքի ֆիզիկական ծավալների, ինչպես նաև դրանց գների աճով, մասնավորապես պղնձի (տե՛ս գծ. 4) և ոսկու գների աճով. ներկայումս Լոնդոնյան բորսայում ոսկու գինը 1 տրոյական ուն-

ցիայի դիմաց կազմում է 1945.3\$¹: Ըստ միջազգային փորձագետների կանխատեսումների՝ 2024թ-ին ոսկու գինը կկազմի 2038.6\$/ տր. ունցիա²: Հարկ է նկատել, որ ճգնաժամային իրադրություններում ոսկու գինը ունի աճի միտում՝ պայմանավորված երկրների կողմից նրա պահուստների աճով:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, 2020թ-ին ՀՆԱ-ն կազմել է 6,181,664.1 մլն. դրամ³, իսկ մետալուրգիական արտադրանքը, ինչպես արդեն նշել ենք, կազմել է 210,487.7 մլն. դրամ, այսինքն մետալուրգիական արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 3.4%:

Նույն ժամանակահատվածում մետալուրգիական արդյունաբերության մասնաբաժինը արդյունաբերության մակրոտնտեսական ցուցանիշներում ունի հետևյալ պատկերը⁴. ՀՀ-ում արտադրանքի ծավալի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ հիմնային մետաղների արտադրության գծով կազմել է 111.5%, իսկ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության, բացի մեքենաներից և սարքավորանքից՝ 124.8%: Աճի այսպիսի ցուցանիշը բարձր է արդյունաբերության աճի 100.6% արձանագրված ցուցանիշի նկատմամբ: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում ըստ տնտեսական գործունեության տեսակների մետալուրգիական արտադրանքը կազմում է 14.9%: Ոլորտում տնտեսվարող սուբյեկտների քանակը հիմնային մետաղների արտադրության գծով 34-ն է, որտեղ աշխատում են 3300 աշխատողներ, իսկ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության, բացի մեքենաներից և սարքավորանքից արտադրության գծով 148 տնտեսվարող սուբյեկտներ են, որտեղ զբաղված են 1200 աշխատողներ: Ողջ ճյուղում զբաղվածները կազմում են արդյունաբերության զբաղվածության 4.3%-ը⁵:

ՀՀ մետալուրգիական խոշոր ընկերություններ են՝ ֆերոմոլիբդենի արտադրությամբ զբաղվող «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն⁶, Հոկտեմբերյանի ֆերոմոլիբդենի գործարանը, այլումինի նրբաթիթեղի արտադրությամբ զբաղվող «Ռուսալ-Արմենալ» հայ-ռուսական ընկերությունը⁷, պողպատյա խողովակներ արտադրող «Մետալ-Գրուպ» ԲԲԸ-ն, Չարենցավանի «Չուլակենտրոնը» և մի շարք այլ ընկերություններ, որոնք որպես խոշոր հարկատուներ վճարում են պետական բյուջեի հարկերի միջինում 2.8-3.6%-ը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության խոշոր հարկատուները՝ ըստ 2021թ.-ին տվյալների:

¹ Լոնդոնյան բորսա, մետաղների գներ <https://www.lme.com/Metals/Precious/LMEGold#Trading+day+summary>

² Տե՛ս նախորդ աղբյուրը

³ ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվների համակարգ www.armstat.am/file/doc/99526988.pdf

⁴ Տե՛ս նախորդ աղբյուրը

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերություն, <https://www.armstat.am/file/doc/99526873.pdf>

⁶ Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ, <http://pureironplant.am/am/>

⁷ Ռուսալ Արմենալ այլումինի գործարան, <http://www.rusal.ru/>

2021թ. մետալուրգիական արդյունաբերության ոլորտի խոշոր հարկատուների ցուցակ¹
 հազ.դրամ

Ընկերության անվանումը	Վճարված հարկեր, տուրքեր, վճարներ
«ԳԵՈՊՐՈՄՄԱՅՆԻՆԳ ԳՈՒՂ»	20,839,147
«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	2,457,368
«ՌՈՒՍԱԼ ԱՐՄԵՆԱԼ»	1,737,094
ԵՐԵՎԱՆԻ ՊՈՂՊԱՏՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ	1,376,552
«ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ»	1,250,115
«ԱՍՓ ՀՈՒՂԻՆԳ»	1,243,328
«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ»	1,217,482
«ԱՐՄԵՆԻԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՆԹՐԱՔԹՈՐ»	1,093,752
«ՄԵՏԱԼ ԳՌՈՒՊ»	926,296
«ԱՐՄԵՆԻԱՆ ՄՈՒԻԲԴԵՆ ՓՐՈԴԱՔՇՆ»	810,307
«ՌՈՍԿԱԲԵԼ ԱՐՄԵՆԻԱ»	698,468
«ՄԵՏԱՂ ԿԱՅՄ ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ»	245,016

Արտահանում և ներմուծում: ՀՀ արտահանման կառուցվածքում առաջին տեղում պղնձի խտանյութն է, որը հանքարդյունաբերական արտադրանք է և հումք է ծառայում մետալուրգիական արդյունաբերության համար: Ալավերդու պղնձաձուլարանը արդեն մի քանի տարի է, որ օբյեկտիվ բնապահպանական և տեխնոլոգիական խնդիրների պատճառով չի աշխատում: Երկրում արտադրված ողջ պղնձի խտանյութը արտահանվում է հիմնականում Բուլղարիա, Չինաստան և Շվեյցարիա:

ՀՀ արտահանման կառուցվածքում ֆերոմոլիբդենը պարբերաբար զբաղեցնում է 2-րդ կամ 3-րդ տեղերը: 2021թ. տվյալներով ՀՀ-ում արտադրվել և համարյա ամբողջությամբ արտահանվել է 7251.3 տոննա ֆերոմոլիբդեն²: Այն արտահանվում է հիմնականում Նիդերլանդներ, Բելգիա և Ռուսաստան: Ոսկու Դորե համաձուլվածքը արտահանվում է Շվեյցարիա: ՀՀ արտահանման կեսից ավելին կազմում է լեռնամետալուրգիական արտադրանքը, իսկ ներմուծման մասով միջինում 28.0 տոկոս (տե՛ս աղ. 2): Ինչպես տեսնում ենք, արտահանման մեջ ամենամեծ հոդվածը հանքանյութերն են՝ 32.5%, որը ցույց է տալիս ոլորտի արտահանման հումքային ուղղվածությունը: Վերջնարդյունքների ստացումը բարձր ավելացված արժեքներով կփոխի արտահանման կառուցվածքը և տնտեսության մակրո և միկրո ցուցանիշների մակարդակը:

¹ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILlists>

² ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերություն, https://www.armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf

ՀՀ մետալուրգիական և հանքագործական արտադրանքի արտահանման և ներմուծման կառուցվածքը¹

(վն. ԱՄՆ դոլար)

Հ/հ	Մաքանքի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ				ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			
		2020թ.	%-ը	2021թ	%-ը	2020թ	%-ը	2021թ	%-ը
1.	Հանքանյութեր	817.5	32.3	973.1	32.5	737.2	16.1	935.7	17.5
2.	Թանկ. քարեր, մետաղներ	368.4	14.6	323.5	10.8	143.4	3.1	247.6	4.6
3.	Մետաղներ և արտադրանք	229.0	9.1	364.2	12.2	361.0	7.9	391.4	7.3
ԸՆԴԱՄԵՆԸ		2,528	56.0	2,990	55.5	4,569	27.1	5,353	29.4

Զուլված պղնձի արտադրության ծրագիր: Արտադրության և արտահանման կառուցվածքում հումքի փոխարեն վերջնարդյունք ստանալու երկրի ծրագրերից մեկը զուլված կաթոդային պղնձի ստացումն է Սյունիքի կամ Լոռու մարզերում: ՀՀ կառավարությունը և ոլորտը կարգավորող կառույցներն ու ինստիտուտները աշխատում են Հայաստանում տարեկան մոտ 100.000 տոննա զուլված կաթոդային պղնձի արտադրություն կազմակերպելու ծրագրի շուրջ, որն ունի ներդրումային գրավչություն (չինացի ներդրողները հետքերը ված են այս նախագծով) և իրականացման ռեսուրսային հնարավորություններ: Տեխնոլոգիական ելակետային հաշվարկներով նման հզորությամբ պղնձաձուլարանի տեղական 24%-ոց պղնձի խտանյութի հումքով աշխատելու դեպքում միջին հաշվով անհրաժեշտ է մոտ 430.0 հազ. տոննա պղնձի խտանյութ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ-ում պղնձի խտանյութի արտադրության ծավալները 2018թ.-ին կազմել է 317.4 հազ. տոննա, 2019-ին՝ 400.0 հազ. տոննա, 2020թ.-ին՝ 375.6 հազ. տոննա², ապա նշված հզորությամբ պղնձաձուլարանի հայրենական հումքով ապահովվածությունը բավարար է երկրում պղնձի հաստատված պաշարների և արդյունահանման առկա տեմպերի պարագայում: Ծրագրի իրականացման թույլտվություն անհրաժեշտ է տրամադրել այն ներդրողներին, որոնք կպարտավորվեն կիրառել ժամանակակից նվազ թափոնային տեխնոլոգիաներ և կառաջնորդվեն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով: Սակայն հարկ է նշել այն հանգամանքը, որ ինչպես վկայում է միջազգային փորձը, մաքուր պղնձի ձուլումը պակաս եկամտաբեր է՝ պայմանավորված անհրաժեշտ մեծ կապիտալ ներդրումներով, բնապահպանական վերահսկողությամբ, արտոնագրման անհրաժեշտությամբ, որպեսզի մաքուր պղինձը ճանաչվի միջազգային բորսաներում և այլն:

ՀՀ-ում պղնձաձուլարանի էկոլոգիապես անվտանգ շահագործման հիմնական խնդիրներից մեկը պայմանավորված է պղնձի ստացման տեխնոլոգիայով: Պղինձ պարունակող հումքի մշակման համար կիրառում են պիրոմետալուրգիական և հիդրոմետալուրգիական պրոցեսներ: Պղնձի համաշխարհային ար-

¹ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

² ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերություն, <https://www.armstat.am/file/doc/99526873.pdf>

տաղրության մոտավորապես 85%-ը բաժին է ընկնում պիրոմետալուրգիական պրոցեսներին: Պղնձի ստացման տեխնոլոգիայի ընտրությունը կախված է մշակվող հումքի միներալոգիական կազմությունից, հիմնական բաղադրիչի՝ պղնձի պարունակությունից, ինչպես նաև ուղեկից այլ օգտակար տարրերի, այդ թվում՝ ոսկու և արծաթի կոնցենտրացիաներից¹: Հայաստանի դեպքում առավել կիրառելի է պիրոմետալուրգիական եղանակը, որի դեպքում պղնձի ստացման տեխնոլոգիական վերջնարդյունքներից մեկը ծծմբական թթուն է. 1 տոննա կաթոդային պղինձ ստանալու դեպքում առաջանում է մոտավորապես 4 տոննա ծծմբական թթու: Եթե հաշվենք 100 հազ. տոննա գտված կաթոդային պղնձի արտադրության դեպքում, ապա կստանանք տարեկան 400 հազ. տոննա ծծմբական թթու: Այսպիսի քանակությամբ առաջացած ծծմբական թթվի հետագա պահպանությունը, տեղափոխումը, իրացումը լուրջ էկոլոգիական, տրանսպորտային լոգիստիկ և մարքեթինգային խնդիր է և առայժմ վերջնական լուծում չի գտել: Խնդիրը կայանում է հետևյալում.

✓ Հայրենական շուկայում ծծմբական թթվի այդչափ պահանջարկ չկա: Այն օգտագործվում է հենց մետալուրգիայում, քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ ճյուղերում: Հարկ է առանձնացնել հայ գիտնականների կողմից առաջակված այն մեթոդը, որի դեպքում Արարատյան դաշտավայրի աղակալած հողերը մշակում են ծծմբական թթվի նոսրացրած լուծույթով որպես աղակալման դեմ պայքարի արդյունավետ միջոց: Մակայն բոլոր ուղղություններով թթվի կիրառությունը շատ անգամ փոքր է ներկայացված ծավալից: ՀՀ-ում քիմիական արդյունաբերության ոլորտի զարգացումը կարող է նպաստել խնդրի լուծմանը:

✓ Ծծմբական թթուն կարելի է տեղափոխել միայն հատուկ տարաներում՝ երկաթուղով: Հայաստանի շրջափակման պայմաններում դա հնարավոր է Վրաստանի սահմանով, սակայն վերջինս էկոլոգիական նկատառումներով ներկայումս արգելում է նման ծառայության մատուցումը իր երկաթուղով: Իրանի հետ և այլընտրանքային այլ երկաթուղային ուղիների կառուցումը կարող է լուծել տրանսպորտային լոգիստիկ խնդիրը:

✓ Ծծմբական թթվի իրացման հնարավոր շուկաները, որոնք հարևան երկրներն են, դեռևս ունեն մարքեթինգային և այլ բնույթի խնդիրներ:

Այս հիմնախնդիրը լուծելու դեպքում իրատեսական է վերականգնել Հայաստանի երբեմնի դերը որպես Անդրկովկասի գտված կաթոդային պղինձ և իր շարունակականության մեջ պղնձից արտադրվող մետալուրգիական արտադրատեսակներ արտադրող հիմնական երկիր՝ ներկայումս արտահանման ամենամեծ հողվածով պղնձի խտանյութի փոխարեն: Տեխնոլոգիական և լոգիստիկ խնդիրների լուծումը ժամանակակից նվազաթափոն տեխնոլոգիաներով կարող է կյանքի կոչել նշված ծրագիրը կայուն զարգացման սկզբունքներով,

¹ Գունավոր մետաղների մետալուրգիա: Դասագիրք/Լ. Ե. Սարգսյան, Ա. Մ. Հովհաննիսյան: ՀԱՊՀ - Եր. : Ճարտարագետ, 2018. - էջ 19-20:

այսինքն՝ էկոլոգիական գործոնի առաջնային ապահովման պայմաններում տնտեսական և սոցիալական կայուն զարգացման ապահովում:

Պղնձի ներկա բարձր գնի միտումը (տե՛ս գծ. 4) պահպանվելու դեպքում էկոլոգիապես մաքուր, բարձրարժեք տեխնոլոգիաների ներդրման պահանջը պետության կողմից չի նվազեցնի ծրագրի ներդրումային գրավչությունը և կապահովի կայուն զարգացման բնապահպանական բաղադրիչի իրացումը:



Գծապատկեր 4. Պղնձի գնի դինամիկան Լոնդոնյան բորսայում 2005-2022թթ¹

Ծրագրի իրացման դեպքում մուլտիպլիկատորի էֆեկտով կբազմապատկվեն մակրո և միկրո ցուցանիշները և ընդերքի իրական սեփականատերերը եկամուտների վերաբաշխման միջոցով կբարձրացնեն առաջին հերթին առաջնային պահանջմունքների բավարարման մակարդակը և այդպիսով կայուն զարգացման հիմնարար դրույթների իրականացման հնարավորությունը: Այլ հավասար պայմանների դեպքում 100.0 հազ. տ տարեկան արտադրողականության պարագայում պղնձի ներկայիս գնի (10252\$/տ) հաշվարկներով մետալուրգիական արդյունաբերության արտադրանքը կաճի 1մլրդ 25մլն \$-ով և ՀՆԱ-ում միայն պղնձի ոլորտի մասնաբաժինը կհասնի մոտ 8.1%-ի, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է ողջ մետալուրգիական արտադրանքի ներկայիս մասնաբաժինը:

Գիտական նորույթ: Հոդվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացման ժամանակակից խնդիրները և դրանց լուծման անհրաժեշտությունը կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում:

Եզրակացություն: Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերությունը երկրի տնտեսության առաջատար և երկարաժամկետ իրատեսական զարգացում ապահովող ոլորտ է, որը պայմանավորված է հանքահումքային հարուստ ներուժով, միջազգային շուկայում բարձր և աճող պահան-

¹ Общероссийский журнал «МЕТАЛЛЫ и ЦЕНЫ», LME (Лондонская Биржа Металлов) <http://metal4u.ru/lme/>

ջարկ ունեցող արտադրանքով, սակայն ներկայումս մետաղների ստացման ավարտուն շրջափուլերի և մետալուրգիական ավելի բարձր տեխնոլոգիական արտադրանքների բացակայությունը երկիրը զրկում է մակրո և միկրո մակարդակներում տնտեսական ու սոցիալական զարգացման պոտենցիալ աճից: Մետալուրգիական արդյունաբերությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող ճյուղերից է: Նրա երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը անհրաժեշտ է ապահովել միայն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով, այսինքն՝ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների համահունչ, փոխլրացնող և համալիր զարգացմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Հ.Ս., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղղություններն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2011.-326 էջ:
2. Ավագյան Հ.Ս., ՀՀ Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2013.-272 էջ:
3. Ավագյան Հ.Ս., Հայաստանի հանքահումքային ռեսուրսները: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2004.-432 էջ:
4. Աղաբալյան Յու. Մ., Հայաստանում երկաթահանքային և սև մետալուրգիայի արդյունաբերության ստեղծման տնտեսական և մեթոդական հետազոտումը: ՀՊՃՀ-Եր.; Ճարտարագետ, 1991թ.:
5. Գունավոր մետաղների մետալուրգիա: Դասագիրք /Լ.Ե.Սարգսյան, Ա.Մ.Հովհաննիսյան: ՀԱՊՀ -Եր: Ճարտարագետ, 2018.-300էջ:
6. Մկրտչյան Ս.Ա., Տնտեսական աճ, կայուն զարգացում; /Հիմնախնդիրներ և լուծման ուղիներ (ՀՀ Լեռնամետալուրգիական արդյունաբերության օրինակով)/ ՀՊՃՀ-Եր.: 2013-134էջ:
7. ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերություն, <https://www.armstat.am/file/doc/99526873.pdf>, https://www.armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf
8. ՀՀ վիճակագրական կոմիտե, Տվյալների բազա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_3%20Industry,%200Construction,%20trade%20and%20services_32%20Industry/IC-in-a.px/?rxid=10fe690f-50e8-4832-97d3-88cff599400a
9. ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվների համակարգ, www.armstat.am/file/doc/99526988.pdf
10. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները, http://competition.am/uploads/resources/study_mining.pdf
11. ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

12. Լոնդոնյան բորսա, Մետաղների գներ, <https://www.lme.com/Metals/Precious/LME-Gold#Trading+day+summary>
13. «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ, <http://pureironplant.am/am/>
14. Ռուսալ Արմենալ ալյումինի գործարան, <http://www.rusal.ru/>
15. Общероссийский журнал «МЕТАЛЛЫ и ЦЕНЫ», LME (Лондонская Биржа Металлов), <http://metal4u.ru/lme/>
16. Metaljournal, Политехнический журнал, Металлургия: <https://www.metaljournal.com.ua/metallurgy-3/>

References

1. Avagyan H.S., Ler'nahanqayin & metalowrgiakan ardyownaberowt'yownneri zargacman owghghowt'yownnern ow her'ankarnery' Hayastani Hanrapetowt'yownowm: Er.: HH GAA «Gitowt'yown» hr., 2011.-326 e'j:
2. Avagyan H.S., HH ler'nahanqayin ardyownaberowt'yan hanqaharstacman t'ap'onneri & dranc e'kologiakan het&anqneri gnahatowmy': Er.: HH GAA «Gitowt'yown» hr., 2013.-272 e'j:
3. Avagyan H.S., Hayastani hanqahowmqayin r'esowrsnery': Er.: HH GAA «Gitowt'yown» hr., 2004.-432 e'j:
4. Aghabalyan Yow. M., Hayastanowm erkat'ahanqayin & s& metalowrgiayi ardyownaberowt'yan steghc'man tntesakan & met'odakan hetazotowmy': НРТwH-Er.; Twartarget, 1991t':.
5. Gownavor metaghneri metalowrgia: Dasagirq /L. E. Sargsyan, A. M. Hovhanisyan: HAPH -Er. : Twartarget, 2018. -300e'j:
6. Mkrtchyan S.A., Tntesakan atw, kayown zargacowm; /Himnaxndirner & lowc'man owghiner (HH ler'nametalowrgiakan ardyownaberowt'yan o'rinakov)/ НРТwH-Er.: 2013-134e'j:
7. HH vitwakagrakan komite, Ardyownaberowt'yown, <https://www.armstat.am/file/doc/99526873.pdf>, https://www.armstat.am/file/article/sv_12_21a_121.pdf
8. HH vitwakagrakan komite, Tvyalneri baza, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services__32%20Industry/IC-in-a.px/?rxid=10fe690f-50e8-4832-97d3-88cff599400a
9. HH vitwakagrakan komite, Azgayin hashivneri hamakarg, www.armstat.am/file/doc/99526988.pdf
10. HH tntesakan mrcakcowt'yan pashtpanowt'yan petakan hand'najhohgov, Hanqardayownaberowt'yan olortowm irakanacvac' owsowmnasirowt'yan ardyownqneri', http://competition.am/uploads/resources/study_mining.pdf
11. HH petakan ekamowtneri komite, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>
12. Londonyan borsa, Metaghneri gner, <https://www.lme.com/Metals/Precious/LME-Gold#Trading+day+summary>

13. «Maqowr erkat'i gorc'aran» BBY', <http://pureironplant.am/am/>
14. R'owsal Armenal alyowmini gorc'aran, <http://www.rusal.ru/>
15. Obshherossijskij zhurnal «METALLY i CENY», LME (Londonskaja Birzha Metallov), <http://metal4u.ru/lme/>
16. Metaljournal, Politehnicheskij zhurnal, Metallurgija: <https://www.metaljournal.com.ua/metallurgy-3/>

ՀՀ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սասուն Մյասնիկի Բախշյան

Համառոտագիր:

Արդիականություն: Մետաղների արտադրությունը շարունակում է մնալ համաշխարհային տնտեսական աճն ապահովող գերակա ոլորտներից մեկը: ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը ներկայումս գտնվում է իր հնարավորությունների զարգացման ցածր մակարդակում և տիրապետելով մետաղական հանքարդյունաբերության հարուստ տեղական ներուժի, ունի զարգացման իրական հնարավորություններ: Մետալուրգիայի զարգացումը իրատեսական է կայուն զարգացման հայեցակարգի դրույթներին համապատասխան:

Նպատակը: Կատարված ուսումնասիրությունը նպատակ ունի հիմնավորել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացման ժամանակակից խնդիրները և դրանց լուծման անհրաժեշտությունը կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում:

Խնդիրները: Լուծվել են հետևյալ խնդիրները. ՀՀ տնտեսության մեջ մետալուրգիական արդյունաբերության նշանակության, տեղի, դերի, մակրո և միկրո մակարդակներով ազդեցության փաստացի ուսումնասիրություն, ոլորտում առկա խնդիրների և դրանց կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով լուծման անհրաժեշտության հիմնավորում:

Մեթոդաբանություն: Վերլուծությունն իրականացվել է վիճակագրական համեմատական վերլուծության, անալիզի և սինթեզի, կանխատեսումների, մոդելավորման, տրամաբանական մտահանգման և այլ մեթոդներով:

Վերլուծություն: Նշված նպատակին հասնելու համար իրականացվել է ՀՀ տնտեսության վրա մետալուրգիական արդյունաբերության մակրո և միկրո մակարդակներով ազդեցության փաստացի ուսումնասիրություն վերջին տարիների կտրվածքով, բացահայտվել են ճյուղում առկա խնդիրները և հիմնավորվել է դրանց լուծման անհրաժեշտությունը կայուն զարգացման դրույթներով:

Գիտական նորույթը: Հոդվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացման ժամանակակից խնդիրները և դրանց լուծման անհրաժեշտությունը կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում:

Եզրակացություն: ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը երկրի տնտեսության առաջատար և երկարաժամկետ իրատեսական զարգացում ապահովող ոլորտ է, որը պայմանավորված է հանքահումքային հարուստ ներուժով, միջազգային շուկայում բարձր և աճող պահանջարկ ունեցող արտադրանքով, սակայն ներկայումս մետաղների ստացման ավարտուն շրջափուլերի և մետալուրգիական ավելի բարձր տեխնոլոգիական արտադրանքների բացակայությունը երկիրը զրկում է մակրո և միկրո մակարդակներում տնտեսական ու սոցիալական զարգացման պոտենցիալ աճից: Մետալուրգիական արդյունաբերությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող ճյուղերից է: Նրա երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը անհրաժեշտ է ապահովել միայն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով, այսինքն՝ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների համահունչ, փոխլրացնող և համալիր զարգացմամբ:

Գիրառման հնարավորությունը: Ստացված արդյունքներն ունեն կիրառական նշանակություն և կարող են օգտակար լինել մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման քաղաքականության ու ծրագրերի մշակման համար՝ մակրո և միկրո մակարդակներում:

Բանալի բառեր՝ մետալուրգիական արդյունաբերություն, կայուն զարգացում, մետաղներ, կոմպոզիտային նյութեր, մետաղների գներ, արտադրության կառուցվածք, մետաղների արտադրության լրիվ շրջափուլ, մետալուրգիական արտադրանքի շուկա, կանխատեսում:

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ МЕТАЛЛУРГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Сасун Мясникович Бахшян

Аннотация:

Актуальность статьи. Производство металлов остается одной из приоритетных областей, обеспечивающих экономический рост. Metallургическая промышленность Республики Армения в настоящее время находится на низком уровне развития своих возможностей и, обладая богатым местным потенциалом добычи металлов, имеет реальные возможности для развития. Развитие металлургии реально согласно положениям концепции устойчивого развития.

Цель. Целью исследования является обоснование актуальных проблем развития металлургической промышленности РА и необходимость их решения в рамках концепции устойчивого развития.

Задачи. Решены следующие задачи: фактическое исследование значения, места, роли, влияния металлургической промышленности на макро- микроуровне в экономике РА, обоснование существующих проблем в этой области и необходимость их решения в рамках концепции устойчивого развития.

Методология. Исследование проводилось методами статистического сравнительного анализа, анализа-синтеза, прогнозирования, моделирования, логического рассуждения и другими методами.

Анализ. Для достижения поставленной цели было проведено фактическое исследование влияния металлургической промышленности на макро- и микроуровнях на экономику Армении за последние годы, выявлены проблемы в отрасли и обоснована необходимость их решения положениями устойчивого развития.

Научная новизна. В результате исследований, проведенных в статье, обоснованы современные проблемы развития металлургической промышленности РА и необходимость их решения в рамках концепции устойчивого развития.

Выводы. Металлургическая промышленность РА является одной из ведущих отраслей, обеспечивающих долгосрочное реальное развитие экономики страны, что обусловлено ее богатым минерально-сырьевым потенциалом, продукцией с быстрорастущим спросом на международном рынке, однако отсутствие завершенных циклов производства металлов и более высокотехнологичных металлургических продуктов лишает страну потенциального экономического и социального развития на макро- и микроуровнях. Металлургическая промышленность является одной из отраслей, оказывающих негативное воздействие на окружающую среду. Ее долгосрочное и эффективное развитие должно быть обеспечено только положениями концепции устойчивого развития, т.е. с гармоничным, взаимодополняющим и комплексным развитием экономической, экологической и социальной составляющих устойчивого развития.

Возможности применения. Полученные результаты имеют практическое значение, могут быть полезны для разработки политики и программ устойчивого развития металлургической отрасли на макро- и микроуровне.

Ключевые слова: металлургическая промышленность, устойчивое развитие, металлы, композиционные материалы, цены на металлы, структура производства, завершённый цикл производства металла, рынок металлургической продукции, прогнозирование.

PROBLEMS OF SUSTAINABLE DEVELOPMENT OF THE METALLURGICAL INDUSTRY OF RA

Sasun Myasnik Bakhshyan

Abstract.

The relevance of the article. Metal production keeps remaining one of the key providers of global economic growth. The RA metallurgical industry is currently at a low-level development of its potentiality but has real opportunities for development considering its rich local potential in the metal mining industry. The development of metallurgy is realistic in accordance with the provisions of the concept of sustainable development.

Purpose. The purpose of the study is to justify the current problem of development of metallurgical solutions RA and the necessity of their solution within the framework of concepts of sustainable development.

Tasks. The following tasks have been solved: an actual study of the significance, place, role, influence of the metallurgical industry at the macro-micro level in the economy of the Republic of Armenia, justification of existing problems in this area and the need to solve them within the framework of the concept of sustainable development.

Methodology. In the study method, statistical comparative analysis, analysis-synthesis, forecasting, modeling, logical reasoning and other methods were conducted.

Analysis. In order to achieve this goal, an actual study of the impact of the metallurgical industry at the macro and micro levels in the Armenian economy in recent years was conducted, problems in the industry were identified and the need for their solution was justified by the provisions of sustainable development.

Scientific novelty. In the result are the findings, implemented in the article, justified by the modern problems of development of metallurgical solutions RA and the necessity of their solutions within the framework of the concepts of sustainable development.

Conclusions. The metallurgical industry of the Republic of Armenia is one of the leading industries that ensures the long-term real development of the country's economy, which is due to its rich mineral and raw material potential, products with a rapidly growing demand on the international market, however, the lack of completed metal production cycles and more high-tech metallurgical products deprives the country of potential economic and social development at the macro and micro levels.

The metallurgical industry is one of the industries that have a negative impact on the environment; its long-term and effective development should be ensured only by the provisions of the concept of sustainable development, i.e. with harmonious, complementary and integrated development of the economic, environmental and social components of sustainable development.

Possibilities of application. The results obtained are of practical importance and can be useful for developing policies and programs for the sustainable development of the metallurgical industry at macro and micro levels.

Keywords: metallurgical industry, sustainable development, metals, composite materials, metal prices, production structure, full cycle of metal production, metallurgical product market, forecasting.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝

Սվետլանա Արկադիի Դալլաքյան Սարգիս Հարությունի Սարգսյան

Հոդվածը ստացվել է՝ 31.03.2022թ., գրայնստման ուղարկվել է՝ 31.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Համաշխարհային զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է նոր՝ ինովացիոն տիպի տնտեսությունների ձևավորմամբ, որտեղ գիտելիքի հատվածն ունի որոշիչ դեր, իսկ գիտելիքի արտադրությունը տնտեսական աճի կարևորագույն աղբյուր է: Ինովացիոն տնտեսություններին բնորոշ են մի շարք հիմնարար հատկանիշներ: Մասնավորապես, տնտեսությունը համարվում է այդպիսին, եթե հասարակության մեջ տեղի են ունենում հետևյալ գործընթացները. կարևորվում է գիտելիքների առանձնահատուկ դերը, իրականացվում է կառավարման և արտադրության բոլոր ոլորտների և ճյուղերի ավտոմատացում և համակարգչայնացում, թվայնացում, որի արդյունքում ապահովվում է ազգային տեղեկատվական ռեսուրսների ստեղծումն այն ծավալով, որն անհրաժեշտ է անընդհատ աճող գիտատեխնիկական առաջընթացի ապահովման համար²: Նորարարական տնտեսության նոր տեսակն առանձնանում է արտադրության և հարաբերությունների համակարգում թվային տեխնոլոգիաների, գիտական նվաճումների, աշխատանքի բաժանման, համագործակցության և գլոբալիզացիայի կիրառմամբ: Տնտեսության թվայնացումը գիտատեխնիկական առաջընթացի զարգացման ժամանակակից փուլն է և մրցունակության ու տնտեսական աճի արդիական շարժիչ ուժը:

Հետազոտության արդիականությունը: Արդիականության հիմնավորումը անհրաժեշտ է սկսել նրանից, որ նորարարական տնտեսությունը պետք է դիտարկել որպես նորարարական գիտության և բարձր տեխնոլոգիաների ինտեգրման վրա հիմնված տնտեսական համակարգ: Իսկ թվայնացումը, որը նորարարական տնտեսության բաղկացուցիչ մասն է, դառնում է համաշխարհային տնտեսության զարգացման հիմնարար միտում՝ փոխելով դրա կառուցվածքը և տեղափոխելով այն նոր որակական վիճակի, երբ թվային տեխնոլոգիաները

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ «21T-5B234» ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

² Даллакян С. А. «Инновационная экономика РА: перспективы, возможности, тенденции» Монография.- Ер.: Институт экономики им. М. Котаяна НАН РА, 2022.- стр 174

գերիշխում են տնտեսության և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Տնտեսական աճն էլ ավելի է հիմնվում տեխնոլոգիաների և գիտելիքի վրա՝ դրանք դարձնելով հիմնական արտադրող ուժ: Տնտեսական աճի տեմպերի վրա տնտեսության տարբեր ոլորտներում նորարարությունների համատարած ներդրման ազդեցության մասին պատկերացում կարելի է կազմել՝ վերլուծելով դրանց յուրահատկություններն ու առանձնահատկությունները տարբեր ժամանակաշրջաններում: Տնտեսության թվայնացման գործընթացից անմասն չի կարող մնալ նաև Հայաստանը, որի մասին է վկայում նաև այն, որ ՀՀ կառավարությունն իր ծրագրերում մեծ տեղ է տալիս բարձր տեխնոլոգիաներին և թվայնացման գործընթացներին: Դրա մասին է վկայում ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 7-րդ բաժնի «Բարձր տեխնոլոգիաները, թվայնացումը և ռազմարդյունաբերությունը» բաժնի 7.2 ենթաբաժինը՝ «Կապ և թվայնացում», ինչպես նաև ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2.3 «բարձր տեխնոլոգիաներ» ենթաբաժնում ներառված «թվայնացում» ենթահարցը, որտեղ ներկայացվում է, որ թվային արդիական միջավայրի ստեղծումը Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունի:

Հողվածի նպատակն է պարզաբանել թվայնացման առանձնահատկությունները ինովացիոն տնտեսության համատեքստում և վերլուծել ՀՀ թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր, որի հիման վրա ներկայացնել ՀՀ տնտեսության թվայնացման գործընթացները:

Ներկայացված նպատակների իրագործման համար առաջ ենք քաշել հետևյալ **խնդիրները**.

- ներկայացնել «թվային տնտեսության» եզրույթի տարբեր մեկնաբանումներ,
- վերլուծել թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր,
- պարզաբանել Հայաստանի տնտեսության թվայնացման ինստիտուցիոնալ հիմքերը,
- սահմանել թվային տնտեսության նպատակները,
- մշակել ՀՀ տնտեսության թվային օրակարգի մոտեցում:

Գրականության ակնարկ: Առաջիններից մեկն, ով օգտագործեց «թվային տնտեսություն» եզրույթը, Դ. Թափսկոտն էր իր «The Digital Economy: Promise and Peril in the Age of Networked Intelligence» աշխատությունում: Ի սկզբանե թվային տնտեսությունն ասելով՝ ենթադրվում էր «ցանցային ինտելեկտի դարաշրջանի տնտեսություն», որը հիմնված է «թվային ձևաչափով ցանկացած տեսակի տեղեկատվության հիման վրա ... որը փոխանցվում է ցանցային տեխնոլոգիաների միջոցով»¹: «Թվային տնտեսություն» եզրույթը կիրառվել է համեմատաբար վերջերս՝ 1995 թվականին, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (ՄՏԻ) հայտնի ամերիկացի գիտնական Ն. Նեգրոպոնտեի կողմից՝ կապված տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ինտենսիվ զարգացման, երկրորդ սերնդի ինֆորմատիկացիայի սկզբի հետ²: Ըստ The Boston

¹ Tapscott D. (2015) The Digital Economy, Anniversary Edition: Rethinking Promise and Peril in the Age of Networked Intelligence. New York: McGraw-Hill, P. 16

² Negroponte, N. Being Digital / N. Negroponte.— NY: Knopf, 1995.— p. 214

Consulting Group-ի փորձագետների՝ «որոշ երկրների համար թվային տնտեսությունը թվային էկոհամակարգի էվոլյուցիոն զարգացման տրամաբանական շարունակությունն է և հենց այն «ստեղծագործական տնտեսությունը», «նոր տնտեսությունը» լիարժեք իրացնելու հնարավորությունն է՝ փոխկապակցման համակարգը, որտեղ առցանց և առերես սահմանը դառնում է պայմանական, իսկ պետության, բիզնեսի և քաղաքացիների ներգրավվածության մակարդակը հասնում է 100%-ի: Սա մոտ ապագա է առաջատար երկրների համար: Զարգացող երկրների համար թվայնացումը հնարավորություն է ընձեռում պահպանել իրական մրցունակությունը, ինչպես նաև կայունությունը երկարաժամկետ հեռանկարում»¹: Ըստ ՏՀԶԿ փորձագետների «Թվային տնտեսությունը տեղեկատվության և հաղորդակցության ոլորտում նոր ընդհանուր նշանակության տեխնոլոգիաների վերափոխման ազդեցությունների արդյունք է»²: Մ.Լ. Կալուժսկիի սահմանման համաձայն՝ «թվային տնտեսությունը տնտեսական գործունեության հաղորդակցման միջավայր է ինտերնետ ցանցում, ինչպես նաև դրա իրականացման ձևերը, մեթոդները, գործիքներն ու արդյունքները»³: Մի շարք հետազոտությունների հեղինակներ թվային տնտեսությունը սահմանում են որպես սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգը փոխակերպող տեխնոլոգիաների ամբողջություն⁴: Մի քանի գիտնականներ թվային տնտեսությունը նույնացնում են որպես տնտեսության նորարարական աճը խթանող բարձր տեխնոլոգիական տարրերի համակարգ⁵: Ըստ Ա. Ուրմացիի «թվային տնտեսությունը» եզրույթի մեկնաբանումը ունի երկու մոտեցում. ըստ առաջին դասական մոտեցանքի՝ թվային տնտեսությունը թվային տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսություն է, որոնք բնութագրում են բացառապես էլեկտրոնային ապրանքների և ծառայությունների ոլորտը՝ հեռաբժշկությունը, հեռավար ուսուցումը, մեդիա կոնտենտի վաճառքը և այլն: Երկրորդ մոտեցումն ընդլայնված է՝ թվային տնտեսությունը իրենից ենթադրում է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ տնտեսական արտադրությունն է⁶:

Մեր կարծիքով թվային տնտեսությունն իրենից ներկայացնում է բարդ և բավականին տարրողունակ հասկացություն, որի զարգացումը հիմնված է գծապատկեր 1-ում ներկայացված առանցքային բաղադրիչների վրա:

¹ Вайбур Я.Д., Перапечка С. Казахстан на пути к цифровой экономике , BCG REVIEW. Обзорение. Июнь 2017. Специальный выпуск: Казахстан // The Boston Consulting Group. https://web-assets.bcg.com/img-src/BCG%20Kazakhstan%20Review%20June_tcm9-247797.pdf Дата доступа: 18.03.2022.


² OECD Digital Economy Outlook 2015, 2016, 2017 // OECD Publishing, Paris.

³ Калужский, М.Л. Маркетинговые сети в электронной коммерции: институциональный подход / М.Л. Калужский.— М.: Директ-Медиа, 2014. стр 75

⁴ Бабкин А.В. Цифровая трансформация экономики и промышленности: сборник трудов научно-практической конференции с зарубежным участием. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2019. – 780 с

⁵ Akatkin Y., Karpov O., Konyavsky V., Yasinovskaya E. Digital economy: Conceptual architecture of a digital economic sector ecosystem // Business Informatics. – 2017. – № 4. – p. 17–28.

⁶ Ковалев М.М. , Головенчи Г.Г., Цифровая экономика — шанс для Беларуси. МОНОГРАФИЯ / Минск Издательский центр БГУ, 2018, стр 24



Գծապատկեր 1. Թվային տնտեսության հիմնական բաղադրիչները¹

Մեթոդաբանություն Ներկա պահին առկա են մի շարք մեթոդներ, որոնց հիման վրա ուսումնասիրվում են թվային տնտեսության զարգացումը՝ հիմնված միջազգային համաթվերի և ենթահամաթվերի վրա: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. գործիքներ՝ մշակված թվային տնտեսության զարգացման հատուկ ցուցանիշների չափման համար,
2. վարկանիշներ՝ հիմնված են ամբողջությամբ կամ մասամբ վիճակագրական տվյալների վրա, որոնք ունեն տեխնիկական բնույթ,
3. վարկանիշներ, որոնք օգտագործում են խառը մոտեցում, այսինքն՝ համադրվում են վիճակագրական տվյալները գնահատական տվող ցուցանիշների հետ:

Մեր հետազոտության համար օգտագործել ենք վերը նշված երեք մեթոդական մոտեցումներն էլ: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմք են հանդիսացել արտասահմանյան հեղինակների աշխատություններն ու վերլուծությունները, տարբեր հեղինակների գիտական հոդվածներն ու միջազգային գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները: Կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական վերլուծության, պատճառահետևանքային կապերի բացահայտման մեթոդներ: Տեղեկատվական հիմքը Համաշխարհային բանկն է, արժույթի միջազգային ֆոնդը և ՀՀ կառավարության պաշտոնական կայքը:

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ներկայացված մեկնաբանությունները

Վերլուծություն: Գծապատկեր 1-ում ներկայացված թվային տնտեսության հիմնական բաղադրիչներից էլնելով կարող ենք սահմանել թվային տնտեսության հիմնական նպատակները՝

- հասարակական կյանքի բոլոր ոլորտներում թվային փոխակերպումների հաշվին տնտեսության, ձեռնարկատիրական կառույցների և քաղաքացիների մրցունակության բարձրացում,
- քաղաքացիների և ձեռնարկատիրական կառույցների աճող ներգրավվածությունը թվային տարածքում աշխատելու համար,
- թվային տարածքում սուբյեկտների փոխազդեցությունն ապահովող ենթակառուցվածքի ստեղծում,
- տնտեսվարող սուբյեկտների համար կայուն թվային ձեռնարկատիրական էկոհամակարգերի առաջացում,
- ձեռնարկատիրական կառույցների և քաղաքացիների ծախսերի նվազեցում պետության և իրենց միջև փոխգործակցության ժամանակ:

Վերը նշված նպատակների իրագործման համար յուրաքանչյուր երկիր պետք է ունենան ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքեր: ՀՀ կառավարությանն առընթեր Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնը դեռևս 2017 թվականին մշակել էր «Հայաստանի թվային օրակարգ 2030» երկարաժամկետ ռազմավարական փաստաթղթի նախագիծը: Այնուհետև 2018թ. հունվարին ներկայացվեց և քննարկվեց «Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ» շրջանակային փաստաթղթի նախագիծն, որի շնորհիվ թվային փոխակերպման միջոցով Հայաստանը պետք է դառնա միջազգայնորեն մրցունակ երկիր: Հայաստանի թվային փոխակերպման նախագծով սահմանվել էին հիմնական 6 ուղղություններ, որոնց հիման վրա ծավալվելու էին Հայաստանի թվային փոխակերպմանն ուղղված հետագա գործողությունները¹: Եվ վերջապես, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N 183-Լ որոշման համաձայն հաստատվեց «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ.» փաստաթուղթը, որը բաղկացած է վեց գլուխներից և որտեղ առանձնացված է ռազմավարության նպատակը: Հայաստանի թվայնացման ռազմավարությունը նպատակ ունի ապահովել կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը, մասնավորապես ուղղված լինելով՝

1. *արդյունավետ, արագ, թափանցիկ և տվյալահեն պետական կառավարմանը,*
2. *թվային հարթակների ու խելացի լուծումների միջոցով տնտեսության մասնավոր հատվածի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը,*
3. *թվային հմտություններին տիրապետող՝ ապագայի տնտեսությանը պատրաստ, աշխատուժի ձևավորմանը, և թվային լուծումների լայն կիրառմանը հանրության կողմից:²*

Ռազմավարական փաստաթղթում առանձնացված են ռազմավարական երեք հենասյուններ՝ պետություն, տնտեսություն և հասարակություն, ինչպես

¹ ՀՀ կառավարության պաշտոնական կայք՝ <https://www.gov.am/am/news/item/13412/>

² ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 - Լ որոշում, Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ., էջ 8

նան ռազմավարության իրագործման հիմնարար պայմանները՝ օրենսդրական դաշտ, կրթություն(թվային հմտություններ), ենթակառուցվածքներ, տվյալների քաղաքականություն, կիրառական տեխնոլոգիաներ¹: Հայաստանի թվայնացման ռազմավարության մեջ առանձնացված են նաև արդյունքային ցուցանիշներ, որտեղ արտացոլված է Էլեկտրոնային կառավարման զարգացման համաթիվը: Մակայն պետք է նշել, որ արդյունքային ցուցանիշների մեջ իրենց ուրույն տեղն պետք է գտնեն նաև այլ համաթիվեր և ենթահամաթիվեր, որոնք մանրամասնորեն բնութագրում են տնտեսության թվայնացումը: Մեր հետազոտության մեջ կներկայացնենք մի շարք համաթիվեր, որոնք հանգամանորեն բնութագրում են Հայաստանի թվային տնտեսությունը և որոնց վերլուծության շնորհիվ կարող ենք կատարել եզրահանգումներ և մշակել Հայաստանի թվային օրակարգը:

Այս կամ այն երկրի թվայնացման մակարդակը գնահատելու համար համաշխարհային տնտեսության մեջ առանձնացնում են մի շարք ցուցանիշներ և համաթիվեր (ինդեքսներ): Հետազոտության մեջ ներկայացվել են այն հիմնական համաթիվերը, որոնք բնութագրում են տնտեսության թվայնացումը առհասարակ: Աշխարհում հաշվարկվող տնտեսության թվայնացումը բնութագրող համաթիվերից ոչ բոլորն են հաշվարկվում Հայաստանի համար, ինչպես նաև կան որոշները, որոնք էլ չեն հաշվարկվել Քովիդ-19-ից հետո, սակայն այնուհանդերձ դրանց մասին կխոսվի մինչքովիդյան թվերով: Տնտեսության թվայնացումը բնութագրող համաթիվեր են՝

1. Թվային տնտեսության և հասարակության համաթիվը (DESI) բազմաբաղադրյալ ինդեքս, որը ՀՀ-ի համար չի հաշվարկվում: DESI ամփոփում է Եվրոպայում թվային տեխնոլոգիաների արդյունավետությանը վերաբերող համապատասխան ցուցանիշներն ու հետևում է թվային մրցունակության հարթությունում ԵՄ անդամ պետությունների զարգացմանը: DESI համաթիվն անդրադառնում է հինգ հիմնական ոլորտների. կապ, մարդկային կապիտալ, ինտերնետի օգտագործում, թվային տեխնոլոգիաների ինտեգրում և թվային հանրային ծառայություններ²: Վերջինս բնութագրվում է սոցիալական ուղղվածությամբ և որում ավելի քիչ են հաշվի առնված գործարարության և արդյունաբերության թվայնացման գործընթացները:

2. Թվային մրցունակության համաթիվ (DSR), որը հաշվարկվում է 50 ցուցանիշների հիման վրա, որոնք խմբավորված են երեք ենթահամաթիվերում՝ գիտելիք (տաղանդներ, կրթություն և հմտություններ, գիտական ներուժ), տեխնոլոգիաներ (կարգավորող միջավայր, կապիտալ, տեխնոլոգիական բազա), պատրաստվածություն ապագային (ադապտացիոն մոտեցումներ, բիզնեսի ճկունություն, ՏՀՏ ներդրում): Վերջինս ՀՀ-ի համար չի հաշվարկվում և 2021 թվականին թվային մրցունակությամբ ամենամրցունակ 5 երկրներն են իրենց

¹ Նույն տեղում

² Digital Economy and Society Index (DESI) 2020, p.15, <https://eufordigital.eu/wp-content/uploads/2020/06/DESI2020Thematicchapters-FullEuropeanAnalysis.pdf> Last Update 24.03.2022

ցուցանիշներով՝ ԱՄՆ (100), Հնկոնգ (92), Շվեդիան (89), Գերմանիան(87) և Մին-գապուրը(85)¹:

3. **Միջազգային հեռահաղորդակցության զարգացման համաթիվ (ICT development index)** բնութագրում է աշխարհի երկրների նվաճումները տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման տեսակետից, որը հաշվարկվում է թվային տեխնոլոգիաների տեխնիկական բնութագրիչների զարգացվածության հիման վրա, որոնք պարունակում են 11 ցուցանիշներ՝ բաժանված 3 ենթահամաթվերի, որոնց միջոցով չափվում են տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների մատչելիության և ենթակառուցվածքի զարգացման մակարդակը: ICT վերջին անգամ հաշվարկվել է 2017 թվականին և ԵԱՏՄ երկրները 2016 և 2017 թթ.-ներին համապատասխանաբար զբաղեցրել են հետևյալ դիրքերը. Հայաստանը 2016թ. զբաղեցրել է 75-րդ տեղը, 2017-ին՝ 74-րդ դիրքը, ՌԴ 2016թ. 45-րդ տեղը, 2017-ին՝ 74-րդը, Ղազախստանը՝ 109-րդ և 110-րդը տեղերը, Բելառուսը՝ և՛ 2016 և՛ 2017-ին 32-րդ տեղը, Ղրղզստանը՝ 109ր 110-րդ տեղը 176 երկրների մեջ²: Ինչպես նկատում ենք այս համաթիվով Հայաստանի դիրքը այնքան էլ հուսադրող չի:

4. **Թվային (ցանցային) պատրաստվածության (ապահովվածության) համաթիվը (NRI)** չափում է տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը, ներառում է 53 ցուցանիշ, որոնք համախմբված են 10 խմբի մեջ՝ արտահայտվելով 4 ենթահամաթվերում՝ տեխնոլոգիաներ, մարդիկ, կառավարում, ազդեցություն:

Աղյուսակ 1

Հայաստանի թվային պատրաստվածության համաթիվ (NRI), 2019-2021թթ.³

ԹՎԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ(NRI)											
2019				2020				2021			
121 երկրների մեջ 62-րդ տեղում				134 երկրների մեջ 55-րդ տեղում				130 երկրների մեջ 60-րդ տեղում			
Տեխնոլոգիաներ	Մարդիկ	Կառավարում	Ազդեցություն	Տեխնոլոգիաներ	Մարդիկ	Կառավարում	Ազդեցություն	Տեխնոլոգիաներ	Մարդիկ	Կառավարում	Ազդեցություն
53	54	81	70	42	42	76	65	58	67	72	60

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ Հայաստանը թվային պատրաստվածության համաթիվով ունենում է դրական միտումներ, մասնավորապես

¹ MD World Digital Competitiveness Ranking Report 2021 , p. 34 , Last Update 23.03.2022

<https://www.imd.org/centers/world-competitiveness-center/rankings/world-digital-competitiveness/>

² <https://www.itu.int/net4/ITU-D/idi/2017/index.html>, Last Update 28.03.2022

³ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով՝ The Network Readiness Index 2019,2020, 2021-ի տվյալները

2020թ.-ին 2019-ի համեմատ, իսկ 2021թ.-ին 2020թ-ի համեմատ դիրքի նվազում է ունեցել, բայց այն 2019թ. համեմատ ևս դիրքի բարելավում է արձանագրել: Սակայն արձանագրենք նաև, որ բոլոր երեք տարիներին էլ 3-րդ՝ «կառավարում» ենթահամաթվի մասով զբաղեցնում ենք ոչ բարվոք դիրք (81, 76, 72)՝ մյուս երեք ենթահամաթվերի հետ համեմատած: Եթե վերլուծենք 2021թ., ապա «կառավարում» ենթահամաթվի մեջ մտնող ենթացուցանիշները՝ վստահությունը, կարգավորումը և ներառում են, որոնցից «վստահությունը» ունի բոլոր ցուցանիշներից վատագույն դիրքը՝ 90-րդը, որը ձևավորվում է կիրքերանվտանգության (102-րդ տեղ), ինտերնետ ծառայության անվտանգության (103-րդ) և օրենսդրական կարգավորումներ (104-րդ) ցուցանիշներով: Հարկ է փաստել, որ 53 ենթացուցանիշներից ոչ մեկ այսպիսի վատագույն դիրք չունի: Վերջինից կարող ենք հետևություն անել, որ Հայաստանի թվային պատրաստվածությունն ունի լուրջ անվտանգային խնդիրներ, որոնք մեր նման երկրի համար, որը գտնվում է պատերազմական իրավիճակում ազգային անվտանգության կարող են հանգեցնել, քանի որ 21-րդ դարում թվայնացված է ամեն ինչ՝ սկսած բանկային համակարգից վերջացրած պաշտպանությունով:

5. **Էլեկտրոնային կառավարման զարգացման համաթիվը (EGDI)** երեք բաղկացուցիչ ենթահամաթվերի՝ առցանց ծառայությունների մասշտաբ և որակ (ԱՕՄՈ), հեռահաղորդակցական ենթակառուցվածքների (ՀԵ) և մարդկային կապիտալի (ՄԿ) կշռված միջինն է:

«Առցանց ծառայությունների մասշտաբ և որակ» ենթահամաթվի շրջանակներում ուսումնասիրվում են ազգային կառավարությունների կայքերը, ինչպես նաև կրթության, աշխատանքի, սոցիալական ապահովության, առողջապահության և ֆինանսների նախարարությունների կայքերը ու դրանց հետ կապված հարթակները:

«Հեռահաղորդակցական ենթակառուցվածքների» ենթահամաթիվը հաշվարկվում է հինգ ինդիկատորների հիման վրա՝

- համակարգիչների թիվը՝ 100 մարդու հաշվով
- ինտերնետ օգտագործողների թիվը՝ 100 մարդու հաշվով
- հեռախոսային գծերի թիվը՝ 100 մարդու հաշվով
- շարժական հեռախոսների թիվը՝ 100 մարդու հաշվով
- լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թիվը՝ 100 մարդու հաշվով:

Եվ վերջին «մարդկային կապիտալ» ենթահամաթիվը պարունակում է գնահատման երկու ուղղություն՝ մեծահասակ բնակչության գրագիտության և մակարդակի ինդեքսը և սովորողների ընդհանուր մասնաբաժնի ինդեքսը: Մարդկային կապիտալի ինդեքս = $2/3$ մեծահասակ բնակչության գրագիտության մակարդակի ինդեքս + $1/3$ սովորողների ընդհանուր մասնաբաժնի ինդեքս: ԷԿՁՀ բնութագրվում է 0-1 միջակայքում ընկնող ցուցանիշով, հրապարակվում երկու տարին մեկ անգամ և գնահատվում է 4 մակարդակով՝ ցածր, միջին, բարձր, շատ բարձր: Որքան ԷԿՁՀ բնութագրող ցուցանիշը մոտ է 1-ին այնքան այդ երկրի էլեկտրոնային կառավարումը առավել զարգացած է: Այսպես.

- 2016թ. ՀՀ զբաղեցնում էր 87-րդ տեղը՝ 0.5179 ցուցանիշով,

- 2018թ. ՀՀ զբաղեցում էր 87-րդ տեղը՝ 0.5944 ցուցանիշով,
- 2020թ.-ին՝ 68-րդ տեղը՝ 0.7136 ցուցանիշով:

Ինչպես նկատում ենք Հայաստանը 2018թ.-ի համեմատ իր դիրքերը բարելավել է 19 կետով՝ 193 երկրների շարքում զբաղեցնելով 68-րդ տեղը:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ երկրների Էլեկտրոնային կառավարման զարգացման համաթիվը (ԷԿՉՀ) և դիրքը 193 երկրների շարքում, 2020թ.-ին¹

ԵՐԿԻՐ	ԴԻՐՔԸ 193 ԵՐԿՐՆԵՐԻ ՄԵՋ	ԷԿՉՀ/EGDI	ԱԾՄՈ/OSI	ՀԵՀ/ TII	ՄԿՀ/ HRI
Հայաստան	68	0.7	0.7	0.8	1
Բելառուս	40	0.8	0.7	0.8	0.8
Ղազախստան	29	0.8	0.9	0.7	0.8
Ղրղրգստան	83	0.6	0.6	0.5	0.7
Ռուսաստանի Դաշնություն	36	0.8	0.7	0.8	0.8
Տաջիկստան	133	0.6	0.3	0.3	0.7

Ինչպես երևում է աղյուսակից 2-ից ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանն ունի բավական առաջադիմական դիրք ՌԴ-ից և Ղազախստանից հետո: «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ.» փաստաթղթի Հայաստանի թվայնացման ռազմավարության արդյունքային ցուցանիշների մեջ կանխատեսվում է, որ վերոնշյալ համաթիվով Հայաստանը 2022թ.-ին զբաղեցնելու է 52-րդ տեղը, իսկ 2024թ.-ին՝ 34-րդ տեղը²: Աղյուսակ 1-ում ներկայացված են **ԷԿՉՀ համաթիվը և երեք ենթահամաթիվերը՝ ԱԾՄՈ, ՀԵՀ, ՄԿՀ, Հայաստանի համար ամենաբարձր ցուցանիշը «մարդկային կապիտալի» ենթահամաթիվն է 1 արժեքով, որը չունեն ոչ մի ԵԱՏՄ երկիր: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ դեպի ծով ելք չունեցող երկրների շարքում 2020 թվականի տվյալներով Հայաստանը աշխարհում երկրորդն է՝ զիջելով միայն Ղազախստանին³:**

6. **Թվային տեխնոլոգիաների տարածման համաթիվը (DAI)** բնութագրում է թվային ենթակառուցվածքների հասանելիությունը և զարգացվածությունը, որն իր մեջ ներառում է 3 ենթահամաթիվ՝ բնակչության կյանքում թվային տեխնո-

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակից կողմից՝ հիմք ընդունելով United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development,

[https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20\(Full%20Report\).pdf](https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20(Full%20Report).pdf)

Last Update 28.03.2022

² ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N183-Լ որոշման «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ.», էջ 26, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>

³ United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58

լոգիաների տարածվածություն, պետական գործընթացների թվայնացման մակարդակ, բիզնես գործընթացների թվայնացման մակարդակ: DAI ինդեքսը հաշվարկվում է 180 երկրների համար, և իրենից ներկայացնում է 0-ից մինչև 1-ն ընկած միջակայքում թիվ: Որքան մեծ է այդ թիվը, այնքան ավելի բարձր է թվայնացման մակարդակը տվյալ երկրում: Այս պահի դրությամբ համաթիվը հաշվարկված է 2014թ և 2016թ. համար¹: 2016թ. Հայաստանը թվային տեխնոլոգիաների տարածման մակարդակով զբաղեցնում էր 60-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների շարքում, իսկ 2014թ.՝ 50-րդ տեղ: Նպատակահարմար չէ այն առավել մանրամասն վերլուծության ենթարկել, քանի թվայնացման գործընթացները շատ արագ են զարգանում և 6 տարի առաջ ներկայացվող ցուցանիշները չեն կարող իրական պատկեր ներկայացնել:

7. **Կյանքի թվային որակի համաթվում (DQLI)** արտացոլված է այն, որ բնակչության կենսամակարդակում իրենց ուրույն տեղն ունեն թվային տեխնոլոգիաների և թվայնացման գործընթացների ներթափանցումը մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտներ: DQLI բաղկացած է 5 հենասյուներից՝ համացանցին հասանելիություն, համացանցի որակ, էլեկտրոնային ենթակառուցվածք, էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային անվտանգությունը: 2020 թվականի համար համաթիվը հաշվարկվել է 85 երկրների համար և ԵԱՏՄ երկրներից Բելառուսի և Ղազախստանի համար հաշվարկ առակա չէ: Այս համատեքստում Հայաստանը ունի վատագույն դիրք՝ զբաղեցնելով՝ 67-րդ տեղը, ՌԴ՝ 42-րդ տեղը, իսկ Ղազախստանը՝ 47-րդը²: 2021 թվականին Հայաստանի դիրքը ավելի է վատթարացրել՝ զբաղեցնելով 81-րդ տեղը³: Նշված անբարենպաստ դիրքի պատճառներից են՝ համացանցին հասանելիությունը և էլեկտրոնային անվտանգությունը: Համեմատաբար առավել բարենպաստ վիճակ է համացանցի որակի և էլեկտրոնային ենթակառուցվածքների և էլեկտրոնային կառավարման առումով:

8. **Կիբեռանվտանգության համաթիվ (GCI):** Այս համաթվի հաշվարկման նպատակն է երկրներին ուղղորդել բացահայտել կիբեռանվտանգության հարթակում բարելավման ոլորտները, որոնք դառնում են պատճառ բազմաթիվ կիբեռհարձակումների համար: Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների՝ (ՄՀՏ, ITU) 2021 թվականին կիբեռհանցագործությունների արդյունքում առաջացող վնասները աշխարհում գնահատվում են 6 տրիլիոն դոլար, իսկ 2025թ. այն կկազմի 10 տրիլիոն դոլար⁴: ԸՍՏ ՄՀՄ տվյալների 2018թ.-ին ՀՀ-ում կիբեռանվտանգության մակարդակը կազմել է 49.5% (79-րդը 192 երկրների շարքում)⁵, իսկ 2020թ. Հայաստանը ավելի է վատթարացրել իր դիրքը

¹ Համաշխարհային բանկի՝ <https://www.worldbank.org/en/publication/wdr2016/Digital-Adoption-Index>. Last Update 26.03.2022

² <https://surfshark.com/dql2020> Last Update 25.03.2022

³ <https://surfshark.com/dql2021>, Last Update 24.03.2022


⁴ <https://cybersecurityventures.com/hackerpocalypse-cybercrime-report-2016/>

⁵ Global Cybersecurity index, ITU 2018 , p.64, Last Update 28.03.2022

https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2018-PDF-E.pdf

և հայտնվել 90-րդ մակարդակում՝ 182 երկրների շարքում¹: Սա շատ անհանգստացնող է, քանի որ Հայաստանը գտնվում է պատերազմող իրավիճակում և կիրքերանվտանգությունը ՀՀ-ի համար թվայնացված բոլոր ոլորտները՝ սկսած բանկային վերջացրած տեղեկատվական, անչափ կարևոր են: Հայաստանի տնտեսական և առհասարակ թվային անվտանգության ապահովման համար:

Գիտական նորույթ: Վերլուծվել է Հայաստանի թվային տնտեսությունը՝ հիմք ընդունելով միջազգային համաթվերը ու ենթահամաթվերը և մշակվել է թվայնացման գործընթացի օրակարգի հեղինակային մոտեցում, որտեղ որպես հիմնասյուներ առաջարկվել են. թվայնացման գործընթացի բարենպաստ միջավայրի ստեղծում, թվային ենթակառուցվածքներ, թվային լուծումներ ապահովող գործիքակազմ և պատշաճ ռազմավարության և քաղաքականության առկայություն: Թվային օրակարգը ներկայացնենք գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Թվայնացման օրակարգի հեղինակային մոտեցում²

Եզրակացություն: Հետազոտության մեջ ներկայացվել են «թվային տնտեսության» եզրույթի տարբեր մեկնաբանումներ և սահմանումներ, որոնց անդրադարձել են տարբեր հետազոտողներ և վերլուծաբաններ, որի արդյունքում առաջադրվեց մեր կողմից՝ «թվային տնտեսությանը» տրվող համապարփակ սահմանում, այն է՝ «թվային տնտեսությունը» բարդ և բավականին տարրողունակ հասկացություն է, որի զարգացումը հիմնված է մի շարք առանցքային բաղադրիչների վրա (որը ներկայացված է գծապատկեր 1-ում): Հետազոտության մեջ ուսումնասիրվեցին և վերլուծվեցին թվային տնտեսությունը բնութագրող թվով 8

¹ Global Cybersecurity index, ITU 2020, p. 26, Last Update 28.03.2022
https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունները

համաթվեր և ենթահամաթվեր, ներկայացվեց Հայաստանի թվային տնտեսությունը բնութագրող մի շարք համաթվեր և պարզ դարձավ, որ այն համաթվերը (NRI, DQLI), որոնց մասով արձանագրվում է դիրքի վատթարացումներ կամ աննշան դրական տեղաշարժեր, ունեն հիմնային պատճառներ, որոնցից են այդ համաթվերը պայմանավորող ենթահամաթվերը բնութագրող ցուցանիշների՝ կիրքերանվտանգության, ինտերնետի անվտանգության, էլեկտրոնային անվտանգության ոչ բավարար մակարդակ և դրանց ի հավելումն անհանգստացնող դիրքում է գտնվում նաև հենց համաշխարհային կիրքերանվտանգության համաթիվը (GCI):

Եզրափակելով նշենք, որ՝ 21-րդ դարում տեղի է ունենում տնտեսության համատարած թվայնացում՝ դրա ավտոմատացում և ռոբոտացում, արհեստական ինտելեկտի հնարավորությունների հետագա ընդլայնում և մեծ տվյալների փոխանակում: Այսօր նոր տեխնոլոգիական տնտեսաձևին անցնելու արդյունքներն արտացոլվում են այնպիսի ոլորտների առաջացման մեջ, ինչպիսիք են 3D տպագրությունը, առցանց առևտուրը, առցանց-բանկը, հաղորդակցության նոր ձևերը և այլն: Բարձր տեխնոլոգիաները, մասնավորապես բեկումնային տեխնոլոգիաները (բլոկ շղթա, արհեստական բանականություն, ռոբոտաշինություն), որոնք թվային տնտեսությունը բնութագրող ամենաներկայանալի ձևերն են, կարող են զգալի ազդեցություն ունենալ նաև Հայաստանի տնտեսության վրա և այն հիմնականում կախված է տեղական տնտեսության կլանման ունակությունից: Այդ ազդեցության բնույթը մեծապես պայմանավորված է նաև հիմնական տնտեսական շահառուների, այդ թվում՝ ձեռնարկատերերի և կառավարության նախաձեռնություններից: Թվայնացված տնտեսությունում թե՛ մեքենայական ուսուցումը, և թե՛ իրերի համացանցը, կարող են տնտեսության տարբեր ոլորտներում ավելացնել տեղական ձեռնարկատիրական գործունեության արտադրականությունը, ինչպես նաև բոլորովին նոր արժեքի ստեղծման աղբյուր դառնալ ապառողների համար¹:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դավլաթյան Ս., «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները ՀՀ-ում», ՀՀ բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրների դերն ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում, գիտաժողովի նյութեր/գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., 2019թ. էջ 156-172
2. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 - Լ որոշում, Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ., 28 էջ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>
3. Бабкин А.В. Цифровая трансформация экономики и промышленности: сборник трудов научно-практической конференции с зарубежным участием. – СПб.: ПОЛИТЕХ-ПРЕСС, 2019. – 780 с

¹ Դավլաթյան Ս., «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները ՀՀ-ում», ՀՀ բարձր տեխնոլոգիական և ինովացիոն տնտեսության հիմնախնդիրների դերն ու զարգացման ուղենիշերը ՀՀ-ում, գիտաժողովի նյութեր/գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., 2019թ. էջ 156-172

4. Вайбур Я.Д., Перапечка С. Казахстан на пути к цифровой экономике , BCG REVIEW. Обозрение. Июнь 2017. Специальный выпуск: Казахстан // The Boston Consulting Group. https://web-assets.bcg.com/img-src/BCG%20Kazakhstan%20Review%20June_tcm9-247797.pdf Дата доступа: 18.03.2022.
5. Даллакян С. А. «Инновационная экономика РА: перспективы, возможности, тенденции» Монография.- Ер.: Институт экономики им. М. Котаняна НАН РА, 2022.- 214 стр
6. Калужский, М.Л. Маркетинговые сети в электронной коммерции: институциональный подход / М.Л. Калужский.— М.: Директ-Медиа, 2014. 402 стр
7. Ковалев М.М. , Головенчи Г.Г., Цифровая экономика — шанс для Беларуси. МОНОГРАФИЯ / Минск Издательский центр БГУ, 2018, 328 стр
8. Akatkin Y., Karpov O., Konyavsky V., Yasinovskaya E. Digital economy: Conceptual architecture of a digital economic sector ecosystem // Business Informatics. – 2017. – № 4. – p. 17–28.
9. Digital Economy and Society Index (DESI) 2020, 124 p, Last Update 21.03.2022 <https://eufordigital.eu/wp-content/uploads/2020/06/DESI2020Thematicchapters-FullEuropeanAnalysis.pdf>.
10. Global Cybersecurity index, ITU 2018, 92 p. Last Update 24.03.2022 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2018-PDF-E.pdf,
11. Global Cybersecurity index, ITU 2020, 172 p., Last Update 24.03.2022 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf
12. MD World Digital Competitiveness Ranking Report 2021, 372 p, Last Update 24.03.2022 <https://www.imd.org/centers/world-competitiveness-center/rankings/world-digital-competitiveness/>
13. Negroponte, N. Being Digital / N. Negroponte.— NY: Knopf, 1995.— 256 p
14. OECD Digital Economy Outlook 2015, 2016, 2017 // OECD Publishing, Paris.
15. Tapscott D. (2015) The Digital Economy, Anniversary Edition: Rethinking Promise and Peril in the Age of Networked Intelligence. New York: McGraw-Hil, 152 p.
16. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, [https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20\(Full%20Report\).pdf](https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20(Full%20Report).pdf), Last Update 28.03.2022
17. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58
18. <https://www.worldbank.org/en/publication/wdr2016/Digital-Adoption-Index>
19. <https://cybersecurityventures.com/hackerpocalypse-cybercrime-report-2016/>
20. <https://surfshark.com/dql2020> Last Update 24.03.2022
21. <https://surfshark.com/dql2021> Last Update 25.03.2022
22. <https://www.gov.am/am/news/item/13412/>

23. https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2018-PDF-E.pdf, Last Update 28.03.2022
24. <https://www.itu.int/net4/ITU-D/idi/2017/index.html>, Last Update 28.03.2022

References

1. Dallaqyan S., «Tntesakan heghap'oxowt'yan himnatar owghenishnery' HH-owm», HH bard'r texnologikiakan & inovacion tntesowt'yan himnaxndirneri dern ow zargacman owghenishery' HH-owm, gitajhoghovi nyowt'er/ git. xmbagir` V.L.Harowt'yownyan, Er., 2019t'. e'j 156-172
2. HH kar'avarowt'yan 2021t'. p'etrvari 11-i N183-L oroshman «Hayastani t'vaynacman r'azmavarowt'yown 2021-2025t't'.», 28 e'j, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>
3. Babkin A.V. Cifrovaja transformacija jekonomiki i promyshlennosti: sbornik trudov nauchno-prakticheskoy konferencii s zarubezhnym uchastiem. – SPb.: POLITEH-PRESS, 2019. – 780 c
4. Vajbur Ja.D., Perapechka S. Kazahstan na puti k cifrovoy jekonomike , BCG REVIEW. Obozrenie. Ijun' 2017. Special'nyj vypusk: Kazahstan // The Boston Consulting Group. https://web-assets.bcg.com/img-src/BCG%20Kazakhstan%20Review%20June_tcm9-247797.pdf Data dostupa: 18.03.2022.
5. Dallakjan S. A. «Innovacionnaja jekonomika RA: perspektivy, vozmozhnosti, tendencii» Monografija.- Er.: Institut jekonomiki im. M. Kotanjana NAN RA, 2022.- 214 str
6. Kaluzhskij, M.L. Marketingovye seti v jelektronnoj komercii: institucional'nyj podhod / M.L. Kaluzhskij.— M.: Direkt-Media, 2014. 402 str
7. Kovalev M.M. , Golovenchi G.G., Cifrovaja jekonomika — shans dlja Belarusi. MONOGRAFIJA / Minsk Izdatel'skij centr BGU, 2018, 328 str
8. Akatkin Y., Karpov O., Konyavsky V., Yasinovskaya E. Digital economy: Conceptual architecture of a digital economic sector ecosystem // Business Informatics. – 2017. – № 4. – p. 17–28.
9. Digital Economy and Society Index (DESI) 2020, 124 p, Last Update 21.03.2022 <https://eufordigital.eu/wp-content/uploads/2020/06/DESI2020Thematicchapters-FullEuropeanAnalysis.pdf>.
10. Global Cybersecurity index, ITU 2018, 92 p. Last Update 24.03.2022 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2018-PDF-E.pdf,
11. Global Cybersecurity index, ITU 2020, 172 p., Last Update 24.03.2022 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf
12. MD World Digital Competitiveness Ranking Report 2021, 372 p, Last Update 24.03.2022 <https://www.imd.org/centers/world-competitiveness-center/rankings/world-digital-competitiveness/>
13. Negroponte, N. Being Digital / N. Negroponte.— NY: Knopf, 1995.— 256 p

14. OECD Digital Economy Outlook 2015, 2016, 2017 // OECD Publishing, Paris.
15. Tapscott D. (2015) The Digital Economy, Anniversary Edition: Rethinking Promise and Peril in the Age of Networked Intelligence. New York: McGraw-Hill, P. 16
16. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, [https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20\(Full%20Report\).pdf](https://publicadministration.un.org/egovkb/Portals/egovkb/Documents/un/2020-Survey/2020%20UN%20E-Government%20Survey%20(Full%20Report).pdf), Last Update 28.03.2022
17. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58
18. <https://www.worldbank.org/en/publication/wdr2016/Digital-Adoption-Index>
19. <https://cybersecurityventures.com/hackerpocalypse-cybercrime-report-2016/>
20. <https://surfshark.com/dql2020> Last Update 24.03.2022
21. <https://surfshark.com/dql2021> Last Update 25.03.2022
22. <https://www.gov.am/am/news/item/13412/>
23. https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2018-PDF-E.pdf, Last Update 28.03.2022
24. <https://www.itu.int/net4/ITU-D/idi/2017/index.html>, Last Update 28.03.2022

ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սվետլանա Արկադիի Դալլաքյան Սարգիս Հարությունի Սարգսյան

Համառոտագիր: *Հոդվածի արդիականությունը* պայմանավորված է 21-րդ դարում տնտեսության բոլոր փուլերի թվայնացման գործընթացների անխուսափելիությունով: *Հոդվածի նպատակն է* պարզաբանել թվայնացման առանձնահատկությունները ինովացիոն տնտեսության համատեքստում և վերլուծել ՀՀ թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր, որի հիման վրա ներկայացնել ՀՀ տնտեսության թվայնացման գործընթացները: *Հոդվածի խնդիրներն են՝* ներկայացնել «թվային տնտեսություն» եզրույթի տարբեր մեկնաբանումներ, վերլուծել թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր, պարզաբանել Հայաստանի տնտեսության թվայնացման ինստիտուցիոնալ հիմքերը, սահմանել թվային տնտեսության նպատակները, մշակել ՀՀ տնտեսության թվային օրակարգի մոտեցում: *Մեթոդաբանություն:* Հետազոտության մեջ կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական վերլուծության, պատճառահետևանքային կապերի բացահայտման մեթոդներ: *Ստացված հիմնական արդյունքներ:* Հետազոտության մեջ ներկայացվել են «թվային տնտեսության» եզրույթի տարբեր մեկնաբանումներ և սահմանումներ, որոնց անդրադարձել են տարբեր հետազոտողներ և վերլուծաբաններ, որի արդյունքում առաջադրվել է հեղինակների կողմից՝ «թվային տնտեսությանը» տրվող համապար-

փակ սահմանում: Հայաստանի թվային տնտեսությունը բնութագրող մի շարք համաթվերի (DESI, DSR, NRI, ISTD, EGDI, DQLI, DAI, GCI) վերլուծությունից պարզ դարձավ, որ այն համաթվերը (NRI, DQLI), որոնց մասով արձանագրվում է դիրքի վատթարացումներ կամ աննշան դրական տեղաշարժեր, դրանք ունեն հիմնային պատճառներ, որոնցից են այդ համաթվերը պայմանավորող ենթահամաթվերը բնութագրող ցուցանիշների՝ կիրառական տեխնոլոգիաների, ինտերնետի անվտանգության, էլեկտրոնային անվտանգության ոչ բավարար մակարդակը:

Գիտական նորոյթ: Վերլուծվել է Հայաստանի թվային տնտեսությունը՝ հիմք ընդունելով միջազգային համաթվերը ու ենթահամաթվերը և մշակվել է թվայնացման գործընթացի օրակարգի հեղինակային մոտեցում, որտեղ որպես հիմնայուններ առաջարկվել են հետևյալները. թվայնացման գործընթացի բարենպաստ միջավայրի ստեղծում, թվային ենթակառուցվածքներ, թվային լուծումներ ապահովող գործիքակազմ և պատշաճ ռազմավարության և քաղաքականության առկայություն: Թվային օրակարգը ներկայացված է գծապատկեր 3-ում: *Ստացված արդյունքի կիրառման հնարավորություն:* Ստացված արդյունքները կարող են կիրառել ՀՀ կառավարությունը, քաղաքականություն և ռազմավարություն մշակողները, ինչպես նաև ոլորտի հետազոտողները և անկախ փորձագետները:

Բանալի բառեր: Տնտեսության թվայնացում, ռազմավարություն, էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային կառավարման համաթիվ, թվային պատրաստվածության համաթիվ, թվային օրակարգ, կիրառական տեխնոլոգիաներ:

АНАЛИЗ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ЦИФРОВУЮ ЭКОНОМИКУ, ИНДЕКСОВ И ЦИФРОВАЯ ПОВЕСТКА В АРМЕНИИ

Светлана Аркадьевна Даллакян
Саргис Арутюнович Саргсян

Аннотация: *Актуальность статьи* обусловлена неизбежностью процессов цифровизации всех стадий экономики в 21 веке и тем фактом, что им придают большое значение в программах Правительства РА. *Цель статьи* – разъяснить особенности цифровизации в контексте инновационной экономики и проанализировать индексы и субиндексы, характеризующие цифровую экономику РА, на основе чего делать предложения, способствующие процессам цифровизации экономики РА. *Задачи статьи* – представить различные толкования термина «цифровая экономика», проанализировать индексы и субиндексы, характеризующие цифровую экономику, разъяснить институционально-законодательные основы цифровизации экономики Армении, определить цели цифровой экономики, разработать подход к повестке цифровой экономики РА. *Методология.* В исследовании использовались методы выявления причинно-следственных связей индукции-дедукции, сравнительного анализа. *Полученные основные результаты.* В исследовании представлены различные толкования и определения термина «цифровая экономика», о которых говорили различные исследователи и аналитики, в результате чего авторы пред-

ложили комплексное определение «цифровой экономики». Анализ ряда индексов, характеризующих цифровую экономику Армении (**DESI, DSR, NRI, ISTD, EGDI, DQLI, DAI**), выявил, что индексы (NRI, DQLI), по части которых наблюдаются ухудшения или небольшие положительные сдвиги, имеют базовые причины, одной из которых является недостаточный уровень индексов, характеризующих субиндексы, обуславливающие эти индексы: кибербезопасность, интернет-безопасность, электронная безопасность.

Научная новизна. Проанализирована цифровая экономика Армении, принимая за основу международные индексы и субиндексы и был проанализирован авторский подход к повестке процесса цифровизации, где, в качестве опоры, было предложено следующее: создание благоприятной среды для процесса цифровизации, цифровые инфраструктуры, состав инструментов, обеспечивающих цифровые решения и наличие надлежащей стратегии и политики. Цифровая повестка представлена на рисунке 3. *Возможность применить полученный результат.* Полученные результаты могут быть применены Правительством РА, аналитиками политики и стратегии, а также исследователями данной сферы и независимыми экспертами.

Ключевые слова: цифровизация экономики, стратегия, электронная коммерция, индекс электронного правительства, индекс цифровой готовности, цифровая повестка, кибербезопасность.

ANALYSIS OF THE INDEXES CHARACTERIZING THE DIGITAL ECONOMY AND DIGITAL AGENDA IN ARMENIA

Svetlana Arkadi Dallaqyan
Sargis Harutyun Sargsyan

Abstract. *The relevance of the Article* is conditioned by the inevitability of the digitalization processes of all stages of the economy in the 21st century and by giving them great importance in the programs of the RA Government. *The object of the Article* is to clarify the peculiarities of digitalization in the context of the innovation economy and to analyze the indexes and subindexes characterizing the digital economy of RA, on the basis of which to make advances contributing to the digitalization processes of the economy of RA. *The objectives of the Article* are to present different interpretations of the term "digital economy", to analyze the indexes-subindexes characterizing the digital economy, to clarify the institutional-legislative bases of digitalization of the Armenian economy, to define the goals of the digital economy, to develop an approach to digital agenda of the economy of RA. *Methodology.* In the research, methods of induction-deduction, comparative analysis, and detection of cause-effect relationships were used. *Main results* obtained. The study presented different interpretations and definitions of the term "digital economy", which were addressed by various researchers and analysts, as a result of which the authors suggested a comprehensive definition of "digital economy". Analysis of a number of indexes (**DESI, DSR, NRI, ISTD, EGDI, DQLI, DAI**) characterizing the digital economy of Armenia revealed that the indexes (NRI, DQLI), for which there is a deterioration of their place or slight positive shifts, have basic reasons, one of which is the

insufficient level of indexes characterizing the sub-indexes conditioning the mentioned indexes: cyber security, internet security, electronic security.

Scientific novelty. The digital economy of Armenia has been analyzed on the basis of international indexes and sub-indexes and there has been analyzed author's approach to the agenda of the digitalization process, in which as a backbone there has been suggested the following: the creation of a favorable environment for the digitalization process, digital infrastructure, tools for providing digital solutions and presence proper strategy and policy. The digital agenda is presented in Figure 3. *Opportunity to apply the obtained result.* The results obtained can be applied by the Government of RA, policy and strategy developers, as well as field researchers and independent experts.

Keywords: digitalization of the economy, strategy, e-commerce, e-government index, digital readiness index, digital agenda, cybersecurity.

ՀՀ ՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Քրիստինե Յուրիի Բաղդասարյան Սոնա Հրաչիկի Գրիգորյան

Հոդվածը ստացվել է՝ 25.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 28.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն: Ժամանակակից տնտեսության պայմաններում ծառայությունների ոլորտը դարձել է ոչ միայն զարգացած, այլև զարգացող երկրների տնտեսությունների գերակա ճյուղերից մեկը: Ներկայումս զբոսաշրջությունը կարևորագույն, բարձր եկամտաբեր և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է: ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար առկա են մի շարք հիմնախնդիրներ, որի ռազմավարական ուղին ճիշտ մարքեթինգային քաղաքականության արդյունավետության բարձրացումն է: Այս հիմնախնդիրներով էլ պայմանավորված է հոդվածի **արդիականությունը**:

Հոդվածի նպատակն է բացահայտել զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները, և առաջարկել դրանց լուծման միջոցառումներ՝ այն դարձնելու որպես ՀՀ տնտեսության համեմատական առավելություն ունեցող ուղղություն:

Հոդվածում դրվել և վերլուծվել են հետևյալ **խնդիրները**՝

- առանձնացնել ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնահարցերը,
- զբոսաշրջության ոլորտի միջազգային փորձի վերլուծություն, արդյունքի վեր հանում,
- բացահայտել զբոսաշրջության ոլորտ զարգացմանը նպաստող գործոնները:

Գրականության վերլուծություն: Զբոսաշրջության տարբեր կազմակերպություններ, գիտական դպրոցներ և անհատ փորձագետներ «զբոսաշրջությունը» (տուրիզմ) մեկնաբանում են տարբեր ձևերով: Զբոսաշրջության տերմինաբանությունը ենթարկվում է էական փոփոխությունների՝ կապված զբոսաշրջության զարգացման արագ տեմպերի, դրա ոլորտների, տեսակների և ձևերի, տեխնոլոգիաների և նորարարությունների, զբոսաշրջության նոր իրողությունների առաջացման և տարածման հետ: Գրականության մեջ զբոսաշրջությունը որպես տնտեսագիտական եզրույթ մեկնաբանվում է հայեցակարգային և տեխնիկական բնութագրերի: Հայեցակարգային սահմանումները որոշարկում են զբոսաշրջության տեսական շրջանակը՝ դրա հիմնական բնութագրերը որոշելու համար, ինչը թույլ է տալիս տարբերակել զբոսաշրջությունը և հարակից այլ հասկացությունները:

Տեխնիկական բնութագրերը նպատակ ունեն տրամադրել զբոսաշրջության մասին ստանդարտ տեղեկատվություն՝ ազգային և միջազգային վիճակագրական, ինչպես նաև իրավական կարիքների համար: Այլ մասնագետների «զբոսաշրջության» հայեցակարգի շուրջ տարաձայնություններից և գիտական վեճերից խուսափելու համար առաջարկվել են օգտագործել «ճանապարհորդություն և տուրիզմ» (travel and tourism) համակցված եզրույթը՝ առանց երկու բաղադրիչի

տարբերակման: Ավելին զբոսաշրջիկներին ծառայություններ մատուցող արդյունաբերության հետ կապված, տարբեր անվանումներ են ամրագրվել ինչպես տարբեր երկրներում, այնպես էլ միջազգային մակարդակով. «զբոսաշրջության արդյունաբերություն» (tourism industry), «ճանապարհորդության արդյունաբերություն» (travel industry), «ճանապարհորդության և զբոսաշրջության արդյունաբերություն» (travel and tourism industry), «հյուրընկալության արդյունաբերություն» (hospitality industry), և նույնիսկ «այցելուի արդյունաբերությունը» (visitor industry):


Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ «Զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականների այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առվելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է»:¹

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության և համադրության (սինթեզի) կառուցվածքային, ինչպես նաև համակարգային վերլուծության մեթոդները:

Վերլուծություն: Զբոսաշրջությունը ՀՀ-ում տարեցտարի զարգացում է ապրում, աճում է երկիր մուտք գործող զբոսաշրջիկների, անընդհատ կառուցվող հյուրանոցային, ռեստորանային համալիրների և զբոսաշրջային կենտրոնների թիվը:


Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2020 թվականի հունվար-դեկտեմբերին զբոսաշրջային այցելությունները կազմել է 360338 զբոսաշրջիկ, այս ցուցանիշը ձևավորվել է միայն 2020թ. հունվար-մարտ, սեպտեմբեր և հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի տվյալներով (**տե՛ս գծապատկեր 1-ը**): 2020թ. ապրիլ-հունիս և հուլիս-օգոստոս ժամանակաշրջանում ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի № 298-Ն որոշման ուժով ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել: 2019թ. հունվար-դեկտեմբերի 1894377 համեմատ նվազել է շուրջ 80.9%-ով, որը պայմանավորված էր կորոնավիրուսային և պատերազմական պայմաններով:

¹ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.12.2003, էջ 2



Գծապատկեր 1. ՀՀ զբոսաշրջային այցելությունների դինամիկան 2010-2020թթ.¹

Այնուամենայնիվ, 2010-2019թթ. զբոսաշրջիկների թվաքանակի աճը հանգեցրել է ՀՀ-ում ավելի շատ ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, որի հետևանքով վերջիններիս ծախսերը 2019թ-ին ավելացել են 320.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 26.5%-ով՝ կազմելով 1.528 մլրդ ԱՄՆ դոլար(տե՛ս գծապատկեր 2-ը):




Գծապատկեր 2. ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թվաքանակը՝ ըստ կացարանների տեսակների և վերջիններիս ծախսերը ՀՀ տարածքում 2018-2019թթ.²

¹Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2022թ. հունվար https://armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf

²Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվարին՝ https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf, ՀՀ ՎԿ «Վճարային հաշվեկշիռ 6» սոցանց տվյալների բազա՝ <https://www.armstat.am/am/?nid=203>

Ըստ գծապատկերի տվյալների, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանողների թվաքանակը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 550289 զբոսաշրջիկ (աճել է 79%-ով), մինչդեռ բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլ կացարաններում հանգրվանողների քանակը կազմել է 1344088 զբոսաշրջիկ: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ՀՀ այցելուների թվաքանակի մեջ շարունակում են մեծ տեսակարար կշիռ կազմել սփյուռքահայերը, որոնք նախընտրում են մնալ ավելի մատչելի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում կամ հարազատների և բարեկամների տանը:

Զբոսաշրջության ներդրումը ՀՆԱ-ում 2020 թվականին կազմել է 216 մլրդ դրամ (446.9 մլն ԱՄՆ դոլար), որը կազմում է ՀՆԱ-ի 3.4%-ը (**տե՛ս գծապատկեր 3-ը**): Այս հաշվարկում ներառված են այնպիսի ենթակառուցվածքների գործունեությունը, ինչպիսիք են հյուրանոցները, զբոսաշրջային գործակալությունները, ավիատրանսպորտն ու տրանսպորտային այլ կազմակերպությունները, սննդի և զբոսաշրջության արդյունաբերության այլ կազմակերպություններ: Ճանապարհորդության և տուրիզմի ընդհանուր ներդրումը զբաղվածության մեջ, ներառյալ ոլորտի հետ անուղղակիորեն կապված աշխատատեղերը կազմել են ընդհանուր զբաղվածության 11.2%-ը (107400 աշխատատեղ):¹




Գծապատկեր 3. ՀՀ ճամփորդության և զբոսաշրջության մասնաբաժինը ՀՆԱ-ում, 2010-2020թթ. (%)²

Հայաստանի զբոսաշրջությունը հիմնված է զարգացող ենթակառուցվածքային ցանցի և նպաստավոր պայմանների վրա: Զբոսաշրջության ենթակառուցվածքն աճում է մասնավոր ոլորտի՝ տեսարժան վայրերի ու ընդլայնվող հյուրանոցների զարգացմանն ուղղված ներդրումների աճին զուգահեռ: Հայաստանն ունի առաջարկվող կացարանների բազմաթիվ տարբերակներ՝ սկսած հինգ-աստղանի շքեղ հյուրանոցներից մինչև գյուղական բնակավայրերում տեղացի-

¹ World Travel & Tourism Council “Travel&Tourism Economic impact of Armenia, 2021, p. 1

² World Travel & Tourism Council “Travel&Tourism Economic impact of Armenia, 2021, p. 1

ների բնակարաններն ու տներ: Հյուրանոցների թիվը վերջին հինգ տարիներին աճել է 2014 թվականի 409-ից 2019 թվականին հասնելով 702-ի (**տե՛ս գծապատկեր 4-ը**):¹ Հասանելի կացարանները ներառում են 1-5 աստղանի հյուրանոցները, հոթելները և առողջարանային օբյեկտներ, B&B (քնելու և նախաճաշի) ծառայություններ, բնակարանների վարձակալություն՝ ներառյալ AirBnB առցանց հարթակը: Նոր հյուրանոցների մեծ մասը կառուցվել է Երևանում և դրա մերձակայքում, որն ապահովում է ընդհանուր եկամուտի ավելի քան 80-ը:² Նշենք, որ այսօր Հայաստանում չկան կամ շատ քիչ են տեղաբաշխման կացարանները կարևոր տեսարժան վայրերի մոտակայքում: Մինչ միջազգային հյուրանոցային ցանցերի երևանյան հնարավորությունները մեծանում են, որոնցից շատերն այդքան էլ մեծ չեն 300 հոգին գերազանցող գործարար խմբեր տեղավորելու համար: Այնուամենայնիվ, ՀՀ-ն ունենալով տեղավորվելու ավելի քան 700 տարբերակ՝ միայն 6 հյուրանոցներ են պաշտոնապես որակավորված և ունեն միջազգային չափանիշներին համապատասխան աստիճանակարգ:³ Սա նշանակում է, որ զբոսաշրջիկները հաճախ մնում են միջազգային ստանդարտներին չհամապատասխանող հյուրանոցներում, ինչը երբեմն խոչընդոտում և հիասթափություն է առաջացնում զբոսաշրջիկների շրջանում, հատկապես, երբ նրանք ակնկալում և վճարում են այն որակի համար, որ կա աշխարհի մյուս երկրներում:



Գծապատկեր 4. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը⁴

Ուսումնասիրելով ՀՀ զբոսաշրջության զարգացման վրա ազդող գործոնները, առանձնացվել են այն հիմնական հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացմանը (**տե՛ս գծապատկեր 5-ը**):

¹Աղբյուրը՝ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020, էջ 1

https://armstat.am/file/article/marzer_2020_22_.pdf

²«Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, էջ 24,


https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

³Աղբյուրը՝ Տեղեկատվություն ՀՀ-ում որակավորման կարգ ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների ցանկի, որակավորման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերի և վճարման հաշվեհամարների վերաբերյալ, 2022, էջ 2

https://mineconomy.am/media/18211/qualified_hotels_07.03.2022.pdf

⁴Աղբյուրը՝ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020, էջ 1

https://armstat.am/file/article/marzer_2020_22_.pdf



Գծապատկեր 5. ՀՀ զրոսաշրջության ոլորտի վրա ազդող գործոններ¹

1. Օրենսդրաիրավական կարգավորման հիմնախնդիրներ

ՀՀ զրոսաշրջության ոլորտի կայուն զարգացման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք օրենսդրաիրավական փաստաթղթեր: ՀՀ զրոսաշրջության ոլորտի իրավական կարգավորվումը իրականացվում է 2003 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Զրոսաշրջության և զրոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով, որտեղ զրոսաշրջության ոլորտը ճանաչվել է տնտեսության գերակա ճյուղ:² Այնուամենայնիվ, մինչև այժմ, հաշվի առնելով համաշխարհային զարգացումները, օրենքի մեջ ակնհայտ փոփոխություններ չեն իրականացվել: Նշենք, որ վերջին փոփոխությունները կատարվել են 2018թ. մարտին՝ ներառելով զրոսաշրջության կոմիտեի պարտականությունների մասին տեղեկատվություն: 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ զրոսաշրջության զարգացման հայեցակարգը», որի հիման վրա իրականացվում է ոլորտի պետական քաղաքականությունը:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը 2019թ վերջին հանրային քննարկման էր դրել «Հայաստանի զրոսաշրջության ռազմավարությունը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը³, որը ներկայացնում է ՀՀ զրոսաշրջության զարգացման տեսլականը, առաքելությունը և հետագա աճի հնարավորությունները մինչև 2030թ.: Այնուամենայնիվ, այս փաստաթուղթը դեռևս չի ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմամբ: ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է զրոսաշրջության զարգացման տարեկան ծրագիրը: Սակայն տվյալ ծրագրերի իրականացման վերաբերյալ չկան հրապարակված հաշվետվություններ:

2004 թվականից Հայաստանում հյուրանոցային ոլորտի գործունեությունը կարգավորելու նպատակով գործում է ՀՀ Կառավարության 2004թ. հունիսի 10-ի «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից, կատարված վերլուծության արդյունքների հիման վրա

² «Զրոսաշրջության և զրոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.12.2003

³ Աղբյուրը՝ <https://www.e-draft.am/projects/2090>


որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 946-Ն որոշումը:¹ Որոշումը սահմանում է հյուրանոցային ծառայությունների մատուցման որակի համապատասխանությունը նորմատիվ իրավական ակտերի և հյուրանոցային ծառայությունների մատուցման պայմանագրի պահանջներին, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտները կամավորության սկզբունքով կարող են ստանալ որակավորման կարգ: Հիմնական հիմնախնդիր է մնում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերի անհամապատասխանությունը իրականության հետ: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ն ունենալով տեղաբաշխվելու ավելի քան 700 տարբերակ՝ միայն 6 հյուրանոցներ են պաշտոնապես որակավորված և ունեն միջազգային չափանիշներին համապատասխան աստիճանակարգ: Իսկ մյուս հյուրանոցային տնտեսության օբյեկտները շրջանցում են նախատեսված պահանջները: Հետևաբար, անհրաժեշտ է ուժեղացնել լիազոր մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության վերահսկողական գործառույթները՝ ոլորտը հավուր պատշաճի կառավարելու համար:

Այսպիսով, անհրաժեշտ է ձևավորել ՀՀ զբոսաշրջության ոլորտում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր, մշակել Ջրոսաշրջության մասին նոր օրենք, իրավական և նորմատիվային ակտեր, որոնք կբարելավեն ոլորտի ծառայությունների որակը:

2. Ենթակառուցվածքային և տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներ

Հայաստանի կարևորագույն հիմնախնդիրներից է տարածքային համաչափ զարգացման ապահովումը: ՀՀ հիմնական զբոսաշրջային տեսարժան վայրերում բացակայում են գիշերակացի օբյեկտները: Վիճակն անհանգստացնող է այնքանով, որքանով որ Հայաստանի՝ համաշխարհային համբավ ունեցող պատմամշակութային խոշոր հուշարձանները, եկեղեցիներն ու կոթողները, առողջարանական համալիրները սփռված են հանրապետության ողջ տարածքում, հիմնականում՝ լեռնային, հեռավոր շրջաններում: Ջրոսաշրջիկների մեջ մեծ դժգոհություն է առաջացնում այն փաստը, որ հյուրանոցների բացակայության պատճառով նրանք ստիպված են իրենց շրջագայությունները կազմակերպել մեկ օրվա ընթացքում: Բացի այդ, հարկ է ընդգծել, որ ոչ միայն զբոսաշրջությունն ու հյուրանոցային տնտեսությունը, այլև ընդհանրապես ծառայությունների ոլորտը կենտրոնացած է հիմնականում Երևանում: 2019 թվականին հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը կազմել 702, որից 372 գտնվում են Երևանում (**տե՛ս գծապատկեր 4-ը**): Հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասույթը զգալի աճ է ունեցել՝ 2019 թվականին հասնելով 41721.0 միլիոն դրամի: Մակայն ստացված եկամուտների չնչին մաս է բաժին ընկնում մարզերին, հասույթի մեծ մասը պատկանում է մայրաքաղաք Երևանին՝ կազմելով 32715.9 միլիոն դրամ (**տե՛ս գծապատկեր 6-ը**):

¹ Աղբյուրը՝ <https://mineconomy.am/media/2634/408.pdf>



Պատկեր 6. ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասույթը 2014-2019 թթ. (միլիոն դրամ)¹

Եվ չնայած այսպիսի աճին, տեսակետներ կան, որ պաշտոնական վիճակագրությունը թերի է իրականում հյուրանոցներն ավելի շատ են վաստակում: Եթե իսկապես շրջանառությունն ավելի մեծ, բայց հյուրանոցները ներկայացնում են ավելի փոքր ցուցանիշներ, ապա դա կարող է ձեռնտու լինել նրանց, բայց ընդհանուր շուկայի վրա լուրջ բացասական ազդեցություն ունենալ: Բանն այն է, որ ներդրողները, որոնք հետաքրքրվում են շուկայով, հաճախ հիմնվում են պաշտոնական տվյալների վրա: Եվ որպես կանոն շուկայի փոքր ծավալները կարող են երկիրը ոչ գրավիչ դարձնել նրանց համար: Այսինքն՝ ոլորտի ծավալներն իրականից ավելի փոքր ներկայացնելը կարող է խոչընդոտ հանդիսանալ շուկայում ներդրումների համար: Հայաստանյան զբոսաշրջության ոլորտը թվերի և ցուցանիշների առումով վերլուծության ենթարկելը գրեթե անհնարին աշխատանք է, քանի որ վիճակագրական տվյալների սղությունը հաճախ տանում է դեպի փակուղի: Վիճակագրական տվյալները հիմնականում ամփոփվում են ՀՀ վիճակագրական կոմիտեի եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, որտեղ հակիրճ և կցկտուր տվյալներ են ընդամենը մի քանի ցուցանիշների գծով:

Հանրապետության մարզերում, քաղաքներում բացակայում են զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ռեսուրսային, ժամանցային, մշակութային ենթակառուցվածքները:² Ներկայացնենք մի քանի զբոսաշրջային վայրեր, որոնք ներկայումս ունեն այս խնդիրը:

Համաձայն Հայաստանի զբոսաշրջության զարգացման 2020-2030 թվականների ռազմավարության, Հայաստանի կլաստերային ցանցը³ ընդլայնելու համար

¹ Աղբյուրը՝ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020, էջ 1
https://armstat.am/file/article/marzer_2020_22_.pdf

² Ստեփանյան Կ. Կ., Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ենթակառուցվածքների արդի վիճակը ՀՀ-ում, 2011 թ., էջեր՝ 4-5:

³ Կլաստերները կենտրոնացած գործնական օջախներ են, որոնք զբոսաշրջիկները օգտագործում են որպես կայան՝ շրջակա գոտին ուսումնասիրելու համար, և կարող են մնալ կամ մտնում են այնտեղ՝ գիշերելու:

Գյումրին, Արենին/ Եղեգնաձորը և Գորիսը կարևոր մեկնարկային կետեր են¹:

Գյումրին կացարանով ապահովելու հնարավորությունները շատ ցածր են՝ հաշվի առնելով կլաստերի ազդեցությունն ու ներուժը: Կացարանների հնարավորությունները կազմում են մոտավորապես 20 հյուրանոցներ և B&B-ներ՝ 3-4-աստղանի: Ըստ ռազմավարության ներկայումս կա ընդամենը 668 մահճակալ և 3-4 աստղանի հյուրանոցների, հանրակացարանների և B&B-ների ավելացումն առանցքային լուծում կլինի:² Դեպի Գյումրի, Գյումրիից Երևան-Թիֆլիս և Դիլիջան-Վանաձոր ճանապարհային ուղիներով, երկաթուղով հասնելու հնարավորությունը քաղաքը դարձնում է հիմնական տարանցիկ կետ, որն ապահովում է հետագա հարմարավետ ճանապարհորդություն՝ Հայաստանն ավելի շատ բացահայտելու համար:

Արենի/Եղեգնաձոր կլաստերը առաջարկում է ժամանցի, մշակութային, առողջարանային, բնության և արկածային զբոսաշրջության մի շարք հնարավորություններ: Բացի այդ, այստեղ է գտնվում նաև Ջերմուկը, Հայաստանի հիմնական առողջարանային քաղաքը: Հաշվի առնելով իր ռազմավարական նշանակությունը, այս կլաստերը պետք է ունենա կացության բազմազան առաջարկներ՝ սպասարկելու տարբեր մարդկանց: Այստեղ չկան հյուրանոցներ, որոնք ունեն զբոսաշրջային մեծ խմբեր և MICE ճանապարհորդներ ընդունելու համապատասխան հնարավորություններ՝ կոնֆերանս/բիզնես դահլիճներ: Ըստ ռազմավարության անհրաժեշտ է 3-4-աստղանի հյուրանոցների քանակի ավելացում:³

Գորիսը կարող է օգտագործել Տաթևին մոտ գտնվելու հանգամանքը, կացարանային առաջարկները և տրանսպորտային ցանցի հնարավորությունները ավելի հարավ գտնվող Կապանի հետ՝ դարպասի իր կարգավիճակն ամրապնդելու համար: Գորիսը՝ ՀՀ-ի հնագույն քաղաքներից մեկը, զբոսաշրջիկների համար հարմար է որպես «փոքր քաղաք» այցելելու և հյուրընկալվելու համար: Տարածաշրջանում կան շատ քիչ թվով հյուրանոցներ, որոնք բավարար չեն Տաթև այցելուների համար:⁴

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պետության կառավարության աջակցության մեխանիզմները զբոսաշրջության զարգացման հիմնական գործոններից են: Մի շարք երկրներում ոլորտի ենթակառուցվածքների զարգացման համար պետությունը տրամադրում է սուբսիդիաներ, դրամաշնորհային համաֆինանսավորում, հարկերից ազատում որոշակի ժամկետով: Վրաստանում՝ զբոսաշրջային շրջաններում ստեղծվել են հատուկ Ազատ զբոսաշրջային գոտիներ, որոնք այդ վայրերում հյուրանոցային ենթակառուցվածքների կառուցման

¹ «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

² «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, էջ 97, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

³ «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, էջ 98, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

⁴ «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, էջ 69, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

համար տրամադրում են արտոնություններ:

Աղյուսակ 1

Վրաստանում տրամադրվող ներդրումային նախաձեռնություններ¹

<i>Նախաձեռնության անվանում</i>	<i>Տրամադրվող արտոնություններ</i>
❖ Հյուրանոցային ներդրումների նախաձեռնությունը, որը ներդրողներին հնարավորություն է տալիս անմիջապես մրցակցային դիրքով մտնել վրացական շուկա	<ul style="list-style-type: none"> • մասնավորեցված գույքի ձեռքբերում ուղղակի վաճառքի միջոցով, • մասնավորեցված գույքի ձեռքբերման ընթացիկ շուկայական արժեքի էական գեղչեր, • արտոնյալ պայմաններ քաղաքապետարաններից, ինչպիսիք են Թբիլիսին և տարածաշրջանային կենտրոնները:
❖ Ազատ զբոսաշրջային գոտիներ, որոնք ներդրողներին հատուկ արտոնություններ են տալիս Քոբուլեթիում և Անակլիում / Գանձուխուրիում	<p>Քոբուլեթիում 1-3 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ կատարող ներդրողներին առաջարկվում է հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • անվճար տարածք, • անվճար հյուրանոցային կառավարման պլան, • այն հյուրանոցները, որոնք ունեն ավելի քան 100 սենյակ, տրամադրում են անվճար թույլտվություն (լիցենզիա) խաղատան համար, • շահութահարկից և գույքահարկից ազատում 15 տարով և այլն:
❖ Քոբուլեթիի հաջող մեկնարկից հետո ստեղծվել է Անակլիա / Գանձուխուրիի ազատ զբոսաշրջային գոտին	<ul style="list-style-type: none"> • անվճար տարածք, • անվճար հյուրանոցային կառավարման պլան, • շահութահարկից և գույքահարկից ազատում 15 տարով, • այն հյուրանոցները, որոնք ունեն ավելի քան 80 սենյակ, տրամադրում են անվճար թույլտվություն (լիցենզիա) խաղատան համար, • Վրաստանի քաղաքացիություն օտարերկրյա ներդրողների համար և այլն:

Հետևաբար, առաջարկում ենք, վերը նշված կլաստերները սահմանել որպես Ազատ զբոսաշրջային գոտիներ, և տրամադրել ենթակառուցվածքների կառուցման համար անհրաժեշտ արտոնություններ: Այդ արտոնություններից են՝ հարկերից ազատում որոշակի ժամկետով, հյուրանոցային օբյեկտի կառուցման համար անվճար տարածքի տրամադրում:


3. Մարքեթինգային հիմնախնդիրներ

Հայաստանի զբոսաշրջային ապրանքի մարքեթինգավորման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին առավել ակտիվ մասնակցություն, ինչպես նաև միջազգային հայտնի ամսագրերի,

¹Georgia–Marvelous Land of Tourism, Researches and Reports, 2016, p. 53, Григорян С., Грузинский опыт управления развитием туризма, Результаты современных научных исследований и разработок: сборник статей XI Всероссийской научно-практической конференции. – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2020, стр. 98 <https://naukaip.ru/wp-content/uploads/2020/11/%D0%9C%D0%9A-943.pdf>

հեռուստատեսությունների հետ համագործակցություն, գովազդային բոլոր հնարավոր մեխանիզմների կիրառում և թիրախային շուկաներում ներկայացուցչություններ ունենալը: Այս ուղղությամբ իրականացվող քայլերի ավելի արդյունավետ ելքերի համար անհրաժեշտ է պետական աջակցություն, որովհետև գովազդը և երկրի բրենդավորման համար անհրաժեշտ մեծ չափի ֆինանսական միջոցները չեն կարող ապահովվել մասնավոր զբոսաշրջային օպերատորների կամ գործակալությունների կողմից: Օգտվելով Հարավաֆրիկյան Հանրապետության փորձից, ՀՀ-ն նույնպես կարող է զբոսաշրջության ոլորտում իրականացնել ՓՄՁ-ների գործունեության բարելավման ծրագիր, որը նախատեսում է պետության կողմից ծախսերի 30-50%-ի չափով փոխհատուցում՝ ցուցահանդեսներին մասնակցելու և որակի գնահատականներ ստանալու համար (HACCP, ISO) և այլն: Այս ծրագիրը հնարավորություն կտա բարձրացնել ինչպես երկրի ճանաչելիությունը արտասահմանում, այնպես էլ ստանալ որակի գնահատականներ՝ ընդգծելով սպասարկման բարձր որակը:

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման հետևյալ գործընթացը:



Գծապատկեր 7. ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման միջոցառումների իրականացման գործընթաց

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից

Գիտական նորույթ: Զբոսաշրջության ոլորտի զարգացման համատեքստում բացահայտվել և դասակարգվել են ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնախնդիրները, մշակվել են ոլորտի զարգացման հայեցակարգային միջոցառումներ, համաձայն որի առաջարկվել են հաջորդական քայլեր, որոնց իրականացումը կարող է բարձրացնել ՀՀ զբոսաշրջության ոլորտի մրցունակությունը:

Եզրակացություն: Հետազոտելով ՀՀ զբոսաշրջության զարգացման վրա ազդող գործոնները, առանձնացվել և վերլուծվել են օրենսդրաիրավական կարգավորման, ենթակառուցվածքային և տարածքային համաչափ զարգացման, մարքեթինգային հիմնախնդիրները, և ըստ այդմ, ներկայացվել են հետևյալ առաջարկությունները՝

- անհրաժեշտ է ձևավորել ՀՀ զբոսաշրջության ոլորտում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր, մշակել Զբոսաշրջության մասին նոր օրենք, իրավական և նորմատիվային ակտեր, որոնք կբարելավեն ոլորտի ծառայությունների որակը:
- Գյումրի, Արենի/ Եղեգնաձոր և Գորիս կլաստերները սահմանել որպես Ազատ զբոսաշրջային գոտիներ, և օգտվելով Վրաստանի փորձից, տրամադրել ենթակառուցվածքների կառուցման համար անհրաժեշտ արտոնություններ:
- հաշվի առնելով Հարավաֆրիկյան Հանրապետության փորձը, ՀՀ զբոսաշրջության ոլորտում իրականացնել ՓՄՁ-ների գործունեության բարելավման ծրագիր:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.12.2003,
2. «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», 2019 նոյեմբեր, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf
3. ՀՀ ՎԿ «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=203>
4. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2020, https://armstat.am/file/article/marzer_2020_22_.pdf
5. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2020թ. հունվար, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf
6. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2022թ. հունվար https://armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf
7. Ստեփանյան Կ.Կ., Զբոսաշրջության զարգացման անհրաժեշտ ենթակառուցվածքների արդի վիճակը ՀՀ-ում, 2011 թ., 9 էջ
8. Տեղեկատվություն ՀՀ-ում որակավորման կարգ ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների ցանկի, որակավորման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերի և վճարման հաշվեհամարների վերաբերյալ, 2022, https://mineconomy.am/media/18211/qualified_hotels_07.03.2022.pdf
9. Григорян С., Грузинский опыт управления развитием туризма, Результаты современных научных исследований и разработок: сборник статей XI Всерос-

Финансирование инновационной деятельности является процессом обеспечения и использования финансовых ресурсов, направляемых на разработку и производство новых видов продукции, создание и внедрение новой техники, технологии, услуг, работ, а также организационных форм и методов управления. В современных экономических условиях повышение эффективности финансирования инновационных проектов приобретает особую актуальность, что продиктовано требованиями улучшения качества жизни населения и стимулирования деятельности компаний. Для стимулирования инновационного развития экономики страны необходимы разработка и реализация грамотной государственной политики, направленной на обеспечение необходимого уровня банковского финансирования инновационной деятельности². Следовательно, представим также состав кредитов коммерческих банков Республики Армения в 2015-2021 гг. (Табл. 2).

¹ Закон РА «О государственном содействии инновационной деятельности» от 14.06.2006 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2624&lang=rus>.

² Захарян А.Г. Инновационный лизинг как фактор развития экономики Республики Армения / Передовые инновационные разработки. Перспективы и опыт использования, проблемы внедрения в производство. Сборник научных статей девятой международной научной конференции (31 октября 2019 г.) Часть 2. – Казань: ПАО «ГАЗПРОМ», ООО «ГАЗПРОМ ТРАНСГАЗ КАЗАНЬ», ООО «Конверт», 2019, с. 157-162.

Таблица 2

**Состав кредитных вложений коммерческих банков Республики Армения в 2015-2021гг.
(млн. армянских драмов)¹**

Название	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Кредиты, всего	2 088 168	2 412 506	2 677 091	3 078 548	3 631 158	4 150 715	3 940 458
Кредитные вложения	1 939 739	2 280 711	2 545 674	2 959 829	3 488 448	3 891 067	3 701 428
<i>Кредиты в валюте</i>	1 273 082	1 456 533	1 586 726	1 662 575	1 790 970	1 959 317	1 623 024
краткосрочные	153 295	280 740	291 838	277 354	236 570	179 067	145 160
долгосрочные	1 119 787	1 175 793	1 294 887	1 385 221	1 554 400	1 780 250	1 477 865
<i>Кредиты в армянских драмах</i>	666 657	824 178	958 948	1 297 254	1 697 478	1 931 750	2 078 404
краткосрочные	113 568	156 625	149 100	194 406	197 347	239 157	166 449
долгосрочные	553 089	667 553	809 848	1 102 848	1 500 131	1 692 593	1 911 955
Продленные кредиты банков	110 566	99 841	99 635	88 009	111 755	226 075	224 967
краткосрочные	21 898	30 019	70 742	60 871	89 196	133 232	143 847
долгосрочные	88 668	69 821	28 894	27 138	22 559	92 842	81 120
Просроченные кредиты банков	37 863	31 954	31 782	30 710	30 954	33 573	14 063
краткосрочные	21 321	16 215	10 309	14 648	16 688	20 709	10 733
долгосрочные	16 542	15 739	21 472	16 062	14 266	12 864	3 330

Согласно данным Таблицы 2 в 2021 году по сравнению с 2015 годом в Республике Армения общий объем кредитования коммерческих банков увеличился на 1852290 млн. драмов. В то же время, кредитные вложения увеличились на 1761689 млн. драмов, продленные кредиты банков - на 114401 млн. драмов, а просроченные кредиты банков сократились на 23800 млн. драмов. Как видим, в 2015-2018 гг. наблюдалась тенденция сокращения объемов продленных кредитов банков, что, с одной стороны, связано с некоторым улучшением финансового состояния компаний, с другой - усилением финансовой бдительности среди компаний. В 2021г. резко сократился также объем просроченных кредитов банков, что было обусловлено повышением качества финансового управления компаний-заемщиков и коммерческих банков.

Естественно, что для развития инновационной экономики необходимо также последовательное увеличение объемов государственного финансирования инновационной деятельности, что напрямую зависит от роста доходов государственного бюджета страны. Инновационное развитие компаний и рост доходов государственного бюджета – два взаимосвязанных и взаимозависимых процесса. Следовательно, необходимо с помощью устранения возможных правовых лазеек свести к минимуму экспорт полуфабрикатов и высококвалифицированного труда работников ИТ сферы для того, чтобы конечная продукция создавалась и реализовывалась исключительно в Армении, и соответственно все налоговые выплаты

¹ Социально-экономическое положение Республики Армения в 2015–2021 гг., Статистический комитет Республики Армения, <https://armstat.am/am/?nid=82>

компаний направлялись в государственный бюджет РА. То есть необходима эффективная коммерциализация научных разработок и инновационных продуктов, а также предотвращение утечки мозгов. Подобные примеры в Армении уже есть, но их еще мало. Нужно добиться того, чтобы компании с большим капиталом и потенциалом развития находились на первых строках списка крупных налогоплательщиков.

Очевидно, что стимулирование инновационной и инвестиционной деятельности на всех уровнях управления будет способствовать созданию новых рабочих мест, повышению уровня благосостояния населения и устойчивому развитию экономики страны.

Научная новизна

Выявлены основные задачи развития инновационной экономики РА по отраслям. Для каждой отрасли разработаны и обоснованы механизмы, позволяющие эффективно устранить существующие проблемы. С учетом вышеизложенного предложены подходы по их эффективной реализации.

Выводы

Очевидно, что обеспечение занятости населения обусловлено развитием сферы МСП и стимулированием деятельности высокотехнологичных компаний. Последнее неразрывно связано с созданием инновационных инфраструктур, повышением эффективности налогового и таможенного администрирования, осуществлением льготного кредитования, оказанием государственной поддержки в реализации эффективных проектов технологического развития и т.д. В данном случае важную роль может сыграть углубление государственно-частного партнерства в сфере науки и образования, которое может способствовать активизации инновационной деятельности, что вытекает из современных требований обеспечения занятости и повышения благосостояния населения.

Учитывая современное состояние экономического развития Республики Армения, можем предложить следующие пути обеспечения занятости населения за счет стимулирования инновационной деятельности компаний:

- Предоставление компаниям доступа к приемлемым финансовым ресурсам для реагирования на меняющиеся условия рынка, решения внешних экономических проблем, реорганизации или адаптации к изменившимся экономическим реалиям;
- Содействие отдельным сельскохозяйственным предприятиям – с целью снижения текущих рисков ликвидности;
- Оказание финансовой помощи малым и средним предприятиям;
- Содействие сохранению эффективных рабочих мест среди отдельных высокотехнологичных компаний, а также внедрению и коммерциализации инновационных идей;
- Предоставление компаниям инновационной сферы налоговых и таможенных льгот;

- Налаживание тесного сотрудничества между банками и компаниями: участие банками в капитале компаний, разработка и реализация совместных инвестиционных проектов, оказание консалтинговых услуг и т.д.
- Применение зарубежного передового опыта стимулирования занятости населения и т.д.

В заключение следует отметить, что применение практических рекомендаций по обеспечению занятости населения посредством стимулирования инновационной деятельности может способствовать повышению благосостояния общества и стабильному развитию экономики РА.

Список использованной литературы

1. Аганбегян А.Г. Проблемы занятости в современной России: пять неотложных дел, научный журнал «Стратегические решения и риск-менеджмент», 2017, №3, с. 10-20, <https://doi.org/10.17747/2078-8886-2017-3-10-20>
2. Арутюнян В.Л. Краткое содержание выступлений и докладов конференции “Экономические чудеса: пути применения в Армении”, Ереван: Институт экономики имени М. Котаняна НАН РА, 2020, стр. 63-80.
3. Гражданский кодекс Республики Армения от 28.07.1998 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: http://parliament.am/law_docs/050598HO239rus.html?lang=rus#R1.
4. Закон РА «О государственном содействии инновационной деятельности» от 14.06.2006 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2624&lang=rus>.
5. Закон РА «О занятости» от 11.12.2013 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4860&lang=rus>
6. Захарян А.Г. Инновационный лизинг как фактор развития экономики Республики Армения / Передовые инновационные разработки. Перспективы и опыт использования, проблемы внедрения в производство. Сборник научных статей девятой международной научной конференции (31 октября 2019 г.) Часть 2. – Казань: ПАО «ГАЗПРОМ», ООО «ГАЗПРОМ ТРАНСГАЗ КАЗАНЬ», ООО «Конверт», 2019, с. 157-162.
7. Кашепов А.В., Сулакшин С.С., Малчинов А.С. Рынок труда: проблемы и решения. Монография. — М.: Научный эксперт, 2008. — 232 с. http://labourmarket.ru/books/rynok_truda_kashepov.pdf
8. Конституция Республики Армения с изменениями от 06.12.2015 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5805&lang=rus>.
9. Маслова Е.В. Рынок труда и регулирование занятости: развитие профессиональных компетенций и способности трудоустройства молодых специалистов: монография / Е.В. Маслова, Воронежский государственный университет. —

- Воронеж: Издательский дом ВГУ, 2017. - 121 с.
http://cced-complete.com/deliverables/wp5_articles_labour_market_and_manpower_control_ru.pdf
10. Медведев Д.А. Социально-экономическое развитие России: обретение новой динамики. Экономический журнал “Вопросы экономики”, 2016, N 10, с. 5-30.
 11. «Основные показатели промышленных организаций по пятизначной классификации видов экономической деятельности в 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021 гг. за январь-декабрь», ежегодные публикации НСК РА <http://www.armstat.am>
 12. Седова Н.П., Терехина А.А. Актуальные проблемы обеспечения занятости населения в Российской Федерации, Ученые записки Российской академии народного хозяйства и государственной службы при Президенте РФ (Владимир), 2021, N2(38), <https://www.elibrary.ru/contents.asp?id=46445917>
 13. Социально-экономическое положение Республики Армения в 2015–2021 гг., Статистический комитет Республики Армения, <https://armstat.am/am/?nid=82>
 14. Тертерян К. В Армении граждане Российской Федерации зарегистрировали свой бизнес как ИП -938, ООО – 268, <https://b24.am/economy/312435.html>
 15. Трудовой кодекс Республики Армения от 09.11.2004 // Официальный сайт Национального Собрания Республики Армения [Электронный ресурс]. — URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131&lang=rus>

References

1. Aganbegjan A.G. Problemy zanjatosti v sovremennoj Rossii: pjat' neotlozhnyh del, nauchnyj zhurnal «Strategicheskie reshenija i risk-menedzhment», 2017, N3, s. 10-20, <https://doi.org/10.17747/2078-8886-2017-3-10-20>
2. Arutjunjan V.L. Kratkoe sodержanie vystuplenij i dokladov konferencii “Jekonomicheskie chudesa: puti primenenija v Armenii”, Erevan: Institut jekonomiki imeni M. Kotanjana NAN RA, 2020, str. 63-80.
3. Grazhdanskij kodeks Respubliki Armenija ot 28.07.1998 // Oficial'nyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija [Jelektronnyj resurs]. — URL: http://parliament.am/law_docs/050598HO239rus.html?lang=rus#R1.
4. Zakon RA «O gosudarstvennom sodejstvii innovacionnoj dejatel'nosti» ot 14.06.2006 // Oficial'nyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija [Jelektronnyj resurs]. — URL: <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2624&lang=rus>.
5. Zakon RA «O zanjatosti» ot 11.12.2013 // Oficial'nyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija [Jelektronnyj resurs]. — URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4860&lang=rus>
6. Zaharjan A.G. Innovacionnyj lizing kak faktor razvitija jekonomiki Respubliki Armenija / Peredovye innovacionnye razrabotki. Perspektivy i opyt ispol'zovanija, problemy vnedrenija v proizvodstvo. Sbornik nauchnyh statej devjatoj mezh-dunarodnoj nauchnoj konferencii (31 oktjabrja 2019 g.) Chast' 2. – Kazan': PAO

- «GAZPROM», ООО «GAZPROM TRANSGAZ KAZAN"», ООО «Konvert», 2019, s. 157-162.
7. Kashepov A.V., Sulakshin S.S., Malchinov A.S. Rynok truda: problemy i resheniya. Monografija. — M.: Nauchnyj jekspert, 2008. — 232 s.
http://labourmarket.ru/books/rynok_truda_kashepov.pdf
 8. Konstitucija Respubliki Armenija s izmenenijami ot 06.12.2015 // Oficial'nyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija [Jelektronnyj resurs]. — URL: <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5805&lang=rus>.
 9. Maslova E.V. Rynok truda i regulirovanie zanjatosti: razvitie professional'nyh kompetencij i sposobnosti trudoustrojstva molodyh specialistov: monografija / E.V. Maslova, Voronezhskij gosudarstvennyj universitet. – Voronezh: Izdatel'skij dom VGU, 2017. - 121 s.
http://cced-complete.com/deliverables/wp5_articles_labour_market_and_manpower_control_ru.pdf
 10. Medvedev D.A. Social'no-jekonomicheskoe razvitie Rossii: obretenie novoj dinamiki. Jekonomicheskij zhurnal “Voprosy jekonomiki”, 2016, N 10, s. 5-30.
 11. «Osnovnye pokazateli promyshlennyh organizacij po pjatiznachnoj klassifikacii vidov jekonomicheskoy dejatel'nosti v 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021gg. za janvar'-dekabr'», ezhegodnye publikacii NSK RA <http://www.armstat.am>
 12. Sedova N.P., Terehina A.A. Aktual'nye problemy obespechenija zanjatosti naselenija v Rossijskoj Federacii, Uchenye zapiski Rossijskoj akademii narodnogo hozjajstva i gosudarstvennoj sluzhby pri Prezidente RF (Vladimir), 2021, N2(38), <https://www.elibrary.ru/contents.asp?id=46445917>
 13. Social'no-jekonomicheskoe polozhenie Respubliki Armenija v 2015–2021 gg., Statisticheskij komitet Respubliki Armenija, <https://armstat.am/am/?nid=82>
 14. Terterjan K. V Armenii grazhdane Rossijskoj Federacii zaregistrirovali svoj biznes kak IP -938, ООО – 268, <https://b24.am/economy/312435.html>
 15. Trudovoj kodeks Respubliki Armenija ot 09.11.2004 // Oficial'nyj sajt Nacional'nogo Sobranija Respubliki Armenija [Jelektronnyj resurs]. — URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2131&lang=rus>

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արմինե Գրիգորի Զախարյան

Համառոտագիր: Ներկա տնտեսական պայմաններում ընկերությունների (հատկապես ՓՄՁ ոլորտի) ինովացիոն զարգացման խթանումը կարող է էապես նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատաշուկայի զարգացմանը, աշխատողների հմտությունների կատարելագործմանը: Այս պայմաններում

առանձնահատուկ կարևորություն ունի գիտության, բիզնեսի և պետության միջև փոխգործակցության ակտիվացումը, տնտեսության գիտելիքատար ոլորտների զարգացմանը պետական աջակցությունը, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործարար ակտիվության խթանումը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է բնակչության զբաղվածության ապահովման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներուժի արդյունավետ օգտագործման եղանակների բացահայտումը: **Հետազոտության խնդիրն է** բնակչության զբաղվածության խթանման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների **մեթոդները:**

Գիտական նորույթը: Բացահայտվել են ՀՀ ինովացիոն տնտեսության զարգացման հիմնական խնդիրներն՝ ըստ ոլորտների: Յուրաքանչյուր ոլորտի համար մշակվել և հիմնավորվել են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս արդյունավետորեն վերացնել առկա հիմնախնդիրները: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվել են դրանց արդյունավետ կիրառման մոտեցումներ:

Բանալի բառեր՝ տնտեսություն, զբաղվածություն, պետական քաղաքականություն, զարգացում, ինովացիոն գործունեություն, ներդրումներ, խթանում, ֆինանսավորում, արդյունավետություն

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЗАНЯТОСТИ НАСЕЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Армине Григорьевна Захарян

Аннотация. В современных экономических условиях стимулирование инновационного развития компаний (особенно сферы МСП) может значительно способствовать созданию новых рабочих мест, развитию рынка труда, а также повышению квалификации работников. Особую важность в данных условиях приобретает активизация сотрудничества науки, бизнеса и государства, государственное содействие развитию наукоемких отраслей экономики, стимулирование деловой активности физических и юридических лиц, что и определяет **актуальность темы нашего исследования.**

Целью исследования является определение путей эффективного использования потенциала развития экономики Республики Армения путем изучения возможностей обеспечения занятости населения. **Задачей исследования** является

разработка возможных путей экономического развития Республики Армения на основе результатов анализа механизмов стимулирования занятости населения.

В ходе исследования использовались **методы** системно-ситуационного анализа, экономико-статистических группировок, индукции и дедукции, сравнительного и факторного анализа.

Научная новизна. Выявлены основные задачи развития инновационной экономики РА по отраслям. Для каждой отрасли разработаны и обоснованы механизмы, позволяющие эффективно устранить существующие проблемы. С учетом вышеизложенного предложены подходы по их эффективной реализации.

Ключевые слова: экономика, занятость, государственная политика, развитие, инновационная деятельность, инвестиции, стимулирование, финансирование, эффективность

PROBLEMS OF POPULATION EMPLOYMENT PROVIDING IN THE REPUBLIC OF ARMENIA

Armine Grigor Zakharyan

Abstract. In the current economic conditions, stimulating the innovative development of companies (especially the SME sector) can significantly contribute to the creation of new jobs, the development of the labor market, and the improvement of the skills of employees. Of particular importance in these conditions is the activation of cooperation between science, business and the state, state assistance to the development of knowledge-intensive sectors of the economy, stimulation of business activity of individuals and legal entities, which determines the **relevance of the topic of our study**.

The aim of the study is to determine the ways of effective use of the development potential of the economy of the Republic of Armenia by studying the possibilities of providing employment to the population. **The task** of the study is to develop possible ways of economic development of the Republic of Armenia, based on the results of the analysis of the mechanisms for stimulating employment of the population.

The study used the **methods** of system-situational analysis, economic and statistical groupings, induction and deduction, comparative and factor analysis.

Scientific novelty. The main tasks of the development of the innovative economy of the Republic of Armenia by sectors are identified. For each industry, mechanisms have been developed and justified to effectively eliminate existing problems. Taking into account the foregoing, approaches for their effective implementation are proposed.

Keywords: economy, employment, public policy, development, innovative activity, investment, incentives, financing, efficiency

ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գայանե Ռուբիկի Թովմասյան

Հոդվածը ստացվել է՝ 15.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 23.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն

Համավարակի հետևանքով տուժեց զբոսաշրջությունն ամբողջ աշխարհում: 2020 թ.-ի ոլորտի կտրուկ անկումից հետո 2021 թ. ընթացքում նկատվեց աստիճանական վերականգնում: Արդյունքում, շարունակվող համավարակի պայմաններում 2021 թ. միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն աշխարհում կազմեց շուրջ 415 միլիոն մարդ (2020 թ. կազմել էր 381 միլիոն մարդ), ինչը 2019 թ. ցուցանիշից դեռևս ցածր է 72%-ով: Ըստ նախնական տվյալների՝ միջազգային զբոսաշրջության արտահանումից եկամուտները 2021 թ. կազմել են 700 մլրդ դոլար: ՉՀՎ փորձագետների 58%-ը կարծում է, որ ոլորտը կսկսի աշխուժանալ 2022 թ. երրորդ եռամսյակից, 42%-ը՝ 2023 թ.-ին, իսկ 64%-ը կարծում է, որ 2019 թ. գրանցված ցուցանիշները հնարավոր կլինի վերականգնել միայն 2024 թ., կամ ավելի ուշ¹:

Զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության գերակա ոլորտներից մեկն է: Վերջին տարիներին զբոսաշրջությունը զարգանում էր մեծ տեմպերով, ինչը, բնականաբար խաթարվեց համավարակի պատճառով:

Հոդվածի նպատակն է՝ վերլուծել զբոսաշրջության զարգացման միտումները ՀՀ-ում վերջին տարիներին՝ հաշվի առնելով նաև համավարակի ազդեցությունը, ինչպես նաև 2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ռուս զբոսաշրջիկների հոսքի հնարավոր ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վերականգնման վրա:

Գրականության վերլուծություն

Ըստ ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2018թ. կազմել է 868.7 մլրդ դրամ կամ 1.8 մլրդ դոլար (ՀՆԱ-ի 14.1%-ը): Զբոսաշրջության համախառն ազդեցությունը զբաղվածությանը կազմել է 169,3 հազար մարդ (զբաղվածների 12.5%-ը)²: Զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2019 թ. կազմել է 872.1 մլրդ դրամ կամ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 12.9%-ը)՝ ապահովելով ընդհանուր զբաղվածության 13.8%-ը կամ 137800 աշխա-

¹ Tourism grows 4% in 2021 but remains far below pre-pandemic levels,

<https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels>

² Armenia 2019, Annual research: Key highlights, p. 1, <https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/>

տաստեղ: 2020 թ. ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում կազմել է 216.8 մլրդ դրամ կամ 446.9 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 3.4%-ը)՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 75%-ով: Զբոսաշրջությունն ապահովել է ընդհանուր զբաղվածության 11.2%-ը կամ 107400 աշխատատեղ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 22%-ով: Ներգնա զբոսաշրջիկների ծախսերը ՀՀ-ում կազմել են 126.1 մլրդ դրամ (260.0 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա 719.7 մլրդ դրամի (1484.1 մլն ԱՄՆ դոլար) դիմաց՝ նվազելով 82.5%-ով, իսկ ներքին զբոսաշրջիկների կատարած ծախսերը՝ 61.5 մլրդ դրամ (126.7 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա 109.7 մլրդ դրամի (226.1 մլն ԱՄՆ դոլար) դիմաց՝ նվազելով 44%-ով¹:

Զբոսաշրջությունն էական նշանակություն ունի ՀՀ տնտեսության մեջ: Ոլորտում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ և՛ ներքին, և՛ ներգնա զբոսաշրջությունն ապագա տարիներին կաճի², ուստի հիմնական քայլերը պետք է ուղղված լինեն ոլորտում ներդրումների ներգրավմանը³, մարքեթինգի և բրենդինգի բարելավմանը⁴, ծառայությունների որակի բարձրացմանը⁵, զբոսաշրջիկների գոհունակության մակարդակի բարձրացմանը⁶, և այլ ուղղությամբ աշխատանքների իրականացմանը⁷:

Մեթոդաբանություն

Հետազոտության մեջ կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի, միկրո և մակրո վերլուծության, համակարգային և իրավիճակային վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեթոդներ: Տեղեկատվական հիմքը ՀՀ Վիճակագրական կոմիտեի, Զբոսաշրջության միջազգային կազմակերպության և այլ մարմինների կողմից հրատարակվող վիճակագրական հրատարակումներն են:

Վերլուծություն

Covid-19-ի համավարակի պատճառով ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտը էական կորուստներ կրեց: 2020թ. նվազեց ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվա-

¹ Armenia 2021, Annual research: Key highlights, p. 1, <https://wtcc.org/Research/Economic-Impact>

² Tovmasyan G., Forecasting the Number of Incoming Tourists using ARIMA Model: Case Study from Armenia. Marketing and Management of Innovations, 2021, N3, pp. 139-148, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymyskiy-Korsakov Street 2, (Web of Science),

Poghosyan K., Tovmasyan G., Modelling and Forecasting Domestic Tourism. Case Study from Armenia, SocioEconomic Challenges, 5(2), pp. 96-110, ARMG Publishing Rymyskogo-Korsakova st., 2, Sumy, Ukraine

³ Tovmasyan G., Capital investments, tourist tax and tourism development: The case study of Armenia, Economics and Sociology, Centre of Sociological Research, 2021, 14(1), 199-213. (Scopus, Web of Science)

⁴ Tovmasyan G., Raising the Effectiveness of Tourism Marketing and Branding: Evidence from Armenia, Marketing and Management of Innovations, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymyskiy-Korsakov Street 2, 2020, Issue 1, pp. 167-181 (Web of Science).


⁵ Tovmasyan G., Evaluating the quality of hotel services based on tourists' perceptions and expectations: The case study of Armenia, Journal of International Studies, 13(1), 2020, Centre of Sociological Research (Scopus), pp. 93-107.

⁶ Tovmasyan G., Assessment of tourist satisfaction index: Evidence from Armenia, Marketing and Management of Innovations, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymyskiy-Korsakov Street 2, Issue 3, 2019, էջ՝ 22-32, (Web of Science).

⁷ Թովմասյան Գ.Ռ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). -Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, 622 էջ, ISBN 978-9939-0-3445-4

քանակը, զբոսաշրջության մասնաբաժինը ՀՆԱ-ում: 2020 թ. անկումը հիմնականում թոնիչների չեղարկման, խիստ սահմանափակումների, հիվանդության մեծ ցուցանիշների հետևանքով էր: 2021թ. զբոսաշրջությունը սկսեց աստիճանաբար վերականգնվել: Եթե **2020 թ. ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների թվաքանակը կազմել էր 360338՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 81%-ով, ապա 2021 թ. ՀՀ է այցելել 870308 ներգնա զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 141%-ով** (զծապատկեր 1)¹: Իհարկե, այս ցուցանիշը դեռ շատ հեռու է 2019 թ. արձանագրված ներգնա զբոսաշրջիկների թվաքանակից (1894377 զբոսաշրջիկ), սակայն հաշվի առնելով ամբողջ աշխարհում շարունակվող համավարակը, նոր շտամների ի հայտ գալը, տարբեր երկրների կողմից պարբերաբար կիրառվող սահմանափակումները, կարելի է ասել, որ ստացված տվյալները դրական ազդակ են ուղորտի աստիճանաբար վերականգնման մասին:

Զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: **2020 թ. զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 292,4 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 1242.5 մլն ԱՄՆ դոլարով** (2019 թ. կազմել է 1534.9 մլն ԱՄՆ դոլար): **2021 թ. առաջին երեք եռամսյակներում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար** (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 251 մլն ԱՄՆ դոլարով ավելի) (Աղյուսակ 2):



Գծապատկեր 1. ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը, 2010-2021 թթ.²

¹ ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 150, https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf

² Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14>

ՀՀ վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, 2020-2021 թթ.¹

մլն ԱՄՆ

Ցուցանիշ	2020 Եռ.1	2020 Եռ.2	2020 Եռ.3	2020 Եռ.4	2020	2021 Եռ.1	2021 Եռ.2	2021 Եռ.3
Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	20.8	-2.6	-0.3	-7.2	10.7	26.6	62.3	155.1
<i>կրեդիտ</i>	227.3	4.8	16.1	44.2	292.4	65.9	123.5	310.3
<i>դեբետ</i>	206.6	7.4	16.4	51.4	281.7	39.2	61.2	155.2

Ինչպես գիտենք, դեռևս 2020 թ. սկզբին, ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին COVID-19-ի հետևանքների հակազդման միջոցառումների ծրագիրը² և տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների փաթեթները, որոնցից որոշների շահառու հանդիսանում են նաև զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունները և աշխատողները³: Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներեքերորդ միջոցառման (նպատակն է եղել՝ օժանդակություն տրամադրել զբոսաշրջությանն ուղղակիորեն առնչվող առանձին ոլորտներում Հայաստանի տնտեսվարողներին՝ վերջիններիս մոտ առաջացած ֆինանսական խնդիրները մեղմելու, նրանց գործունեության շարունակականությունն ապահովելու և առկա աշխատատեղերը պահպանելու համար) շահառուների թիվը կազմել է 2349, քսանհինգերորդ միջոցառման (նպատակն է եղել՝ զբոսաշրջության ոլորտը սպասարկող տրանսպորտային ընկերություններին աջակցելը) շահառուների թիվը կազմել է 27⁴, իսկ երրորդ միջոցառումից օգտվել է զբոսաշրջության ոլորտի 34 ՓՄՁ, վարկավորման ընդհանուր չափը կազմել է 392 մլն դրամ⁵:

ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 11-ի № 1514-Ն որոշման մեջ կատարված և 2021թ. դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն ՀՀ մուտք գործելիս պետք է ներկայացվի կամ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ,

¹ ՀՀ վճարային հաշվեկշռի, Արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

² ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N 354 – Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf

³ Առավել մանրամասն տես՝ Թովմասյան Գ., «COVID-19»-ի բացասական ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, ԲԱՆԲԵԸ Եվրասիա միջազգային համալսարանի, No 1, 2020, էջեր՝ 153-171:

⁴ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր, <https://mineconomy.am/page/1724>

⁵ Աղբյուրը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ներդրումների աջակցման կենտրոնի տրամադրած տեղեկատվություն:

կամ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված լինելը հավաստող սերտիֆիկատ՝ տվյալ պատվաստանյութի կիրառման հրահանգի համաձայն սահմանված դեղաչափերով (դեղաչափով): Բացասական թեստ կամ պատվաստման սերտիֆիկատ չի պահանջվում մինչև 6 տարեկան 11 ամսական 29 օրական երեխաների համար¹:

Դիտարկելով զբոսաշրջային այցերի ցուցանիշներն ըստ նպատակի (աղյուսակ 3)²՝ կարելի է ասել, որ Հայաստան հիմնականում այցելում են հանգստի և ժամանցի, այնուհետև՝ գործնական նպատակով: Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

Աղյուսակ 3

ՀՀ ներգնա զբոսաշրջային այցերն ըստ նպատակի, 2018-2021 թթ.²

<i>Թվաքանակ / Տարի</i>	<i>2018 թ.</i>	<i>2019 թ.</i>	<i>2020 թ.</i>	<i>2021 թ.</i>
ՀՀ ներգնա զբոսաշրջիկներ	1651782	1894377	360338	870308
ՀՏՕ-ներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկներ	307473	550289	97550	278393
<i>որոնցից</i>				
• ըստ նպատակի՝	100%	100%	100%	100%
• գործնական	27,3 %	15,9 %	15,8%	25,8%
• հանգստի և ժամանցի	48,8 %	55,4 %	50,3%	52,3%
• բուժման	1,4 %	0,5 %	0,4%	0,5%
• այլ	22,5 %	28,2 %	33,5%	21,4%

Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ 2019 թ. Հայաստան ժամանող զբոսաշրջիկների 29%-ն է (550289 զբոսաշրջիկ) հանգրվանել հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (2018 թ.՝ 18,6%-ը), իսկ մնացած 1344088-ը՝ բարեկամ կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն: 2020 թ. Հայաստան ժամանող զբոսաշրջիկների 27%-ն է (97550 զբոսաշրջիկ) հանգրվանել հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, 2022 թ.՝ 32%-ը (278393 զբոսաշրջիկ):

2019 թ. ՀՀ այցելած ներգնա զբոսաշրջիկները մեծամասամբ եղել են ՌԴ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Իրանից (աղյուսակ 4): 2020 և 2021 թթ. աճել է ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկների մասնաբաժինը:

¹ ՀՀ մուտք գործելու ընթացակարգում փոփոխությունների վերաբերյալ, <https://www.mfa.am/hy/COVID-19/2021/12/01/covid-19/10955>

² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ՝ 105, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf,
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջեր՝ 112-113, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf,
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվարին, էջեր՝ 113-114, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf,
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվարին, էջ՝ 113, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf

ՀՀ այցելած ներգնա զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը, 2018-2021 թթ.¹

Երկիր	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Շնչամեր	100	100	100	100
Այդ թվում՝				
ԱՊՀ երկրներ, որից՝	24.4	26.2	44.4	48.6
Ուկրաինա	1.9	1.6	2.1	1.9
Ռուսաստանի Դաշնություն	21.0	22.7	39.0	41.5
ԱՊՀ այլ երկրներ	1.5	1.8	3.3	5.2
ԵՄ երկրներ, որից՝	26.8	26.1	17.1	13.5
• Նիդերլանդներ	0.9	0.9	0.4	0.9
• Իտալիա	2.9	2.8	1.7	0.9
• Ֆրանսիա	5.2	6.6	5.1	3.8
• Գերմանիա	6.4	8.3	4.1	3.1
• ԵՄ այլ երկրներ	8.4	7.5	5.8	4.8
Այլ երկրներ, որից՝	48.8	47.7	38.5	37.9
• ԱՄՆ	13.9	6.1	6.5	7.8
• Իրանի Իսլամական Հանրապետություն	6.8	5.0	6.9	11.0
• Վրաստան	2.3	1.5	1.5	2.0
• Թուրքիա	1.0	0.2	0.4	0.1
• Կանադա	1.8	1.3	0.7	0.7
• Այլ երկրներ	23.0	33.6	22.5	16.3

Հարկ է նշել, որ վերջին տարիներին աճում էր նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը: 2019 թ. ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1544600 մարդ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 41.4%-ով: Ներքին զբոսաշրջիկների մեծ մասի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը (72%):

2020 թ., համավարակով պայմանավորված, նվազել է նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ նախորդ տարվա համեմատ մոտ 33%-ով՝ կազմելով 1045756 մարդ: Նրանց շուրջ 73%-ի նպատակը եղել է հանգիստն ու ժամանցը:

¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ՝ 105, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջեր՝ 112-113, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_421.pdf

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվարին, էջեր՝ 113-114, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_421.pdf

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվարին, էջ՝ 113, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_421.pdf

ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, 2018-2021 թթ.¹

<i>Թվաքանակ / տարի</i>	<i>2018 թ.</i>	<i>2019 թ.</i>	<i>2020 թ.</i>	<i>2021 թ.</i>
Ընդամենը զբոսաշրջիկներ՝, որոնցից՝	1092322	1544600	1045756	1595826
• ըստ նպատակի				
• գործնական	207761	280542	150649	247843
• հանգստի և ժամանցի	781668	1112305	765100	1229224
• բուժման	58339	52006	53500	67325
• այլ	44554	99747	76507	51434

** Տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկների:*

2021 թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1595826 մարդ՝ 2020 թ. համեմատ աճելով 52.6%-ով, 2019 թ. համեմատ՝ 3%-ով: 2021 թ. ներքին զբոսաշրջիկների 77%-ի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը:

Համավարակի, ճանապարհորդության միջազգային սահմանափակումների պարագայում շատերը գերադասել են հանգստանալ ՀՀ զբոսաշրջային դեստինացիաներում: 2022 թ. դեռ համավարակը չի նահանջել, և գուցե կրկին լինեն միջազգային տեղաշարժման սահմանափակումներ, շատ երկրներ դեռ զբոսաշրջիկներ են ընդունում միայն պատվաստված լինելը հավաստող սերտիֆիկատի պարագայում, ուստի կարելի է ակնկալել ՀՀ ներքին զբոսաշրջության ակտիվացում 2022 թ. նս:

Ներքին զբոսաշրջության խթանման համար հարկ է իրականացնել բազում աշխատանքներ: Այստեղ հարկ է դիտարկել նաև զբոսաշրջիկի հոգեբանությունը՝ շատերն իրենց ապահով կզգան իրենց երկրի սահմաններում, քանի որ վտանգի պարագայում կարող են ավելի հեշտ ու արագ օգտվել համապատասխան բժշկական ծառայություններից, քան արտերկրում:

Զբոսաշրջության առկա վիճակի մասին խոսելիս կարևոր է նաև դիտարկել զբոսաշրջության արդյունաբերության մաս կազմող կազմակերպությունների՝ զբոսաշրջային գործակալությունների, հյուրանոցային տնտեսության, հանրային սննդի օբյեկտների քանակի և ծառայությունների ծավալի դինամիկան վերջին տարիներին:

Ըստ վիճակագրական կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ 2019 թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների թվաքանակը կազմել է 769, ծառա-

¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, էջ 106, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf,
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf
 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվարին, էջ՝ 113, https://www.armstat.am/file/article/sv_01_22a_422.pdf

յությունների ծավալը՝ 41794.1 մլն դրամ: 2020 թ. ցուցանիշներով ՀՏՕ-ների քանակը կազմել է 847, իսկ ծառայությունների ծավալը նվազել է 61%-ով, ինչը պայմանավորված է համավարակի հետևանքով ոլորտի կրած վնասների հետ: Առաջին հայացքից տարօրինակ է թվում ՀՏՕ-ների թվաքանակի ավելացումը 78-ով, որից 70-ը՝ միայն Երևանում: Սակայն սրանք պաշտոնական վիճակագրական տվյալներն են և հնարավոր է, որ օբյեկտների ավելացումը տեղի է ունեցել 2020 թ. առաջին եռամսյակում՝ մինչ համավարակի սկսվելը: Դեռ առկա չեն 2021 թ. տվյալները, որի արդյունքում հասկանալի կլինի՝ արդյոք օբյեկտները շարունակել են գործել, թե փակվել են համավարակի պատճառով:

Աղյուսակ 6

Կացության կազմակերպման օբյեկտների քանակը և գործունեության ծավալը, 2018-2020 թթ.¹

Ծածկագիրն ըստ ՏՊՏՏՏ խմբ.2, Բաժին I հատված 55	Կացության կազմակերպում*						ՀՏՕ-ներում հանգրվանած ներգնա գրաս- չրջիկների թվա- քանակը, մարդ ²	
	2018 թ.		2019 թ.		2020 թ.		2019	2020
	քանակը, միավոր	ծավալը մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը մլն. դրամ		
Վայքը								
ք. Երևան	390	27879.9	410	33772.2	480	11836.8	489019	87429
Արագածոտն	5	106.2	7	87.7	7	40.0	13	-
Արարատ	9	72.1	8	80.4	8	64.3	11	-
Արմավիր	4	43.1	15	41.7	16	30.1	-	-
Գեղարքունիք	11	274.2	39	735.9	40	341.2	5662	22
Լոռի	19	323.7	30	354.6	30	204.9	1702	10
Կոտայք	65	2977.4	91	3220.0	93	2 001.3	5778	2705
Շիրակ	28	400.5	33	576.9	33	290.9	11868	1824
Սյունիք	37	629.4	38	830.5	38	410.7	669	2788
Վայոց ձոր	19	700.5	24	588.0	26	261.5	11008	1350
Տավուշ	65	1090.5	74	1506.2	76	1004.2	24559	1422
Ընդամենը ՀՀ	652	34497.5	769	41794.1	847	16485.9	550289	97550

* Ցուցանիշները չեն ներառում ավելացված արժեքի հարկը և այլ անուղղակի (նմանատիպ) հարկերը:

2020 թ. նվազել է հանրային սննդի օբյեկտների թվաքանակը և ծառայությունների ծավալը (շուրջ 8 և 36%-ով)՝ կազմելով 2321 օբյեկտ, 97847.9 մլն դրամ գործունեության ծավալով³:

Ջրոսաշրջային գործակալությունների և օպերատորների առումով հարկ է նշել, որ դրանց թիվը 2020 թ. կազմել է 691՝ նախորդ տարվա 788-ի դիմաց, իսկ

¹ Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն, 2022 թ. հունվար ամսին:

² Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը, թվերով, 2021, էջ 292-293, https://armstat.am/file/article/marzer_2021_22.pdf

³ Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն, 2022 թ. հունվար ամսին:

ծառայությունների ծավալը նվազել է 82%-ով¹:

Ըստ վիճակագրական տվյալների՝ կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2021 թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 182107.8 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 68.2%-ով, աճել է նաև զբոսաշրջային գործակալությունների գործունեության ծավալը:

Աղյուսակ 7

Զբոսաշրջային որոշ ծառայությունների կազմակերպման ծավալը, 2020-2021 թթ.²

Ծառայության տեսակը	2020 թ. հունվար-դեկտեմբեր, ընդամենը, մլն դրամ, ընթացիկ գներով	2021 թ. հունվար-դեկտեմբեր, ընդամենը, մլն դրամ, ընթացիկ գներով	2021 թ. հունվար-դեկտեմբերը 2020 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ,%
Կացության և հանրային սննդի կազմակերպում, այդ թվում	108245.1	182107.8	168.2
կացության կազմակերպում	13786.0	33409.4	2.4 անգամ
հանրային սննդի կազմակերպում	94459.1	148698.4	157.4
Զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	5241.5	9504.3	181.3

Այսպիսով, կարելի է ասել, որ 2021 թ. ընթացքում զբոսաշրջության ոլորտը սկսել է աստիճանաբար աշխուժանալ, ինչը, հուսանք, կշարունակվի նաև 2022 թ.: Զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունների գործունեության ծավալի կրճատումը սոսկ համավարակի և սահմանափակումների պատճառով էր, ուստի, համավարակի նահանջից հետո կարելի է ակնկալել ոլորտի աշխուժացում և վերականգնում:

Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ռուս զբոսաշրջիկների հոսքի ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա:

Ռուս-ուկրաինական պատերազմն իր բացասական հետևանքը կունենա նաև ՀՀ տնտեսության վրա: Բացասական ազդեցությանը զուգընթաց, կարելի է խոսել հնարավոր դրական ազդեցության մասին, ինչը կարելի է տեսնել զբոսաշրջության ոլորտում: 2022 թ. փետրվարի 24-ից սկսած տարբեր երկրներ սկսեցին սանկցիաներ կիրառել Ռուսաստանի նկատմամբ, դադարեցրեցին

¹ Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն, 2022 թ. հունվար ամսին:

² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 56-58, https://armstat.am/file/article/sv_12_20a_126.pdf,

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 56-58, https://armstat.am/file/article/sv_12_21a_126.pdf

թոխչները, իրենց երկրների օդային տարածքը փակեցին Ռուսաստանի համար, Ռուսաստանն էլ, ի պատասխան, իր օդային տարածքը փակեց 36 երկրների առջև: Մարտի սկզբից մի շարք ռուսական ավիաընկերություններ՝ Ուրալյան ավիաուղիները, Աերոֆլոտը, Nordwind-ը, չեղարկեցին միջազգային այդ թվում դեպի ՀՀ չվերթները, այնուհետև մարտի վերջին Աերոֆլոտը կրկին վերսկսեց դեպի ՀՀ թոխչները:

Այժմ ՀՀ-ից դեպի ՌԴ և հակառակ ուղղությամբ չվերթներ է իրականացնում նորաստեղծ հայկական Flyone Armenia ավիաընկերությունը, հայկական Armenia ավիաընկերությունը, ինչպես նաև ռուսական Aeroflot, Red Wings, Azimuth, Utair, IrAero, Pobeda ավիաընկերությունները¹:

Չվերթների չեղարկմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ վերջին օրերին մեր երկիր օրական գրեթե 40 ինքնաթիռ էր ժամանում Ռուսաստանից, և շատ ռուսներ արդեն ժամանակավոր բնակություն են հաստատել Հայաստանում: Մեծ մասը հանգրվանել է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, վարձու բնակարաններում, որոշները՝ բարեկամների տանը, որոշները հասցրել են բնակարան ձեռք բերել: Իհարկե, դրա հետևանքով աճել են նաև բնակարանների վարձավճարները:

Մարտի 31-ին, օրինակ, ըստ Զվարթնոց օդանավակայանի կայքի տվյալների՝ նախատեսված է 11 թոխչ ՌԴ-ից²:

Երբ առկա լինեն 2022 թ. եռամսյակային և տարեկան զբոսաշրջային այցելությունների տվյալները, սպասելի է, որ ՌԴ-ից ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը շատ մեծ կլինի: Ըստ որոշ նախնական տվյալների՝ փետրվարի 24-ից մարտի 22-ն ընկած ժամանակահատվածում արդեն շուրջ 85000 ՌԴ քաղաքացի է ժամանել ՀՀ: Ավանդաբար ՌԴ-ից դեպի ՀՀ եղել է զբոսաշրջիկների մեծ հոսք, հատկապես գարնանային տոների ժամանակ, ձմռանը՝ ձմեռային զբոսաշրջության սիրահարների համար, մեծ մաս են կազմել նաև գինու զբոսաշրջության սիրահարները և այլն:

Այժմ, հաշվի առնելով այլ երկրների կողմից կիրառվող սահմանափակումները, ՀՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի երկարաժամկետ հատվածում ռուս զբոսաշրջիկներին գրավելու ուղղությամբ: ՌԴ-ում փակվում են միջազգային բրենդների խանութները, ուստի, այս առումով ՀՀ-ն կարող է դառնալ նաև «շոփինգ (shopping)» զբոսաշրջության երկիր ռուսների համար: ՀՀ-ն կարող է դառնալ տարանցիկ զբոսաշրջության երկիր, երբ ռուս զբոսաշրջիկները այլ երկրներ մեկնելու համար ուղիղ թոխչների բացակայության դեպքում կարող են մեկնել Երևանով:

Կարևոր է նաև այս ընթացքում Երևանի վրա ենթակառուցվածքային ճնշումը նվազեցնելու նպատակով դեպի մարզեր տուրեր կազմակերպելը ռուս զբոսաշրջիկների համար, ինչը նաև կնպաստի մարզերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

¹ Ըստ Զվարթնոց և Շիրակ միջազգային օդանավակայանների կայքի տվյալների, վերջին մուտքը՝ 29.03.2022թ.

² Զվարթնոց օդանավակայան, <http://www.zvartnots.aero/HY/Index>, վերջին մուտքը՝ 29.03.2022թ.

Համավարակի հետևանքով զբոսաշրջությունն էական տուժել էր ՀՀ-ում, և 2020 թ.-ի ոլորտի կտրուկ անկումից հետո 2021 թ. ընթացքում նկատվեց աստիճանական վերականգնում: Այս առումով, ռուս զբոսաշրջիկների հոսքը կարող է դրական ազդեցություն ունենալ ոլորտի համար:

Գիտական նորույթ: Վերլուծվել է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ռուս զբոսաշրջիկների՝ դեպի ՀՀ ներհոսքի հնարավոր ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, համավարակի անկումից հետո զբոսաշրջության վերականգնման միտումները և կատարվել առաջարկներ՝ մարքեթինգային միջոցառումների ընդլայնման, զբոսաշրջիկների գրավման ուղղությամբ:

Եզրակացություն

2021 թ. տվյալները վկայում են, որ զբոսաշրջությունն աստիճանաբար վերականգնվում է ՀՀ-ում: ՀՀ-ն համարվում է ոչ զանգվածային զբոսաշրջային վայր, և համավարակի պայմաններում այդ հանգամանքը կարելի է օգտագործել որպես առավելություն՝ նման կերպ ներկայացնելով երկիրը սոցիալական ցանցերով իրականացվող գովազդներում: Պետք է իրականացնել ազդեցիվ մարքեթինգային քաղաքականություն՝ ներգնա զբոսաշրջության խթանման նպատակով կիրառելով Buzz Marketing, Word of mouth և Influencer մարքեթինգային ռազմավարությունները: Մարքեթինգի դերը խիստ կարևորվում է, և այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ համավարակի ընթացքում իրականացվում էր մարքեթինգային լայն միջոցառումներ սոցիալական ցանցերով՝ սահմանափակումների թուլացումից կամ վերացումից հետո միջազգային զբոսաշրջիկների մեծ հոսք ապահովելու համար: Մեր երկրի համար ևս խիստ կարևոր է ներկա պայմաններում միջազգային զբոսաշրջային շուկայում տեղ գրավելը, նոր առաջարկներ ներկայացնելը, զբոսաշրջային պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում ակտիվ մարքեթինգային արշավը՝ ներգնա զբոսաշրջիկների հոսք ապահովելու նպատակով:

Ռուս-ուկրաինական պատերազմը երկարաժամկետ հատվածում բացասական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսության վրա՝ արտարժույթի տատանումների, ՌԴ-ից ՀՀ փոխանցվող գումարների նվազման, ապրանքների արտահանման և ներմուծման, ՀՀ անշարժ գույքի շուկայում գների բարձրացման և այլ հնարավոր խնդիրների հետ կապված: Այս առումով, ռուս զբոսաշրջիկների մեծ հոսքը դեռևս կարճաժամկետ դրական նշանակություն ունի, ուստի երկարաժամկետում պետք է մշակել մյուս բացասական վտանգների չեզոքացմանն ուղղված քայլեր: Միննույն ժամանակ, պետք է աշխատանքներ տանել երկարաժամկետ հատվածում ռուս զբոսաշրջիկներ գրավելու ուղղությամբ, քանի որ նրանք այժմ չեն կարող գնալ տարբեր եվրոպական երկրներ՝ նրանց համար մշակելով հետաքրքիր, գրավիչ, մատչելի փաթեթներ: Ռուս զբոսաշրջիկների եկամուտներն այժմ նվազել են, շատերն այստեղ մեծ ծախսեր չեն կատարի, մի մասը գուցե ՀՀ է գալիս՝ բնակություն հաստատելու, ՀՀ-ից հեռավար աշխատելու (հատկապես SS ոլորտի աշխատողները) նպատակով, մինչև որ ՌԴ-ում իրավիճակը կկարգավորվի, և կկարողանան հետ վերադառնալ: Ամեն դեպքում, դեռ

շատ վաղ է հստակ գնահատականներ և կանխատեսումներ անել, թե 2022 թ. ռուս զբոսաշրջիկների հոսքը դեպի ՀՀ որքան կլինի, կախված թե՛ պատերազմական իրավիճակը և դրա հետևանքով մյուս սահմանափակումներն ու սանկցիաները ռուսների համար որքան կշարունակվեն:

Օգտագործված գրականություն

1. Զվարթնոց օդանավակայան, <http://www.zvartnots.aero/HY/Index>
2. Թովմասյան Գ.Ռ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). - Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, 622 էջ, ISBN 978-9939-0-3445-4
3. Թովմասյան Գ., «COVID-19»-ի բացասական ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, No 1, 2020, էջեր՝ 153-171:
4. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր, <https://mineconomy.am/page/1724>
5. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը, թվերով, 2021, էջ 292-293, https://armstat.am/file/article/marzer_2021_22.pdf
6. ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի N 354 – Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf
7. ՀՀ մուտք գործելու ընթացակարգում փոփոխությունների վերաբերյալ, <https://www.mfa.am/hy/COVID-19/2021/12/01/covid-19/10955>
8. ՀՀՊՏ 2004.01.29/6(305) Հոդ.106, Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք, 2003թ., հոդված 2
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019, 2020, 2021 և 2022 թվականների հունվարին, 2020 և 2021թթ. հունվար-դեկտեմբերին, <https://www.armstat.am>
10. ՀՀ վիճակագրական կոմիտեի Վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, <https://www.armstat.am/am/?nid=14>
11. ՀՀ վճարային հաշվեկշիռ, Արտաքին հատվածի վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
12. Armenia 2019, Annual research: Key highlights, p. 1, <https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/>
13. Armenia 2021, Annual research: Key highlights, p. 1, <https://wttc.org/Research/Economic-Impact>
14. Poghosyan K., Tovmasyan G., Modelling and Forecasting Domestic Tourism. Case Study from Armenia, SocioEconomic Challenges, 5(2), pp. 96-110, ARMG Publishing Rymkogo-Korsakova st., 2, Sumy, Ukraine
15. Tourism grows 4% in 2021 but remains far below pre-pandemic levels, <https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels>
16. Tovmasyan G., Assessment of tourist satisfaction index: Evidence from Armenia, Marketing and Management of Innovations, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymskiy-Korsakov Street 2, Issue 3, 2019, էջ՝ 22-32, (Web of Science).

17. Tovmasyan G., Capital investments, tourist tax and tourism development: The case study of Armenia, *Economics and Sociology*, Centre of Sociological Research, 2021, 14(1), 199-213. (Scopus, Web of Science)
18. Tovmasyan G., Evaluating the quality of hotel services based on tourists' perceptions and expectations: The case study of Armenia, *Journal of International Studies*, 13(1), 2020, pp. 93-107. Centre of Sociological Research (Scopus)
19. Tovmasyan G., Forecasting the Number of Incoming Tourists using ARIMA Model: Case Study from Armenia. *Marketing and Management of Innovations*, 2021, N3, pp. 139-148, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymskiy-Korsakov Street 2, (Web of Science),
20. Tovmasyan G., Raising the Effectiveness of Tourism Marketing and Branding: Evidence from Armenia, *Marketing and Management of Innovations*, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymskiy-Korsakov Street 2, 2020, Issue 1, pp. 167-181 (Web of Science).

References

1. Zvart'noc o'danavakayan, <http://www.zvartnots.aero/HY/Index>
2. T'ovmasyan G.R', Zbosashrjowt'yan zargacman himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm (menagrowt'yown). -Er&an: Meknark SPY', 2020, 622 e'j, ISBN 978-9939-0-3445-4
3. T'ovmasyan G., «COVID-19»-i bacasakan azdecowt'yowny' HH zbosashrjowt'yan olorti vra, *BANBER Evrasia mijazgayin hamalsarani*, No 1, 2020, e'jer` 153-171:
4. Koronavirowsi tntesakan het&anqneri chezoqacman c'ragrer, <https://mineconomy.am/page/1724>
5. Hayastani Hanrapetowt'yan marzery' & Er&an qaghaqy', t'verov, 2021, e'j 292-293, https://armstat.am/file/article/marzer_2021_22.pdf
6. HH kar'avarowt'yan 2020t'. marti 26-i N 354 – L oroshman havelvac', https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf
7. HH mowtq gorc'elow y'nt'acakargowm p'op'oxowt'yownneri veraberyal, <https://www.mfa.am/hy/COVID-19/2021/12/01/covid-19/10955>
8. HHPT 2004.01.29/6(305) Hod.106, Zbosashrjowt'yan & zbosashrjayin gorc'owneowt'yan masin HH o'renq, 2003t'., hodvac' 2
9. HH social-tntesakan vitwaky' 2019, 2020, 2021 & 2022 t'vakanneri hownvarin, 2020 & 2021t't'. hownvar-dektemberin, <https://www.armstat.am>
10. HH vitwakagrakan komitei Vitwakagrakan tvyalneri bazaner, Mijazgayin zbosashrjowt'yown, <https://www.armstat.am/am/?nid=14>
11. HH vtwarayin hashvekshir', Artaqin hatvac'i vitwakagrowt'yown, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
12. Armenia 2019, Annual research: Key highlights, p. 1, <https://www.wttc.org/economic-impact/country-analysis/country-data/>
13. Armenia 2021, Annual research: Key highlights, p. 1, <https://wttc.org/Research/Economic-Impact>

14. Poghosyan K., Tovmasyan G., Modelling and Forecasting Domestic Tourism. Case Study from Armenia, SocioEconomic Challenges, 5(2), pp. 96-110, ARMG Publishing Rymaskogo-Korsakova st., 2, Sumy, Ukraine
15. Tourism grows 4% in 2021 but remains far below pre-pandemic levels, <https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels>
16. Tovmasyan G., Assessment of tourist satisfaction index: Evidence from Armenia, Marketing and Management of Innovations, Sumy State University, Ukraine, 40007, Sumy, Rymskiy-Korsakov Street 2, Issue 3, 2019, e'j` 22-32, (Web of Science).
- Повышение финансовой грамотности населения в целом.

¹ "Digital Revolutions in Public Finance", edited by Sanjeev Gupta, Michael Keen, Alpa Shah, and Geneviève Verdier, Chapter 10, N. Ndung'u., "Digitalization in Kenya: Revolutionizing Tax Design and Revenue Administration", p. 247

Ситуация в Республике Армения

Комитет государственных доходов РА также реализует меры, направленные на развитие информационной инфраструктуры. В частности, “стратегия по развитию и совершенствованию налогового администрирования Комитета Государственных Доходов Армении на 2020-2024гг” включает стратегическую цель №1 “совершенствование систем управления” определяющую ряд мер, направленных на внедрение и развитие финансовых технологий, включая внедрение системы электронного архивирования, надежности информационной системы, обновление серверных и операционных систем, внедрение аналитических инструментов Big Data, внедрение алгоритмов машинного обучения (искусственный интеллект) и прочее. Подведение итогов программы планируется в 2025 году¹.

Основные направления данных мер можно разделить на 3 категории.

1. Технологическое совершенствование
2. Совершенствование программного обеспечения
3. Повышение квалификации сотрудников

В настоящее время большой объем данных скапливается через существующие информационные системы Комитета государственных доходов. При этом до сих пор встречаются случаи, когда многие документы (в том числе касающиеся внешнеэкономической деятельности), обрабатываются бумажным путём (хранятся в папках) центрами обслуживания и таможней. Отсутствие информационно-поисковой системы обременяет общее рабочее время.

Существуют также некоторые проблемы с доступом информации от других государственных учреждений, которые влияют на эффективность налоговой администрации. Обмен информации между КГД и гос. учреждениями затрудняется разницей между информационными системами. КГД получает информацию от других ведомств в периоде после операций через систему документооборота «Mulberry», а некоторая важная с точки зрения налогообложения информация вообще не поступает без официального запроса².

¹ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՉՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ», Հաստատված 12 դեկտեմբերի 2019 թվականի N 1830-Լ ՀՀ Կառավարության որոշմամբ, Երևան 2019, էջ 39-41

² ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ 10 հուլիսի 2019 թվականի N 900-Ն, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=151628>



Комитет государственных доходов уже предпринял шаги по использованию инструментов анализа Big Data для повышения эффективности налогового и таможенного администрирования. Однако на данный момент только 20% аналитической работы выполняется с применением данной технологии. Одним из наиболее важных факторов повышения эффективности аналитики данных является уровень точности исходных данных, лежащих в основе этого анализа, который также необходимо улучшить.

В целях повышения эффективности налоговых процедур планируется оснащать системы механизмами машинного обучения для обеспечения обратной связи с системой управления рисками на всех этапах аудиторских проверок. В результате внедрения соответствующих алгоритмов на основе собранной информации станет возможным внедрение системы прогнозного моделирования для автоматизации выполняемых анализов, прогнозов, корректировки критериев риска, весовых коэффициентов на их основе, ориентируя налоговые органы на проведение дальнейших проверок, создавая более точные контрольные списки рисков. В то же время внедрение механизмов машинного обучения позволит в автоматическом режиме выбирать инспекторов, проводящих проверки, сводя к минимуму возможное влияние предвзятого подхода к человеческому фактору.

Проводимые КГД реформы большей частью направлены на устранение несовершенств существующей системы. В частности, большое внимание уделяется на совершенствование механизмов получения, обработки, хранения и анализа информации, нежели на углубление взаимодействия с частным сектором и налогоплательщиками.

Заключение

Процесс цифровизации охватывает весь спектр социально-экономических отношений. Налоговое администрирование подвержено данным процессам как с точки зрения инициатив национальных правительств, так и программ международных организаций. С точки зрения налогоплательщиков цифровизация и новые

технологии сокращают расходы как на процесс, так и время потраченное на выполнение налоговых обязательств.

Анализ опыта Кении показывает, что эффективность проведения политики совершенствования налогового администрирования большей частью зависит от уровня сотрудничества гос. и частного секторов. Кроме того, цифровизация налоговой системы порисходила на фоне цифровизации остальных аспектов общественной жизни. Важным является стратегия проведения реформ, основной целью которой являлась включение в систему тех слоёв населения, которые в традиционных налоговых системах оставались вне поля зрения налоговой администрации. Процесс цифровизации Кении происходил по большей части “снизу вверх”, инициатором которого являлся частный сектор. С другой стороны данный уровень развития был бы невозможен без адекватных встречных мер со стороны государства. В сумме охватывая все сферы общественной жизни, правительству Кении удалось отойти от принципа “добровольного соответствия”, автоматизировав и интегрировав большинство налоговых и иных функций в повседневную жизнь налогоплательщиков.

В Армении особенность состоит в том, что в сфере налогообложения инициатором реформ является больше государство, чем налогоплательщики. Предпринятые шаги КГД, описанные в стратегии развития направлены скорее на совершенствование систем управления чем на улучшение механизмов взаимодействия с налогоплательщиками. Данное обстоятельство чревато непредвиденными последствиями обусловленными такими факторами, как несовместимость систем гос. учреждений и частного сектора, оторванность налоговой администрации от реалий на технологическом уровне, недостаточная информированность налогоплательщиков и т.д. В связи с этим рекомендуется углубление государственно-частного партнерства в первую очередь с субъектами в сфере телекоммуникационных, банковских и информационных услуг, что позволит держать руку на “технологическом пульсе” экономики, увеличивать объёмы и качество налоговой информации, при этом снижая её себестоимость, в большей степени включать интересы частного сектора и налогоплательщиков в процесс административно-правового регулирования налоговой системы и т.д.

Список использованной литературы

1. «Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թվականների զարգացման եվ վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր», Հաստատված 12 դեկտեմբերի 2019 թվականի N 1830-L, ՀՀ Կառավարության որոշմամբ, Երևան 2019
2. Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում՝ 10 հուլիսի 2019 թվականի, N 900-Ն, «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին», <http://www.irtek.am/views/act.aspx?Aid=151628>К. Baisalbayeva, E. van der Enden,

- V. Ion, H. Tsavdaris, “Digital Transformation of Tax Administration”, Microsoft and PricewaterhouseCoopers Belastingadviseurs N.V 2018
3. “Tax Administration 3.0: The Digital Transformation of Tax Administration”, OECD 2020, p. 10, Paris. <http://www.oecd.org/tax/forum-on-tax-administration/publications-and-products/tax-administration-3-0-the-digital-transformation-of-tax-administration.htm>
 4. Electronic Government and the Information Systems, Perspective 8th International Conference, EGOVIS 2019 Linz, Austria, August 26–29, 2019
 5. “Regulatory Sandboxes”, Toronto Leadership Centre 2017
 6. “FinTech, RegTech and SupTech: What They Mean for Financial Supervision”, Toronto Leadership Centre 2017
 7. E. Knight, D. Wojcik, “FinTech, economy and space: Introduction to the special issue”, EPA: Economy and Space 2020
 8. “Digital Revolutions in Public Finance”, edited by Sanjeev Gupta, Michael Keen, Alpa Shah, and Geneviève Verdier, Chapter 10, N. Ndung’u,, “Digitalization in Kenya: Revolutionizing Tax Design and Revenue Administration”
 9. Priya Mehta, Jithin Mathews, Sandeep Kumar, K. Suryamukhi, Ch. Sobhan Babul(B), S. V. Kasi Visweswara Rao, Vishal Shivapujimath, and Dikshant Bisht Indian Institute of Technology Hyderabad, Sangareddy, “Big Data Analytics for Tax Administration”, “Electronic Government and the Information Systems Perspective” 8th International Conference, EGOVIS 2019 Linz, Austria, August 26–29, 2019
 10. Bhagat, L. Roderick, “Banking on refugees: Racialized expropriation in the fintech era”, “Environment and Planning A: Economy and Space”, Issue 8, Sage Journals 2020

Ссылки

11. “Hayastani Hanrapetowt'yan Petakan ekamowtneri komitei 2020-2024 t'vakanneri zargacman ev varchararowt'yan barelavman r'azmavarakan c'ragir”, Hastatvac' 12 dektemberi 2019 t'vakani N 1830-L HH Kar'avarowt'yan oroshmamb, Er&an 2019
12. “Hayastani Hanrapetowt'yan Petakan ekamowtneri komitei 2020-2024 t'vakanneri zargacman ev varchararowt'yan barelavman r'azmavarakan c'ragir”, Hastatvac' 12 dektemberi 2019 t'vakani N 1830-L HH Kar'avarowt'yan oroshmamb, Er&an 2019
13. Financial Stability Board/ definition of FinTech: <https://www.fsb.org/work-of-the-fsb/financial-innovation-and-structural-change/fintech/>
14. Investopedia/ definition of Havala payment system: <https://www.investopedia.com/terms/h/hawala.asp>

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Դավիթ Արմենակի Պետրոսյան

Համառոտագիր: Համատարած թվայնացման գործընթացը նոր հնարավորություններ և պահանջներ է ներկայացնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում նաև հարկային համակարգի համար: Տեղեկատվության մշակման մեխանիզմների ընտրությունը ապագայում պայմանավորելու է հարկային համակարգի արդյունավետությունը և նպաստելու է արդար և կայուն հարկային ենթակառուցվածքների ձևավորմանը: Տեխնոլոգիական կարողությունների զարգացմանն ու տեղեկատվական կառույցի վերածելուն ուղղված միջոցառումներ է ձեռնարկում նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ): Մակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ հարկային մարմինները, իրականացնելով տեխնոլոգիական բարեփոխումների համալիր ծրագրեր, հաճախ գործնականում հնգում են կարճաժամկետ խնդիրների լուծման:

Հղվածի **նպատակն է** գնահատել ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման ներկա մակարդակը ՀՀ հարկային համակարգում, բացահայտել հարկային տեղեկատվական ենթակառուցվածքի բարելավման հեռանկարները: Հնդվածում առաջադրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները**՝ ուսումնասիրվել է ինֆորմացիոն հենքով հարկային համակարգի կառուցման առաջավոր փորձը և դրա ազդեցությունը հարկային վարչարարության արդյունավետության վրա, ուսումնասիրվել են ՀՀ ՊԵԿ կողմից թվային բարեփոխումների ուղղությամբ որոշ քայլեր, տրվել է ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվող բարեփոխումների գնահատականը: Հնդվածի **Մեթոդաբանությունը** հիմնված է համեմատական վերլուծության և համակարգային մոտեցման վրա, որի միջոցով ուսումնասիրվում է հարկային վարչարարության թվայնացման առաջավոր փորձը, գույքահեռներ են տարվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացվող բարեփոխումների հետ, գնահատվում է հարկային համակարգի թվայնացման գործընթացի արդյունավետությունը, ներկայացվում են քայլեր ավելի տեխնոլոգիական և ինտեգրացված մոտեցման համար, ինչը կհանգեցնի բարեփոխումներ արդյունավետության բարձրացմանը:

Հնդվածի գիտական նորույթը կայանում է հետևյալում. Հեղինակը առանձնացրել է հարկային վարչարարության թվայնացման հաջող իրականացման հիմնական նախադրյալները և դրանց ուսումնասիրության հիման վրա առաջարկել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից իրականացվող բարեփոխումների արդյունավետության բարձրացման «ճանապարհային քարտեզ»:

Բանալի բառեր՝ հարկային վարչարարություն, հարկային քաղաքականություն, ֆինտեխ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, մեծ տվյալներ, արհեստական բանականություն

РОЛЬ ФИНАНСОВЫХ ТЕХНОЛОГИЙ В ДЕЛЕ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ

Давид Арменакович Петросян

Аннотация: Процесс повсеместной цифровизации предъявляет новые возможности и требования ко всем сферам общественной жизни, в том числе и к налоговой системе. Выбор механизмов обработки информации определит эффективность налоговой системы в будущем, будет способствовать формированию справедливой и стабильной налоговой инфраструктуры. Комитет государственных доходов (КГД) РА также принимает меры по развитию технологических мощностей и превращению их в информационную структуру. Однако мировой опыт показывает, что налоговые органы, реализуя комплексные программы технологических реформ, зачастую на практике достигают решения краткосрочных задач. *Цель* данной статьи – оценить текущий уровень внедрения финансовых технологий в процессы налогового администрирования Республики Армения и раскрыть перспективы улучшения информационной инфраструктуры. В статье поставлены и решены следующие *задачи*: проанализирован передовой опыт построения информационно-ёмкой налоговой системы и его влияние на эффективность налогового администрирования, проанализирован процесс реализации некоторых мероприятий, определенных Комитетом государственных доходов РА, дана оценка проводимых КГН реформ. *Методология* включает сравнительный анализ и системный подход, посредством которого изучаются передовые практики цифровизации налогового администрирования, проводятся сравнения между ними и реформами, проводимыми Комитетом Государственных Доходов Республики Армения, даётся оценка эффективности системы в целом, предлагаются шаги более комплексного технологического подхода, что приведет к повышению эффективности реформ.

Научная новизна статьи заключается в следующем: Автором выявлены основные предпосылки успешного проведения цифровизации налогового администрирования, и на основе их изучения предложена “дорожная карта” повышения эффективности проводимых КГД реформ.

Ключевые слова: Налоговое администрирование, налоговая политика, финтех, информационные технологии, большие данные, искусственный интеллект

THE ROLE OF FINANCIAL TECHNOLOGIES IN IMPROVING THE EFFICIENCY OF TAX ADMINISTRATION

David Armenak Petrosyan

Abstract: The process of widespread digitalization presents new opportunities and requirements for all spheres of public life, including the tax system. The choice of information processing mechanisms will determine the efficiency of the tax system in the future, and will contribute to the formation of a fair and stable tax infrastructure. The RA State Revenue Committee (SRC) is also taking measures to develop technological capacities and turn them into an information structure. However, international experience shows that the tax authorities, implementing complex programs of technological reforms, often in practice solve five short-term problems. The *purpose* of this article is to assess the current level of implementation of financial technologies in the processes of tax administration of the Republic of Armenia and to reveal the prospects for improving the information infrastructure. In the article, the following *tasks* were resolved: analyzed the best practices in building an information-intensive tax system and its impact on the efficiency of tax administration, analyzed the process of implementing some of the measures identified by the State Revenue Committee of the Republic of Armenia, assessment of the reforms carried out by the SRC given. The *methodology* includes comparative analysis and a systematic approach, through which the best practices of digitalization of tax administration are analyzed, comparisons are made between them and the reforms carried out by the State Revenue Committee of the Republic of Armenia, the effectiveness of the system as a whole is assessed, steps are proposed for a more integrated technological approach, which will lead to increased efficiency.

The scientific novelty of the article is as follows: The author identified the main prerequisites for the successful implementation of the digitalization of tax administration, and based on their study, a “road map” was proposed to increase the effectiveness of the reforms carried out by the SRC.

Keywords: tax administration, tax policy, fintech, information technologies, big data, artificial intelligence

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ *

Ռոբերտ Ներսեսի Սարինյան Բելլա Վալերիի Գաբրիելյան

Հոդվածը ստացվել է՝ 29.03.2022թ., գրախոսման ուղարկվել է՝ 30.03.2022թ., տպագրման երաշխավորվել է՝ 18.04.2022թ.

Ներածություն - Տնտեսագիտական գրականության վերաբերյալ պարբերական տեսությունները կարևոր միջոց են տնտեսական պրոցեսների հարցերի լուսաբանության համար, որոնք պատկերացում են տալիս ոչ միայն նվաճումների, այլև բացահայտելու ու սրելու այն հիմնախնդիրները, որոնք առկա են հանրապետության առջև: Դրանք կարևոր են վերհանելու կատարվող պրոցեսների միտումներն իրենց հեռանկարի մեջ:

Հոդվածի նպատակը –Ակնարկների միջոցով հրապարակվող ուսումնասիրություններում հայտնաբերելու այն առաջադրությունները, որոնք նպաստ կարող են բերել ծառայած խնդիրների լուծումներին:

Մեթոդաբանություն –Կիրառվել է քննական վերլուծության սկզբունքը՝ հարցերը դիտարկելով ժամանակակից տեսական դրույթներով:

1.

Շուկայական տնտեսության անցման շրջանը թարմություն հաղորդեց հայ տնտեսագիտական մտքի որոնումներին, կատարվող վերափոխությունները դիտարկելու անցյալ և ժամանակակից տեսությունների հայտնություններում: Հետազոտական տարածքներում հաճախակի արծարծվող հարցերից էր մարդկային կապիտալի թեմատիկան: Հրապարակվող աշխատություններում անդրադարձ էր կատարվում հարցի պատմությանը տնտեսագիտական ուսմունքներում, ուրվագծվում հասկացության բովանդակության տարողունակությունն իր «հիերարխիկ տրոհման և մանրամասնության» մեջ: Սահմանազատելով մարդկային կապիտալի հետ ունեցած մարդկային ռեսուրս, կադրային կապիտալ, մարդկային ներուժ հասկացությունները, գրականության մեջ մարդկային կապիտալին առավել մոտիկ է դիտվում կադրային կապիտալ հասկացությունը, եթե ենթադրենք, որ «դրանում ընդգրկվում են իրենց կարողություններն արդեն որևէ ձևով կիրառվող կադրերը»¹: Բելլա Գաբրիելյանի «Управление кадрами как

* 2,3,4 հատվածները Բելլա Գաբրիելյանի համահեղինակությամբ

¹ Եղիազարյան Բ., Գյուրջյան Ա., Եղիազարյան Ն., «Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն», Եր., 2007, էջ 165:

основа инновационного развития организации» (Ер, 2021) աշխատությունն այդ կարողությունների կառավարման արդյունավետության մասին է, որպես ինովացիոն զարգացման գրավականի: Թերևս, ոչ պատահականորեն աշխատության մուտքը սկսվում է Իոսիֆ Ստալինի «Աշխարհում առկա բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավորը և ամենավճռորոշ կապիտալը մարդն է»¹:

Կառավարման տեսության մեջ գոյություն ունի մի տեսակետ, համաձայն որի միջին վիճակագրական մարդն իր բնությամբ հաճախ անտարբեր է կազմակերպության գործերի նկատմամբ և գերադասում է ոչ թե կառավարել, քան կառավարվել²: Ամեն մի տեսություն կառուցվում է որոշակի հենքի վրա: Սակայն, որպես ընդհանուր սկզբունք, այն կառուցված է սուբյեկտիվ նախադրյալի վրա: Այն, ինքնին հակասում է բնության օրենքին, քանի որ մարդիկ ոչ պասիվ են և ոչ էլ ծույլ: Այդպիսին նրան կարող է դարձնել կազմակերպությունը: Հենց այդ դիտակետից էլ Բ.Գաբրիելյանը նկատում է, թե կազմակերպության կարևորագույն խնդիրներից է հանդիսանում անհատի ստեղծագործական պոտենցիալի բացահայտումը, ի վերջո անձնակազմի արդյունավետ կառավարումը. «Միայն գիտակցելով, թե ինչ է մարդուն առաջնորդում, դրդում գործունեության և որոշում, թե ինչ շարժառիթներ են ընկած նրա գործունեության հիմքում, կարելի է մշակել մարդու կառավարման արդյունավետ ձևեր ու մեթոդներ: Դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես են ծագում այս կամ այն շարժառիթները, ինչպիսի եղանակներով է հնարավոր դրանք գործողության մեջ դնել»³: Այստեղ է, որ կադրերի կառավարումը ձեռք է բերում նոր բովանդակություն որպես կազմակերպության ինովացիոն զարգացման կարևորագույն գործոն: Եվ հեղինակը թե՛ տեսական, և թե՛ վերլուծական զուգահեռներով անդրադառնում է վերջինիս բովանդակային մեկնություններին, որոնք նպատակադրումների մեջ ելակետ են ընտրել այս կամ այն շերտի առաջնությունը: Տրամաբանված է հարցերի դիտարկման դասավորությունը՝ կապված կազմակերպության կադրային քաղաքականության ուղղությունների, ճգնաժամային պայմաններում դրա իրացումների, կադրային ստրատեգիայի արդյունավետության բարձրացման, աշխատանքային ռեսուրսների խթանման խնդիրների, մոտիվացիայի և այլ կտրվածքներով:

Գլոբալացման արդի պրոցեսները փոխել են սոցիալ-տնտեսական կապերը՝ ինտերնետը, միգրացիոն հոսքերը ազգայինը ներառել են համաշխարհային պահվածքի նորմերում: Մշակվել է այսպես կոչված «կորպորատիվ մշակույթի» որոշակի հայտնի սկզբունքներ: Ընդ որում՝ ազգային բիզնեսը, հատկապես շուկայական տնտեսությանն անցած երկրների կողմից ձգտումն է դեպի զարգացած երկրներում արմատավորված այդ չափանիշները, այսինքն՝ եթե ընդհանրաց-

¹ Տե՛ս, նշվ. աշխ., էջ 5 (Նկատեմ, որ կադրերի կառավարման հարցերը հեղինակի գիտական նախասիրությունն է: Խնդրի տարբեր շերտերի արժարժումներն իրենց արտահայտությունն են գտել նաև նրա «Мотивация-основное направление персоналом» (Е., 2008), «Управление персоналом» (2018) մենագրություններում և բազմաթիվ հրապարակումներում

² Кривченко А.И «История менеджмента», М., 2000, с. 278,

³ Габриелян Б. «Управление кадрами как основа инновационного развития организации» Ер, 2021, էջ 7:

ներու լինեն, անցում է կատարվում աշխատանքային գործունեության չկանոնակարգված ձևերից կանոնակարգված ձևերին: Այս իմաստով մասնագետները նույնիսկ հակված են այն մտքին, որ գուտ ազգային գործունի հանգամանքը մտածածին է, ինչպես օրինակ, ճապոնական ֆենոմենը, և որ դրա 80 տոկոսը կարելի է հարմարեցնել այլ երկրների տնտեսական համակարգերին: Մա, ինչ խոսք, ծայրահեղ մոտեցում է: Եվ Բ.Գաբրիելյանը ուշագրավ դիտողություններ է կատարում կորպորատիվ մշակույթի առանձնահատկությունների վերաբերյալ, որը ձևավորվում է երկարատև տարիների ընթացքում կառուցված որոշակի արժեքների և նպատակների վրա: Դա կորպորացիայի աշխատողների պահվածքի որոշակի նորմ է, որոշակի մշակույթ, որ վեր է ածվում ավանդույթի և փոխանցվում պայմանավորելով նրա գործունեության արդյունավետությունը¹:

Ջ.Գրեյսոնը և Օ.Դեյլը «Американский менеджмент на порогеXXI века», աշխատությունը, որը հրատարակվել է դեռևս տասնամյակներ առաջ, այսպիսի մի դիտողություն ունեն. «Կարևոր է հիշել, որ Ամերիկյան ոչինչ չի անում: Անում են ամերիկացիները: Կազմակերպությունները ոչինչ չեն անում: Անում են կոնկրետ աշխատողները և ղեկավարները: Կառավարությունը ոչինչ չի անում: Անում են ընտրողները, քաղաքական գործիչները, պետական ծառայողները»²: Բելլա Գաբրիելյանի աշխատությունը ներկայանում է որպես տեսական ուրվագիծ, որում սակայն կիրառականի հետ ունեցած սահմանը պայմանական է և իր անդրադարձնեի մեջ օգտակար եմ դիտում հանրապետության տարբեր մակարդակների մասնագետների և կազմակերպությունների անձնակազմի համար:

2.

Հենրի ֆորդը մի առիթով նկատել է, թե «փողեր փոխ վերցնելը հեշտությամբ վերակերպվում է հնարքի, որպեսզի չնայես վնասի աչքերին: Ուրիշի փողերը հաճախ ծուլությանն օգնում են: Անշուշտ, փող վաստակելը ավելի դժվար է, բայց նա ավելի լավ է, քան փոխ վերցնելը. «կապիտալը պետք է հոսի ֆաբրիկայից, այլ ոչ թե քանկից»³: Պետական պարտքի սահմանման առումով գուցե և այն չի արտահայտում այդ հասկացության ամբողջ բովանդակությունը, բայց, որ բերված փողերը խորքային չափումներ են ենթադրում, ստույգ է: Տվյալ դեպքում խոսքը, հատկապես վերաբերում է պետական պարտքի կառավարմանը: Հանրապետությունում պետական պարտքի անմիջական կառավարման փորձերը

¹ Габриелян Б. «Управление кадрами как основа инновационного развития организации» Ер, 2021., էջ 149-161 (Շրջանառության մեջ դնելով գիտական գրականությունը, նա որոշարկում է կորպորատիվ և կազմակերպական մշակույթ հասկացությունների սահմանները, հանգամանալից վերլուծում է կորպորատիվ մշակույթի որպես անձնակազմի մոտիվացիայի հիմքի, մոտիվացիայի համակարգում մոտիվացիայի մշակույթի դերի, անհատի ինքնագնահատման և մոտիվացիայի ձևերի վրա դրա ունեցած ազդեցության, անձնակազմի արդյունավետ մոտիվացիայի կարգավորման հարցերը: Չնայած առկա բազմաթիվ տեսություններին, հատկապես անցման շրջանում գտնվող երկրների, այդ թվում նաև հանրապետության համար կարևորվում է վերը նշված կապերի նոր մշակումների անհրաժեշտությունը (տե՛ս, Բ.Վ. Габриелян «Управление персоналом» (Е., 2018)):

² Грейсон Д., «Кирла О Делл», , М., 1991, с.318

³ Генри Ф., «Моя жизнь, мои достижения», М., 1989» с, 128-129.

սկսվել է իրականացվել 2000թ.-ից ֆինանսների նախարարությունում ձևավորված պետական պարտքի կառավարման վարչության և ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական պահառու բաժնի կողմից: Աշխատությունը միջազգային փորձի պատկերի վրա վերլուծություններ է պարունակում պետական պարտքի կառավարման նպատակների, մեթոդների, պարտքային բեռի գնահատման, ռիսկերի վերաբերյալ՝ դրանք կոնկրետացնելով հանրապետության տնտեսական վերափոխումների ընթացքին համապատասխան, առաջադրում առաջարկություններ իրավական հիմքերի կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ, ինչպես օրինակ այն անհարթությունների և անորոշությունների առումով, որոնք առկա են պետական պարտքի նպատակների, թափանցիկության, տեղեկատվության հետ կապված կամ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունից բացի դիտարկելու պետական պարտքի այլ բնութագրիչների սահմանային մեծությունների օրենսդրորեն ամրագրման անհրաժեշտությունը, որոնցից են՝ պետական պարտքի արտարժույթային և արտոնյալության կառուցվածքը, ինչպես նաև արտաքին պարտք/ներքին պարտք հարաբերակցությունը: Պետական պարտքի վերաբերյալ տեսության մոտեցումները հաճախ հակադիր են, մի դեպքում պետական բյուջեի խրոնիկական պակասուրդը և անհավասարակշռված բյուջեի պայմաններում պարտքի աճը որպես թե չարիք է ազգային տնտեսության համար, մի այլ դեպքում նման մոտեցումը համարվում է հոռետեսական և որ պարտքը կոչված է կարգավորելու տնտեսական գործընթացները: Սակայն, անցման շրջանի քառսային միջավայրում «այլ պայմանները» անընդհատ փոփոխվում են և տնտեսագիտական սկզբունքները գործնական կիրառությունը ընդհանուր հայտարարի բերելը անկայուն տնտեսության պայմաններում դիմառնում է որոշակի դժվարությունների: Ծախսերը հոգալու աղբյուր է դառնում արտաքին պարտքը և վերջինիս աճի միտումը: Հարցի քննությունն է ակնկալում Վ.Հարությունյանի, Ա.Մակարյանի և Ա.Պետրոսյանի դիտարկումները հարկային քաղաքականության առաջնությունները հարկային եկամուտների ավելացման և պետական պարտքի կրճատման գործում դիտարկումները: Հարցադրումն ինքնին տրամաբանական է հանրապետության պարագայում, քանի որ, ինչպես նկատում են հեղինակները, համաձայն էմպիրիկ ուսումնասիրությունների «պետական պարտքի և տնտեսական աճի միջև գոյություն ունի ոչ գծային կապ, և դա դիտարկվում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության սահմանային շեմով, որից հետո այն սկսում է բացասաբար ազդել տնտեսական աճի վրա»¹: Հանրապետությունում ոչ մի գնահատում չի իրականացվել ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության սահմանային շեմը ճշգրտելու ուղղությամբ, իսկ նույնիսկ 2020թ. համար 63, 45 հարաբերակցության սահմանը արդեն մոտենում է 70 տոկոսի: Հեղինակների վերլուծությունը կառուցվել է հարկային բոյանսի գործակցի վրա, որը ներառում է հարկային քաղաքականությունն ու հարկային վարչա-

¹ Սարինյան Ռ., Գաբրիելյան Բ., «Ազգային տնտեսություն. նորոգության ուրվագծերում», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.» Գիտական հոդվածների ժողովածու-2021, , Եր., 2021, էջ 35:

բարությունը (անփոփոխ բազաների պարագայում) և ցույց է տալիս ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների առաձգականությունը: Դա այդ գործակցների համեմատական գնահատումներն են ԱԱՀ, եկամտահարկ, շահութահարկ, ակցիզային չորս հիմնական հարկատեսակների վերաբերյալ: Նկատենք, որ բոյանսի գործակցի մեկ միավոր լինելու դեպքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա ցուցադրվում է չեզոք ազդեցություն: Այլ երկրների փորձի և 2013-2020թթ. համապատասխան տվյալների վերլուծության արդյունքում հեղինակները հանգել են այն հետևությանը, թե «ՀՀ հարկային համակարգը բոյանտ չէ, և իրական ՀՆԱ-ի 1% փոփոխությունը, ընդհանուր առմամբ կարող է հանգեցնել 0.746%-ի փոփոխության»: Ընդ որում, հարկային եկամուտներ ապահովելու տեսակետից կառավարության առաջնային խնդիրներից է դիտվում ԱԱՀ-ի և եկամտահարկի բոյանսի գործակիցների արժեքների բարձրացումը: Մի այլ եղանակ է առաջարկվում պրոգրեսիվ համակարգին վերադառնալը, կամ էլ անցում տարբերակված դրույքաչափերին¹:

Իսկ հանրապետության արտաքին պարտքը շարունակում է աճել:

3.

«Տնտեսական նորոգությունները». գործարկման ուղիները Հայաստանում» ժողովածուն (2021թ.), ըստ էության շարունակությունն է «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում» ժողովածուի (2020): Երկուսն էլ հետամտում են նույն նպատակը այլ երկրների փորձը հաշվի անելով, օգտակար լինել հանրապետության տնտեսական շինությանը, փոխակերպության արդի պրոցեսներում: Սակայն, առաջնորդվելով ոչ թե փորձի արհեստական գործարկման պարտադիր տեղայնամտության, այլ ուսանելիության սկզբունքներից:

* * *

Ատոմ, Մոնա և Անդրանիկ Մարգարյանները հենց այդ դիտակետից են մոտենում Շվեդիայի տնտեսական մոդելի քննությանը՝ նկատելով, որ, եթե այդ երկրի մոդելը խորությամբ ուսումնասիրվել է «եվրոպական երկրների զարգացման փորձի ու առկա մոդելների համատեքստում», ապա «նրա արդիականացման խնդիրները համեմատաբար քիչ են ուսումնասիրվել զարգացող շուկաների և, հատկապես, նախկին սոցիալիստական երկրների տնտեսական բարեփոխումների փորձի գնահատման ու վերաիմաստավորման համատեքստում»²: Չանդրադառնալով Շվեդական մոդելի ձևավորման հետագծի հեղինակների վերլուծություններին, այդ փորձի իմացականության տեսակետից կարևոր է ներկայանում Հայաստանում դրա կիրառման հնարավորությունների հեղինակների մտորումները, որոնք հանգում են հետևյալին.

¹ Մարինյան Ռ., Գաբրիելյան Բ., «Ազգային տնտեսություն. նորոգության ուրվագծերում», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.» Գիտական հոդվածների ժողովածու-2021, էջ 44-45:

² Մարգարյան Ա., Մարգարյան Ս., Մարգարյան Ա., . «Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի յուրահատկություններն ու ուսանելի կողմերը», «Տնտեսական նորոգությունները». գործարկման ուղիները Հայաստանում, Եր., 2021թ., էջ 69-70:

«ա. Իրականացվող տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների քաղաքականության արդյունքները մշտապես պետք է ճշգրտվեն և համադրվեն հասարակության մեջ ըստ եկամտի բաշխման համամասնությունների հետ, որոնց գնահատման հիմնական չափանիշը Ջինի գործակիցն է:

բ.Տնտեսության տեխնոլոգիական արդիականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման հիմնական աղբյուրները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության հանքային հարստություններից ստացվող բարձր ռենտային եկամուտները և ռոյալթիները: Այդ նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ հանքահումքային ոլորտի նկատմամբ վարվող ընդհանուր կարգավորումների և հարկային քաղաքականությունը*:

գ. ... անհրաժեշտ ռեսուրսները արտաքին պարտքի ավելացման հաշվին ունի իր սահմանները, որոնք չեն կարող գերազանցել երկրի ՀՆԱ-ի 35-40 տոկոսը: ...անհրաժեշտ է էապես նվազեցնել ՀՀ արտաքին պարտքի բեռը, բյուջեի պակասուրդի մնացյալ հատվածը լրացնել, մի կողմից, պետական ներքին փոխառությունների ավելացման, մյուս կողմից՝ պետական ծախսերի որոշակի մասի (մասնավորապես՝ պետական ապարատի պահպանման գծով) կրճատման միջոցով»¹:

Համաշխարհային տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի ոլորտում Լիլիթ Սարգսյանին հետաքրքրել է Թայվանի տնտեսական քաղաքականության դասերը: Նկատենք, որ երկրի արագ զարգացման ազդակները գրականության մեջ պայմանավորվել են տարբեր գործոններով. համաձայն մի կարծիքի այն կապվում է ամերիկյան ու ճապոնական ակտիվ ներդրումների հետ, մի այլ մոտեցմամբ կարևորվում են արտաքին շուկաներում տեղական արտադրողների պաշտպանության հիմնախնդիրները և արտահանության խթանումը, այլ հեղինակներ վարքաբանական տնտեսագիտության տեսակետից շեշտը դնում են բնակչության հոգեբանական և մշակութային առանձնահատկությունների վրա կամ էլ պատճառը որոնում ավտորիտար համակարգից ժողովրդավարական

* Մկրտչյան Ս.Ա., «Տնտեսական աճ. կայուն զարգացում» մենագրությունը, Եր. 2013, էջ 107-110: Նկատել, որ ոլորտի հարկային նոր մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը շուրջ 10 տարի առաջ անդրադարձել է Սառա Մկրտչյանը: Մասնավորապես նա հիմնավորում է, որ մետաղական ռոյալթից «Չվերականգնվող մետաղական ռեսուրսների արդյունահանումից կայունացման հատուկ ֆունդի» ստեղծմամբ, հնարավորություն է ստեղծվում Հայաստանի մետաղական ռեսուրսներից ստացված ռենտան ներդնել կայուն տնտեսական աճ ապահովող կապիտալի ձևերում՝ իրագործելով սերունդների իրավահավասարության սկզբունքը և կայունության անհրաժեշտ պայմանը»: Եվ ապա՝ «Որպեսզի ավելացված արժեքները ստեղծվեն երկրի ներսում՝ նպաստելով կայուն տնտեսական աճին, նպատակահարմար է ԱԱՀ-ի հետադարձի արտոնությունը սահմանել միայն վերջնարտադրանքի արտահանման վրա»: Կամ՝ «Հայաստանի 15 պոչ-ամբարներում տեղակայված թափոնների վերամշակումը խթանելու նպատակով նպատակահարմար է արտոնյալ հարկային դաշտ ստեղծել թափոնապոչերի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների համար՝ շահագործման թույլտվություն տալով միայն այն ընկերություններին, որոնք կօգտագործեն ժամանակակից սակավաթափոն տեխնոլոգիաներ»:

¹ Մարգարյան Ա., Մարգարյան Ս., Մարգարյան Ա., . «Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի յուրահատկություններն ու ուսանելի կողմերը», «Տնտեսական նորոգությունները». գործարկման ուղիները Հայաստանում, Եր., 2021թ., էջ 85

պետությանն արագ անցնելու հետ, որոշ դեպքերում էլ տեղ հատկացվում վարչահրամայական տնտեսակարգի պարագային, որին պիտի հաջորդի դանդաղ աճը: Ինձ թվում է նշված ազդակները հարկ է դիտարկել ոչ թե դրանց սահմանազատումների մեջ, այլ որպես առարկայական ազդեցությունների ամբողջություն: Հեղինակը ուրվագծելով Թայվանի փուլային զարգացման հոսքերին, Հայաստանի համար առաջադրում է նոր մոդելի անհրաժեշտությունը, առաջին հորիզոնականը հատկացնելով կրթական համակարգին: Եթե Թայվանի կրթական համակարգը իր հիմքում ուներ սովետական կրթական համակարգի մոդելը, ապա հանրապետությունում արդիականացման փոխարեն ընտրվեց «այն քանդելու» ուղին: Խոսքը վերաբերում է ոչ միայն կրթական ծրագրերի, այլև ոլորտի կառավարմանը՝ կապված կրթական հաստատությունների ֆինանսավորման, պետպատվերային տեղերի հիպոթետիկ մոտեցման, այլև հիմքում ունենալով տնտեսության յուրաքանչյուր ոլորտի մասնագետների պահանջարկի համապատասխան հիմնավորումներով¹: Լ.Սարգսյանը նույն դիտողական անցումներն է կատարում գիտության, նորարարության, արտահանման ներդրումների վերաբերյալ մտորումներում:

Ժողովածուի առաջարկությունների դաշտը մեծ է իր ընդգրկումների մեջ: Այսպես՝ Ս.Պապիկյանը կարևորում է Լորվեգիայի էներգետիկ անվտանգության փորձը, Ե.Հակոբյանի և Մ.Պողոսյանի անդրադարձը վերաբերում է Շվեյցարիայի և Ավստրիայի կրթության և զբաղվածության հարցերին, Շ.Պողոսյանը ուշադրություն է սևեռում Պորտուգալիայի կուտակային կենսաթոշակային բարեփոխումների խնդրին, Ա.Զախարյանը՝ Հունաստան-Հայաստան մշակութային համագործակցությանը, Մ.Մանուչարյանը՝ Բրազիլիայի օրինակով ՀՀ ազրարային ոլորտում նորարարական տեխնոլոգիաների ներդրման համակարգերի անհրաժեշտությանը և այլն:

Ինչ խոսք, անմտություն կլինի կարծել, թե ժողովածուի բոլոր առաջարկներն իրենց կիրառությունները պետք է գտնեն ՀՀ տնտեսության մեջ, քանի որ այս կամ այն երկրում նշված տարրերից յուրաքանչյուրը կապված է բազմաթիվ պայմանականությունների հետ, բայց ուսանելի են որպես փորձի որոնումների, որը կարող է նպաստել հանրապետության այսօրվա իրական բովանդակության ճեղքվածքների կրճատմանը:

4.

Հրապարակվող որոշ աշխատանքներում մի մտայնություն է շրջանառում, որպես թե տնտեսության տարբեր ոլորտներում սկիզբ առած ռեֆորմներից շեղումները սկսվել են 1990-ական թվականների վերջերից: Փորձ է արվում սրբագրել ժամանակին թույլ տրված վրիպումները: Այսինքն՝ անցյալը ներկայացվում է այն պարզ մոտեցմամբ, որը սահման է գծում բարեփոխումների սկզբի և դրանից հետո-ի միջև, լինի դա մասնավորեցման գործընթաց, հարկային, բանկային, կրթական և այլ ոլորտներ: Ինչով բացատրել 90-ականների սկզբում

¹ Սարգսյան Լ., «Թայվանի տնտեսական քաղաքականության դասերը» «Տնտեսական նորոգությունները». գործարկման ուղիները Հայաստանում, Եր., 2021թ., էջ 227-228:

բարեփոխումներ ակնկալող ցանկությունների և հանրապետության հետագա կացության խզվածությունները: Պատճառն ավելի, քան հստակ է արտահայտել ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը: 2016թ. դեկտեմբերին «Այցելություն ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին» երկխոսությունում. Հարություն Հովնաթանի այն հարցադրմանը, թե «երկյուղ ունեմ, որ կորցնում ենք մեր ազգային նկարագիրը», Ս.Սարինյանը պատասխանում է «Պատճառը խզումն է պետության և ազգային գաղափարախոսության միջև: Ազգային գաղափարախոսությունը գիտություն է ազգի սոցիալական, տնտեսական և հոգևոր զարգացումների վերաբերյալ: Դա ազգի կեցության փիլիսոփայությունն է, նրա գործունեության հիմունքը: Մերկ տնտեսականությունը Կարլ Պոպպերի և Սորոսի բաց հասարակության տեսությունն է, որն ինչքան շահավետ է մեծ ազգությունների համար, նույնքան կործանարար է փոքր ազգության համար, քանզի վերջինիս ներառելով տնտեսական զարգացման համաշխարհային օվկիանոսի մեջ, դիմազրկում է նրա ազգային ինքնությունը: ... Թող տպավորություն չստեղծվի, թե ես թերազնահատում եմ տնտեսական զարգացման ծրագիրը: Բնա՛վ: Սակայն ենթադրում եմ, որ պետության քաղաքականությունը, այդ թվում նաև տնտեսական զարգացման ուղղությունը պետք է տա ազգային գաղափարախոսությունը: Ամենօրյա զովագողով հաճելի է լսել «Ջերմուկը» ազգային արժեք է»: Բայց տասնապատիկ անգամ ավելի ազգային արժեք է Աշոտ Մելքոնյանի «Հայոց պատմությունը: Այստեղ է հայոց պետականության գիտությունը, նրա անցյալը, ներկան և ապագան»¹: Եվ ապա. «Միալը կատարվել հենց սկզբից: Անկախության հերոսներն ավելի հեղափոխական գտնվեցին, քան բոլշևիկները, ոչնչացնելով այն ամենը, ինչ ստեղծվել է խորհրդային տարիներին. սոցիալական, տնտեսական, մշակութային մի կայուն համակարգ, որը հիմք էր տալիս նորոգման, կատարելագործման. հանկարծակի հեթանոսական այրերը ոչնչացնելով այդ ամենը, գործի դրեցին եվրոպական չափանիշներով կյան կառուցելու մոդուսը: Իհարկե չենք կարող դուրս մնալ միջազգային ինչ-ինչ համակարգերից, բայց անկարելի է անտեսել ազգային ավանդույթն ու մենտալիտետը: Այժմ վերակառուցումների գլխավոր նշանաբանն է հնչում օպտիմալացումը, կրճատումը, միավորումը: Իսկ ինչ անհրաժեշտությամբ: ... դրա փոխարեն ուռճացել է պետական ապարատը՝ ոստիկանություն, նախարարություններ, մարզպետարաններ, խորհրդականներ և այլն: Ահա թե որտեղ է անհրաժեշտ օպտիմալացումը... Մեր լեզուն, մեր պատմությունը, գրականությունը, արվեստը, մի խոսքով, հոգևոր մնայուն արժեքներով հարուստ մեր մշակույթը: Մեկ այլ անցաթուղթ ունենալ չեն կարող»²: Ոչ պատահականորեն հարցազրույցը վերնագրված է «Կստեղծե՞նք հոգևոր Հայաստան կապրենք...»: Իսկ այս անցաթուղթը կորցնում ենք, եթե չասեմ կորցրել ենք: Ասվածը անմիջականորեն կապվում է այնպիսի մի կարևոր խնդրի ինչպիսին ազգային տնտեսական մոդելն է: Անցել է ավելի, քան երեք տասնամյակ ազգային տնտեսական մոդելի հարցը մնում է անորոշ: Ի վերջո՝ դեպի ո՞ւր ենք շարժվում: Իսկ

¹ Սարինյան Ս., «Հայոց գրականության երկու դարը», VII, 2018, էջ 241-242:

² Սարինյան Ս., «Հայոց գրականության երկու դարը», VII, 2018, էջ 243:

արդեն 90-ական թվականներին Մ.Քոթանյանը սրում էր «սեփական մոդելի» ստեղծման հարցը: «... բնական, կլիմայական, դեմոգրաֆիական, տնտեսական ու սոցիալական առանձնահատկությունները, -գրում է տնտեսագետը,-թելադրում են մշակել ընդգծված սոցիալական կողմնորոշում ունեցող ՀՀ շուկայական էկոնոմիկայի մոդել: Այդ մոդելը պետք է լինի ոչ թե շուկայական էկոնոմիկայի դասական՝ ամերիկյան, ճապոնական, ֆրանսիական կամ այլ երկրի մոդելի կրկնությունը, այլ, ընդգծված սոցիալական կողմնորոշման, կառավարվող շուկայական էկոնոմիկայի մոդել»¹: Նա հիմնավորում է այդ անհրաժեշտությունը և ընդհանուր գծերով ներկայացնում դրա բաղադրիչները: Տնտեսական փոխակերպությունների ընթացքում, ըստ էության, դուրս մնաց ազգային մոդելի չափորոշիչների հարցը: Կատարվող հետազոտություններում փորձի ընթացինական իմաստով հաճախ առաջադրվում էր այլ երկրների հրապուրիչ տպավորության ինչ-ինչ կողմերը պատվաստել հայ տնտեսական շինությանը: Ավելին, նույնիսկ կատարվում են աբսուրդի հասնող չհամեմատվող համեմատություններ և հանրապետության ազգային տնտեսությունը և այլ երկրները բնութագրող ցուցանիշների միջև: Ճիշտ է ասված, թե ամեն մի ծայրահեղություն սահմանափակության արդյունք է: Ես բնավ այն կարծիքին չեմ, թե չեն գրվել արդի տնտեսության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ: Եվ մի անգամ չէ, որ անդրադարձել եմ դրանցում հանրապետության տնտեսության նորոգություններ ակնկալող վերլուծություններին: Խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ուսումնասիրություններին, այլ տարբեր մասնագետների համատեղ, միասնական կոնցեպտուալ սկզբունքով մշակմանը և դրան տեղադրելուն ազգային ընդհանուր սոցիալական, տնտեսական ու քաղաքական բովանդակությանը: Այս կամ այն հարցի շուրջ գիտական բանավեճերը բացակայում են, իսկ մասնավոր դիտարկումներում, խնդիրը, ինչպես պատկերավոր նկատել է տնտեսագետներից մեկը, կարծիքներ էին հայտնվում, թե «արևածաղիկ վաճառող տատիկը ամեն մի փոքրիկ փաթեթի համար պե՞տք է հարկ վճարի, թե՞ ոչ»: Շատ հաճախ, թե՛ հեռուստատեսային էկրաններից, թե՛ գիտական հրապարակումներում, թե՛ վերին ասյանի ելույթներում հնչում է «գիտությունը դիմորոշել դեպի կիրառական ոլորտը», որպես թե չի արդարացվում այնպիսի գիտական արժեքի ստեղծումը, որը չի առևտրայնացվում և չի ապահովում պետական բյուջեի համապատասխան չափի մուտքեր: Հրապարակումներում կատարվում են որոշակի առաջարկություններ գիտության ծառայությունների կառավարման նորոգության ուղղությամբ: Սակայն առևտրայնացման ծայրահեղ դրույթն իր շատ մասերով դիտում եմ անընդունելի, ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունների նկատմամբ: Ինչպես առևտրայնացնել տեսական ֆիզիկայի ուսումնասիրությունները, որոնք հաճախ իրենց իրացումները կարող են ստանալ տասնամյակներ անց: Կամ հայտնի է, որ մաթեմատիկայում առկա են «չլուծվող խնդիրները», որոնց լուծման գաղտնիքը շարունակում է զբաղեցնել ոչ մեկ սերնդի: Իսկ գրականության, պատմության, փիլիսոփայության, լեզվի և ճյուղերի

¹ Քոթանյան Մ., «Շուկայական էկոնոմիկա», Եր., 1998, էջ 120:

առևտրայնացումը պարզապես կնշանակի կործանում, ի վերջո ազգի հոգևոր դատարկության:

Ինքնին հարց է առաջանում, իսկ ինչպես գնահատել գիտնականի ներդրումը տվյալ ոլորտում: Մի դեպքում առաջարկվում է հաշվի առնել հեղինակից կատարվող ցիտումները, մի այլ դեպքում՝ հրապարակումների քանակը, մի երրորդ դեպքում՝ միջազգային հարթակներում հրապարակումները և այլն: Քվանտային տեսության պրոֆեսոր Սեմյոն Լյախովիչը դրանք համարում է գիտության «չափելիության չարաշահումներ», որոնք խիստ պայմանական բնույթ ունեն, որպես հիվանդություն, տարածված այն երկրներում, որոնք նոր-նոր սկսում են շուկայական տնտեսության պայմաններում յուրացնել գիտությանն աջակցելու մեթոդները: Պատահական չէ տարածում ստացած շահադիտական նկրտումներով ցիտելու խնդրանքների տարածվածությունը¹: Բոլորովին չմերժելով արտերկրներում հրապարակումների անհրաժեշտությունը, սակայն հրապարակումների դաշտի տարածական ընդլայնումը դեռևս չի խոսում դրանց որակի մասին: Իսկ, որ դրսի շատ հանդեսներում առաջնորդվում են «վճարի և սկզբով» սկզբունքով, իրողություն է:

Տնտեսագիտության ոլորտում ես գերադասում եմ «խոսքի տարածության» բաղադրիչների այնպիսի մակարդակի արմատավորումը հանրապետության դաշտում, երբ տնտեսագետների համայնքում բոլորը չէ, որ համաձայն են բոլորի հետ, երբ գրախոսությունները կդառնան գիտական հրապարակումների անցաթղթերը և հնարավորություն կստեղծվի հանրապետության տնտեսության խնդիրների մասին պատկերացում կազմելու ոչ թե «դրսում» այլ «ներսում» հրապարակված ուսումնասիրություններից:

5.

Վիկտոր Կատվայանի և Վլադիմիր Հարությունյանի «Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին» ուսումնասիրությունը էքսկուրս է արդի հայ տնտեսագիտության մեջ օգտագործվող տերմինների վերաբերյալ: Տնտեսագիտության մտքի, և ոչ միայն, զարգացման մեջ գոյություն ունի մտածողության հաջորդափոխության օրենքը, հետևապես, համապատասխան տերմինաբանության ձևավորման, ժառանգության և փոխանցելիության սկզբունքը: Հեղինակներն իրավացիորեն նկատում են, որ 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբին տնտեսական ոլորտի տեղաշարժերն անհրաժեշտություն են դարձնում «բառապաշարի համալրումը», որպես կարևոր միջոցի տնտեսագիտական հետազոտությունների իրականացման համար²: Ընդհանրապես, բնականոն զարգացման պարագայում, ինչպես և դա տեղի ունեւ արևմտյան երկրներում, ամեն մի տվյալ փուլ ժառանգում է ոչ միայն անցյալ տնտեսական

¹ Голос Армении, 3-9 сентября 2019г.

² Կատվայան Վ., Հարությունյան Վ., «Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին» «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում – հատոր 1, Եր., 2021, էջ 22-35, Սարինյան Ռ., Արդի հայ տնտեսագիտական տեսություն, գիրք 1, Եր., 2003, էջ 138-141: Սարինյան Ռ. «Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմություն», III, Եր., 2014, էջ 246-249:

մտածողության պոստենցիալը, այլև վերագնահատում ու վերանայում այն, սահմանազատվում նրանից, երևույթներին տալով նոր մեկնաբանություններ, ճշգրտում դրանց գիտական բնութագրությունները, գիտական շրջանառությանը բնորոշ դառնում հատուկ ու վերջավորված տերմինալոգիա: Հակառակ դեպքում, ինչպես դա հայ իրականության մեջ էր XIX դարի վերջերին և XX դարասկզբին, տնտեսական գիտությունը պիտի բնորոշվեր հաղթահարված ու չհաղթահարված տեսակետների ու հասկացությունների հակասականությունը: Ահա, թե ինչու «Միտք» հանդեսի տեսաբան Մ.Հարությունյանը դեռևս անցյալ դարասկզբին նկատում է, թե «արտահայտությունների տնտեսագիտական բովանդակություն նույնքան անստույգ է, որ հաճախ մեկը մյուսի տեղ գործ են ածում, դրա, անշուշտ, այն է, որ մեզանում առհասարակ տնտեսագիտական գրականությունը չափազանց անզարգացած է, սկսողին մնում է շատ անգամ նույնիսկ տերմինների ընտրությամբ և ստեղծելով զբաղվել: Այս հանգամանքը լինելով հետևանք, որ տնտեսագիտական գրականության անզարգացած վիճակի մեջ էր, իր կողմից էլ դժվարացնում է այդ զարգացումը, որովհետև խիստ գծագրված որոշ բովանդակությամբ տերմինների պակասությունը անհնարին է դարձնում հասկացողությունների նույնպես խիստ և որոշ ըմբռնումը: Քաղաքական տնտեսության վերաբերյալ գրականությունը կնպաստի տնտեսագիտական տերմինոլոգիայի խիստ և որոշ գծագրման, իսկ որոշ բովանդակությամբ տերմինալոգիան էլ, իր հերթին կծառայի տնտեսագիտական ծանոթությունների ծավալման: Իրար հետ փոխադարձաբար խիստ կապված այս երկու երևույթներն իրար լրացնելով պիտի միասին զարգանան»¹: Իր գուգահեռի մեջ միանգամայն դիպուկ է արտահայտում նաև այսօրվա հայ տնտեսական մտածողության առանձնահատկությունները: Կտրված լինելով համաշխարհային տնտեսագիտական մտքի ձեռքբերումներից, խորհրդային շրջանում ձևավորվել էր որոշակի տերմինալոգիա, որը տնտեսաձևերի, հաստատությունների, գործառնությունների արդի ներհուսի պայմաններում մի զգալի մասով նոր տեսության մեջ շարունակություն ստանալ չէին կարող և բնականաբար «աշխարհի զարգացած տնտեսական համակարգերն ու տեսություններն իրենց բնական ու անհրաժեշտ ազդեցությունն են թողնում նոր զարգացող կամ թույլ զարգացած համակարգերի վրա», որը «արտահայտվում է նաև տերմինաբանության մեջ»: Իսկ դա հաճախ, ինչպես նկատում են Վ.Կատվայանն ու Վ.Հարությունյանը, իր արտահայտությունը ստանում է «կամ պատճենահանմամբ, կամ փոխառություններով, կամ նոր բառերի կազմությամբ», ինչպես նաև տնտեսագիտական բառապաշարը համալրելով «հայերենի հնչյունական օրենքներին հակասող կազմություններով, երբեմն հայերենի տեսանկյունից անբարեհունչ բառամիավորումներով»²: Հեղինակները պատշաճ տեսունակությամբ նշվածը հաստատում են շրջանառվող տերմինների բազում օրինակներով: Բանը նրա մեջ չէ, որ տերմինների հայկա-

¹ Հարությունյան Մ. «Միտք» 1910, №1:

² Կատվայան Վ., Հարությունյան Վ., «Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին» «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում – հատոր 1, Եր., 2021, էջ 26:

կանացումը չհանգեցնի հասկացությունների բովանդակության աղճատմանը և արհեստական հասկացությունների ստեղծմանը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսագիտության մեջ ընդունելություն գտած հասկացություններից հրաժարվելուն: Դա, ինչպես ասում է Ս.Սարինյանը, պարզապես կտանի «դեպի հասարակացում և ազգային լեզվի ջերմոցային մեկուսացում»: Իսկ դրա օրինակն ունեն: Հենց վերը նշվածի անտեսմամբ պիտի բացատրել, որ 1995թ. Հրատարակված Փոլ Ս.Սամյուելսոնի և Ուլյամ Դ.Նորդհաուսի «Տնտեսագիտություն» բուհական դասագիրքը (երկու հատորով) տնտեսագետների հանրության շրջանում լայն տարածում չստացավ:

Դեռևս ժամանակին Գ.Արծրունին օտար բառերի և օտար դարձվածքների օգտագործումը դիտում էր բնական անհրաժեշտություն: Նա նշում է հայերենում օգտագործվող բազմաթիվ բառեր, որոնք այնքան են արմատավորվել հայկական բառապաշարում և «կատարյալ քաղաքացիություն ստացել հայերեն լեզվի մեջ», որ շատերի համար խորթ կարող է ներկայանալ այլ լեզուներից դրանց ծագմանաբանության հարցադրումը: «... ընդհանուր գործածական բառերի մի լեզվի մեջ ընդունելը չի աղավաղում լեզուն, - գրում է Արծրունին, - բայց այն աղավաղում է լեզուն, երբ լեզվի մեջ մտցնում են այնպիսի պարբերությունների դասավորություններ և դարձվածքներ, որոնք մեղանչում են ընդհանուր մարդկային լեզվական և քերականական լոգիկայի դեմ»: Ուստի խոսքը վերաբերում է ազգային լեզվի մշակմանը «եվրոպական քաղաքակիրթ, առաջադեմ լեզուների զարգացման համեմատ»¹:

Տեղին և անհրաժեշտ էմ դիտում Վ.Կատվայանի և Վ.Հարությունյանի մտորումները հաղթահարելու տնտեսագիտության մեջ տեղ գտած տերմինաշինության տարեբայությունը «կատարելու անհրաժեշտ և բարեհունչ փոխառություններ, ստեղծելու հասկանալի, ճշգրիտ կազմություններ, ապահովելու գիտության սովյալ ճյուղի անկաշկանդ զարգացումը լեզվական միջոցներով»²: Դրան կարող նպաստել ոլորտի տերմինաշինության խորհրդի ստեղծումը, այդուհանդերձ տերմինների բնական փոխաձևությունը, որպես մշտական գործընթաց, կպահանջի երկարատև ժամանակահատված:

Հոդվածի գիտական նորույթը: Սույն տեսությունն իր նպատակի մեջ ինքնին նորույթ է արդի հայ հասարակական մտքի ոլորտում, որին հետևել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը վերջին տասնամյակների իր հետազոտական գործունեության ընթացքում:

Եզրակացություն: Վերլուծության ընթացքում կարևորվել և հիմնավորվել են ստորև բերվող հիմնախնդիրները.

¹ Արծրունի Գ., «Մշակ», 1888, № 71-73:

² Կատվայան Վ., Հարությունյան Վ., «Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին» «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում – հատոր 1, Եր., 2021, էջ 31:

- շուկայական տնտեսությանն անցնող երկրներում տեղի է ունենում անցում աշխատանքային գործունեության չկանոնակարգված ձևերից կանոնակարգված ձևերին, որոնցում առանձնահատուկ նշանակություն ունի կադրային կառավարման խնդիրները և կորպորատիվ մշակույթում ազգային առանձնահատկության հաշվառման հանգամանքը,

- հարկային քաղաքականության առաջնահերթություն է դիտվում եկամուտների ավելացման և պետական պարտքի կրճատման գործում ԱԱՀ-ի և եկամտային բոյանսի գործակիցների արժեքների բարձրացումը,

- անհրաժեշտություն է դարձել վերանայել ՀՀ հանքահումքային ոլորտում վարվող հարկային քաղաքականությունը, ըստ որի տնտեսության տեխնոլոգիական արդիականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման հիմնական աղբյուրներ պիտի դառնան հանքային հարստությունների ստացվող բարձր ռենտային վճարումները և ռոյալթիները,

- գիտության դիմորոշումը «դեպի առևտրայնացումը» չի կարելի ընդունել միանշանակ, շատ ոլորտների համար այն կարող է դառնալ կործանարար և բերել հոգևոր դատարկության,

